

Ձորի գործարանային կեղտոտ, նեղվածք քաղաքի իրենց հարուստ, մաքուր, շքեղ բնակարանում մեր ղեկավարի տգեղիկ, նիհարիկ, սիրելի աղջնակը մանկան հեքիաթ երազ էր տեսել, արթնացել, իր ամենազոր պստիկ հորը պատմում էր: Բայց դա նաև հոր երազն էր, նաև հարյուր տարեկան տատի երազն էր:

- Ուրեմն՝ թիթեռ, պատմում էր աղջնակը, թիթեռ:

- Ալլա՞ թիթեռը թե գետափի, հուշում էր հայրը՝ որ նույնպես անկողնից դեռ չէր ելել: Աղջնակը սիրված էր և գիտեր՝ որ սիրված է:

- Իսկական թիթեռ՝ կարմիր, կանաչ, ասում էր աղջնակը:

- Ալլա թիթեռն ուրեմն գետափին կարմիր թիթեռի հետ թռչում է, լրացնում էր հայրը:

- Բայց դու չես լսում, ասում էր աղջնակը, չես լսում:

- Լսում եմ, ասում էր հայրը, պառավ խնձորենիներ...

- Ինչո՞ւ պառավ:

- Դե լավ, սիրուն ծառեր, հետո՞:

- Ուրեմն՝ լճակ, ձկնիկներ, ծաղիկներ, պատմում էր աղջնակը:

- Կամրջակ, նետում էր հայրը:

- Կամրջակ, լրացումն ընդունում էր աղջնակը. գետակի վրա՝ կամրջակ: Բայց դու չես սարքի, չես սարքի, չես սարքի:

- Է՛, Ալլչկա, երևակայություն չունես. ուզածդ ինչ է՝ որ ինչ սարքենք:

Մեր ղեկավարի հարյուրամյա մայրը զավակին կոֆե էր տալիս, աղջնակի երազի վրա շատ զարմացավ. «Երազը էս

երեխան ի՞նքն է տեսել, թե իմ հին երազն է պատմում, ասաց պառավը, վայ-մեհ, ես տեսա՝ իմ իշխան հայրիկը կատարեց, է>>:

- Տեսնենք երեխան ինչ է պատմում. պատմիր, երեխայի նոր ու պառավի հին երազը մի իրական նպատակի էր ուղղում մեր ղեկավարը:

- Թիթեռ, առավոտյան փայլուն աչքերով, դեռ երազի մեջ՝ ասում էր աղջնակը, գետակ, ծառեր, ես ու Տուգիկը...

Պառավը հին հուշերի տրվեց.

- Իմ հայրիկը սարքել էր. գեղացիք թշնամութիւն չանեին վառեին՝ հիմի ջուրն էլ, ծառն էլ, վարդն ու սոխակն էլ մերն էին. գեղացիք մածուն ու մեղր կբերեին:

- Նրանց շունը մեր Տուգիկին կկծի, ասաց աղջնակը:

- Իրենք էլ են անտաշ, իրենց շներն էլ, ասաց պառավը:

Մեր ղեկավարն այնինչ լրջացել, սրվել ու բաց աչքերով տեսնում էր մեր երկրի ամենասիրուն այն անկյունը, ուր մեր պապի ջաղացն ու այգին էին եղել, հիմա ավերված ու լքված էին:

2

Բայց մենք նույնպես մարդ ենք ու մեր երազներն ունենք. կեսքուն-կեսարթուն պառկել նույն գետափն էինք տեսնում. որ իբր դեռ երիտասարդ ենք, մեր փողքերն ու շապկի թևերը քշտել նժույգը գետակում լողացնում ենք, հովըտեցի հարսնուաղջիկ մոռուտներից դառնում, միմյանց արմնկելով մեզ են ցույց տալիս ու ամոթխածորեն ասում՝ «ախչի, նշանված է>>, «անարժանը տես ում զավթեց, է>>, և գաղտուկ ծիծաղում են:

Տրակտորի-ավտոմեքենաների աղմուկի վրա արթնացանք, սենյակից դուրս նետվեցինք, նայեցինք - հին կալերի զառի-

վերում Շովրտի-Ծմակուտի միացյալ տնտեսությունների ղեկավար կոչվածի փոքրիկ բեռնատար-մարդատարն էր գնում, ետևից՝ թափքը լիքը ժողովուրդ՝ բեռնատար մի մեքենա, դրա ետևից՝ մի բուլդոզեր-տրակտոր:

Չորուկ մեր տիկինը պատշգամբում թեյ էր գցում, ասաց.

- Անտառի գծով չի, կալերում երևի գործ ունեն:

Խեթեցինք, ներս նետվեցինք հագնվելու:

3

Անտառտնտեսության մեր ղեկավարի գետափնյա մենատունը կառուցելու կոչված այդ ջոկատը ելավ Ծմակուտ այս գյուղի լքված կալերը, գնաց կանգ առավ հին մեծ կովանոց-գոմի դռներին, մեքենաներից իջավ. միացյալ տնտեսությունների հովրտեցի ղեկավարն էր՝ ում մեզ թաքուն եղբայր են համարում, իր վարորդը, անասնապահական ֆերմայի վարիչ մեր քրոջ զավակը, Մուրադենց տղան՝ ում ժողովուրդը թաքուն համարում է մեզանից սերված, տնտեսությունների ղեկավարի երկու եղբայրը՝ սղոցի վարպետ, բանվոր ուրիշ տղերքի խումբ և կաշվե բաժկոններով բաժկոնավորված երեք անհասկանալի գոյություն՝ ում չգիտես հանցագործ համարես, թաքուն միլիցիա թե սպորտսմեն: Եկել էին հին, մեծ, պարապ գոմը քանդեն, փայտը տրամադրեն մենատան շինարարությանը: Անսիրտ, անհոգի, անտարբեր և դեռ գործնական՝ սանդուղք դրին բարձրացան ձեղունավոր տանիք, գոմը մտան զննեցին օձորքի մարդակներն ու կաղնե սյուները, հաշվեցին այդ մարդակներն ու սյուները («երկու հարյուր»), ձեղունից կղմինդրներ գցեցին, ծակից գլուխները հանեցին, «կկու» կանչեցին ու գովեցին շինանյութը՝ «Շենքը լրիվ ապահովված է», զարմացան այն

թվով՝ որ հնում այս խեղճ գյուղի տավարի գլխաքանակն էր եղել՝ «Երկու հարյուր գլուխ զուտ կով է կապվել էստեղ», առաջարկ եղավ ձեղունի կղմինդրը ոչ թե հատիկ-հատիկ իջեցնել-դարսել («Ում է պետք, էստեղ ներկած թիթեղ է, չէ՞, լինելու»), այլ ձուպանները զցել տրակտորով քաշել («Տասն օրվա գործը երկու օրում կարվի») և որ Ամերիկան հին շինություններն ուղղակի պայթեցնում է («Կինոյում եմ տեսել»): «Պողպատի մեջ է առնում ու տրաքացնում»): Մեր քրոջ զավակը տնտեսության ղեկավարից մի վայրկյան չէր կտրվում. գործերը վատ էին, պատրաստակամությամբ՝ ուզում էր դուր գալ և ինքը այստեղ, չնայած այստեղացի էր, ծայն, կամք ու իր կործանվող գյուղի վերաբերյալ ցավակցություն չուներ: Եվ այդ գործնական ու անհոգի ժողովրդի մոտ մեր նժույգը միակ խեղճը, հինը ու կենդանին էր. գոմից քիչ հեռու, անցան-լքված դաշտերում մեր նժույգը կանգնել նայում էր այդ իրարանցմանը: Գոմի դռանը հավաքվել, գործն սկսելու առիթով արդեն օդու շիշ էին բացում, մի քիչ կասկած միայն տնտեսության ղեկավարի մեջ կար, բայց դա այն կասկածը չէր՝ որ կարողանար նրան դեմ կանգնեցնել այդ գործին, նա ուղղակի մի քիչ տատամսում էր, բայց ձեռքը բաժակ տվեցին և այդ պահին նա նկատեց մեր նժույգը, ծիծաղեց ասաց.

- Մեր ախպեր Ռոստոմը:

Մեր քրոջ զավակին այդ անունը անտարբեր չթողեց - ասաց.

- Անունը որ քիչ տանք՝ մեր օգտին կլինի:

Կաշվե բաձկոնավորներից մեկը կքել մյուս երկուսին սիգարետներով՝ սիգարետները գերանակապ գլխատան օրինակով դասավորելով՝ բացատրում էր թե ինչպիսին պիտի լինի մենատունը: Դա հետաքրքիր էր, մյուսներին էլ հետաքրքրեց,

հասկացողներ եղան, որ մենատան «զուտ գլխատունը երեսուն խորամետր զուտ կաղնի է տանելու»: «Սա կունենա» (կովանոցը): Մեր քրոջ զավակը դրան պատասխան ուներ. «Չի ունենա՝ հրեն կենդանի կանգնած»:

«Կենդանի կանգնածը» դարավոր անտառն էր:

4

Մենք խզգալով ու խեղդվելով դուրս եկանք կալերը, ձիու մասին՝ որ խլշվել մեզ էր նայում՝ ասացինք «դու ես», գնացինք դեպի գոմը: Գոմը երկու ծայրից էլ մուտք ուներ՝ տավարի մուտքը, ուր խմբվել էին ավերակիչները, և մյուսը. այս մուտքի վրա տախտակե կցաշենք էր դրած, դա կթվորների ու անասնապահների կացարանն էր. կողպած էր, նեղ ձեղքից երկու մատով մենք ներսից հանեցինք բանալին, կողպեքը բացեցինք, մտանք ներս. այդտեղ մարդիկ էին ապրել, ուրախացել, տխրել, հպարտացել - հիմա լքված էր. հին կյանքից մի երկու նշան դեռ մնացել էր՝ անկյունի կարմիր դրոշը և պատվո տախտակը՝ կթվորներով, կովերով-կթվորներով, կովերով, Դոնբաս ծանր ցուլով և նրա մոտ երեխայաչափ մեր խեղճ հորեղբորով՝ ձեռքին երեխայի մի ձիպոտ: Հուշերի դեմ մեր աչքերը փակեցինք, մոտեցանք անկյունի իր տեղից վերցրինք փաթաթված դրոշը: «Խի՞, ասացինք, է՞դ է որ», մոտեցանք ետ տվինք այն դռները՝ որ կցաշենքը միացնում էին անմիջաբար գոմին:

Լուսամուտների շարքը խուրձ առ խուրձ լույս էր տալիս բոլոր բաժանմունքներին. ուղիղ սյուներ, ուղիղ ախոռներ, տախտակած հատակ և խոր լռություն: Թախիժը մեզ ուտում էր. կանգ առանք, մեր ծանր կոպերը վար բերինք, այդպես մնացինք,

հետո գնացինք դեպի ելքի դուռը՝ որտեղից ծայներ էին գալիս և մարդկային կերպարանքներ էին երևում:

Դռան շրջանակի վրա դրոշակի հին տեղն էր, դռների մեջ լույսի դեմ մի ընդհանուր քարացանք մնացինք, հետո դրոշի կոթը խրեցինք իր հին տեղը, երկփեղկ դուռը մեր ետևից վրա քաշեցինք, պարզեցինք մեր ձեռքը և պահանջեցինք. «Կողպեքը տվեք»: Մեր ծանր կոպերը վար բերել սպասում էինք և նորից ասացինք.

- Վրան կողպեք կար, կողպեքը դեսը տվեք:

Նրանց սիգարետե գլխատունը տրորելով բաձկոնավորների արանքը ձղեցինք, մտանք կանգ առանք այն ժողովրդի մեջ, ում շատ թե քիչ տեղացի էինք համարում - մեր քրոջ զավակի, մեզ եղբայր համարվող դիրեկտորի, նրա եղբայրների, մյուսների: Մեկ առ մեկ բոլորին նայեցինք, ասացինք.

- Էս երկրին անձանոթ օտար ժողովուրդ էք, ձեզ ո՞վ է բերել էստեղ:

Տնտեսության մեզ եղբայր համարվող ղեկավարը իրեն իրավունք տվեց մեր ու ժողովրդի արանքում միջնորդ լինել, թևանցուկ անել փորձելով ասաց.

- Գուզեցանք քունդ խանգարել, գիտեինք, որ մեր որոշմանը պիտի քեզ տեղյակ պահենք:

Նրան թիկունք արինք ասացինք.

- Դու էս երկրի առաջին թշնամին ես, մյուս անգամ քեզ մեր երկրում չտեսնենք: Եվ կրկնեցինք. Էս թշնամի, էս օտար ժողովրդին ո՞վ է էս անձանոթ երկիրը բերել:

Մեր քրոջ զավակը զգում էր, որ իր վրա ենք պայթելու և իր մեջ պատասխանի էր պատրաստվում: Դո՛ւ, ասացինք, հետո ձեզուն հանող սանդուղքը մեր ուշադրությունը գրավեց. բաձ-

կոնավորներին ձեռքբերելով և այս անգամ նրանց կռվարար հեգնանքին արժանանալով («Էս եզն ով է»), գնացինք սանդուղքը շարտեցինք ձեռուն, այնտեղ կանգնած Մուրադենց տղային ասացինք. «Իջիր. ոնց բարձրացել ես՝ էնպես էլ իջիր», ետ եկանք, անցնելիս տվեցինք բաձկոնավորների խոսքի ու թշնամանքի պատասխանը («Եզը չենք, ցուլ ենք՝ բուղա, ձեր նախիրը լավ իմացեք») և քշեցինք մեր քրոջ զավակի վրա. մեր պարանոցը ծեծելով ասացինք՝ «Էս-էս-էս-էս ուսերին ես մեծացել. չգիտեինք, որ ուրիշի դռան շուն ենք մեծացնում»: Դա տնեցու զայրույթ էր, բայց նա մեզ հենց թշնամու տեղ էր դնում, և այդուհանդերձ մեր արարքը նույնպես մեծ տնեցու եղավ - ծոծրակը մի ձեռքով բռնած հրելով մի կողմ քշեցինք, ասացինք. «Աչքս էստեղ քեզ չտեսնի, քանդարար»: Ետ եկանք, անցնելիս դիտմամբ ու պատահաբար բախվեցինք շարտեցինք տնտեսությունների ղեկավարին, ասացինք. «Ծմակուտի հրեղեն քուռակը անարժանիդ տակը մատնեց ու ֆերմա ստացավ. նորից ես, հա՞, քեզ առաջնորդ կարգել, էս խեղճ գերեզմանոցից հիմա՞ ինչ ես խոստացել»:

Գնացինք գոմի դռանը թիկունք տվինք ասացինք. «Մեռած ենք, բայց էնքան էլ մեռած չենք - ո՞վ եք»:

Տնտեսությունների ղեկավար կոչվածը ղեկավար մարդու ծանրումեծ շարժումնով ուզեցավ բացատրել բանի հանգամանքը՝ «Ախր որոշում կա, օրենքով է, էս երկրում առանց համապատասխան իրավունքի...», բայց նա հենց հարբեցող ու հացկատակ էր, ամենից շատ հենց նա էր մեզ գրգռում:

- Ձե՛նդ, գոռացինք. գիտես որ քու տեսքը մեզ խելագար է դարձնում ու ամեն անգամ գալիս տնկվում ես:

Կաշվե բաձկոնավորներին դարձանք.

- Դուք ո՞վ եք, մատաղ:

Ձայն չունեին, մարդասպանի հանգիստ թշնամանք ունեին, միայն թե կողքից թեթևակի հրահանգ լիներ, ասացինք.

- Գյուղդ ենք մտել տո՞ւնդ վառել, մո՞րդ ենք թարս նայել, մատաղ, ինչի՞ եք էդպես թշնամու նման մտիկ անում:

Մեզանից սերվածը ձեղունից թռավ՝ մեր առջև կաթեց, հպարտ արժանապատվությամբ ելավ, մեզ չափեց ոտից գլուխ, մի կողմ կացավ:

- Էդ արդեն խոսք չունես, ասաց մեզ եղբայր համարվածը. քու երկրացի է ու Մուրադենց Ելյայի տղեն:

Մուրադենց Ելյայից մեր մեջ ծանր հուշեր կային, գոռացինք.

- Շեր չունի՞, հերն անուն չունի՞: Եկել եք մեր տխրության վրա ծիծաղե՞ք: Երկու հարյուր կով է կապվել էս գոմում, ամեն մայիսի երկու հարյուր հորթ է դուրս եկել էս դռնից, կյանք ու ուրախություն է եղել էստեղ, դուք հիմա ի՞նչ եք գիշակեր ագռավի նման...

Տնտեսությունների ղեկավար կոչվածը հույսն այստեղից կտրեց, «Ա, լավ, է,- ասաց,- երկու հարյուր», ձեռքը թափ տվեց, շուռ եկավ գնալու, բայց նրա բառերը մեզ կատաղեցրին:

- Եթե ծիշտն ես ուզում՝ երկու հարյուր քսան. երկու հարյուր քսանչորս, ձշտեցինք, էս դրոշը պատահաբար չի հավիտյան էստեղ:

5

Շետո մերկ մեր նժույգը մենք կապել էինք հին գրասենյակի դռանը, ինքներս բարձրացել էինք պատշգամբ՝ ուր մեզ հասակակից գործակատարն էր, անկապ բառեր էինք մրթմրթում և, կարծում էինք հաղթել ենք, թշնամանքով ու

արհամարհանքով նայում էինք մեքենաների շարանին՝ որ ձորակն անցել դիմաց տներին էր հասնում: Մեր առջև գրասենյակի դռանը զոհված տղերքի բրոնզե հաղթական հուշարձանն էր և հուշարձանի դեմ մենք էինք, և մեր կեցվածքների նմանությունը չվրիպեց գործակատարի հեզնող աչքից. ասաց.

- Ապարատը ձեռներին պտտվում էին, կարող է՞ պատկերդ թաքուն հանել՝ արձանը նկարիցդ են սարքել:

Համեստացանք, ասացինք.

- Չէ մի, հա... Քառասունութ տղա է զոհվել, ուր էր թե մեկից մի մաս ունենայինք: Նրանք սրբեր էին, եզրափակեցինք:

- Չոհվեցին սրբացան, ասաց:

Մեքենաները ճանապարհին կանգ առան, ժողովուրդն իջավ, խոսելով-խոսխսելով բարձրացավ Մուրադենց հին դռները: Տան շուրջը պտտվում էին, դուռը բացեցին ներս մտան: Մենք սրվել ու անհանգստանում էինք, գործակատարն ասաց.

- Ժողովրդի մեջ իրենցից մարդ կա՞:

Դիրեկտորական փոքրիկ բեռնատարը ետ՝ դեպի գյուղամեջ եկավ, բայց մենք մինչև նրա հասնելն ու բանի էությունը լսելը կռահեցինք նրանց մտադրությունը. ուժեղ սուլեցինք ու մեր զնգուն ձայնով կանչեցինք.

- Էդ ինչ բանի եք էդ ավերակում, էդ դժբախտ ավերակից էդ ինչ եք ուզում, է՛յ:

Իրենց մեջ խոսում էին, կարծես թե չէին էլ պատասխանելու, հետո դիրեկտոր կոչվածը իրենց մեջ ասաց. «Ասա՛ էս էլ է՞ քու հարցը, քեզ ինչ»: Կատաղած՝ «Արա, ո՞նց թե» ծղրտացինք: Դիրեկտորական մեքենան եկավ հասավ. արաղի էին դրկել. վարորդը, գործակատարից առաջ խանութ մտնելով, տեղեկացրեց.

- Ուզում են քանդեն. բուխարու երկու լավ քար կա:

Դեպի դիմաց լանջը՝

- Մեզ տեսնում ե՞ս, գոռացինք. լավ ե՞ք տեսնում. էս մեր տեղն է. էդ տունը մեր տեսարանն է: Մեր տեսարանն է, ձեր տեսարանը չի: Մենք էստեղ պիտի կանգնենք՝ ու էդ տունը պիտի լինի - փասափուսեդ քաշի՛ր էս երկրից:

Դիրեկտոր կոչվածը պատասխանեց.

- Տերն էստեղ է, քեզ խոսք չի հասնում:

- Կգանք սև տեր կբերենք գլխիդ, ծղրտացինք, խանութում գործակատարն ու վարորդը ծիծաղեցին, իսկ մենք ասացինք դարձյալ դիմացի ժողովրդին. սև ծիծաղ կբերենք ձեր գլխին, տեսարանիցս դո՛րս եկեք, և թափ առանք գնալու:

6

Գետափնյա այգին ու ջաղացը մեր պապինն էին եղել՝ այսինքն այն մշակինը, ում ժողովուրդը մեր պապն ու մեզ նրա թոռն է համարում, հետո խառը տարիներին պապը ոտի տակ կորել էր և ջաղացն ու այգին լքվել, անտեր քանդվել էին, հետո կոլխոզը համարեց՝ որ դրանք իրենն են ու մեծահոգաբար նվիրեց դպրոցի աշակերտներին, որպեսզի մենք սովորեինք, սիրեինք ու աշխատեինք, բայց մեր սերնդի միտքն արդեն քաղաքում էր. հիմա չենք հիշում չորացած մի ձյուղ սղոցով կտրեցինք թե ոչ, բայց գալիս այդտեղ լողանում էինք, երեխեքն ասում էին՝ «պապիդ ձորում գնանք լողանանք»: Հին հնում, հարյուր տարի առաջ, բանաստեղծ Հովհաննես Թումանյանի խումբն անցնելիս այստեղ ձիերի գլուխը պահել է, ծարավ Թումանյանը նայել է այգու խնձորներին, ձիավոր ուղեկիցը ձիու վրա կանգնել է՝ ծառից խնձոր պոկելու. հետո Թումանյանը մեր

պապին դուրս կանչել է տվել ասել՝ շա՛տ կնեղանաս, եթե ասեմ քու էս ձորը ծախիր ինձ. մեր պապն ասել է՝ «դու քու քաղաքից արի - ձորը ես չեմ ծախում՝ նվիրում եմ քեզ՝ Լոռվա մեր հայ ժողովրդի պարծանքիդ»». սա մեր պապի՞ պատասխանն է, սա գյուղացո՞ւ խոսք է - նախանձություն չկա, ոչ, հնարվել է հետո, երբ անցած գնացած, արդեն հուշ են եղել մեր պապն էլ, Շովհաննես Թումանյանն էլ ու բոլորն էլ:

Տեղը մեզ դուր էր գալիս: Դուր էր գալիս՝ երբ դպրոցական երեխա էինք ու չէինք հասկանում ինչու է դուր գալիս, բայց եթե կանգնում ու պառաված ծառերին ու գետաքարե քանդված ցանկապատին նայում էինք՝ ուրեմն դուր էին գալիս. երեխայի մեր թաքուն խելքով թերևս ջանում էինք կռահել, թե պառավ այդ ծառերի, ծաղկի, գետաքարե ցանկապատի, տաք լույսի ու խուլ խշշոցի մեջ ինչն է սպանիչը, մեր պապին ինչու են սպանել, ու չէինք գտնում, չէինք կռահում: Դուր էր գալիս՝ երբ երիտասարդ ամուսին էինք ու մեր նժույգ-ձին բերում էինք այստեղ լողացնելու. մեր փողքերը քշտում, վերնաշապիկը հանում ու նժույգը քաշում էինք գետակ. անցնող աղջիկներն ու հարսները իրար ականջի քչփչում, ծիծաղում, հետո տեղյակներն ասում էին՝ որ արդեն ամուսնացած ենք, և լռում ու տխրում էին: Ամուսնացած էինք, բայց մի քիչ՝ հենց նոր մարած հույսի չափ՝ դեռ իրենցն էինք, ինչպես որ իրենք էին մերը, ինչպես որ գետափնյա այդ ջաղացատեղն ու պառաված այգին չէին արդեն մերը, բայց դեռ մերն էին:

Ընտո տղերքը - որը ժողովրդի մեջ բաց ուշունցով՝ թե խեղճ այս գյուղում շատ տառապել ու չնչին է վաստակել, որը տխրությամբ, անհուն տխրությամբ՝ որ հայրենիքից հավիտյան հեռանում է, որն էլ լուռումունջ - քոչեցին քաղաք, ծափուծիծաղն

այս գյուղից կտրվեց, դպրոցը լռեց, և գետափնյա այգին արդեն որևէ մեկինը չէր - անցնող դարձող բոլորինն ու ոչ մեկինը:

Ինչպես որ գերեզմանոցն է պառավում, ինչպես որ մեղվի փեթակն է քաղցած ձմեռվա մեջ հանգչում - մենք դեռ չէինք հավատում, որ դպրոցը այդպես մարել է, կյանքը իր հին կեղևը այստեղ լքել ու ինքը հեռացել է քաղաք, բայց այդպես էր. մեր ձիու ոտնաձայնը դնգում էր ամայի դասասենյակներում ու դռներին, լքված դարբնոցում ու հին կալերում, և դա սարսափելի էր, հեքիաթի տղան ասես շրջում էր հեքիաթի քարե քաղաքում. երբեմն պառավներ ու հալիվորներ էին ելնում հին տներից, խնդրում էին ասեղը թելել, երբեմն գանգատվում էին թե հավը ծուն կորցնում է՝ և մենք պարտավոր էինք կռանալ նրանց հավաքները մտնել, և դա այնքան էր տխուր, որ մենք ուզում էինք մեռնել:

Ընտո ասացին անկենդան այս տարածությունը, այս գյուղի կառավարումը հանձնվում է կողքի գյուղին, այսինքն թե մենք հիմա նրանց ենք ենթարկվելու, այսինքն թե նրանք հեռախոսով պիտի կարգադրեն՝ ա՛յս մի արեք և ա՛յս արեք, և մենք ա՛յս չպիտի անենք և ա՛յս պիտի անենք: Երեկ նրանք ախր մեզանից խոտ էին խնդրում՝ մենք նրանցից երբեք խոտ չենք խնդրել, նրանք չէին համարձակվում մեզնից աղջիկ ուզել՝ իրենց աղջիկներին ուրախությունից պարելով էին մեզ տալիս - հիմա պիտի կարգադրեին այս հանդը մի՛ հնձեք ու այս հանդը հնձեք. չենթարկվեինք՝ կուսակցական տոմսը վար էինք դնելու: Մենք մեզ՝ զուտ մեր չոր գլուխը՝ նրանց ենթակայությունից կարողացանք հանել - անցանք անտառապետության, դարձանք Քոշաքարից մինչև Շայի-Թուրքի Ոսկեպար բոլոր անտառների ու հանդերի տիրակալը և շարունակեցինք հուսալ ու հավատալ, թե

այս գյուղը նորից է զարթնելու, կյանք կոչված մեծ հարսանիքը զվարթ աղմուկով կրկին վերադառնալու է այստեղ: Մի բան ախր չի կարող պատահել որ լինի ու հանկարծ չլինի - չկա, չի եղել. այդ պառավ ծառերի, քանդված չափարների, ամայի դռների, հին գոմերի ու կալի երեկվա ծայները ախր դեռ մեր ականջներում էին:

7

Գետաքարե ցանկապատը խնամքով՝ ինչպես որ մարդ ինքը միայն իր համար կանի՝ գուրգուրանքով նորոգել, պատի մեջ նույն չափսի ու ծայրերը նույնանման դեպի դուրս կեռած մետաղե ցցեր էին թաղել, ցցերին ամրացնելով՝ բարձր ցանց էին քաշել գետակից գետակ, հին այգին առել ցանցի մեջ: Մենք ձիու վրա՝ ցանցը մեզանից դարձյալ բարձր էր: Պատի հետ մենք գնացինք մինչև զառիթափի գլուխը, ետ եկանք, վճռեցինք երկաթե դարպասը ծեծել՝ չծեծեցինք, եկանք մինչև ցանկապատի մյուս ծայրը՝ որ դարձյալ զառիթափի գլխին էր, մոլորված կանգնեցինք, հետո չգիտեինք ինչի համար դարձյալ ետ գնացինք ցանկապատի երկարությամբ: Ներսում, պառավ ծառերի մեջ, սպիտակ վրան էր խփած, մի երկու փեթակ մեղու էր երևում, լվացած փռած մի երկու շոր, կիթառ: Շերն անիծած, օտարն այստեղ իրենք էին ու մենք չէինք - ինչի՞ց էինք քաշվում, ինչո՞ւ չէինք խորտակում ու ներս մտնում, ինչո՞ւ չէինք դարպասը ծեծում: Բայց օտարը կարծես մենք էինք, այդպես էլ չհամարձակվեցինք կտրուկ որևէ բան անել. չգիտենք ինչու՝ ձիու գլուխը շուռ տվինք ու ետ քշեցինք. չգիտեինք ուր ենք քշում, մի քիչ վերևից՝ ձին մեզ գետակն անցրեց ու կանգ առավ. չգիտեինք ինչու ենք կանգնել կամ ուր գնանք, բայց

հետո զգացինք՝ որ չենք կարողանում այգուց կտրվել: «Դե որ բերեցիր էստեղ՝ ուրեմն ուզում ես հիմա էլ դեմից նայենք, ասացինք ձիուն, գնա՝ գնանք»:

Վրանի ու այգու դեմ զառիթափի գլխին մենք կանգ առանք, այգին զննեցինք դեմից: Ծառերի տակ մի համեստ, սիրուն, համարյա թե աննշան ավտոմեքենա էր կանգնած: Այգում մարդ չկար, բայց մենք մարդու շունչ էինք զգում, մեզ թվում էր թե իրենց թաքստոցից մեզ թաքուն զննում են: Մեր խեղճ գետակն այդտեղ՝ այգու տակ, փրփուր կտրած ջրվեժ է դառնում, չես ասի թե մեր խեղճ գետակն է: Գետափի սալերին մենք կանացի ինչ-որ շոր տեսանք, հետո գետակի խուլ գվվոցի միջից ինչ-որ հառաչանք եկավ, բայց մարդ չէր երևում: Ձին ականջները սրած նայում էր, ձին ուրեմն տեսել էր, մենք չէինք տեսնում:

Անտառտնտեսության մեր պետը (մենք չգիտեինք՝ որ նա մեր պետն է, ինքը շատ լավ գիտեր՝ որ մենք իր ենթական ենք) մաքուր սպիտակ կոստյումով կանգնել էր խնձորենու նախշուն ստվերում ու ծիծաղում էր մեր ապարդյուն ջանքի վրա: Երբ մենք ձիու գլուխը շուռ տվինք հեռանալու, նա կանչեց ու ձեռքը բարձրացրեց.

- Խազեին:

Խազեին-պարոնտերն ինքն էր՝ մեզ էր խազեին ասում, մեր ձին ու մեր կեցվածքը նրա համար ծիծաղելի էին: Նա այս աշխարհի թաքուն տերն էր, շատ լավ գիտեր, որ տիրակալի մեր գեղջկական, հին, բաց կեցվածքը ծիծաղելի լինելուց առաջ խոցելի է և մենք նրա համար խեղճ էինք, բայց նա մեզ նաև ատում կամ նախանձում էր թերևս մեր առողջ հզորության, թերևս մեր ներքին միամտության ու աչքի լուրջության համար, մի խոսքով՝ աշխարհի ու մարդկանց մասին նրա պատկերացման

կաղապարը մեր կերպարը չէր վերցնում: Ինքը չպիտի մատներ, մենք չպիտի հասկանայինք, որ այստեղ նա կարևոր ու մեզ վրա իրավունքավոր մեկն է, ինքը պատահական ու երկրորդական մարդու տպավորություն էր անելու, բայց նրա հենց քայլվածքը, դանդաղ հանդիսավորությունը և վստահությունը՝ որ ձեռքի նշանով ինքը մեզ ասել է սպասիր և մենք պարտավոր ենք սպասել - մատնում էին, որ մեզ ընդառաջ է գալիս մեզ վրա իրավունքավոր մեկը: Մենք ծիուց իջանք, հնազանդ սպասեցինք, հետո նրա հանդիսավոր, ծանրումեծ շարժումներին նայելով չգիտեինք ինչու մեր մեջ բողոքեցինք ու նորից հեծանք: Երբ նա մոտեցավ՝ մենք ծիու վրա էինք: Եկավ ձեռքը մեկնեց ու ասաց մեր անունը.

- Ռոստոմ Մամիկոնյան:

Իջանք, հնազանդ կանգնեցինք, ասացինք.

- Այո, մենք ենք: Ներեցեք, դո՞ւք ով կլինեք:

Չասաց ինքն ով է, կրկնեց ասաց.

- Ռոստոմ Մամիկոնյան: Աշխատո՞ւմ ենք:

Ասացինք.

- Մեր կարեցածի չափ, ինչքան կարենում աշխատում ենք:

Գլխով այգին ցույց տվեց հարցրեց.

- Էս ի՞նչ է:

Նայեցինք իրեն, նայեցինք այգուն - չգիտեինք ինչ է, ինքը գիտեր: Շատ փոքր չափսերի ձիգ, պինդ, ուժեղ տղա էր: Մեր ծոծրակին խփելով՝ ձեռքը զցեց մեր ուսին, մտերմորեն մեզ ձոճեց, ասաց.

- Ուժեղ ես, Ռոստոմ Սարգսյան:

Դա շոյանք չէր ու ոչ էլ հարված, բայց և այս էր, և այն, դա նրա իրավունքն ու սովորությունն էր: Կրկնեց ասաց.

- Չես փոխվում, առաջվա ուժին ես:

Փաղաքշանքին ենթարկվեցինք, ժպտացինք ասացինք.

- Դուք մեզ ուրեմն ձանաչում եք:

- Ռոստոմ Մամիկոնյանին ով չի ձանաչում, ասաց:

Նա, ում չէինք տեսել բայց զգացել էինք որ ձորում է, ձորից դուրս եկավ ու եկավ. վիթխարի մի կին էր, չափերի մեծությունը հետո հատկապես երևաց՝ երբ մեզ էր հասել ու մատնաչափիկը նրա մոտ ուղղակի պստիկ էր. հիմա գալիս էր, կիսամերկության հետ ըստ երևույթին նաև բոբիկ էր, քայլը զգույշ ու ոտքերի տակը նայելով էր գնում, մարմինը թրթռում ու խաղում էր: Եթե ասեինք միակ հագուստը պորտի վրա տարուբերվող ֆոտոսարքն էր՝ բամբասանք կլինեիր - հագուստի որոշ կտորտանք նրա վրա կար, անպայման կար և ինքն էլ իր բաց ու բացվող տեղերը ցույց տալու հատուկ որևէ շարժում չէր անում, բայց ասում ենք - որևէ հագուստ, թեկուզ ծանր խալաթ, թեկուզ յափունջի կամ վերմակ՝ անկարող էր նրան ծածկել, շորը նրա վրայից ընկնում էր, շորով՝ նա մերկ էր երևում. դրանից հետո մենք նրան և՛ երեխայի պես արտասովելիս տեսանք, և՛ մորի ծծելով մեզ նայելիս (և վիթխարի անասունի նրա մաքուր ու միամիտ գոյությունը սրտառույշ մի բան ուներ իր մեջ), բայց ամեն անգամ նա մերկ էր թվում: Նա ինքը թերևս անմասն էր իր մարմնի մեղկությանը, ինչպես որ անմասն էր այստեղ լինելուն, այսինքն թե ինքը չէր եկել՝ իրեն բերել էին, բայց այսպես թե այնպես՝ օտար մի անառարկություն ասենք թե անպատասխանատվություն մեզ համար հենց այդ կնոջ կերպարանքն էր առնում: Ահագնանալով մոտենում էր, թզուկը մեզ ասաց.

- Ռոստոմ Սարգսյան... գիտես, չէ՞, ինչ է ուզում... պարտավոր լինես խեղճ աղջկան գոնե մի անգամ բախտավորես, բախտ

այսինքն բացես:

Մեր համարձակությունը հավաքեցինք ասացինք.

- Ըստ պատկանելության դա մեր գործը չի, ինչպես որ ցանկացել ու բերել եք՝ դա ուրեմն ձեր գործն է:

Մեզ զննեց, ասաց.

- Համեստ ես ձևանում, բայց համբավդ քաղաքներում թնդում է:

Այդ մասին մենք լռեցինք, հին մեղքը մեզ խեղդեց: Ասացինք.

- Ինքներդ, ներեցեք, ո՞վ կլինեք:

Մեր հարցին չպատասխանեց, կինը մոտեցել էր, ձեռքը նրա մեջքին գցեց, քաշեց ասաց.

- Ռոստոմ Մամիկոնյանի հետ ծանոթացիր, ընկերս է: Կարիք կունենաս՝ դիմիր, խոստանում է լիովին ընդառաջել:

Քրտնեցրին, մեզ քրտնեցրին շան որդին ու շան քածը. ծամոն էր ծամում, դեմքը մեր դեմքին՝ դանդաղ ծամում ու մեզ ասես զննում էր, մենք ետ-ետ արինք և նա թաքուն կարծես թե ժպտաց ու ծամոնը բերանում ձայնեցրեց. կողքից մեզ զննում էր ու քմծիծաղ տալիս նաև թզուկը, ծաղրը մենք զգում էինք, բայց ոչ մի վճռական բան չէինք անում. ասացինք.

- Մեր պապի այգին է եղել:

Վիթխարին այդ ժամանակ թամբի կեղերը բռնել, ուզում էր հեծնել: Ֆոտոսարքը ձեռքին ետ-ետ քաշվելով՝ թզուկը մեզ ասաց. «Օգնիր»: Տակը մտանք օգնեցինք հեծավ, մեր ձեռքը ըստ երևույթին նրա ծանր ոտքերի մեջ էր մտել, ձեռքը մենք քսում էինք մեր շավվարին, ուզում էինք սրբվել, և թզուկի հայացքից ու ծաղրից դա նույնպես չվրիպեց - ասաց.

- Նկարում եմ, ձեռներդ մի սրբիր:

Մենք քարացանք: Չգիտենք այդ կնոջ ու ձիու հետ նա մեզ

նկարեց թե ոչ, բայց նրա մյուս խոսքին ուշադրություն դարձրինք. ասաց.

- Ասում ես պապիդ այգին է եղել, հա՞:

8

Շետո արդեն օտար աչքից հեռու էինք, կարող էինք մեր ձեռքն ուզածի չափ սրբել ու սրբել, բայց այդ ծանր մսի զգացողությունը մեր ափից չէր անցնում, լվացվեցինք:

Սրբիչն ուսին սպասում էր: Մեր աղքատ, խիստ, չոր տանը երեկոյան նորից ու պինդ լվացվելով, չգիտենք ինչու ժպտացինք, այդ ծանր ազդրերի մեջ թաղվելը մեր կամքից անկախ երևի մեզ դուր էր եկել, մեր չորուկ կնոջն ասացինք մեզ հատուկ հանդիսավոր թատերական ծանրումեծությամբ. «Չգիտե՞նք, մադմազել, չգիտենք. էսօր հարամ մսի մեջ ենք ընկել»:

Ասաց. «Բարով վայելես»:

Ոչ հարցմունք ոչ բան, միանգամից՝ «բարով վայելես». դա կասկածելի էր, ասացինք.

- Չես հարցնում թե որտեղ, ինչ. մի ոտից մի մադմազել դուրս կգար, մի հատ էլ Շուշան քույրիկ:

Ասաց.

- Քու էդ թատրոնը երեխեքը քաղաքից փախածի գլխավորությամբ էս էլ տասնհինգ օր է գնում թաքուն նայում են:

- Շետո՞, հարցրինք, ժողովուրդն ուրիշ ի՞նչ է խոսում:

- Ժողովուրդն ասում է պահաճ հազարներ ունես, պապիդ ջաղացը զավթել ու տեղը պալատ ես կանգնեցնում:

- Իսկությունը չգիտի՝ պարտավոր է մի բան հնարել, ասացինք, ժողովուրդ է՝ բա հո չի լռելու:

Շետո արդեն, հացի, պանրի, մի աման ձաշի ու օղու շշի

առաջ՝ որ մեր ձեռքով մեզ համար երբեք չի բացվելու, ասացինք մեր ծանր համոզմունքը.

- Չգիտենք, տիկին, մեր խոսքից հիմա ինչ եզրակացություն ես հանելու, բայց ինչ որ ասում ենք, էդ է, մեր սիրտն այսինքն մաքուր ենք ասում. քսան տարվա քու ախպերության համար շնորհակալ ենք, բայց որ մեզ ժառանգ չտվեցիր՝ հատկապես ենք շնորհակալ:

Պատասխան ուներ, իրեն, այնուամենայնիվ, չկարողացավ լռեցնել, ասաց.

- Ժողովուրդը գազազած ապրում է - դու քու հին ձիու վրա ես: Գողանում էլ են, լրբանում էլ են...

Մեր ծանր հայացքի տակ նա լռեց, գդալը վար դրինք ասացինք.

- Գիտե՛ս ինչ փառք է՝ որ համատարած գողության ու մյուսի մեջ Ռոստոմ Մամիկոնյանը սպիտակ ձիու վրա մենակ կանգնած է:

9

Այն, ինչը մեր ձեռքերի ու խղձի վրայից արթմնի լվանում էինք, քնի մեջ մեզ պաշարեց. ծանր երազ տեսանք. մտել էինք վիթխարու տակ, մեռնելով տնքում ու բարձրացնում էինք ու չէինք կարողանում, չէինք կարողանում - ծանրանում ու մեզ վրա փլվում էր, և մենք տեղի տվինք՝ թույլ տվինք ծանր, փափուկ ու դանդաղ փլվի մեզ վրա, բայց դա այլևս վիթխարին չէր, խոտի դեզն էր՝ որ ժամանակին մեր հանցանքի վրա շուռ էր եկել: Հստակ՝ ինչպես որ իրական պահին՝ մենք լսեցինք նրա բողոքավոր լացը՝ «Հողեմ աստծու կողմնապահ գլուխը՝ որ ինձ մարդ է տվել. դրել է կողքիս ու ասել մարդ է», և մեր սաստը՝

«Դե, դե»։ Մենք արթնացանք, անկողնում վրա նստեցինք, մահ-
ձակալից իջանք, բայց նույնիսկ արթուն ու սթափ՝ մեզանից
չէինք կարողանում վանել այն, ինչը մեր կյանքում պատահել էր
ու այլևս վանելի չէր. Մուրադենց հարսը փլված դեզի կողքին
կանգնել, խոտի փշրտուքը ծոցերից ու մեջքից ու բերանից
մաքրում էր, նրա գրկանոց փսլնքոտը գետնին նստած լաց էր
լինում. «Մամա... մոծակը կծում ա... կծում ա, է, կծում ա», և
մեզանից առաջին անգամ տղամարդու համ առած, ամուսնուց
ու ընտանիքից դժգոհ Մուրադենց հարսը երեխային անիծեց.
«Կծում ա՝ թող ուտի պրծնենք, ձեզանից ազատվեմ, ֆողեմ ձեր
գլուխը»։ «Դե, դե, դե, սաստեցինք, գիտե՛ս ինչ տղա է դառ-
նալու... Էդպես մի որձկաճուտ էլ եթե մեզ պարգևեիր»,
երեխային գետնից բարձրացրինք, տվինք մոր գիրկը։ Ամուսնու
մասին ասաց. «Նա ինչ է՝ որ նրանից տղա լինի. ինչքան կա՝
աղջիկ են»։

Մենք պատշգամբ ելանք, բազրիքին հենվեցինք, մեր դառը
բերանը մաքրեցինք թքեցինք։

Մեր հանցանքը հետո այսպես էր շարունակվել. ձին տանում
էինք հանդում կապելու - ի ն ք ը - մոռուտից գալիս էր. պարանը
ձիու վզից արձակեցինք, ձիուն ասացինք՝ «դու գնա... բայց
արտերը չընկնես», ինքներս անցանք ծառի ետևը, ծառի ետևից
սկսեցինք նայել. - ի ն ք ը - ձիուն տեսավ ու խշկոտաց. ձին
գնում էր, մենք ծառի ետևն էինք. - ի ն ք ը - մեր շունչն առել էր,
կանգ առավ ու նորից խշկոտաց, մեզ էր փնտրում. հաղթող
տղամարդու մեր ծիծաղը գալիս էր, ծառի ետևից մեզ աչքառ
հանեցինք, սուլոցով ու մատով կանչեցինք. տատանվեց միայն
մի վայրկյան - մի վայրկյան ետ՝ եկած ճամփին նայեց, դույլերը
ցած դրեց ու եկավ. մենք ետ-ետ դեպի քարերը գնացինք.

դույլերը ճանապարհին էին, ինքը վրա-տված, քայլերը խառնելով, խեղդվելով ու հևալով գալիս էր. «Ամաններդ, ասացինք, հիմար, ամաններդ»։ վտանգը մի պահ հասկացավ ու քամահրե՞ց, մոռացա՞վ - մոռացավ. մեզ տեսնելիս խելագարվում ու ամեն ինչ մոռանում էր - մոռացավ, որ ընտանիքը ետևից գալիս է. մենք նույնպես մեզ կորցրինք, քարերը մեր ոտքերի տակերից փախցնելով ընդառաջ իջանք, այդ հևացող թպրտացող մարմինը մեր բաձկոնի փեշի տակ առանք ու քաշեցինք դեպի քարայրի մութ բերանը. հետո հիշում ենք, որ այրի մեջ մենք նստել քամակի վրա ետիսող ենք անում ու իրեն ասում արի. մեր հոգու հե՞տ է խաղում, տրվելու կենդանական ուրախությունը մեջը շատ է՝ ուզում է երկա՞ր մնալ իր համար միակ այդ տոնի մեջ, թե՞ ուրիշ պատճառներ էլ կան - ուսը ծուլ է անում՝ «հը-ը», այսինքն թե չի գա, և մենք նորից ենք ժպտալով սպառնում արի, և ինքը նորից է մերժում. հետո չորեքթաթվեց ու եկավ. եկավ, ինչպե՞ս եկավ՝ ծղրտալով, խեղդվելով, պատեպատ դիպչելով, թող ու փախիր խելագարից. չորեքթաթվելու, անասունի պես այդպես չորս ոտի վրա էլ ելնելու, այրից մեր գլուխները հանելու էինք. ընտանիքը՝ ամուսինն ու երեխաները, եկել ճանապարհին իրենց դույլերին դեմ էին ընկել ու կանգնել, դեպի քարայր նայելով սպասում էին, ասացինք՝ «Էդքանից մի կենտ մեկը Ռոստոմի ստեղծվածքը լիներ»։ ասաց՝ «Մի քիչ համբերություն՝ ու պատրաստ եղիր»։ ասացինք՝ «Նավթ կտանք կվառենք, դու Ռոստոմին շուն չտեսնես»։ ինչպես որ հանձնվել էր՝ իր նման արագ, խոսքին որևէ հատուկ իմաստ չտալով, ծիծաղեց ասաց՝ «Էդ է, քաղցրը կերեք ու դուռններդ սրբելով դառնից ետ քաշվեցեք»։ ասացինք՝ «Հենց էդ է մեղր ես որ կաս» ու թքեցինք. ընտանիքը կանգնած սպասում էր,

երեխաներից ամենափոքրը մոր տեղն զգացել էր, եկել արդեն-արդեն քարայր էր մտնում, գուցե և չէր մտնում, գուցե մեզ թվաց, բայց երբ մայրը ելավ և մենք չորեքթաթ ետ սողացինք - նրա ու մի ուրիշի խառը ոտնաձայնը մեզ հենց մուտքի մոտից հասավ:

Մեր տիկինը սենյակից սպիտակ գիշերագգեստով ելավ. ինքը նիհար ու գրեթե անմարմին՝ բաձկոնը մեր ցանկությանը հակառակ մեր ուսերին գցեց, գիշերային պատշգամբում մեր կողքին կանգնեց մնաց, և շարունակությունը կարծես թե մեր երկուսիս հուշն էր և հենց այդպես էլ կար՝ մեր երկուսիս հուշն էր, իսկ եթե մի քիչ դաժան ու ձիշտ լինենք՝ զուտ իր արարքն ու իր հուշը, մենք այսինքն ներկա չենք եղել, ժողովուրդը թեկուզ ասում է մեր կազմակերպածն է, ներկա ենք եղել, խեղճ խելագարի վրա շունը բաց ենք թողել ու թաքուն ծիկրակել:

Գյուղամիջի ժողովրդի մեջ՝ մեծի ու փոքրի, կանանց ու տղամարդկանց՝ օրը ցերեկով էդ ամբողջ ժողովրդի մեջ գրկի երեխային վեր-վեր է թեցրել ասել՝ «Ո՞ւմ ծաղիկն է, ո՞ւմ ծառն է, ո՞ւմ զարմն է» ու ինքը իրեն պատասխանել է՝ «Իմ Ռոստոմի զարմն է, իմ Ռոստոմի պտուղն է, իմ Ռոստոմի ծառն է»։ ամոթավորները ականջները փակել հեռու են քաշվել, բերանբաց անամոթները ականջները սրել ու ուրախացել են՝ որ իրենք չեն խելագարը, խայտառակվողը, խելագարի խեղճ ամուսինը, խայտառակվողի կինը. նախրապանի մահակը հավիտյան ձեռին՝ խեղճ լոշտակ ամուսինը չափարի ետևը ամոթից մեռնում, ամոթից ծիծաղում ու ձենն ամոթից փորը գցած հեռվից ուզում է սաստել, կանչում է՝ «այ ախչի», և նորից՝ «այ ախչի», և դարձյալ՝ «այ ախչի», իսկ - ա ի ս ի ն՝ - ոչինչ - երեխային գրկի մեջ խեղդում ասում է՝ «Ռոստոմի տան ծրագ, Ռոստոմի

հույս, Ռոստոմի լույս, Ռոստոմի տան կրակ, Ռոստոմի թիկունք»։
խանութի դռան ժողովրդի մեջ մեր տիկինը իրեն զսպում-
զսպում ու նետվում է դեպի խելագարը, բայց մեր քրոջ զավակը
Նրան գրկում, թույլ չի տալիս, ծիծաղում ասում է՝ «Բան չկա,
խոսում է թող խոսի... թեկուզ մի քիչ էլ քեռուցս լինի», իսկ մեր
քույրը գնում երեխային ցնորվածի գրկից առնում, ցնորվածի
թևն է մտնում, տանում հանձնում ամուսնուն։ մեր քրոջը
ցնորվածը ենթարկվում է, ասում է՝ «Ես քեզ ձանաչում եմ, դու
իմ Ռոստոմի քույրիկ Շուշանն ես», կնքում է՝ «Ես աշխարհի
տե՛ր Ռոստոմի»։

Ցնորվածի իր բախտի գլխին նա մեզ միակ ու վերջնական
Համլետ էր կարգել։ փսլնքոտ լակոտին գրկել, տնեցիներից
փախել մեր այգում պտտվում էր։ Ինքներս սենյակում չենք
հիշում ինչ բանի էինք, բայց պիտի որ տարօրինակ մի
սպառնալիք մեզ կաշկանդած լիներ։ Մեր տիկինը դուռը մեր
վրա փակեց և զգացինք որ նաև կողպում է։ Բկահազ տվինք,
այսինքն թե մենք ներսն ենք, նա այնինչ չլսելու տալով կողպում
ու ուզում էր մենք չտեսնենք սարսափելին։ Դուռը քաշեցինք՝ ար-
դեն փակ էր, քաշեցինք՝ չբացեց ու լռեց, ձգեցինք՝ բռնակը
պոկվեց։ Լուսամուտի փեղկերը ետ տվինք ուզեցինք ելնել՝ իր
խեղձ, Նիհար մարմնով ցանկացավ արգելք լինել - զույգ ձեռքը
մեր կրծքին դիմհարած՝ լարվեց ու ուռի բարակ ծյուղի պես
ձկվեց և իր զուր ջանքի վրա նույնիսկ ժպտաց, բայց այն, ինչից
մեզ ուզում էր մեկուսացնել, ժպտալու բան չէր և արժեր
իսկապես՝ որ մենք չտեսնեինք։

Ցնորվածը երեխային գրկած մեր այգին էր մտել, երեխային
բարձրացրել, ասում էր՝ «Քու ծառիցը խնձոր քաղիր... Ռոստոմի
ծառ, Ռոստոմի բար, Ռոստոմի պտուղ»։ հեռու ձանապարհին

ամուսինը մոլորված կանգնած էր. խելագարության առաջ շները կաթվածահար են լինում - բնի մոտ մեր գամփռը գետնին տափակվել, ձենը փորը գցած ծմրում էր, ծմրում ու ետիետ բունն էր սողում. մեր շունչը կտրվեց ու սառը քրտինքը մեզ պատեց. և մեր, մեր շան, այդ լուսավոր այգու ու տան, ցնորվածի խեղճ ամուսնու պաշտպանը այդ պահին մեր տիկինն էր՝ որ չգիտենք չարության ոգի որտեղից էր առել, իր մեջ պրկվել ու լարվել էր, բարակ պռոշները սեղմվել ու բերանը մի տեսակ ծռվել էր. գլուխդ առ ու փախիր, եղածից ու մանավանդ լինելիքից մենք փախանք. պատշգամբից իջանք, կծկված սողացող շան մոտով անցանք պատի ետևը. ցնորվածը մեր շարժումը տեսավ. «Տեսա, տեսա, ասավ, պատի ետևն ես», կարծես երեխաներ էինք ու տապկնոցի էինք խաղում, հետո՝ «Կախարդն իմ Ռոստոմին կալանել է». հետո ամուսնու զսպված, խեղդված կանչը՝ «այ ախչի... Եյա». մենք մեր ականջները զույգ ձեռքով սեղմել ու մեր ձակատը պատին էինք խփում. մեր տիկնոջ ծայնը և շան շղթայի զնգոցը եկան՝ «քըս», մեր տիկինը շանը քսի էր տալիս, հետո եկավ շան կենտ մի բերան հաչը՝ «համ», և մենք խուլ տնքում ու մեր գլուխը պատին էինք խփում: Շանն ուրեմն արձակել ու քսի էր տվել, շունը թռել էր դեպի ցնորվածը, սա երեխային գցել ու ինքը փախել էր, նրա բղավոցն ու մի բառը՝ «դաժա՜ն», չնայած մեր զույգ ականջը զույգ ափով պինդ փակել էինք, մենք լսեցինք:

Այդ սառը լուսնակ գիշերվա մեջ ծանր հուշի առաջ մեր տիկինը սրսփաց, գիշերազգեստի օձիքը չեղած կրծքերի վրա բռնեց, ասաց.

- Ասում են մեռել է:

Ասացինք.

- Որ մեռած լինե՞ր՝ կբերեին էստեղ. էս գյուղը մեկ մեռելատերն է հիշում, մեկ էլ քաղաքում իր համար բերդի պես տուն կապողը. անտառում կաղնի չմնաց, հանդերում խաչքար չմնաց - կողոպտած տանում են:

Կին է, հոգսի պետական-հայրենասիրական կողմը իրեն անհասկանալի էր, ինքը մյուս՝ գաղտնի-անհասկանալի եզրն էր քշվում, ասաց.

- Տեսնես գժանոցում որ մեռնում են՝ տերերի՞ն են տալիս թե էդպես թաքուն էլ հուղարկավորում են:

Չպատասխանեցինք, ասաց.

- Մեռած ժամանակ է՞լ են տեսնես վախենալու, թե՞ չարքը հանգստանում է:

Ասացինք.

- Մեռել ազատվել է, մնում է անձամբ մենք ազատվենք:

10

Ձիու վրա՝ մյուս օրը մենք արևոտ Կաղնուտ լանջին էինք: Խաղաղ, իսկապես արևոտ՝ Կաղնուտն իր համար կար, բայց թաքուն մի բան մեզ սկսեց անհանգստացնել: Մենք չէինք հասկանում մեզ ինչն է անհանգստացնում, հետո ուշքի եկանք տեսանք, որ ծառերը համրում ենք: «Քսաներկու... քնած էշ, ասացինք, գլուխդ սնդուկն ես կոխել, պառավի նման գաթա ես հաշվում՝ մի ջուխտ, էրկու ջուխտ, իրեք ջուխտ»: Ձին քշեցինք, կաղնուտի եզրին մեր տեղը փոխեցինք, հետո, աներևույթ մեկը մեր սանձը կարծես քաշեր, գնացինք կանգնեցինք այնտեղ, ուր կաղնի էր եղել ու հիմա չկար: Կաղնին տարել ու տեղը ձմբաձածկ էին արել. ձմբերը ետ տվեցինք՝ ջլատված արմատներ էին: «Կեցցեք, ասացինք, առայժմս դո՛ւք կեցցեք»: Կաղնին

ներքևը թփերի մեջ էր, վրան ծոպանի կապեր կային, կեղևած մաքրած էր: «Կեցցեք, ասացինք, իսկապես կեցցեք»: Այդտեղից՝ թփերի մոտից մենք դարձյալ նայեցինք Կաղնուտին, ընտրեցինք ամենաուղիղ, ամենաբարձր, ամենահաստ ծառը, մոտեցանք: Քարով մենք խփեցինք՝ ծառը տռուզ էր, փուչ չէր և դրանով՝ դատապարտված: Հին ժամանակներում ցարի անտառապահը բնի շատ վերևներում գրել էր իր անվան սկզբնատառը, հետո մենք էինք գրել՝ Ռ. Մ. «Ես ձեր անհայրենիք հերն անիծեմ, ես ձեր վնասարար, ես ձեր անսիրտ, անհոգի, վայրենի...» - գազանի պես մենք ծառի տակը քանդեցինք ու բացահայտեցինք դինամիտի լիցքերը:

Հետո արդեն, դա կարծես վերջնական հաղթանակ էր, մեզ թուրքի փաշայի գոռոզություն էր համակել, ծիու վրա շիտակ նստած, Մամռուտ հնձած խոտհարքներով դանդաղ ու հանդիսավոր անցանք և չնայած խոտհարքներում մի կենտ խափան տրակտորից բացի մարդ ու մարդու շունչ չկար՝ մենք կարծես ժողովրդի ու ժողովրդի հիացմունքի միջով էինք անցնում:

Տիրաբար նայեցինք խոտհարքին, մեկին՝ մենք գիտեինք ում քամահրեցինք, զգվանքով ծլծլթացրինք. «Ծըլթ-ծըլթ-ծըլթ-ծըլթ. մուրացկան շան որդի, ասացինք, որ մուրացկանի նման խեղճ ես ու մուրացկանի չափ պնդերես. Մամռուտ խոտհարք ես խլել ու էլի երեկվա մուրացկանն ես. խոտդ հավաքելու է, քրեական շան որդի, դու ո՞ր ղեկավարի ոտներն ես հիմա լիզում... խոտդ հավաքելու է, խոտը՛դ», ծղրտացինք: Մեր հայացքը մենք չէինք կարողանում խոտհարքից կտրել և չէինք կարողանում փչացող խոտի ափսոսանքը խեղդել մեր մեջ, գնում էինք անընդհատ ետ նայելով, ձին այնինչ ճորակն էր մտել

ու ջուր էր փնտրում: Այդտեղ պիտի ջուր լիներ - չկար: Կռահեցինք, որ աղբյուրը տարել են: Ձորակն ի վեր ձիավարեցինք, պարանոցը երկարած՝ ձին անընդհատ ջուր էր փնտրում, և դեմ ընկանք բետոնե ամբարտակին ու թուջե կափարիչին: «Բարև ձեզ, ասացինք, դուք էս երկրի տերն եք. քաղաքն էլ է ձերը ու գյուղն էլ»»: Կափարիչը հանեցինք գլորեցինք, մեր գլուխը ներս մտցրինք նայեցինք և երբ մեր գլուխը ետ հանեցինք՝ մի վատ, բայց մեր կարծիքով արդար թշնամություն էինք մտածել - մտածել էինք ամբարտակը պայթեցնել:

Դինամիտ բանեցնել չգիտեինք. ձին հեռացրինք կանգնեցրինք մի հեռու ապահով տեղ, դինամիտներն առած ետ եկանք: «Էս երկիրը դեռ անտեր չի, կներեք», ասացինք: Վախով, չարությամբ ու հավատով՝ թե հիմա իսկապես պայթեցնելու ենք, դինամիտի խուրձը շարտեցինք ամբարտակ, մենք ետ նետվեցինք ու պառկեցինք: Մեր ականջները ափերով փակած պառկել էինք, սպասում էինք պայթյունի՝ չկար: Մի քիչ էլ ետ փախանք ու դարձյալ տափակեցինք գետնին, բայց պայթյունը չկար ու չկար:

Ընռացանք ծեծված շան պես. գնում-գնում ետ էինք նայում, գնում-գնում դարձյալ ետ էինք նայում. «Դուք էդպես գրագետ ու ամենագետ եք, մենք էլ էսպես խեղճ, ուրեմն», ասում էինք, և ծեծված շան նման երբեմն ետ նայելով այդտեղից քշվում էինք:

Մուրադենց հին քարհանքում վարպետն ու աշակերտը՝ մեզանից սերվածը, սալ քարեր էին հանել, մոտիկ հին մատուռի խաչքարը բերել դեմները տնկել, ընդօրինակում էին: Եկանք, ձիու վրա թուրքի փաշայի նման ձեռքը կոնքներիս կանգնեցինք

գլխներին ու չբարևեցինք: Մեզ նման հպարտ մեկն էլ վարպետն էր, նայեց, չբարևեց, թքեց ու գլուխը կախ իր գործին կացավ: Աշակերտը մեզ զննում էր, մեր նայելու հետ հայացքը փախցրեց, բայց հետո, երբ մենք նրան թիկունք էինք արել, մեզ դարձյալ զննում էր: Ասացինք.

- Է, հետո՞:

Վարպետը հեզնեց.

- Բարև, աստծու բարին: Այսինքն թե մենք պարտավոր էինք նախ մի բարևել: Ասացինք.

- Էս ի՞նչ է, և գլխով ցույց տվինք թամբից կապված փոքրիկ խուրջինը: Ասաց.

- Հանելո՞ւկ ես ասում:

Ասացինք.

- Դինամիտ է:

Ուները բարձրացրեց: Ասացինք.

- Ի՞նչ ժողովուրդ եք, ո՞ւմ եք ծառայում:

Չար-չար նայեց ասաց.

- Եթե դինամիտի մասին ես հարցնում՝ ոսկու պես կտրվում է, մենք սեպով ենք աշխատում, ուրի՞շ:

Էդ մի կենտ արտահայտությունը՝ «ոսկու պես կտրվում է», մեզ մեղմեց, ժպտացինք ասացինք.

- Գիտե՞ք որտեղ եք - Մուրադենց մեր հին քարհանքում եք. Մուրադենց տղերքը քարն էստեղ կտրել, ջորու վրա զույգ-զույգ՝ մի ջորու վրա երկու հատ դրել, կաճաններով տարել են գյուղ, գյուղում տարել բուխարի են կապել, բուխարին կա:

Անմարդամոտ տղա էր, մեր մեղմությանը մեղմությամբ չպատասխանեց - ասաց.

- Էդ ինչի՞ ես պատմում:

Ձիու վրա ձգվեցինք ասացինք.

- Ձեր տեղը ցույց ենք տալիս՝ որ էս օտար երկրում չկորչեք:

- Շնորհակալություն, ասաց:

Ասացինք.

- Ոսկու պես՝ ծառն էլ է կտրվում, բայց տակը դինամիտ եք դրել:

- Ես քեզ ասացի սեպով եմ աշխատում,- ասաց,- քարը սեպով եմ կտրում:

Թշնամաբար՝

- Օտարներդ, ասացինք, անհայրենիք ոչմիտեղացիներդ:

Գլխով աշակերտին ցույց տվեց, ասաց.

- Ձեր Մուրադենց երեխան է:

Մուրադենց ցեղի և առհասարակ մեզնից փոքրերի մեր քամահրանքով մի թույլ աշակերտին նայեցինք, դարձանք վարպետին, հետո չգիտենք ինչու դարձյալ աշակերտին նայեցինք - աչքը մեր աչքին գցած համառորեն նայում էր: Շփոթվեցինք, չգիտենք ինչու ասացինք.

- Մուրադենք քոչել են, էլ էս գյուղում չեն:

Աշակերտը քմծիծաղ արավ ու իր գործը շարունակեց: Ասացինք.

- Գերեզմանաքա՞ր եք տաշում:

Վարպետը պատասխանեց ի միջի այլոց.

- Կուգես գերեզմանի քար ասա, կուգես՝ բուխարու, մեզ ասել են սարքեք՝ սարքում ենք. ծառայում ենք, ինչպես նկատեցիր:

Մոլորված մնացինք-մնացինք, ասացինք.

- Չգիտենք. մի խորհրդի, մի խելոք զրուցակցի, մեզանից մեծի մի մեծ կարիքի մեջ ենք: Գիշերները դուք որտե՞ղ եք քնում:

Նրանք սակայն մեզ զրուցակից չէին, եթե էին էլ՝ ցույց չէին

տալիս, գլուխները կախ իրենց գործին էին, և մենք նրանց մոտ ավելորդ էինք:

Այդ՝ փոքր հայրենիքի, փոքր հայրենիքում մարդու ազատության և օտար վայրերում մարդու անազատության ժամանակներն անցել էին, ոչ ոք այստեղ օտարություն չէր քաշում, օտարը թերևս միայն մենք էինք՝ որ մեր հին ժամանակներից ընկել էինք նոր ժամանակներ:

Վիթխարին մենակ եկել վայրենի մոռուտում մոռ էր քաղում ու չէր վախենում: Ձին արահետի վրա նրա դույլին դեմ ընկավ, փռնչաց ու կանգնեց: Սուլեցինք: Թփերի մեջ կանգնել մեզ էր նայում: Դույլը լիքն էր, փեշը քշտել մոռը փեշի մեջ էր հավաքում: Մեր հայացքը ամաչելով մի կողմ տարանք՝ որ իրեն կարգի բերի, բայց երբ ետ նայեցինք՝ դեպի մեզ ու իր դույլն էր գալիս ծնկները դարձյալ անամոթորեն բաց: Եկավ, մի տեսակ պատրաստակամ, բայց նաև փորձող ու փորձանքի բերող հայացքով նայեց: Առաջին խոսքը մեր բկում մնաց, հետո հազագինք ասացինք.

- Մենակ չե՞ք վախենում, օրիորդ, էս վայրենի անտառում:

- Ումի՞ց,- ասաց,- քեզանի՞ց:

- Շագարումի փորձանքից, ասացինք, ինչո՞ւ մեզանից - արջից:

Գուցե ծամոն, գուցե մոռ՝ դանդաղ ծամելով նայեց ասաց.

- Դու քեզ ինչո՞ւ ես արջ ասում, դու տղամարդ ես, էն էլ ինչ տղամարդ:

Այդ կանացիության առաջ խեղճացանք ու լիրբ ործի պես քծնեցինք.

- Իհարկե, մենք էլ մարդ ենք:

Ծնկել, փեշն ուզում էր դույլի մեջ դատարկել, կասկածով մեզ նայեց, ասաց.

- Դո՞ւ լցրիր, դո՞ւ ես լցրել: Կիսատ էր՝ լցվել է:

Մենք իսկույն կռահեցինք. այդ լայն ծնկների, այդ վիթխարի կանացիության շուրջը իհարկե պիտի որ գյուղացի երեխաներ պտտվելիս լինեին: Ասաց.

- Շնորհակալ եմ:

Շրջապատում մարդ մարդի շունչ չկար, մենք ձին զուտ ենթադրությամբ քեցցինք դեպի բարձր մոռուտը, կարծես որևէ մեկին տեսել էինք ու վրա էինք քշում հատկապես նրան, և հայիոյեցինք.

- Այ ես ձեր անառակ հերն անիծեմ, ձրիակեր շան լակոտնի, փչացած անպիտան... խոտն էնտեղ հավաքելու, չորացել կծղել է... ես ձեր ձրիակեր...

Կոճղի վրայով մի կարմիր շոր ցատկեց. դա կարող էր նաև պատրանք լինել, բայց մանկական զսպված ծիծաղն ու փախուստի խշրտոցը պատրանք չէին. տղա երեխաներ էին ու շատվոր էին - ամբողջ մոռուտը շարժվեց, մենք կարծես թե դարձյալ մի բոլորովին երեխայական թիկունք տեսանք, մեկը կարծես թե ընկավ ու ելավ:

Դա արդեն Ռոստոմի ու այդ էգի հարցը չէր, գյուղի երիտասարդության հարցն էր - կատաղությունը մեզ կալավ, ձիու գլուխը շուռ տվինք ասացինք այդ կնոջը.

- Օրիորդ եք, տիկին եք, ինչ եք... գալիս եք էս ժողովրդին փչացնում եք... մեջտեղը կանգնում ու քամակների բաց եք անում, չեք էլ ամաչում, չեք էլ ասում նայող երեխա կլինի, հայ քրիստոնյա պառավ ու հալիվոր կլինի... էդ է դուք եք ու ձեր սրտի ուզածը... կարծում եք նայողն անասուն է ու մարդ չի...

Բայց մեր ծանր խոսքերը չէին ազդել ոչ այդ կնոջ, ոչ էլ երեխաների վրա. ինչ էլ անեինք՝ նրանք միմյանցից իրենց բաժինը պիտի առնեին: Հավաքվել գնացել երեխաներն այդ կնոջ հմայքներին գերի էին ընկել - մեկը կարտոլ էր կլպում, մյուսը աման էր լվանում, եփվող մուրաբայի փրփուրը մի աղջնակ գործիմացաբար քաշում էր, երկուսը փայտ էին սղոցում, ինքն այդ կինը իր ներքնաշորերը լվացել փռում էր, մեկը նրան օգնում էր փռի, թեկուզ այդտեղ օգնելու բան չկար: Գետափի հին այգու դարպասն այս անգամ բաց էր, ձին քշած ներս մտանք՝ լակոտները երամի պես շաղ անցան, ամեն մեկը մի ծակ մտավ, և միայն մեկը՝ որ քաղաքաբնակ էր, կացինը ձեռքին կանգնեց ու մնաց, իսկ այդ կինը՝ ոչինչ, իր ծամոնը որոճալով նայում էր: Զայրույթը մեզ կալել էր, չէինք կարողանում մարդավարի մի խոսք ասել, մռնչալով ձին սրա-նրա վրա էինք քշում, և միայն, երբ քաղաքաբնակը մեզանից ձիպոտ կերավ ու ասաց «ես քու գյուղացի ծորտը չեմ, գիտես», մեր բերանից հասկանալի խոսք ելավ:

- Քու փաստաբանությունը գնա քու քաղաքում արա, ես քու...

Այդ այգուց, ուր հիմա քար, ավազ, կղմինդր ու առհասարակ շինանյութ էր դարսված և մեծ շինարարություն էր ենթադրվում (մարմարե սպիտակ ցայտաղբյուրն արդեն ջուր էր բխում), երեխաներին մենք դուրս արինք, չափարից դենը ձանապարհին նրանք խմբվեցին ու թշնամաբար ետ-ետ նայելով գնացին: Փարթամ այդ տիկինը նույնպես իր բաժին խոսքը մեզանից առավ. ինքն ասաց.

- Անմեղ երեխաներից ի՞նչ ես ուզում, եկել էին լողանալու, ես

շոգ կրակին լողանալու իրավո՞ւնք չունեն:

- Քեզ նման տկլորիք ու մեկ-մեկ տաշտակդ քաշիր, այո, ասացինք: Քեզ տեսնելն արդեն մեծ մեղավորություն է: Քու տերն ո՞վ է, էստեղ դու ինչացո՞ւ ես - հոտերդ հավաքիր ու քեզ էգուց էս երկրում չտեսնենք:

Զգիտենք երեխաները իրենց մեջ ինչ էին խոսում, բայց որ մեր դեմ որևէ բան էին մտածում՝ ակնհայտ էր. ուսի վրայով ոմանք երբեմն ետ՝ մեզ էին նայում. մենք ծիուն չէինք շտապեցնում, խմբի ետևից դանդաղ գնում էինք, մեր ու խմբի միջև բավական արանք կար, տասը-տասնչորս տարեկան երեխաներ էին, բայց մեկը բոլորովին էր երեխա, ձեռքից բռնած էին տանում. խմբից հստակ ու զնգուն եկավ մեկի խոսքը.

- Դու երեխա չունես, դրա համար էլ էդ ես:

Մեր ծանր կոպերը վար բերինք, ասացինք.

- Զենք մոտենում, չենք ուզում ջոկել որիդ խոսքն էր:

Լռեցին, հետո հանդգնեցին ասացին.

- Որ մոտենաս էլ՝ ի՞նչ ես անելու:

Անձոռնի մեկը կար, կռացավ քար վերցրեց ու սպասեց: Բայց մեր մեջ ոչ զայրույթ ու ոչ էլ վախ կար - արտասուքը մեր կոկորդը բռնեց, մեր ծանր կոպերից արցունք կախվեց: «Մենք ձեզ մատաղ, մենք ձեզ զոհ, ձեր անմեղ ոտի տակ մենք հող լինենք, շշնջացինք, շանսատակ արեք ազատվեցեք ձեր Ռոստոմից դուք էլ, ինքն էլ»:

- Կռացել քար եք առել, խփե՛ք, ասացինք, աշխատանքների թող անտեղի չանցնի, տվե՛ք, ասացինք, կռացել քար եք վերցրել:

- Զիդ վրա էիր քշում, էդպես կկանգնես, ասացին:

Ասացինք.

- Չենք մոտենում՝ որ չտեսնենք ումն եք ու ով եք:

- Տո քոնը չենք... մեր գլխի վրայով՝ պժժալով մի քար թռավ:

Ռոստոմը մեր մեջ, մեզանից անկախ, հիմա-հիմա զարթնում էր, երեխասիրությունն ու առհասարակ մարդասիրությունը մեր մեջ ուրեմն արմատակալած չէին... մեր զայրույթն ու քարկոծումը սակայն խանգարվեցին:

Մեր ու հարևան գյուղերի միացյալ տնտեսության այսպես կոչված ղեկավարը շրջագայության էր ելել իր կալվածքները, մեքենայով եկավ դեմ ընկավ մեր ու երեխաների տեսարանին. հարբեցողի մեկն էր և հիմա էլ հարբած էր, ժպտում էր չգիտենք իր որ հաջողության վրա. եկան դեմ ընկան մեզ ու մեր ծիուն ու ճամփա ուզեցին, շատ ավելի ծոծրակով քան ետ նայելով՝ մենք զգացինք որ ինքն է ու ծանապարհ չտվինք, գլուխը մեքենայից հանեց, ծիծաղեց ասաց.

- Է, հետո՞:

Ծիծաղելու սիրտ չունեինք և ընդհակառակը՝ կռվի էինք պատրաստ, ետ չնայեցինք ասացինք.

- Էդ՝ գրասենյակիցդ ինչո՞ւ ես դուրս եկել - վերններում միս ու արա՞ղ է շարժվել, թե՞ ուրիշ էլ բան կա, ուրիշ հոգսերն էլ ընդունակ են քեզ տեղահան անել:

Ասաց.

- Դաժան ես:

Ինքը «դաժան» չէր. ինքը և մեղմ էր, և ընկերական, և ենթարկվող, և դեռ գինով, բայց իրականում ոչ այս էր, ոչ այն - խորամանկ էր:

- Որ մենք մեր գլխի տերն էինք, ասացինք, այսինքն առանձին երկիր, ամառ չի եղել, որ Մամռուտ խոտհարքներից հիսուն տոննա ու ավելի խոտ չհանենք. էս տարի դու էնտեղ եթե

չորս տոննա խոտ ունեցար...

Մեզ ու մեր ժամանակը բացահայտ անձնատրության պես գովեց, բայց դա խաբեություն էր, ասաց.

- Ա՛ դուք... մեզ տարել ում հետ ես համեմատում: Շտո խեղճացավ, բայց դա նույնպես կեղծիք էր, ասաց. ժողովուրդ չունեմ, այ ընկեր, ժողովուրդ. իմ ղեկավարությանը հիսուն տոննա ես էլ եմ խոստացել, բայց ումնո՞վ հավաքեմ, ժողովուրդ չկա:

«Ժողովուրդ չունի»... իսկ երեխաների խումբը ճանապարհին կանգնած մեր վեճը լսում էր: Ասացինք.

- Որ չէիր կարենալու կառավարել՝ գյուղս ինչու հանձո՞ւ առար, գյուղս ինչո՞ւ ես կործանում:

Ասաց.

- Ժողովրդի առաջ քո ղեկավարությանն ինչո՞ւ ես հեղինակազրկում, չգիտե՞ս որ դրա դեմ պետական հատուկ օրենք կա: «Ժողովրդի առաջ»՝ այսինքն երեխաների ու իր վարորդի: Ասաց. Զին տակիդ է, համեցիր գրասենյակ խոսենք: Կուզենաս՝ ավտո կորկենք, իսկապես:

- Շնորհակալ ենք, ասացինք, մենք ոչ կենտրոն ենք, ոչ ընտանիք, ոչ էլ կնկա կողմի բարեկամություն - քո ավտոն մեր տակին ինչ գործ ունի, մենք կողմնակի անտառապահ մարդ ենք, անտառի պահակ:

Զխնայեց ասաց.

- Դե կողմնակի ես՝ կողմնակի էլ կաց: Շտո «ձանձրացավ», արհամարհեց ասաց. Դե լավ, գործի ենք գնում, ծամփա տուր անցնենք:

«Գործի էր գնում», վաղը հյուրասիրություն ուներ, գնում էր գյուղից գառ, արաղ, թթու-մթու հավաքի. մենք այդ հետո

տեսանք. հիմա՝ երեխաների խումբը մեծերի մեր վեճից հոգնեց, մեծերի մեր աննկատ բախումը՝ այսինքն որ մենք չէինք ուզում ծանապարհ տալ, ձին մի կողմ չէինք քաշում և մեքենան ստիպված էր ծանապարհից կիսովին ելնել ու մեզանից այդպես անցնել, այդ բախումն ահա ուշադրության չառավ, ցատկեց, ծղրտաց, հենց վազելիս էլ հանվեց ու ժայռի վրայից՝ գետը, շատերը՝ հենց շավարով, շատերը՝ լրիվ մերկ. ի՜նչ ցատկեր էին, մեր արդեն փափկող, արդեն ծանր զանգվածի կողքին ի՜նչ մարմիններ էին, ի՜նչ ինքնամոռաց համարձակություն էր՝ որ ջրի տակը չգիտեին ու թռչում էին մեջը: Ջիլ, զնգուն կանչում էին.

- Արա՛, արի:

- Արա, քար է:

- Մուկը-մուկը-մուկը, մտավ ծակը:

- Արա, երեխան: Ապերո, չթռչես, մի՛:

Երեխան սակայն տեր ուներ. երեխան էլ տեր ուներ, իրենք բոլորն էլ. մեջներն, այո, աղջնակ կար՝ կարծափեշ, գոտիով, մազը հավաք արմատից պինդ կապած մի բոլորովին աղջնակ, ամբողջ խմբի հսկիչ տերը նա էր՝ որ հիմա չոր խարկված լանջին խմբի ցաքուցրիվ հագուստը հավաքում էր. մի անգամ մեր կողմը կտրուկ հայացք նետեց, գողը կարծես մենք էինք ու մեզանից էր պահպանում. հավաքեց, գետի վրա ժայռի գլխին, որտեղից երեխաները հավանաբար երևում էին, կիտեց ու կողքին նստեց. ոչ, տղա-երեխան սողալով չարչարվում էր տղաների մոտ գետն իջնելու, գնաց ետ բերեց, թաթիկներին էլ դեռ մի երկու խփեց, հագուստների կույտի կողքին նստեցրեց՝ փեշերը ձգելով, կանացիաբար ծնկները հավաքեց:

Միացյալ տնտեսության այսպես կոչված ղեկավարը գնացել վաղվա իր կերուխումի համար մեր գյուղից մթերք էր հավաքել, ետ էր գալիս. գյուղի տակ դարձյալ հանդիպեցինք - մեքենայի թափքում երկու գառ, խցիկում ծնկների մեջ բռնած մի շտոփ արաղ: Ուզենայինք էլ՝ չէինք կարող ձանապարհ տալ, ձանապարհն այդտեղ նեղվածք էր, պիտի ձանապարհից ուղղակի դուրս գայինք՝ տակը կամ գլուխն անցնեինք, բայց դուրս չեկանք, դեմառդեմ կանգնեցինք մնացինք: Ստեղծված վիճակի առաջ մենք կարծես անհողդողդ էինք, ինքը չդիմացավ՝ ծիծաղեց ասաց.

- Այ ընկեր, հիմա՝ ձամփից մե՞ր անասունը հանելն է հեշտ թեքու:

Գյուղից ու տնտեսությունից մի բան դեռ հասկանում էր, մեր նժույգի հմայքը ընկալեց, ասաց.

- Բա հին ժամանակները չլինեին, կենտրոն գնալիս հովատակդ ասեի երկու օրով տուր, խնդրեի ախպոր պես:

- Դո՞ւ, ասացինք, քե՞զ:

Ամոթ ու խղճի մնացորդ, այնուամենայնիվ, դեռ ուներ - նեղվեց, ծիծաղեց, արաղի ու գառների այդ կողոպուտի մասին ասաց.

- Ազնիվ խոսք՝ թե մի բերան ինձ է հասնելու - կենտրոնը հավաքվել տասը մարդով վաղը գալիս է:

Ասացինք.

- Իրենց առաջ էլ ահա հաշվետու կլինես, մենք քեզ համարով ենք, և ձին ձանապարհի տակ քաշեցինք՝ այսինքն թե գնաս բարով: Բայց նա իր մեջ դեռ տրորվում ու մեր առաջ իրեն հաշվետու էր զգում. ասաց.

- Մեքենա դրկեմ՝ վաղը արի. վկա կլինես՝ որ ե՛ս չեմ ու իրենք

են, համ էլ մարդիկ են, քեզ կտեսնեն, կձանաչեն:

- Թթու գտա՞ր, թթու, ծաղրեցինք, լավ շուշանի թթու: Մեր քվեր մառնանում թթու դրած լավ շուշան կա:

Ծաղրը հասկացավ, բայց ուզում էր ծաղրվելով մեզանից որևէ օգուտ պոկել. ասաց.

- Բայց դու կարող էիր հալիվորների ու պառավների ուժով խոտհավաքը կազմակերպել, բրիգադիրս անպետք դուրս եկավ:

- Տիրոջը քաշեց, ասացինք:

- Ընկերոջդ չես ուզում օգնես, նեղության մեջ մենակ ես թողնում:

- Մենք քու ընկերը չենք, ասացինք, քու ընկերները էգուց են գալու, գնա: Եթե էդ գառները քեզ ընկեր են՝ Ռոստոմն էլ: Էս դրախտի պես շեն գյուղը կերար, կործանեցիր: Շացը, ասացինք, հացը... Էն սեղանի հացը որ ուտողի առաջ է, ուտողին եթե ընկեր է՝ Ռոստոմն էլ քեզ:

Մեզ չէր հասկանում: Չէր հասկանում մենք հիմա՞ր ենք, հեղ-կոմների ժամանակներից մնացած կատաղի՞, թե՞ դերասա-նություն ենք անում: Ուզում էր մեզ վրա զայրանալ՝ ծիծաղն էր գալիս, ուզում էր ծիծաղել՝ ծիծաղելի չէինք: Մենք ջանում էինք նրա առաջ հենց այդպես անթափանց էլ մնալ: Ինքը իր մեջ ուռած մեծավորի պես ասացինք.

- Զաղացատեղն էն ո՞ւմ ես տվել, արա:

- Երեխա՞ ես խոսեցնում, ասաց:

- Գետափի ծառերն ու ջաղացատեղը, ասացինք: Ո՞ւմ ես ծա-խել:

- Էդ արդեն քրեական գործ է, ասաց:

- Անտեր ես թողել՝ եկել տուն են սարքում, ասացինք, ո՞վ է սարքում:

- Քեզ նման մեկը,- ասաց,- որ սարքելու իրավունք է տվել իրեն:

- Իսկ դու էս երկրի վրա պետությունից նշանակված ինչացո՞ւ ես:

- Սոխի գլուխ, զրո,- ասաց,- հաշիվներն անելիս ինձ ու քեզ եթե զրո է դրել՝ ես ու դու ուրեմն զրո ենք: Մեքենայից իջավ, վարորդին, որպեսզի նա իր գաղտնի խոսքը չլսի, հեռացրեց, եկավ մեր ծիու ասպանդակը բռնեց ու տակնիվեր նայելով ասաց. Զգիտեմ ով է, բայց ով որ է՝ պինդ կրունկ է, քեզ անտեղի տակը չգցես: Ըո գազան չի լինելու՝ մարդ է լինելու, մրսած թրջված անցնելիս կլինես՝ կկանչեն, մարդ են, մի բաժակ արաղ կտան, էդ էլ մեր օգուտը: Պատրաստի այլուր ենք ստանում, ավերակ ջաղացը մեր ինչի՞ն է պետք. էդ խնձորից մի հատիկ մի անգամ կծած կա՞ս:

- Իմ տեղն է՛, գոռացինք, իմ հայրենիքն է, իմ երկիրն է, քու օտար շնչից զգվում եմ, չեմ ուզում իմ երկիրն օտար շունչ մտնի:

Մեր հավատամքը, մեր աղոթքը կես վայրկյան էլ չհարգեց - ասաց.

- Ես քեզ ախպոր խորհուրդ եմ տալիս՝ դու քու հին դերասանությանն ես:

- Առաջին օտարը դու ես, ասացինք, քեզանից սկսվեց, ընտանիքդ քաղաքում է, միտքդ ու սիրտդ քաղաքում են, գյուղը քեզ համար մառան է, ով քանի ուլ ունի, որ պառավը քանի հավ... պաշտոնից կհանեն՝ գյուղից ոտդ էլ կկտրես: Ամենաօտարը հենց դու ես, ասացինք:

- Վիրավորում ես,- ասաց,- կվիրավորվեմ, շատ ուժեղ կվիրավորվեմ:

- Վիրավորում եմ՝ որ վիրավորվես, ասացինք, հենց վիրա-

վորելու համար եմ վիրավորում. ոտիցս խնդրողական բռնած ոնց որ կաս ու մենք էլ քու գլխավերևը ձիու վրա ենք՝ հենց էդպես էլ թշնամանք համարիր, քանի որ քու ղեկավարությունն էս գյուղի վրա՝ ամենամեծ թշնամանքն է: Մենք հովըտեցի սիբիրականնին չենք՝ որ Պավե-աղա Արզուտինսկուդ բարեն առնենք, տեղն եկած տեղը շինարարությանդ օգտակար լինենք ու գիշերը գա թե չէ՝ շենքդ վառենք: Իրավունքներիդ էս գյուղից քաշիր, կենտրոնին ասա հարբեցող եմ՝ ի վիճակի չեմ, մարդ եղիր, հասկացողություն ունեցիր ու հասկացիր, որ էն հացը՝ որ էս գյուղում քու առաջ են դնում, թքած է, վրան թքած է:

Ավելի վիրավորականը, սակայն, պատահե՛ց, և այդ նոր ստորացման առաջ կասկածի ու արժանապատվության զգացում նա միայն մի պահ ունեցավ, հաջորդ պահին արդեն գլխակորույս նետվել էր ծաղրուծիծաղի մեջ... քանի որ չէր կարելի ուշացնել, գառները ձեռից գնում էին. վարորդը մեքենայի խցից ելել քիթը քչփորում էր, թոխլիները ինչ մտածեցին, մեքենայի թափքից ներքև ցատկեցին, մոլորված դեսուդեն նայեցին:

- Արա, փախան, բռնիր, փախան, գոռաց:

Վարորդի վրա-վազելու հետ թոխլիներն իսկապես խրտնեցին ու փախան: Ահա այդ պահին էր, որ միացյալ տնտեսության այսպես կոչված ղեկավարը բոլեական արժանապատվություն ունեցավ, այսինքն հասկացավ, որ իր հասակի ու պաշտոնի մարդուն չի կարելի տղա երեխայի պես գառների ետևից ընկնել, բայց հաջորդ պահին արդեն վազում էր: Մենք մեր գլուխն օրորեցինք ու ծլթծլթացրինք, իրականում սակայն այլ հոգսերի էինք:

Ճանապարհը գյուղի տակ այդտեղ նեղ էր, մտածեցինք արգելափակոց դնել. այդ միտքը մեզ տեղնուտեղը անլուրջ

թվաց, բայց մենք չկարողացանք մեզ սթափ հսկողության տակ պահել. ձիուց իջանք, ծանրումեծ լրջությամբ չափեցինք ձանապարհի լայնությունը քայլերով, հետո նորից չափեցինք, հետո ցցերի տեղը, միմյանց նկատմամբ ունենալիք դիրքերն ու բարձրությունները որոշեցինք, հետո այդտեղ ձանապարհին նստեցինք և, պլանշետը ծնկներիս, մեր հաշիվները ծոցատետրում ՇԼԱԳԳԱՌԻՄ նշման տակ գրելուց հետո, գրեցինք ծառ կտրելու արտոնագիրը: «Լիցենզիա», ասացինք մենք և գրեցինք.

Ար-տո-նա-գիր

Քոշաքարա հպարտ լեռներից մինչև Շայի-Թուրքի զույգ Ոսկեպար էս ամբողջ երկրի տեր Ռոստոմ Մամիկոնյանին, ասացինք մենք և գիրկապով գրեցինք.

Ծմակուտ տեղամասի անտառապահ ընկ. Ռոստոմ Սարգսյանին. Խնթրվում ենք դրությունը մտեք թույլ-թույլ տվեք, այս ամբողջը մենք ջնջեցինք, Տեղամասի անտառապահ խնդրարկու Ռոստոմ Սարգսյանին թույլ տալ անտառի կարիքների վերաբերյալ ձամփա-փակոց կապելու համար անտառից կտրել տասը մետր երկարությունի (10 մ.) 0,1 հատ (մեկ հատ) ջահել կաղնի կամ բոխի, բարդին էլ հարմար կգար, ասացինք մենք, վեց մետրը փակոց լծի համար, մնացորդ չորսի 2-ականները կողմնային ցցերի, կատարն էլ հանդում ընկած էդպես մնա, ասացինք մենք: Այսինքս շլագբաում: Խնդրում ենք մերժողական չլինեք: Քոշաքարա լեռներից էս սիրուն սարերով մինչև զույգ Ոսկեպար Ծմակուտ աշխարհի տեր Ռոստոմ Մամիկոնյան, ասացինք մենք և ստորագրեցինք. Տեղամասի անտառապահ Ռոստոմ Սարգսյան:

Ստորագրության զարդերն ու գծիկները մենք խնամքով քաշեցինք, թուղթը իրար վրա երկու անգամ ծալեցինք, հետո այդ գրությունը, ինչպես որ ուրիշից ստանալինք, բացեցինք, Էս ի՞նչ է, կարդացինք գյուղավարի մեր աչքերից հեռու բռնած, կաղնի, ջահել, «խնդրում ենք մերժողական չլինեք», հետո հիմարությո՞ւնն ասենք թե խեղկատակ սկզբունքայնությունը մեզ կալավ. գրության վրա, ինչպես որ պետերն անում են, թեքությամբ մակագրեցինք՝ «մերժել. կարող չենք. Ալբոյի չափարում հավելյալ լատաննի կան, այսքանը մենք ջնջեցինք և շարունակեցինք այսպես. հայթայթել հավելյալ միջոցներով. տեղամասի պետ՝ Ռոստոմ Սարգսյան»։ Զեղյալ արտոնագիրը մենք ծալեցինք մեր վերնաշապկի գրպանը դրինք և բարձրացրինք մերժված խնդրարկուի մեր դեմքը։ Էդ է, ասացինք. գնա ում ուզում ես բողոքիր։

Տնտեսության ղեկավարը ծանապարհի գլխին բաց լանջին փախած թոխլին բռնել էր. բռնել էր երևի լավ չարչարվելուց հետո, անասունի ոտը բռնած նստել էր. վարորդը մյուսի ոտները կապած թափք էր դնում. երեխաների խումբը եկել ծանապարհին մեզ դեմ էր ընկել ու կանգնած նայում էր, աղջնակը խմբի առջևում էր. ի՞նչ էին մտածում մեր մասին, մեզ սիրո՞ւմ էին թե ատում, մեր մեջ ի՞նչ էին ուզում տեսնել՝ չգիտենք. փոքրերը մեծերից որևէ բան եթե նայում ու վերցնում են՝ իրենց առաջ էին մեր վարքն ու անձն էլ, տնտեսության ղեկավարն էլ՝ որ թոխլին հիմա քարշ էր տալիս մեքենա - թող նայեին ու վերցնեին. իրենք մեզ սիրելի էին - աղջնա՛կը, աղջնա՛կը, սիրելի էին հենց այդպես խմբով։ «Մեջքդ ցամաքի, ասացինք, ինչ ցամաքեց ու մեզ համար մի պտուղ չստեղծեց. հետները կանգնած հիմի իրա Ռոստոմին նայելիս կլիներ»։

Մենք ելանք, շտկվեցինք ու ասացինք դեպի խումբը.

- Քար էիք առնում, ո՞ր է ձեր քարը, խփեք:

Խումբը չշարժվելու պես իր մեջ մի թեթև շարժվեց ու չպատասխանեց:

- Դուք լավ գորք եք, ասացինք, ձեզանով լավ այգի կավիրվի... բայց լավ էլ խոտ կհավաքվի: Խումբը նկարի պես լուռ էր: Աշխատանքը խաղ է, ասացինք, խաղալով-խաղալով՝ դեզը մեկ էլ կանգնում ու կենտրոնի առաջ հպարտանում է: Մեզ համար խաղ էր, չգիտենք: Անցած գնացածի վրա մեր ձեռքը մենք դառն հիասթափությամբ թափ տվինք:

13

Պատերազմական ձմեռվա և՛ անուրախ, և՛ սիրելի պատկերը շաղվեց, կոլխոզային ցուլի դրդոն կանչի տակ շաղախվեց, հստակվեց ու հաստատվեց մեր աչքերի առջև. խոտի կոլխոզային դեզը Օսեփանց հին խոտհարքներից փոխադրվելու էր, է՛, Մելքսանց հին ձմեռանոցներ՝ ուր կոլխոզային տավարի գոմերն էին.

ապակիները սառցակալած էին, ցուրտ, աղոտ դասարանում պատուհանի տակի նստարանին մենք ու մի նիհար աղջնակ էինք, չենք հիշում ով էր, բայց նիհար էր ու մեզ սեղմվում էր՝ որ մեզանով տաքանա, ուս ուսի կպած գրում էինք, բարակ գրիչները մեր մատների մեջ ուժեղ սեղմում էինք, մենք էինք տաշել - մեր գրիչը թելով փայտիկին փաթաթած գրչածայր էր. հետո տետրակի երեսը ավելի մթնեց - դպրոցի օրիորդ վարիչուհին՝ այտոսկրուտ, շրթունքը համարյա թե մութ աղվամազոտ, կոնքերը ծանր՝ դեմքը հպել ու աղոտ ապակու միջով դրսից նայում էր, գլխին բրդե շալ էր փաթաթած, ձիու ոտնա-

փոխի խուլ ծայն էր գալիս, հետո պղնձե զանգը երկու թույլ դողանջ տվեց. հետո, բակում, ռազմագիտության վիրավոր, զույգ անթացույթ վիրաբույժի գնդուն հրահանգը՝ օրիորդ վարիչուհու կարգադրության շուրջը հասկանալուց հետո. «Ինչպե՞ս, այո... Չորս, հինգ, վեց, յոթ՝ բարձր դասարաններ, շարվի՛ր»։ շարված էինք, թևը ձիու սանձի մեջ ու ձեռքերը կաշվե բաժկոնի գրպաններում՝ մեր դեմ օրիորդ վարիչուհին էր, տաբատը նույնպես գալի՜ֆե սև կաշի էր, երկարաձիտ սապոգները՝ նույնպես, միայն գլխին բրդե շալ էր փաթաթած. այդ նիհար, սփրթնած, վախեցած երեխաների վրա նրա ներսում կարեկցանք կա՞ր - անթափանց էր. նրա հայացքից կախված՝ ռազմ. հրահանգիչը կարծում էր իր շարքից նա դժգոհ է - ուղղելով ու ձգելով նա տողանցեց, հետո զույգ անթացույթի ու մի ոտի վրա լայն ցատկոտելով՝ մոտ վազեց նրա կարգադրության շուրջը լսելու, բարձրաձայնելու. նա ուրեմն խիղճ ուներ, կարգադրել էր՝ «Ինչպե՞ս, այո, հասկացա - աղջիկներին՝ շարքից ելնել. տղաներին՝ խտանալ», հրահանգեց ռազմ. դասատուն և, արդեն թեթևանալով, ժպտալով, արդեն իր անունից՝ «Աղջիկներն ուրեմն ազատվեցին»։ հետո՝ պարանները ուսպանդ արած (ուսի վրայով և մյուս թևի տակով փաթաթած), թևքները կարծ, երկարաձեռն, ձեռքներն ու աչքները մրսած տղաների մեր խումբն ենք հիշում և օրիորդ վարիչուհու կաշեպատ լայն գավակն ու նեղ թիկունքը մեր դեմ. ձիու սանձը քաշելով գնում էր, չհամարձակվելով առաջ անցնել՝ տղաների մեր խումբը գնում էր նրա ետևից.

դեզի հին տեղը ձյունե ամայի սպիտակության մեջ մի ծեղ խոտ չմնաց, միայն մաքուր ավլած-սրբած դեզատեղի մուգ քառանկյունն էր, մնացյալը՝ սպիտակ ամայություն. բարձած հա-

րյուր խեղճուկրակ կնկա ու մի երեսուն այսպես կոչված բարձրդասարանցու խոտի մեր քարավանը սպիտակ ամայության մեջ մրջնաշար էր կապել Օսեփանց հին խոտատեղերից, է՛, Մելըքանց հին ձմեռանոց՝ ուր կոլխոզային տավարն էր - իջնում ձորն էր ընկնում ու ուռիների փոքրիկ պուրակով մի պահ ընդհատվում, ելնում էր սարալանջ ու խոտորու գնում, գնում սարալանջի ձորակն էր ընկնում՝ ուր ձյունը շատ խորն էր, ելնում, գնում երևութ էր լինում ձմեռանոցին՝ ուր մարդու նշույլը միայն կոլխոզային տավարի գոմաղբն էր. առջևից ջահել գալլի պես ձյունը ձղելով գնում էինք մենք՝ պատանի Ռոստոմը. ոչ մի բողոք ու թեկուզ տրտունջ չենք հիշում, մեր թիկունքները ծեծող շալակների խշշոցը կարծես թե հիշում ենք - խըշշ, խըշշ, խըշշ, լռություն ու լուռ տառապանք. օրիորդ վարիչուհին գալիս էր շարքի կողքից՝ բարձած ձին քաշելով, առաջ էր ընկնում, ետ էր ընկնում, մենք տառապում էինք յուրաքանչյուրս իր մեջ, վարիչուհին՝ բոլորիս համար.

Երբ դեռ բեռները կապում էինք, հուզիչ մի բան պատահեց. վարիչուհին, որ մեր կողքին ծնկած խոտ էր խորոմում, ելավ կանգնեց, ձեռքը մտասույզ ծոցը տարավ, կաշվե բաձկոնի ծոցագրպանից մետաքսե, անկյունում «Վերգին» ասեղնագործած թաշկինակ հանեց, ծալքերում՝ մի երկու չոր ծաղիկ. հետո կանայք ու նա իրար էին նայում, հետո կանանցից նա՝ ով Վերգինն էր, թաշկինակը նրա ձեռքից առավ ու մի կողմ քաշվեց. վարիչուհու խանդը, թաքուն արհամարհանքի թույլ ժպիտը մի պահ եղան - թեքով ծակատն ու աչքերը սրբեց ու դարձյալ ծնկեց խոտի վրա. դժվար էր կռահել թե այդտեղ ինչ պատմություն կար, բայց կար. քիչ հետո, երբ վարիչուհին կաշվե բաձկոնը հանեց (մնաց տղամարդու բանակային վերնաշապկով), այդ Վերգինը

երեսը խմբից դարձրած մեկուսի կանգնած էր, բաձկոնը տարավ նրա ուսերին գցեց, հետո այդ Վերգինը ձյունների մեջ կքել, բաձկոնի օձիքները բերանի մոտ հավաքել, հոտ էր քաշում ու լուռ լաց էր լինում.

ի՜նչ սրբուհիներ էին. մեկը սայթաքեց ու բերանքսիվայր մնաց շալակի տակ, հետո ելնելիս խուլ ու սրդողած բողոքեց «իիի, Հիտլեր» - դա միակ անեծքն էր, այդ էլ խեղդվեց վարիչուհու զուսպ սաստի տակ՝ «ձա՛յնդ»... ձմեռանոցի մոտ, դեռ ձորում, մեծ զառիվերը ելնելուց առաջ, ձների մեջ նստոտել էին շունչ առնելու, շալակները կռնակներից չէին հանել, բարձած ձիու սանձը թևքի մեջ, առաջվա նման անթափանց՝ օրիորդ վարիչուհին բռան միջից ձնագունդ էր ծծում, կարծում ենք գոհությու՜ն ու ժպիտը բռունցքով թաքցնում էր մեզանից. գոմի ետևը կոլխոզային նախրի ծանր ցուլը խուլ, հզոր ու տաք բառաչեց, ելավ գոմի ետևից, ծանր, գեղեցիկ ու ահարկու կանգնած՝ սկսեց իր ցլականչի շարանը. ուղղակի զարհուրանք էր, բայց մի կանանց հիացումն ու սերը տեսնեիք. ասացին. «Վույ, վույ, վույ... ախչի, սոված ա էլել՝ էն խեղճը կարացել չի, այ, տուն անի»... «Տասնյոթ, տասնութ, տասնինը... քսանհինգ, քսանվեց», ցլականչը համրում էր դպրոցականներիցս մեկը. էն խեղճը՝ կաղ, պուճուր-մուճուր մեր ցլապահ ալեվոր հորեղբայրը, ցուլի դեմը կտրեց ու, մի կենտ ծիպոտով, ուզեց ետ տալ ցուլը՝ որ հիմա թափ առած գալիս էր խոտի վրա. տավարը գոմում խոտի հոտն առավ ու խելագարվեց, կոլխոզային ամբողջ նախրի բղավոցից գոմն ուղղակի դղրդում ու ցնցվում էր, իսկ ցուլը եկել հենց շալակների միջից խոտ էր ուտում, և բոլորը երանության մեջ էին, ցուլը կարծես նրանց երեխան էր, ու որ ասում ենք նրանք սրբուհիներ էին, նրանց ահա այդ երանությունն ենք հիշում:

Նկատել ենք, որ վերջերս հաճախ ենք հուշերի տրվում. ուրեմն ծերանում ենք կամ ներկայի մեջ մեր տեղը նեղ է: Իբր, ահա, մեր շապիկի ու վարտիքի թևքերը քշտած՝ գետակում մեր ձին լողացնում ենք, և հեռու ճանապարհով անցնող աղջիկներն ու հարսները մեր կողմը նայում, իրար բոթում, մեր մասին խոսում ու իրենց մեջ ծիծաղում են: Այդ հուշը մենք նահապետ տղամարդու մեր կամքով ուղղակի փակեցինք և տեղը ավելի մաքուր ու բարոյական պատկեր դրինք. հնձվորներս, բոլորս էլ տղա, ուզում ենք լուսանկարվել, խառնվում ենք, մեր տեղերը չենք գտնում, բոլորիս բերաններում էլ չայրվող սիգարետներ են, ձևի ու գեղեցկության համար ենք բերաններս առել, ոչ մեկս էլ ծխող չի:

- Ձեռ քաշիր, ասացինք, անցածը ետ չես բերի: Ու ոչ էլ, ասացինք, ուզում ենք ետ բերել:

Ալբերտի տունը, այգին, բակը ամբողջ գյուղում եզակիորեն մաքուր, խնամված ու կենդանի էին, տանտերը տնային-տնտեսական ինչ-որ մեքենա էր նորոգում՝ երևի սղոց, տան ետը չնայած կաթի ցիստեռն-ավտոմեքենա էր կանգնած, ուզում ենք ասել դա չնայած մեխանիզատորի տուն էր, բայց բակն ու դռները աղտոտված չէին, ինչպես սովորաբար լինում է. այդ մաքրությունն իրենից Ալբերտի՞ց էր, նրա թմբլիկ, արագ, աշխատասեր տանտիրուհո՞ւց՝ որ այդ մաքուր տներ-դռներիս անընդհատ գործ էր գտնում ու նրա ուժեղ կոնքերով-փորով մարմինն անընդհատ շարժման մեջ էր. վեց-յոթ տարու մի տղա-երեխա, ջանալով մեզանից աննկատ մնալ, կասկածով ու թշնամանքով հետևում էր մեզ, մյուս երեխաները իրենք չէին երևում, բայց այդտեղ՝ այգու ծառերի վրա ու վերը՝ թփուտ լանջին էին -

երգում ու իրար ձեն էին տալիս.

- Մեծացել թռել են, բունը դատարկ է:
- Թևը կոտրածն է՞լ, թևը կոտրածն է՞լ չի տեղը:
- Դա՛տարկ է:
- Կատուն կերած կլինի: Արա Վահա՛ն...
- Թուշը դեղին են տանձը որ կար, է... դեղի՜ն, դեղին՝ լրիվ

դեղին:

- Չուտես, էդ երեխայինն է:
- Ծիտը կեսը կերել է՛:

Դռանը մաքուր, առողջ, սպիտակ լվացք էր փռած, կարելի է ասել, որ տունը, այգին ու թփուտ ամբողջ լանջը երգում ու ճռվողում էր, և մեզ, մենք չնայած այդ տան վերաբերմամբ անմաքուր բանի էինք, դա մեզ դուր էր գալիս - այդ արևածաղիկները, այդ փարթամ խնձորենիները, դռանը հավասար սղոցած ու պատի պես շարած փայտի խորանարդները: Այգու ցանկապատը նույն խնամքոտ ձեռքի գործն էր, առանց շաղախի՝ քարերը քարերին լավ էին հագցված. քարե պատի վրայով ուղիղ լատաններ էին գցված, մեզ հետաքրքրողն ահա այդ լատաններից (բարակ գերաններից) մեկնումեկն էր, մենք աչքաչափում էինք, և այգու տղա-երեխան մեզ հետևում էր: Երբ ընտրեցինք ու լատաններից մեկի ծայրը ցցից պոկեցինք՝ երեխան արդեն չդիմացավ ու իրեն աչքառ հանեց:

- Մեր չափարն էդ ինչ ես անում, է՛յ, ասաց:

Ժպտացինք ասացինք.

- Քար վերցրու, գետնից քար վերցրու ու քարով խոսիր - հորդ տղեն չե՞ս:

Մի րոպե կարծես թե հասկացավ, ազդվեց ու ձնշվեց, բայց երեխայի նրա էությունը հաստատ հասու էր միայն մի բանի՝ այդ

չափարը քանդողը իր թշնամին է. ասաց.

- Մեր չափարի մոտից գնա:

«Վեճի մեջ մտանք», ասացինք.

- Չափարը քոնը չի, փետն իմ անտառից ես բերել:

Կարկամեց ասաց.

- Վուայ... հետո պատասխանի խոսք գտավ. անտառը քոնը չի:

Ասացինք.

- Անտառը իմն է, վկայականը էս է գրպանումս:

- Վուայ, կարկամեց:

- Բա, ասացինք, էդպես է, աշխարհն օրենքով է:

Պատասխան չգտավ. զնգուն, բարձր, սիրելի՝ գանգատվեց եղբայրներին՝ որ լանջի ու այգու ծառերի մեջ էին, չէին երևում:

- Արա՛, սրտապատառ բղավեց, էս մարդը եկել մեր չափարը քանդում է, դուք ձեզ համար էդտեղ տանձ եք ուտում, արաա՛ա...

Ժպտացինք, մեզ ասացինք. հիմա երկու ոտ էլ ուրիշից փոխ առ, ականջներդ փակիր ու փախիր, ընկեր Մամիկոնյան:

Օգնության կանչին ի պատասխան կանչեցին.

- Շունը, արա, շունը բաց թող:

- Էդ ո՞վ է քանդում, արա:

Սա մեզ ներկայացրեց.

- Մի պառավ հաստ մարդ է, որ խոսում է՝ խզզում ու խեղդվում է:

Ուրեմն արդեն ծերացել ենք, «պառավ ենք, խզզում ու խեղդվում ենք»: Մոտիկ ծառերից մեկի վրայից մի տղա քարի պես ուղղակի ընկավ՝ կաթեց, մեզ ձանաչեց, ասաց.

- Ծմակի խոզն է:

Տանտերը նրան սաստեց՝ «ձե՛նդ», բայց իրեն զսպել չկարողացավ, նրա թաքուն ծիծաղը մենք լսեցինք, այդ ծիծաղը, երբ

այգու արահետով նա դեպի մեզ էր գալիս, չէր անցել նրա հանդուգն դեմքից, գողի և անտառապահի մեր հարաբերությամբ մեզանից կախված, բայց և չգիտենք ինչ զորությամբ անկախ, իրեն հնազանդորեն մեզ ենթարկող, բայց և չգիտենք թաքուն ինչ դանակով սպառնացող նրա կեցվածքից: Մենք նրանից այլ արարք ու այլ ոճ էինք սպասում և ըստ այդմ էլ լրջորեն չարացած մեր գործին կացանք՝ լատանի մյուս ծայրը պոկեցինք ցցից՝ մեր ձեռքը վնասելով ու արյունը ծծելով, բայց եկավ հանգիստ ասաց.

- Առաջին անգամ սահմանս ոտ ես դնում ու՝ թուրքի պես թարս կողմից: Այգու դռնակը բացեց ասաց. Համեցեք:

Ասացինք.

- Մեր արարքը մեր հսկողության տակ է. եթե թուրքի պես թարս ենք մոտեցել՝ ուրեմն թուրք ենք:

Ասաց.

- Դու քեզ թուրք ու թշնամի ցույց տուր, քու թշնամությունը մեկ է ընդունող չկա, դու մեր հորեղբորտղա-հորեղբայրն ես:

Ասացինք.

- Երեխեքդ էլ էդպես ծանաչեցին:

Ծիծաղեց, ասաց.

- Գեմ լսել, վատ բան են ասե՞լ որ:

- Տախ ենք, տախ, ասացինք, աշունքվա կռտած խոզ ենք, հաստացել պառավել խզզում ու սատկում ենք:

Շատ էլ չջանալով հավատացնել՝ ասաց.

- Էդ խոսքը իմ տնից չի դուրս եկել, եթե ասել էլ են՝ ուրիշից են լսել, ուրեմն ժողովրդի կարծիքն է:

Լատանը ծանր էր, մի ծայրը մենք բարձրացրինք ուսեցինք, թվում էր նույնիսկ կարող ենք այդպես քաշելով տանել, բայց

շատ էր ծանր, գցեցինք: Կանգնած նայում էր, ասացինք.

- Շլագբաում ենք կապելու: Եթե հնար ունենայինք՝ Քար-կապը կտրաքացնեինք, էս երկիրն աշխարհից կկտրեինք, բայց դե...

Մեր մտքին իր վերաբերմունքը ոչ մի նշանով չմատնելով՝ գնաց դռնից բերեց մոտորավոր սղոցը. մենք այդ ժամանակ նրա տունն ու այգին դիտում էինք, իրար կողքի կանգնած տղա-երեխեքը մեզ էին նայում. ասացինք.

- Ծառուծաղիկդ, տունդ, երեխեքդ... արմատակալեցիր:

Մեր նշած տեղից լատանը սղոցով կտրում էր, մի պահ վեր՝ տանը, այգուն, երեխեքին նայեց, ասաց.

- Արմատակալեցի: Մի քիչ մտածեց ու դժվար, բայց բերեց իր շնորհակալությունը. Գիտեմ որ միսդ ուտելով, բայց կարենում անտեսում ես. էդքան էլ անհասկացող չենք, հասկանում ենք ու շնորհակալ ենք:

- Այո, ասացինք, փետ ես ծախում. ներող եղիր, չպիտի գիտե-նայինք, բայց գիտենք:

- Շնորհակալ ենք, կրկնեց:

- Շնորհակալ երեխեքիդ եղիր, ասացինք: Երգում ու իրար կանչում էին՝ կես ժամ կանգնել նայում ուրախանում էինք, հին Ծմակուտից մի երգեցիկ կտոր փրկվել ընկել է դուռդ, ուրախ ենք... բայց, ասացինք, խնդրում ենք, մի թող, Ռոստոմին չթողնես իր ուրախության վրայով լոք անի սահմանդ մտնի, Ռոստոմին իր սահմաններից չհանես:

- Չարչարվեմ էլ՝ չեմ կարող, ասաց. գնորդ չունեմ. ներքևի գյուղերն ինչ գազի են անցել՝ գնորդս պակասել է, գնորդ չունեմ:

- Էդ արդեն չափազանց կլինի, եթե քու գնորդը մենք

գտնենք, ասացինք: Ու մեր խոսքն էլ հիմա բոլորովին հակառակն է. Լանջերի մեծ կաղնին դու ես կտրել: Գլուխը կախ՝ սղոցի շարժիչը միացնում էր, ոտքով անջատեցինք ասացինք. Դինամիտդ մեր տակի մառանում է, երեխեքդ կանգնած ահա նայում են, երեխեքիդ պատկերի առաջ խնդրում ենք Կաղնուտ լանջերի ճամփան մոռանաս, խնդրում ենք: Սղոցդ հիմա չենք բռնագրավում, երեխեքդ թող չտեսնեն, որ իրենց հերը մեկի առաջ խեղճացել է, ծանր պատկեր կլինի, հավիտյան կհիշեն... Էն գերանը որ պատրաստել ես, կգնաս կկտրես, կփչացնես, կգլորես ձորը կաճես ու սղոցը կբերես մառանում դինամիտի մոտ կդնես, խնդրում ենք:

Լատանը թևատակեցինք ու քաշեցինք, ուզեց մյուս ծայրից բարձրացնելով մեզ օգնած լինել, արգելեցինք.

- Քու օգնությունը քեզ արդեն կարգադրվեց, ասացինք:

- Լավ տեղ չես դրել, խազեին,- ասաց,- դինամիտդ. կտրաքի հանկարծ ու... անհարմար տեղ ես դրել:

Կտրեցինք ասացինք.

- Խնդրում ենք. խնդրում ենք՝ երեխեքիդ առաջ արի թատրոն չդառնանք:

- Կքոչեմ,- ասաց,- կքոչեմ՝ էս ավերակներում կմնաս մենակ. թե՞ նպատակդ հենց էդ է:

Լքված տների միջով, ամայի գյուղամիջով, ավեր այգիների միջով լատանը մենք քարշ տվինք այնտեղ՝ ուր մտադրվել էինք արգելափակոց կապել. երբեմն կանգ էինք առնում հանգստանալու, բայց ամայի բակերի ու կողպ դռների ծանր պատկերը մեզ սպանում էր, մենք չէինք համարձակվում երկար ու խոր

նայել այդ պատկերներին: Շին դռներից երբեմն հին ծայներ էինք լսում, հին երգերի ծվեններ, երբեմն լվացք էր շխշխկում մեր աչքերի առաջ, երբեմն դպրոցական հին զանգ էր դողանջում, և այդ ամբողջը պիտի մերժվեր մեզանից, այդ ամբողջը մեզ քաշում իր մեջ էր առնում, մեզ խեղդում էր: Ե, վռչացինք, ապրող էիք՝ կապրեիք, մեռել եք՝ ձեզ համար մեռած էլ մնացեք, ի՛նչ եք ուզում ինձանից:

Երբ տեղ հասանք, լատանը գցեցինք ու ետ նայեցինք՝ դիմացի լքված այգով մեկը մեզ նման կես-լատանը քարշ տալով իջնում էր, ծանր էր, չէր կարենում, բայց բերում էր - կարմիր շավարավոր երեխան էր: Մենք հուզվեցինք, մեր վարքն ու բարոյականությունը երեխաներին ուրեմն դուր էր գալիս, մեզ ուրեմն ընդօրինակում էին: Մենք շտապ ընդառաջ գնացինք, լատանը ձեռքից առանք, բայց երեխային չէր կարելի վիրավորել - մի ծայրը թողեցինք իրեն, մենք թևատակեցինք մյուս ծայրը:

Նա քաղաք քոչած մեր ցեղի տղերքից մեկի երեխան էր, անմարդամոտ ու ինքնասեր երեխա էր, չենք կարող ասել, թե մեր անձն ու վարքը հատուկ պաշտում էր, եթե սիրում էլ էր՝ կարողանում էր ցույց չտալ:

- Բա չվախեցա՞ր Ալբերտի երեխանց քարապրանուկի տակ ընկնես, ասացինք:

Չպատասխանեց:

- Շը՞, ասացինք, բա որ քարապրանուկի քաշեին:

Շանգիստ արհամարհանքով պատասխանեց.

- Չէին քաշի:

Ասացինք.

- Ինչքան չլինի, իրենք բնիկ են, դու եկվոր - որ ուզենային կքաշեին:

Արհամարհեց: Ասացինք.

- Հորդ պես վատահ ես: Ընկեր գնդապետն ի՞նչ է անում:

Քամահրեց ասաց.

- Գնդապետություն:

Կամաց-կամաց զրուցելով՝ նրա հետ մենք արգելափակոցը կապեցինք. ցցեր տնկեցինք, հեծանի վրա ծակեր բացեցինք և այլն, մի նուփ-նոր կողպեք հարմարեցրինք՝ որի ռուսերեն բացատրությունը կարդաց ու գաղտնիքը գտավ ինքը երեխան, դպրոցական հին զանգը բերեցինք կախեցինք ցցից - այս անտառներից ծառ եք տանում՝ խնդրենք, զանգը կքաշեք՝ կգանք կբացենք մեր արգելափակոցը: Բանալիներից մեկը մենք երեխայի վզին անցըրինք, և այդտեղ երեխայական իշխանասիրությունը նա չկարողացավ թաքցնել: Ասացինք.

- Սխալվա՞ծ կլինենք՝ եթե անունդ Մելո, Մելիք ասենք. մենք ինքներս Ռոստոմն ենք, Սարգսյանց:

- Ֆելիքս: Բայց ինչո՞ւ պիտի Մելիք լինեի:

- Պապդ Մելիքն էր, Մելիք Սարգսյանը, Մելիք Սարգսի Սարգսյանը:

Քամահրեց ասաց.

- Գնդապետն իր երեխեքի համար ուրիշ պապ է գտել՝ Զոնոփդ, Լեոնիդ, Ֆելիքս:

- Մենք ի սրտե ուրախ ենք, որ մեր տղերքը քաղաքում աննշան չեն, գնդապետ են, մանավանդ մեր ազգի տղա մեր եղբայրները, ասացինք:

- Դուք ախպեր չեք, ասաց:

Մտածեցինք, ասացինք.

- Ուրեմն՝ գիտես, իրիկուններն ուրեմն նստում ու գյուղից պատմում եք: Մենք կարծում էինք տղերքը գնում ու հավիտյան

էդպէս էլ չեն հիշում, բայց ուրեմն չեն մոռանում, նստում իրենց երեխեքին պատմում են... որք Ռոստոմի մասին... որ Նրա արմատն էստեղից չի, բայց ամենաբնիկն ինքն է: Ոչ, մատաղ, ասացինք, ախպեր չենք ու մեր ազգանունն էլ փոխել ենք Մամիկոնյան, Ռոստոմ: Կուզենայի՞ր անտառապահ լինել - ձիով, հրացանով:

Կուզենար: Իրեն զսպեց ասաց.

- Դու հրեդ ես, էլի:

- Կուզենայիր, ասացինք: Սրա-Նրա դռանը մի բաժակ արաղի առաջ վիզ ծռողից անտառապահի պատկերը մենք բարձրացրել, հասցրել ենք մեր ձիավոր բարձրության: Թուլուց, օրինակ, պատմե՞լ են, որ մի բաժակ խմում ու թուլ էր լինում՝ թավալվում այսինքն: Բայց դե ժողովուրդն էլ շատ է անխիղճ. ձեռը դեռ օդում «խազեին ջան, գոմիս կտուրը ծածկելու է». արաղը խեղճ խազեինի բկում էր մնում: Դա մեր պատմությունն էր ու մեր խղճահարությունն ու ծիծաղն էր արթնացնում, այդ երեխայի համար դա ոչինչ չէր նշանակում: Խնդրենք, ասացինք:

Առաջին ու վերջին մեքենան՝ որի առաջ մեր փակոցը արգելք եղավ, մեր գյուղի բեռնատարն էր, վարորդը մեր քրոջ կրտսերն էր, գյուղկոոպի պահեստներից վերադառնում էր, եկավ դեմ ընկավ մեզ ու մեր գործին, ու գործակատարը՝ խելացի, թերահավատ, դանդաղ ու խոսքը նույնպէս հաշվիչի վրա ձշտած մեր հասակակիցը, որ քսան տարում իր վրա մի պակասորդ ու կասկած չի առել, մեր գործի վրա հուսահատությամբ ու նույնիսկ զգվանքով «այեւ» արեց.

- Այեւ, այեւ, ասաց:

Ինքը Մարոյի ու Նրա երկու աղջկա հետ նստել էր թափքի բեռների մեջ, վարորդի կողքին իր տեղը տվել էր Մարոյի

երեխամայր աղջկան. գեղեցիկ, մեր կողմերի համար տարօրինակ արարածներ էին ինքը Մարոն էլ, աղջիկներն էլ, նույնիսկ խակ դեռահասի մեջ ինչ-որ մարտահրավեր, վստահություն ու հիվանդագին կանացիություն կար: Մեր տարիքն անցել է, չասենք թե նրանց ներկայությունից մեր սիրտը հատկապես թրթռաց, բայց որ գնդապետի փախստականը նայեց, պարտվեց ու իր մեջ զայրացավ՝ հաստատ:

- Խնդրենք, ասացինք, ամեն մուտքի համար մենք ուրախանում ու ելքի վրա տխրում ենք. Ռոստոմ Մամիկոնյան:

- Այե՛, այե, ասաց:

Մեզ մի քիչ երեխայամիտ զգացինք, խեղճ ու մեղավոր ժպտացինք, բայց և թատերայնությունը մեր մեջ անձնատուր չեղավ - շտկվեցինք, մեր ունքը բարձրացրինք, ասացինք.

- Ուրիշ ելք չունեինք, ներող եղիր:

Հոգոցով՝ «բացիր,- ասաց,- բացիր. ծամփա տուր»:

- Մի հատ էլ տնակ ենք դնելու, կողքին մի նստարան մեխենք ու վրան մի երեխա դնենք կամ մեր մադամին, ասացինք:

Գլխով հեծանը բարձրացնել ցույց տվեց, ասաց.

- Կվառեն տնակդ էլ, տունդ էլ ու էդ օտար երեխային էլ - դու գազազաճ էս ժողովրդի հետ կատա՞կ ես անում:

Մենք ոտք խփեցինք մեքենայի սռնուն, եզրից բռնելով թափքի բեռները զննեցինք, ասացինք և՛ լուրջ, և՛ կատակ.

- Բայց ծանոթով չի, օրենքով է. բեռդ եթե խմիչք է՝ մեր գյուղ չենք թողնում:

Բեռան կեսը օղի էր: Ասաց.

- Քու գյուղն էստեղ ապրանք չունի. շաքարն ու մակարոնը դազախեցի սարվորի խնդրանքով է, խմիչքը՝ օտար մշակի, գյուղում մշակ կա:

Կանանց ներկայությունը մեզ վրա, այնուամենայնիվ, ազդեց, կատաղեցինք ասացինք.

- Բայց դու էս գյուղի՝ հոգսի համար ես:
- Պրծած պատմություն է, գերեզմանոցը հոգս չունի, ասաց:

15

Երեկոյան, ասացինք մտնենք Սարգսենց հին փառահեղ տները. ոսկի էին ունեցել, հին Թիֆլիսի ձևավոր ամբողջ զարդունախշը իրենց սյուների, բազրիքների ու դռների վրա թափել էին. չնայած անխնամ լքվածությանը՝ արժեք ու հին հարստություն էին հուշում և՛ խամրած բրոնզե ծանր հին ջահը՝ որի մոմակալների մեջ նավթի հին մեծ լամպի կողքին այրվում էր էլեկտրական մերկ ու խեղձ լամպը, և՛ թուջե նախշազարդ մեծ վառարանը, և՛ փայտե լայն թախտի խառատած ոտքերն ու սնարները, և՛ բուխարու նախշազարդ կամարը, և՛ հեծելաձիու հին թամբը՝ որ Սարգսենց նորոյրյա ժառանգը բերել թախտի վրա իրեն մութաքա էր արել: Վրան վերմակի տեղ երևի պապերի հին յափնջին էր քաշում, իսկ ներքնակը թախտի հին կարպետն էր՝ որ քոչի հետ քաղաք չէր գնացել. մութ խլափեղկավոր պատուհանների գոգերին մի երկու ծաղկաման կար, մեկի մեջ ցողունը չորացել ու այդպես մնացել էր. յափնջավոր-փափախավոր, դաշույնով ու արծաթով գոտեվոր-ված ձիավոր պապի նկարը քաղաք չէին տարել, թախտի սնարին կախված էր, պատահաբար թե ինչպես՝ մնացել էր նաև հնձվոր երեխա տղերքիս խմբանկարը - պապի մեծ նկարի անկյուն էր խցկված:

Ներս մտանք դուռը ծեծելուց հետո: Երեխան, որ պառկած ծխելիս էր եղել, ծխախոտը մեզանից թաքցրեց, և դա մեզ դուր

եկավ: Մեծ, ազատ, մութ սենյակում պտտվեցինք, հառաչեցինք.

- Վառարանը վառում ու պատի տակերով էսպես շարվում էինք. աղջկերքը՝ հորաքույրներդ, դաս էին անում, մենք էլ պապերի ժամանակներից պատմում, զուռնա-փչել ու դիոլ-խփել էինք սովորում... ցածր, լուռ... պատերազմ էր, չէր կարելի բարձր ուրախանալ... աղջկերքի պատմածից ինչ որ լսում էինք՝ մեր սովորելն էդ էր... քու հերը, ձեռը չնայած ոչ մի անգամ դիոլ առավ, ոչ բերանը՝ զուռնա, մեր մեջ նստած էր, բայց իրեն հեռու էր պահում... երևում էր, որ պիտի քոչի: Գիտե՞ս ինչի ենք եկել - եկել ենք գնանք մեր տանը հաց ուտենք:

Սոված էր, բայց ասաց.

- Շնորհակալություն, սոված չեմ:

- Ծխում եք, ասացինք, չեք թողնում ձեր մարմինն ազատ ածի, ձնշում եք... Նեղ, հիմար շալվար եք հագնում: Կներես, ասացինք, տանը երեխա չունենալու պատճառով երեխայի հետ համապատասխան վարվեցողություն էլ չունենք, վեր կաց:

Դեմքը մեզանից դանդաղ շրջեց. մեր քննադատությունն ուրեմն չէր ընդունում, լեզվի տակ մեր դեմ ուրեմն խոսք ուներ:

- Քո հասակին ոչխարի մոտ էր եղել, ասացինք, մեր ու ձեր պապ Սումբաթի գլխին դաչաղը վեց հոգով կանգնել էր: Տարել Փափախքար շորերը հագից հանել, թիկունքից տվել թոքը խանչալով խառնել, ասել էին դե գնա: Ձեռը վերքին սեղմած եկել էր. որ շնչում էր ասում է՝ վերքից արյուն էր պղպջում: Գնանք, ասացինք, նկարը մեր տանն է, կտեսնես: Էս էլ էինք պատմում: Մարդին մեր տղերքը սպանել էին - թուրքի պուճուր կնիկը նայել, ձենը կտրել, նայել, փորի պտուղը շուռ էր տվել վրիժառու տղայի, այսինքն տղա էր ծնել ու տասնութ տարի հետո թվանքը ձեռը տված դրկել վրեժի. եկել էստեղ մեղավոր-

անմեղ-հարակից յոթ տղա էր չոքեցրել. էս էլ էինք պատմում: Քու հերը՝ ոչ, քու հերը ոչ իր ցեղի պատմությունն էր մի հատուկ ու խոր լսում, ոչ էլ նոր պատմությունների մեջ ընկնում, միտքն ուրեմն քաղաքում էր - որբնայրի կնկա խնդրողական ձեռ, վիզը ծռած աղջիկ կամ ընկերական կապվածություն քու հոր փեշն էստեղ թփի պես չափտի բռնեին. քաղաք ու գնդապետություն. չենք նախանձում, չէ, ուրեմն արժանի էր: Տես, ասացինք. միասին հնձի ենք եղել, նկարվել ենք, ինքը կենտրոնում է, անցորդ անծանոթի նման՝ մենք ետևն ու կողքին, այսինքն հնձի գլխավորն ինքն է, բայց նկարը մոռացել չի տարել:

Ունքերի տակից մռայլ նայեց, ասաց.

- Պատմում էր:

- Գիտենք ինչ են պատմում, ասացինք. «հա՛տ, նանը... անտառն իմն է»՝ մեր հոր տնազը, «արա, տուռ սպանիռ, մեղք է, վախը փոռում ինչքան է ապռելու»՝ Ղեվանտ Վրացյանի տնազը. իսկ որ աղիքները հավաքել փորում էսպես բռնել ու խլած խանչալով երեք հոգուն ու հետո էլ մի ուրթ ժողովրդին ձորն էր ածել՝ էդ մասին լռություն: Պատմություններ են, ասացինք, գյուղի կենսագրություն է - ո՛վ է տերը. մենք էլ կանցնենք կգնանք՝ ու ո՛վ կպատմի, ո՛ւմ կպատմի, ո՛ւմ մեջ կլինեն, ո՛վ կլսի... անտեր եղելություն են: Էստեղ էս գյուղի տեղը, հարյուր տարի առաջ, որ արել են՝ մի էսքան տեղ է եղել, մի ձվի չափ: Զորս կողմի վրա հովըտեցու դեմ, դազախեցու դեմ, շան ու չոբանի ու թվանքի ու խանչալի ու օրենքի դեմ կռվելով-կռվելով... հիմա սա երկիր է: Ո՛ւմ համար են կռվել, ինչի՞ են ստեղծել, տերն ո՛վ էր լինելու:

Մենք ու երեխան դուրս եկանք, Սարգսանց հին փառահեղ ապարանքի դուռը երեխան փակեց, մտանք մեր տան արահետ:

- Զահելական, հին պատմություն է, բայց է, ասացինք. մեր տիկինը քու մերն էր լինելու, ինքը քու հոր, քու հերն էլ իրա համար էր, իրարու գյուղավարի պինդ խոսք էին տվել. մեր տիկնոջ համար մենք չկայինք. հիմա կանք, եթե լավ նայես՝ հիմա մեր ծառերի միջից մեզ նայում է, «ինչո՞ւ ուշացավ, ի՞նչ պատահեց, պետության շահի վրա բարեկամին ինչո՞ւ է թշնամի անում» և այլն. հետո նայիր ինչ եղավ. դու մի թուրքով օրհորդն ես, ես քու գնդապետացու հերն եմ, իրարու առաջ էսպես կանգնած ենք, Ռոստոմը գոյություն չունի, Ռոստոմը էս ետևիս փետն է... քա՞ր է թե փետ, հարցրինք:

Նայեց, Շին կոճղ է,- ասաց,- փետ:

- Շենց մենք ենք որ կանք: Շիմա տես ինչ է լինում, ասացինք: Մենք կոճղի ու երեխայի արանքից մի կողմ կացանք՝ և երեխայի դեմ հիմա կոճղն էր: Խնդրենք, ասացինք, էդ՝ ձեր Ռոստոմը, էդ էլ՝ դու, մենք գնացինք քաղաք: Գիտե՞ս ինչու. տիկինը չբեր է, ու եթե չպիտի զարգանա, այսինքն բազմանա՝ չպիտի բազմանա Ռոստոմի՝ տեսակը... քանի որ Ռոստոմն ինքը անտառի մատուռից գտնված անառակության պտուղ է ու բազմանալու անարժան: Խնդրենք, խեղդվեցինք, խնդրենք: Ախպերը՝ իհարկե ախպեր չենք ու հորեղբոր տղա էլ չենք. մենք ով ենք՝ որ ախպեր կամ հորեղբոր տղա լինենք, մենք... Ռոստոմն ենք, անտառի զավակը, կաղնի ծառից կաթել ընկել ենք մատուռ, ու որ Սարգսանց տանը մեզ թողնում էին երեխեքի մեջ նստել ու հույս ունենալ թե մենք իրենց ախպերն ու արյունն ենք՝ մինչև գետին խորապես շնորհակալ ենք: Քու պապն, ասացինք, մեծ անասնապահ էր. երինջ կլիներ, ձի թե աղջիկ՝ կնայեր ու գնահատականը կկնքեր - ինչ տեսակ է, ինչ ժառանգ է տալու, տալո՞ւ է թե մեջքը ցամաք է, էսինչ անասունը դրկել մորթի, էսինչը պահել,

շահել ու բազմացնել: Մեր հարսանքին նայեց, մտքում մեզ գուցե թե խղճաց էլ, բայց դե... որոշված էր, որ մենք բազմանալու տեսակ չենք:

Մենք կանգ առանք ու երեխային նույնպես կանգնեցրինք. մեկը մեր չափարից չոր ծյուղեր էր պոկոտում. Մարոյի փոքր աղջիկն էր. մյուսներն ու մայրը դռանն իրենց բուխարին վառել էին, կրակի վրա կաթսա էին դրել, կողքին նստոտել էին, բայց դա կրակ չէր, դրանով ճաշ չէր եփվի: Փոքր աղջիկը աղջկավարի ծյուղեր էր պոկոտում, մեր տիկինը այգում ծառերի ետևն իրեն թաքցնում էր՝ որ աղջիկը չտեսնի ու անհարմար զգա: Մենք ու երեխան նույնպես կանգ առած սպասեցինք աղջիկն իր գործն ավարտի:

- Ինչի՞ց էինք խոսում, հարցրինք:

- Թուրը ձեռքներից խլել, պատռած փորը բռնել ու վրա էր քշել:

Աղջկան չանհանգստացնելու մասին իզուր էինք մտածում մենք էլ, մեր տիկինն էլ - աղջիկը տիկնոջն ու մեզ տեսել էր, բայց իմությոյի-մերուծների զգացում չուներ (ինչպես և՛ նրա ընտանիքը, որ կանչեց. «Ախչի, շուտ արա, էս կրակն անցավ»): ընտանիքը՝ քույրերն ու մայրը, կրծքի երեխայի համար կեր էր տաքացնում. այս գյուղում դա միակ տունն էր, որ սահման ու չափար չուներ, բոլոր ճանապարհների առաջ ուղղակի բաց էր և միշտ այդպես էր եղել), աղջիկն այսինքն չէր հասկանում ինչու չի կարելի ուրիշի չափարը քանդել, եթե փայտ է՝ ինքն ուրեմն պիտի ջարդի, եթե միրգ է՝ պոկի. հիմա էլ բարձրացել էր չափարի պատին ու խնձոր էր քաղում:

Մենք բկահազ տվինք ու առաջացանք՝ այսինքն թե մեր ներկայությունից թող ազդվի, բայց կենդանու նման նայեց ու իր

գործին կացավ, և մենք նորից բկահազ տվինք: Իրենց դռնից, Այ ախչի, կանչեցին:

- Խակ է, ասացինք անցնելիս, սիրուն օրիորդ, խակ է, հասնի՝ ինքներս համեցեք կանենք:

Մեր ներկայությունն ու խոսքը ազդեցություն չունեցան - անհասկացող վայրենու նման նայեց, բերանի խակ միրգը դուրս թքեց ու ձգվեց նոր պտուղի: Ժպտացինք ու անցանք:

- Մի ամաչկո՛ւտ հեր ունեին. որ երեխայից ամաչում էր ջուր ուզի. տղերքս ասում էինք դա իր կնկանից ոնց չի ամաչում ու... մենք անդրադարձանք որ մեր ունկնդիրը երեխա է ու մեր ձեռքը թափ տվինք: Դարձել ենք գերեզմանոցի պահակ, զայրացանք, եկեք էստեղ ապրեցեք էլ, ձեր հիշողությունները հիշեցեք էլ:

16

Մեր տանտիրուհին մեր գալուստը նկատել ու սեղանին հաց էր դնում - երկու հոգու սպասք: Սենյակի դուռը բաց էր թողել: Նկատեցինք, որ երեխան մեր տան, այգու, խնամված բակի նկատմամբ ուշադիր է, ամեն ինչը զննում է և գյուղական այդ մաքրությունը նրան դուր է գալիս: Ակամա՝ մենք նույնպես սկսեցինք մեր տունը դիտել այդ երեխայի հայացքով - այգու դռնակը, ձին կապելու ծածկը, ջարդած դարսած փայտի ծածկը, մի երկու փեթակ մեղուն, երկու մարգ ծաղիկը, լոբու մարգերը, չորս հատ գառը:

- Շնորհակալ ենք, ասացինք: Քո հասակին էինք՝ ամուսնացրին, այսինքն ինչպես որ դու հիմա որք լինես, մենք բռնենք էն չափարի վրայի խակի հետ ամուսնացնենք. հարազատը հարազատին էդպես չի անի. հարազատը հարազատին, խակ հիմարությունից սա որ ասի էլ դպրոց չեմ

գնում, չի ասի լավ ես անում, հնգամյա անգրագիտությունն էլ քեզ բավական է - իհարկե հարազատ չենք. հավաքվեցին մի գիշերվա մեջ էս պատերը կապեցին ու մեզ ներս քշեցին: Իրար երեսի ամաչում էինք նայել, ամենքս թախտի մի ծայրին կուչ էինք եկել ու լաց էինք լինում, չգիտեինք ինչու էինք լաց լինում, բայց զգում էինք որ երկուսս էլ որբ ենք: Բայց իսկապես շնորհակալ ենք. հավաքվել պատերը դրել ու ծածկը կապել են, անարմատ-անակունք օտարի համար չգիտենք մենք էդքանը կանեինք թե ոչ: Շետո...

Պատշգամբում չնայած կախովի լվացարան կար և սրբիչի համար նույնպես կախարան կար, մեր տիկինը, երբ մենք լվացվում էինք, հնազանդ օրիորդի նման սրբիչն ուսին մեր կողքին էր. լվացինք, քամեցինք մեր ձեռքերը, սրբվելով ասացինք (և երեխան ճիշտ մեր շարժումնով լվացվում էր, ձեռքերը մեզ նման քամեց, և այդ հանգամանքից մենք զգացվեցինք, մեր խոսքը կարկամեց).

- Որ, այսինքն, չիմանաս ով, ինչ ու ինչ փորձանք է, աստծո՞ւ ծնունդ է թե շանուգիլի - վերունի մատուռում գտնես ու յափնջուդ մեջ փչելով-տաքացնելով, չէ՞ կարկուտ ու անձրև է եղել, ինչպես որ գյուղից գյուղ բռանդ մեջ կրակ տանես - բերե՛ս, ասես «իմ բախտն է, գտել եմ», քու ծնունդ քու իսկական երեխայի բերանից մոր ծիծը հանես, մորն ասես «հատ, նանը... սատկիլ չես, ծծերիցդ մինը էս աստծու գառանն է, մինը քու երեխինը» - սա իհարկե հարազատի վարք է, իհարկե Սարգսանց տղեն էսպես կաներ, ու մենք էլ միայն Սարգսյան ենք:

Դուռը բաց, սեղանը սենյակի մեջտեղը ու հացը զցած էր. ներս մտնելուց առաջ առանց կռանալու մենք ոտքով մեր

սապոգները հանեցինք, մեր մաքուր, չափավոր աղքատ սենյակ մտանք տնագործ սպիտակ գուլպաներով, սապոգները տանտիկինը կռացավ ու կարգով պատի տակ դրեց, երեխան անուշադիր անհասկացողաբար ներս մտավ նախ կոշիկներով, ապա հասկացավ ու դուրս եկավ հանվելու. մենք ու մեր տիկինը ժպտացինք, իսկ երեխան կռացել, տնքում ու երկար արձակում էր մարզական կոշիկների քուղերը:

Ուտելու իմաստով մենք ժուժկալ ենք, բայց սեղանը պիտի գեղեցիկ դասավորված ու ծանր լինի. մենք զննեցինք, պահարանի իր տեղից բերեցինք սեղանին դրեցինք նախշազարդ փոքրիկ երկու բաժակ ու օղու լիքը շիշը: Երեխան ասաց.

- Ես չեմ խմում:

Երեխան սպիտակ ձիավոր սև յափնջավոր հրացանավոր Ռոստոմի նկարի առջև կանգնել էր: Ասացինք.

- Մենք էլ չենք խմում. բայց պիտի սեղանին լինի՝ որ մեր աչքը կուշտ լինի, այսինքն Ռոստոմին չկարենան արաղով թուլացնել. մեծ Սարգսյանի մասին ի՞նչ կարծիքի է երիտասարդ Սարգսյանը:

Սև յափնջավոր Ռոստոմի նկարը երեխան Սարգսանց պապերի տեղ ընդունեց. հարցրեց.

- Թոքը ծակել էին, հետո ի՞նչ էր եղել:

Մենք մոտեցանք, մեր մատը դրեցինք Ռոստոմի նկարին, ասացինք.

- Չէին ծակել՝ խառնել էին. խանչալը խրել ու պտտել էին. քացով բոթել ձորն էին գցել ու ոչխարը քշել. եթե մեռած ես՝ հոտիր, եթե մեռած չես՝ մեռնելու վրա ձորում չարչարվիր, սև ագռավը գլխիդ թող պտիտ գա: Մի ործի համար, մի ործն ի՞նչ է - ոլորած պոզերով մի ործի համար. այսինքն թե ուզում եք

ամբողջ ոչխարը քշեցեք, բայց էդ ործը չենք տա. պահել ենք, շահել ենք, ձեռքներիս սովոր է, Սարգսանց ամբողջ մեծ հոտից (ասում է փռվո՞ւմ բացվում Կապուտլեռ սարի ամբողջ լանջը բռնում էր), մեծ հոտից ջոկվում, խաղալով-խաղալով գալիս մեր բռնից պատառ է ուտում: Չենք տա, այսինքն թե ձեր ուզածը չենք անի, քանի որ մենք մենք ենք: Ի՞նչ կարծիքի է երիտասարդ Սարգսյանը:

Մենք հասկացանք, որ երեխան մեր նկարը Սումբաթ պապի տեղ է ընդունել, ներողամտաբար ժպտացինք, ասացինք.

- Էս չի, էս մենք ենք: Խանչալը մեզ չի ծակում ու կարծում ենք հրացանի գնդակը՝ նույնպես: Մեզ փափկացնողը խնդրողական վիճակն է, այսինքն՝ որ վիզները ծռում ու ասում են «երեխեքս»: Մեր հերոսական պապը ահա սա է: Երեխային մենք տարանք կանգնեցրինք նկարի առաջ: Շրջանային թերթի լուսանկարիչը պապին նկարել էր կոլխոզային տոհմական վիթխարի ցուլի հետ. երեխաներս, ու մեծերը նույնպես, այդ ցուլից վախենում էինք. որ բուղազոռ էր տալիս՝ գոմը դղրդում էր. պապի ձեռքին այնինչ երեխայի մի բարակ ձիպոտ էր: Էս գոմն է ահա, ասացինք, էս՝ մյուս ցուլերը, սա ինքը Դոնբաս ցուլն է, մեր էն ժամանակ առատ ու հարվածային ամեն ինչը Դոնբաս էր կամ Ստախանով, էստեղ, մենք հին լուսանկարի շրջանակից դուրս եկանք, կոլխոզային բերքի պահեստներն էին, պատին հենած՝ սանդուղքը, պահեստի գլխին՝ լուսանկարիչը. վախենում էր մոտենա, սանդուղք ուզեց կտուրից նկարեց. պատի տակ գյուղի ամբողջ տղա-երեխայությունս է, առիթից օգտվել եկել ենք ցուլերը տեսնելու, նաև տեսնելու ինչպես են նկարում:

- Ղաչաղները... ասաց երեխան:

- Ղաչաղները իրենց ուզածը, մի բան էլ ավելի առան

գնացին, ասացինք: Պա՛պը. կյանքում ձեռը հրացան կամ դանակ չառավ. ցուլի առաջ էր, ոչխարի, մարդու թե շան՝ ձեռքին երեխայի մի ձիպոտ էր: Եկե՛լ - տկլոր... մենք երեխային դարձանք:

- Շապիկով-փոխանո՞վ, ասաց:

- Տկլո՛ր, ասացինք, մորե մերկ. էն ժամանակ չուխան էր ու անձնական կաշին. չուխան հանել են - մեռելի պես տկլոր. եկել, ուրթի մոտ քուլերի մեջ իրեն պահել է. որ շնչում է՝ կողքիդ օդ ու արյուն է պղպջում. ահա՛, կատաղեցինք, էդ բարձր բարոյականությունն է մերը - մեռնում ենք, բայց ուրթում երեխա ու կին, ջահել ժողովուրդ կա, մեզ տկլոր նրանց աչքառ չենք հանելու: Մի հավատարիմ Չամբար շուն են ունեցել՝ էս Ծմակուտ աշխարհի ոչխարապահ բոլոր շների մերը՝ անհանգստացել, գնացել փնտրել-փնտրել, քուլերի մեջ քնած-մեռած գտել ու աղիողորմը դրել է՝ ո՛ւուու... Հացի՛, ասացինք, մենք ու դուք էսօր պետական մի գործ արել ենք, հացի:

- Գողերը, ասաց:

- Գողե՞րը: Էն ժամանակ տարածը տարած, սպանածը սպանած էր. գողերի անունը կտրիձ, արդարների անունը խեղձ էր. խեղձերը գողերի վրա գովեստի երգ էին կապում ու երգում էին:

Նստեցինք հացի: Եթե մենք զավակ ունենայինք՝ այսպես ահա նստած էինք լինելու հացի. նայեցինք այդ անմեղ դեմքին, նկատեցինք՝ որ սոխը ծաշի միջից հանում է, չի սիրում, աչքի պոչով տեսանք՝ որ մեր տիկինը զմայլվել երեխային է նայում ու մտքերը հեռու են գնացել, հուզմունքը մեր կոկորդը նույնպես բռնեց և հազագինք ու ասացինք.

- Մի բան ենք խնդրում. մեր եղբոր զավակն ես. քանի էստեղ

ես՝ ամեն իրիկուն հացի միասին նստենք. մադմազելը ճաշի մեջ սոխ չի գցի: Մինչև ե՞րբ ես էստեղ, սեպտեմբեր՝ դասերն սկսվե՞լը:

Շատ ավելի մեր տիկնոջ դեմքից ու վարմունքից (ռադիոն երգում էր, գնաց ձայնը բարձրացրեց), մենք հասկացանք, որ գյուղում օտար մեքենա կա, թաքուն բան է կատարվում - լարվեցինք, հացի պատառը վար դրինք ու ելանք: Տիկինը արդեն դռն դեմը բռնել ու լուռ աղերսում էր դուրս չգնալ: Մեր ծանր կոպերը մենք իջեցրինք ու սպասեցինք ծանապարհ տա: Երբ ծանր սապոգները մեր ոտքերն էինք քաշում՝ լսեցինք, ասաց. «Մի անգամ քու տանն ու հալալ հացի չես լինում»: Ասացինք.

- Ուրեմն արժանի չենք:

Եվ մեր խոսքի ծանրությունը, սապոգավորվելու ծանր դանդաղությունը և այն՝ որ բանակային վերնաշապկի վրա բանակային լայն գոտին ձգեցինք ու խուլ տնքալով մեր կուրծքն ուռցրինք, և այն՝ որ երեխային չծանաչեցինք ու մեր ծանապարհից մի կողմ հրեցինք, մատնում էին, որ մենք կատաղած ենք ու սպանության ընդունակ:

Երբ արդեն այգում էինք, երեխան պատշգամբից թռավ, իսկ տիկինը շալն ուսերին գցելով իջավ պատշգամբից. մենք կանգ առանք, և տիկինը պարտավոր էր ինքը հասկանալ ու երեխային էլ հասկացնել, որ իրենց գալը Ռոստոմի համար ցանկալի չէ. տիկինը կանգ առավ ու երեխային էլ պահեց, և մենք ծանր ու սպառնալի քայլեցինք. Նժույզը այգու ազատ մասում կապած էր, Նժույզի մոտով անցանք, ոտ խփեցինք չափարի քարե պատին, շեք տվինք անցանք լատանի վրայով ու այգուց ելանք. չափարից քար ընկավ, մենք ետ դարձանք, ջանալով մեզ հանգիստ

պահել՝ քարը տեղը դրեցինք ու իջանք դեպի ծանապարհ:

Երեխան արդեն մեր արգելափակոցի մոտ էր, արգելափակոցը բացվել, կողպեքը կտուցից կախ՝ ջրհորի կռունկի նման վիզը պարզել էր: Մենք կախվեցինք, հեծանն իջեցրինք ու, քանի որ բռնիչ հարմարանքը չկար, ծայրին նստեցինք: Այդ ժամանակ ահա մի տեսակ հեռվում, մի տեսակ չնկատելով տեսանք երեխային, ասացինք.

- Դու էստեղ ես, հա՞... Լավ չի, որ էստեղ ես:

Դեմի զառիթափ ծանապարհով ինքնաթափ ծանր մեքենա էր իջնում, զգացվում էր՝ որ բեռնված է. լույսերը մի վայրկյան վառում՝ մոտավոր ծանապարհը տեսնում, մարում, գալիս ու արգելակվում էր. և՛ նորից:

Եկավ դեմ ընկավ արգելափակոցին, լույսերը վառեց, և մենք հեծանից իջանք, աչքներինս վրա մեր ձեռքը հովարեցինք, ասացինք.

- Ահա, էդպես վառած էլ թող:

Երեխան ամբողջ ուժով ընկել, մեր իջնելուց հետո հեծանը սեղմած պահում էր, նրա հուսահատ ձիգի վրա մենք շուռ եկանք, զսպված կատաղության ու ատելության թանձր աշխարհից մի րոպե մարդկայնության դարձանք, մեր ձեռքը դրեցինք լծին, ասացինք.

- Թող, անպետք դուրս եկավ, բաց թող՝ թող վերանա:

Շեծանի ծայրը երկինք թռավ, և մեքենայի դեմ հիմա մենք ու մեր թիկունքի երեխան էինք: Մինչև գետին, մեր ձեռքը մեր կրծքին դրած, գլուխ տվինք ասացինք. «Շնորհակալ ենք»: Եվ նորից մինչև գետին ծալվեցինք ասացինք. «Շնորհակալություն»: Ինքներս մեզ վրա խելագարի տպավորություն անելով, մեր վարքը մերժելով ու այդպես էլ չկարենալով իշխել մեզ վրա՝

մենք նորից խոնարհվեցինք ու ասացինք. «Խորապես մինչև գետին շնորհակալ ենք՝ որ մարդասպանությունից փրկել ու մեզ տեղաշարի՛ց չեք հանել»։ Մենք ուզում էինք նորից գլուխ տալ, բայց աչքի անկյունով նկատեցինք մեր տիկնոջը՝ որ տազնապի դիմակ էր դարձել ու խավարից, մատները բերանն առած, քայլ էր անում դեպի մեզ։ Նրա վախը մեզ ուշքի բերեց, շտկվեցինք, ձեռքով հովարեցինք մեր աչքերը և մյուս ձեռքը պարզեցինք։

- Լիցենզիա, ասացինք։ Շայերեն՝ արտոնագիր, որ փայտի գողության իրավունք ունես և առհասարակ այս երկիր մտնելու լիցենզիա։ Ոչ մի պատասխան։ Մարդ կա՞ եղտեղ, թե՞ հանցանքը գետնի պես պատռել ու կուլ է տվել - լիցենզիա։ Ոչ մի պատասխան։ Այլանդակվեցինք, ձեռներս պարզած, Շը՛, պատասխանի սպասեցինք։ Երկար լռություն, հետո՝

- Կենում եմ մարդատեսքի գաս՝ հետո, ասացին։

Ասացինք.

- Շատ կսպասես - լիցենզիա։

Խեղճ, պուճուր-մուճուր, աշխատավոր տղա էր. վախից գոռ-գոռալով իջավ, եկավ մեր դեմ կանգնեց.

- «Լիցենզիա, լիցենզիա»։ ասել են էսինչ դռնից կգնաս Կրիորի ծորը փետ կտանես, ի՞նչ լիցենզիա։

- Ո՞վ է ասել, հարցրինք։

- Իմ պետերը, ասաց։

- Քու պետերը չե՞ն ասել, որ էնտեղ Ռոստոմ անունով մի գա-գազած շուն կա, մի մարդասպան կա - զգույշ կլինես։

Ճարահատ ծիծաղեց.

- Դե էս է զգույշ էի, էլի։

Թեթև հրեցինք դեպի խցիկ, ասացինք «նստիր», մյուս կողմից ինքներս ելանք սանդղակին, լուսամուտը ծեծեցինք

ասացինք «բացիր»։ Բացելով ասաց. «Հիմի որ չբացեմ ու քշեմ ձորը գցեմ՝ ի՞նչ ես անելու»։ Կողքին տեղավորվելով ասացինք.

- Մեր ուզածն էլ էդ է։ Ետ տուր։ Մեզ թվաց առաջ է քշում, արգելակը քաշեցինք պահանջեցինք. Ետ տուր։

- Դե ետ եմ տալիս, էլի, նեղսրտեց, վերջը հաշտված ասաց. վերջը, մարդ չես։

- Մեր քննադատը դեռ չի ծնվել, քշիր, ասացինք։ Էգուց որ քիմգործարանի ծխերում երեխեքդ խաշվեն ու դրկես Ռոստոմի անտառները՝ մեր քննադատն այ նրանք են լինելու։

Գնացինք-գնացինք, ու չհաշտվեց, որ էս երկրում մեկն ասում է «իմ անտառները», «իմ երկիրը» - փնթփնթաց.

- Գլխներիս կնյազ Արգուտինսկի ես դառել - «Ռոստոմի անտառները»։

- Ճամփադ քշիր, ասացինք, էդ՝ քու պուճուր գլխի բանը չի։

- Ես էգուցվա հետ գործ չունեմ,- ասաց,- վառվող կրիորն էնտեղ փետ է ուզում՝ դու էգուցվանից ես խոսում։ Այսինքն իմ ինչ գործն է,- ասաց,- խազեիննին դուք եք։

Բայց ահա, երբ եկվորների (Մարոյի) դռանը կանգ էինք առել և նա տեսել էր թե փայտն ում համար խլեցինք և ինչ պտուղ են մեր հովանավորյալները, բողոքեց ու հրաժարվեց փայտը թափել. «Ո՛ւմ համար,- ասաց,- ես դրանց համար ավտո չեմ դատարկի»։

Մեր աղմուկի վրա սիրուն, բաց, անպաշտպան, իգական այդ ընտանիքը դուրս եկավ այդպես կիսամերկ-գիշերազգեստներով էլ շարվեց պատշգամբում. սիրուն հավերի տպավորություն էին անում ինքը Մարոն էլ, երեք աղջիկն էլ՝ որ իրենց մոր նման ձեռքները ծոցներում կանգնել, մի ոտքով մյուս ոտքը քորում ու ոտքները իրար էին սեղմում. մեկը՝ երևի թե երեխամայրը,

արթնանալու առիթից օգտվեց ու թեթև պետքի համար պատի ետևն անցավ. ոչ ամոթ ոչ բան, հետո էլ եկավ մյուս վառեկների կողքին կանգնեց:

- Ես դրանց համար ավտո չեմ դատարկի,- ասաց,- արգելակները պինդ քաշեց, խցիկից իջավ, դուռը պինդ շրխակացրեց ու վրդովված գնաց էն կողմը գետնին նստեց:

Զգիտեինք ինչ անենք. կանչեցինք «Ֆելիքս». ուրվականի պես մեր տիկինը կանգնած հեռվից նայում էր, երեխան խավարից զատվեց, առաջացավ:

- Էստեղ մի բան պիտի լինե՞ր՝ որ քաշեինք փետը դատարկվեր, գիտե՞ս, ասացինք: Երեխան չգիտեր, տնտղել սկսեց, և վարորդը՝ «Էէէ», զզվեց, դիվոտած եկավ բեռը թափեց:

- Ապրես, ասացինք, ճամփադ հիմա բաց է:

Ինքն այնինչ մեր դեմ բարյացակամորեն չէր տրամադրված, մեքենայի ետնամասով մեզ խփեց թափված կույտի մեջ գցեց ու քշեց գնաց: Ելանք, ժպտացինք ու փայտն սկսեցինք դասավորել, երեխան՝ մեզ հետ: «Թռչնանոցը» կանգնած մեզ նայում էր. եթե ասենք շնորհակալ էին՝ ոչ. եթե ասենք շնորհակալ չէին ու մեր նվերը չէին ընդունում՝ դարձյալ ոչ. կենդանիների, ի՞նչ ասենք, թռչունների նման իրար կողքի շարված նայում էին, մենք ու երեխան սանտիմը-սանտիմին հավասար կտրտված փայտը դասավորում էինք: Մի երկու անգամ զգացինք, որ մեր տիկինը այդտեղ մեր վերաբերմամբ վտանգ է կռահում ու մոտիկ խավարի մեջ կանգնած հսկում է մեզ: Աղջիկների մայրը՝ Մարոն, ձեռները ծոցում աղջիկների պես կանգնած, ոտքից ոտքի փոխվեց ասաց.

- Էդ՝ սրբացել ես, ապերո:

Քրտնել ու կռանալուց-շտկվելուց շնչահեղձ էինք լինում, հոգոցով ասացինք.

- Քո բաց ընտանիքի ու քո վերաբերյալ կարծենք միշտ ենք սուրբ եղել:

Երեխային կացնի ետևից ղրկեցինք.

- Փռան առաջ սատորի մեջ խրած է, գնա մեր կացինը բեր, ասացինք:

Թռչունը թռչուն, բայց ահա մեր լայն, լիքը թիկունքը կտրելու ցանկություն ունեին. մայրն ասաց.

- Էլյայի մահը իմացա՞ր, իմացա՞ր որ Էլյան մեռավ:

Մեզ դեռ զսպելով, դեռ հանգիստ՝ ասացինք.

- Էլյան ո՞վ է, նրա մահն ինչո՞ւ պիտի մենք իմանայինք:

Անասունի հանգստությամբ շատ լավ էլ խոցեց.

- Ժամանակին սրտիդ զարդն ու կրծքիդ վարդն էր, հիմի որ ասում եմ սրբացել ես՝ ասում ես չէ:

Մեր աչքերը փակեցինք ու կեցանք: Բայց զզվանքն ու զայրույթը մեզ ուտում էին, ասացինք.

- Խնդրում ենք, խնդրում ենք, ասացինք. էս քանդված երկիր գալիս ձեր հիմարությունը ձեր քաղաքում դուրս տվեք ու նոր եկեք: Տղեդ ու փեսեդ ո՞ր են - դու այ դրանից խոսիր:

- Մի երկու բաժակ խմած էին եղել, ավտոն խփել էին ծառին՝ դատի տակ են, ասաց:

- Ավտո-խփելու համար ութ տարի չեն տալիս. մեջն ո՞ւմ աղջիկ-երեխան էր եղել, ընտանիքդ մինչև նրանց ազատվելը ո՞նց ես պահելու, ազատվեն էլ՝ նրանք ի՞նչ են լինելու, դու այ թե ինչից խոսիր, ասացինք:

Խավարից առաջացել, մեր տիկինը եկել մեր ու նրանց արանքում կանգնել էր, կռացավ փայտ վերցնելու՝ փայտ

դասավորելու - մեր ոտքը փայտին դրեցինք, ասացինք.

- Մեկիս ծառայությունը սրանց բավական է, էստեղից գնա.
ռադ եղիր էստեղից:

Երեխան կացինը բերեց եկավ, մեր բարկության առաջ կար-
կամեց, կացինը տվեց մեզ, բայց և ասելիք ուներ, ասաց.

- Տանը ձեզ մարդ է սպասում. դռանը նստել ու սպասում է:

Մենք նայեցինք:

- Վանըկի հերը, ասաց:

Մենք չգիտեինք Վանիկն ով է:

- Որ ջաղացատեղը ձեզ վրա քար գցեց, ասաց:

Ժպտացինք:

- Շետո՞, ասացինք, հե՞րն էլ է քարը ձեռին եկել:

Մեր այգու դռանը Ալբերտը նստել մեզ սպասում էր: Ելավ,
քամակը թափ տվեց, ծխախոտը գցեց ու ոտքով, չնայած
այդտեղ հրդեհի ենթակա բան չկար, տրորեց և մեր ետևից բակ
մտավ: Մեր տունուղռան դրվածքը հարգանքով զննելով մեզ
հետ եկավ, դռան տակ կոշիկները հանեց ու գուլպաներով,
բաձկոնը մեզ նման ուտերին, ներս մտավ:

Ինչպես որ կիսատ էինք թողել՝ հացն այդպես սեղանին էր:
Բաձկոնի ծոցագրպանից պետական կնքած օղի հանեց, դրեց
սեղանին, ասաց. «Ուրեմն ձիշտ ժամանակին ենք եկել», ու ետ
քաշվեց ասաց. «Թե՞ իսկի ներս էլ չեք կանչում»:

Նստեցինք, ասացինք.

- Որ մտքովդ անցել է եկել ես՝ ուրեմն նստիր:

Մեր տիկինը բերեց դեմը սպասք դրեց ու, ետ կանգնած,
հնազանդ ծառայողի նման սպասեց: Երեխան նստեց իր նախ-
կին տեղը, ինչը որ մեր անկոչ հյուրին դուր չեկավ: Շարժվեցինք

ու հասկացնել տվինք, որ մենք իր խոսքին ենք սպասում: Ասաց.

- Վաղուց եմ լցված, բայց մինչև մի երկու բաժակ չխմեմ՝ կարող չեմ: Նայեց մեր տիկնոջը, նայեց երեխային, այսինքն թե լավ կլիներ նրանք սենյակից դուրս գալին: Նրանք հասկացան, բայց մեր ափը մենք սեղանին դրեցինք, ասացինք.

- Էս տանը էնպես բան չի ասվել՝ որ կանայք ու երեխեքը պարտադիր բացակայեին:

Աքլորավարի թեք նայեց, այսինքն կարծես թե գալիս էր խփելու կամ հարվածից էր ետ քաշվում, հեզնեց ասաց.

- Մեռնենք սուրբ ջանիդ:

Վիրավորանքը կլլեցինք, ասացինք.

- Էդ է:

Ասելիքը պահեց, ուրիշ խոսք ասաց.

- Երբ ես, այտա, մի անգամ ընկերուհուն ու էս երեխային առած իմ տուն մտնում, քու ժողովրդի հացը մի անգամ կտրում: Այսինքն թե սա սեղան չի՝ որ իր առաջ է: Ասացինք.

- Երբեք. չենք ուզում տեսնել խանում-խաթուն աղջկան ինչպես ես դարձրել ճաշարանի սովորական ծառա, օտար ամեն շանուգիլի առաջ մատուցողի պես հաց դնող:

Մտածեց, իբր թե ազդվեց, ասաց.

- Ճնշում ես: Ճնշում ես, խազեին, ասաց:

Զխնայեցինք ասացինք.

- Ճնշվող լինեիր՝ առանց մեր խոսքի կհասկանայիր. կասեիր սա իմ կնկա ու երեխեքի տունն է, կայարանի բուֆետ չի:

Ինչպես որ օճն է գլուխը ետ քաշում ու թեք նայում - կարծես հարվածելուց առաջ գլուխը ետ քաշեց, թեք նայեց, ասաց.

- Կլիենտիս առաջ իմ փառքուհամբավի համար չի հաց դնում, իր երեխեքի համար է չարչարվում:

- Կլիենտուրադ փակիր, ասացինք:

- Չլինելու բան ես ասում, ասաց:

- Մինչև հիմա չլինելու բան մենք չենք ասել, ասացինք. ինչ որ ասել ենք՝ եղել է: Ցերեկվա մեր խնդրանքը:

Խոսքը փոխեց.

- Լրբերին փետ էր պետք՝ խնդրեին բերեի ու առաջս էլ դնեմի արադ դնեին. իմ կլիենտի առաջ իմ վարկի հետ դու ինչի՞ խաղացիր:

- Հոպ, ասացինք, ոտն արա. իրենց քաղաքում քու էդ ասածը գուցե էին, բայց հիմա մեր երկրում են. իմ սահմանը ոտ են դրել՝ իմ ժողովուրդն են, ու բերանդ մանավանդ էս տանը մաքուր բացիր:

Իրենն էր քշում, տաքացած՝ մեզ հագիվ թե լսում էր, ասաց.

- Փետը դրանով չպրծավ, կարծում ես պրծավ, բայց չպրծավ. դռանս հիմա նորից բարձում է, ու կնիկս ու երեխեքս էլ օգնում են... բայց իմ մասին նա հիմա ինչ կարծիքի է, ինչ է ասում - չի ասո՞ւմ էս տղեն էս երկրում ոչ ոք է:

- Երեխեքդ էլ օգնում են, կշտամբեցինք:

- Կնիկս ու երեխեքս էլ օգնում են, համառեց. էն փոքրն էլ - օրորոցից իջել ու օգնում է. բա ո՞նց, իրենց տունն է, պիտի աշխատեն: Երեխա կունենայիր ու կհասկանայիր:

- Մեր ցերեկվա խնդրանքը, ասացինք:

- Մտքիցդ հանիր, ասաց:

Մեր ձեռքը բռունցք արինք դրեցինք սեղանին, ասացինք.

- Հերդ: Հերդ... ասացինք:

Թույլ չտվեց շարունակենք. «Հորս հետ գործ չունես», ասաց:

Մեր մտքում տվինք-առանք ու չկարողացանք ներող լինել, ասացինք.

- Խոսքը քեզ մինչև լրիվ չեն ասում՝ չես հասկանում. Հիտլերի

առաջ ծառայության՝ գերիների վրա վերակացու էր եղել ու սիրիներում վերջացավ, բայց անունը իր գոհերի հավերժական հուշարձանին գրեցինք, այսինքն սրբերի շարքը դասեցինք. քանի որ վիզդ ծուռ խնդրողական կանգնած էիր:

Ըիշեր, ամաչեր, զղջար շանորդին - սպառնալիքով պարծեցավ.

- Տվյալ թուպին էդ էր պետք՝ էդ էի արել, վիզ ծռելով թե վախեցնելով՝ գրել տվեցի. կարա՞ս ջնջես՝ գնա ջնջի:

- Ջնջելը՝ չենք ջնջի, ասացինք, մեր գրածը գրած է. բայց քու վարքը մեզ դուր չի գալիս, ու էդ էլ է գրած այ էստեղ, մենք ցույց տվինք մեր կուրծքը: Ու չգիտենք ինչ բարձր բարոյականություն, ինչ արարք, ծմակուտյան ինչ հայրենասիրություն ես անելու՝ որ էստեղի գրածը ջնջվի:

Երեխան քնել էր. սեղանի վրա գլուխը ձեռներին էր դրել ու քնել. հուշիկ՝ մեր տիկինը բերեց թիկունքին շալ գցեց, մայրական քնքշանքով մենք շտկեցինք շալը և հուշիկ ոտքի ելանք. նույնկերպ՝ Ալբերտը, բայց չկարողացավ չխայթել.

- Հոգատար եք, հա՞, էդպես ուրիշի երեխեքի վրա. բա որ ձեր սեփականը լիներ:

Դուրս եկանք պատշգամբ, ասացինք.

- Աստված չուզեց՝ որ մեր սեփականը ունենանք, բայց սիրուց չգրկեց, առատ-առատ լցրել է մեր ներսը, ու մենք էլ ամեն շունուգելի վրա անտեղի ծախսում ենք:

Ճկուն ու թեթև՝ կռացել կոշիկները անաղմուկ հագնում էր: Լուսնալույս գիշեր էր, ծղրիդները երգում էին, ծառերն անշարժ կանգնած էին, մեր նժույգը նույնպես կանգնել պատկեր էր դարձել: Նժույգի պատկերը մեզ բարիացրեց, ժպտացինք ասացինք.

- Խոտհավաք մեքենան խափան էնտեղ ընկած է. կարենայիր սարքի գցեիր՝ հասարակությանն օգնած կլինեիր:

Կոշիկները հագավ, չպատասխանեց, մի րոպե կարծես թե ասելիք ուներ՝ չասաց, պատշգամբից իջավ, բակում կանգ առավ, ասելիք ուներ՝ դարձյալ չասաց, բայց այգու դռնակից ելնելուց հետո արդեն չգտա - ասաց ծխախոտ վառելով.

- Լավ չի, խազեին, դեզդ տանդ շատ է կիպ, հանկարծ կվառվի ու դե արի հանգրու:

Ասացինք.

- Շերվա կոշտացած խոտ է, որ հատուկ էլ վառես՝ չի վառվի, նկատի ունեցիր:

Ծիծաղեց ասաց.

- Է, նավթ կա՞ծեն ու լուցկի կտան:

Ասացինք.

- Աժա ու տուր:

- Մենակ ես չեմ, խազեին,- ասաց,- մենակ ես չեմ. էս ամբողջ գյուղը քեզ թշնամի է: Մեկս մյուսիս ապրելը չի ուզում, բայց քոնը՝ հատուկ, խազեին, քոնը՝ հատկապես:

17

Ինքնամեծար ու հպարտ որպես այս երկրի միակ տեր՝ մենք մյուս օրը դարձյալ մեր նժույգի վրա էինք: Մեր պապի հին ջաղացատեղը, չափարի մեջ, շինանյութը ավելացել էր: Դարպասները փակ էին: Սպիտակ վրանի առաջ կրակի վրա մեծ պղնձով ձաշ էր եփվում: Վիթխարին միսը մեծ-մեծ կտրտում ու շալտում էր պղինձ - հրեշուհին հրեշի համար ասես ձաշ էր եփում: Միամիտ սիրուն գառներ կային չափարի մեջ, չէին հասկանում՝ որ իրենցից մեկը եփվում է, վիթխարու փեշերը

հոտոտում էին, չէին հասկանում՝ որ հոտոտում են իրենց եփողի փեշերը: Խոհանոցային մեծ դանակը ձեռքին, ձեռները կոնքերին կանթած՝ վիթխարին հիմա կանգնել մեզ նայում էր: Չէր կարելի ասել՝ թե այդ կնոջ ծանր ծավալները մեզ դուր չէին գալիս - բարիացել ժպտում էինք, քիչ էր մնում ծիծաղեինք: Մեզ զսպեցինք, մեր դեմքը համապատասխան լրջության բերինք, ասացինք.

- Տեսնողն, օրինակ, կասի Ռոստոմ Մամիկոնյանը հացի ու կնկա մուրացկան է, բայց ոչ ձեզ համար ենք կանգնել, տիկին, ոչ էլ մանավանդ ձեր ճաշի... եթե ասեիք էստեղ ինչ է կատարվում՝ մենք ձեզանից բավարարված կհեռանայինք:

Ինչպես որ նայում էր՝ շարունակեց նայել ու ծամել - կարծես այլազգի էր, խուլ կամ կենդանի, մարդկային լեզուն չէր հասկանում:

- Էդտեղ ո՞վ կա, ասացինք, թող աչքառ ելնի, բան ենք հարցնում:

Նայեց հանգիստ, նայեց ու ոչ մի պատասխան - միս կտրեց շարտեց կաթսա:

- Ո՞վ կաս էդտեղ, էյ, կանչեցինք, դուրս արի՝ բան հարցնենք:

Ոչ մի պատասխան, իսկ վիթխարին շտկվել, թվում է խարդավանքով մեզ նայում էր: Մտրակի կոթով դարպասը ծեծեցինք-ծեծեցինք, վիթխարին մեզ այլևս ուշադրություն չէր դարձնում, ու հեռացանք:

Երեք ջահել, թուխ տղա, մինչև գոտկատեղերը մերկ, փողքները քշտած՝ մեր գետակից ավագ էին հանում: Մինչև իրենց հանդիպելը մենք երկու մեծ կույտ տեսանք, հետո արդեն իրենք էին: Գլխներին կանգ առանք, մտրակի կոթով մեր շքոցը

ետ տվինք, ասացինք.

- Հլա մի բարիօր:

Բահերը ձեռքներին՝ դադարեցին, նայեցին հեգնաբար:

- Էս ի՞նչ բանի եք, ասացինք, մեր երկրում:

- Ջրից ավազ ենք հանում, ասացին:

- Ավազ եք հանում, ասացինք, կարելի է: Բայց կարելի՞ է, մատաղ, մտնել ուրիշի երկիր ու առանց իշխանությանը ներկայանալու շինարարություն սկսել: Ես գամ, քաղաքի ձեր դռանը մի փոս փորեմ, կարելի՞ է:

- Արի, ասաց մեկը ու ծիծաղեցին, հետո մյուսը բացատրեց ծիծաղի պատճառը. «Ութերորդ հարկում է ապրում», ու նորից ծիծաղեցին:

- Չի կարելի, ասացինք:

- Դուք անտառապահ Ռոստոմն եք, հարցրին:

Շոյվեցինք, հպարտացանք, հաստատեցինք.

- Այո, ինքը, ասացինք:

- Մեզ ասել են էտեղ Ռոստոմ կա, բայց ավազը նրա ենթակայության չի, գնացեք հանգիստ ավազ հանեցեք, բացատրեցին:

- Ո՞վ է ասել, ասացինք, ամեն ինչն էլ որևէ մեկի ենթակայության է. որ ուրիշ բան չլինի՝ այ էդ, նեղվեցինք, քանի որ մանր հարց էր, բայց ստիպված էինք ասել, բահերի կոթերը մեկ առ մեկ էս անտառից են, տեղը ձեզ համար նշանակություն չունի, բայց մենք գիտենք մեկ առ մեկ որտեղից են կտրվել: Բա ոնց, ասացինք, ցարի անտառապահը թուփը թփին ու ծառը ծառի կողքին եթե էդպես չպահեր՝ էս անտառը չէր լինի: Էդ բահերն էդպես էլ գցեք ու գնացեք էստեղից, հեռացեք, ասացինք:

Մեր պահանջի անարդարությունը մեզ նեղում էր, ձին

ասպանդակեցինք հեռացանք այդտեղից ու չգիտենք՝ մեր պահանջը նրանք կատարեցի՞ն:

Երկրախույզները եկել մեր սարերում ծակիչը դրել երկիրը ծակում էին: Անհայրենիք ժողովուրդ, են, այս վայրենի օտարության մեջ չէին նեղվում, իրենց տերուտնօրեն էին զգում, իրենց հոր հասակի մեր չոբանին մի խեղճ ու անառակ խոստումով դրկել էին ջրի - աչքով անելով մերկացող ձապոնուհի կնոջ պատկեր էին խոստացել ցույց տալ: Վերևի բաց լանջերում այս գյուղի ոչխարի հոտն էր: Ծակիչը փչացել էր, մեխանիկն ու օգնականը նորոգում էին, մի երրորդը վրանի ստվերում պառկած էր:

Մեզ տեսան, գործներից չկտրվելով մի պահ նայեցին ու իրենց մեջ խոսեցին: Խոսքի կեսը վերաբերում էր իրենց գործին, կեսը անվայելուչ բառեր էին մեր հասցեին:

- Հիը, գեղի մի բուլա էլ եկավ: Էդ չի քաշի:

- Որ իրեն մնա՝ չի քաշի: Կխոսեցնես՝ մինչև էն ոչխարը ջրից գա:

- Ասում ես ջոջերից լինի՝ կարգադրի՞: Շարուքը մտնում էր ոչխարի մեջ ու դուրս գալիս՝ չոբանն իրիկունը կողքներիս կանգնած էր: Երեսուն մանեթով խնդրում էր:

- Ոտը կոտրում էր, հա՞:

- Ցաքատով ոտին խփում էր: Թե չէ հարյուրից պակաս գին չկար:

- Էդ ցաքատը, էդ էլ դու:

Նրանց թերմոսը ձեռքին՝ մեր չոբանը ձորակից դուրս եկավ: Ձին պահեցինք, սպասեցինք գա հասնի, որպեսզի մեր գլուխը կշտամբանքով օրորենք, ծլթծլթացնենք, ասենք:

- Բա անհարմար չե՞ս զգում, բա ամոթ չե՞ս անում - դու էս սարերի թագավորն ես թե օտարականի ջրկիր:

Ծեր մարդ էր, ամբողջ կյանքը ուրիշի խնամք էր քաշել, շատ մեծ հարգանքով ու խնամքով նայեց գրկի թերմոսին, հետո բերանը բաց մեզ նայեց, հետո անդրադարձավ մեր խոսքին:

- Թագավոր եմ չէ մի շան պոչ եմ, պատասխանեց:

Ասացինք. «Էս ո՞վ եմ»։ Ասաց. «Ոսկի եմ ման գալիս»։ Ասացինք. «Քեզ ինչքա՞ն եմ խոստացել»։ Զրուցելով եկանք դեպի երկրախույզները, մեր ասպանդակից հալիվորը բռնեց, քանի որ սայթաքում էր, ոտքերը տակից փախչում էին: Ասացինք. «Հը՞, որ գտնեն՝ քեզ ինչքա՞ն եմ տալու»։ «Որ գտնեն,- ասաց,- էս սարերը մեր ձեռից առնելու եմ, մեզ քշեն քաղաք, էստեղ ոսկու հանք բացեն»։ Սայթաքելու վրա ասացինք.

- Քեզ սապոգ է հասնում, ինչի՞ չես սապոգդ հագնում՝ որ տրեխի մեջ էդպես սոթ ես տալիս:

- Ծանր եմ,- ասաց,- ոտներս քաշում չեմ:

- Թե՞, ասացինք, վարիչը սապոգդ կերել է:

- Իիի, այ Ռոստոմ,- ասաց,- սապոգն ինչ է՝ որ ուտեն. տասներկու մանեթ:

- Այսինքն հովըտեցու իշխանությունից դժգոհ չես, ասացինք:

Հասանք երկրախույզներին: Ստվերում պառկածը վրա նստեց, առանց շնորհակալության կամ հատուկ որևէ վերաբերմունքի հալիվորի ձեռքից առավ ջրամանը, խմեց, ուսի վրայով ետ ձերուկուն մեկնեց՝ առանց նրան նայելու, այսինքն թե այդ այդպես էլ պիտի լիներ - ձերուկին իրենց կարևորությանը կցված ջրկիր էր, հետո կողքի բացված-կերված պահածոյի տուփը վերցրեց, մեզ ասաց.

- Բա չե՞ք ամաչում, էս թարմ ոչխարի մեջ մեզ հոտած ձուկ եք կերցնում:

Այդ խաղացկուն անամոթության առաջ ատելությունը մեր կոկորդը բռնեց: Մյուս երկուսը՝ որ մեքենան նորոգում էին, գլուխները կախ դավադիր ծիծաղեցին, հետո նրանցից մեկն ասաց չոբանին.

- Բիձա, կաղ ոչխար չունե՞ս, կաղ:

Հալիվորը նեղվելով մեզ գանգատվեց.

- Աստծու օրը՝ օրս էս է: Եվ նրանց պատասխանեց. Կաղ էլ կա, հիվանդ էլ կա, ամեն տեսակ էլ կա, բայց իրավունք չկա, մատաղ, իրավունք. խազեիննիս թող իրավունք տան՝ եղածը ձեզ:

Վրանի ստվերում նստածը մեզ սպասողաբար կոչ արեց՝ «խազեին» և ձեռքին խաղացրեց մերկացող ձապոնուիու պատկերը, «խազեին»:

- Նախ, ասացինք, ոչխարի խազեինը մենք չենք. երկրորդ՝ ո՛ր մեկիդ առաջ ոչխար մորթենք, մենք մեկ՝ դուք հազար, էս ձորը լիքը օտար շունուգել է. հետո՝ մենք մեզ ի՞նչ ասենք, ասենք ո՞ւմ առաջ ենք պարտավորված ոչխար մորթել, այսինքն դուք ո՞վ եք, մատաղ, որտեղի՞ց եք եկել, ի՞նչ իրավունքով եք էստեղ - ձեր փաստաթուղթը:

Ասաց.

- Հումոր չունես: Դարձավ մյուսներին. Ընկերը յումոր չունի:

- Ձեր քաղաքի խոսքերը տարեք ձեր քաղաքում ասեք, ասացինք. փաստաթուղթը, դոկումենտ:

Բերանը բացեց լեն-լեն ծիծաղեց, ասաց.

- Փաստաթուղթ՝ որ ի՞նչ:

- Որ իրավունք չունեք մտնեք մարդու երկիրն ու փորեք,

քանդեք, քայքայեք, կեղտոտեք ու թողնեք գնաք:

Սա մեզ ծաղրող պատասխան էր տալիս՝ չպատասխանեց. լրջացավ, կակղեց՝ ինչպես որ անառակներն են կանանց առաջ կակղում, հիացմունքով «վայ քու» ասաց ու ծնկները ծեծեց, հետո ձեռքը գցեց հեռադիտակին:

Աղջիկների տուրիստական արշավի մի մեծ շարան անտառից ելնում էր. ծաղկապսակներ էին հյուսել դրել գլխներին, խրձաչափ ծաղիկ էին փնջել գրկել, հաղարջի ու մոռի թփեր էին քաղել գրկել: Թվում էր շարանը վերջացավ, բայց դա վերջացող շարան չէր, ուղղակի՝ լրջորեն ջոկատների էին բաժանվել, ջոկատները առաջնորդներ ունեին՝ որ քայլում էին յուրաքանչյուրն իր շարքի առջևից ու շարքից մի քիչ զատված. անտառից երկրորդ ջոկատը ելավ: Ընտները մի փոքրիկ շնիկ ունեին, անտառից շարքի հետ ելավ ու դեպի մեզ կատաղի հաչոց դրեց:

Ընտադիտակավոր երկրախույզը ուշադիր կենտրոնացած, նույնիսկ գրգռված, դիտում, հեռադիտակը կենտրոնացնում, ասում էր «չորրորդը, չորրորդը... առաջին շարքի չորրորդը»:

Նորոգող մեխանիկներից մեկը մատները բերանը տարավ ու զիլ սուլեց, ինչի վրա հեռադիտակավորը լրջորեն զայրացավ.

- Չահրումար... ինչի՞ ես խրտնեցնում, արա:

- Թե չէ մոռութիդ նայող էր լինելու, ասաց մյուս նորոգողը:

Ծարքը կանգ էր առել նայում էր, և հեռադիտակավորը կանչեց.

- Դե՛ վուշկի, միլոշկի: Վամ նի սկազա՞նո պա դարոգե նադ- շեֆստվովատ նադ բեդնիմի գեոլոգամի:

Ծարքը շարունակեց իր ծանապարհը, և շարքի պատասխանը աղջկա տնագով տվեց նույն սուլող մեխանիկը.

«Ատպուստի»:

Շերն անիծած, այս նույն տեղն է դաչաղը հինգ հոգով կալել մեր խեղճ ու հպարտ հորեղբորը. նրա ձեռքին մի կարճ խարազան է եղել, նրանք զինավորված են եղել թվանքով ու խանչալով. երկուսը առաջը կանգնել են, մեկը առանց որևէ լավ ու վատ բառի մտել է հոտի մեջ ու սկսել է ընտրել՝ սա լավը չի, սա էլ լավը չի, այս մեկն էն չի, հոտի միջից ելել է ոլործուն պոզերով ամենասիրուն որձը քաշելով. մեր խեղճ ու հպարտ հորեղբայրն ասել է. «Եղածը ձեզ, բայց էդ մեկը՝ չէ, յո՛խ»:

Խոսքը բանի տեղ չեն դրել, և մեր խեղճ ու հպարտ հորեղբոր ատելությունը զնգացել է, հորեղբայրը գավազանը ետ է տարել, և գավազանը ուսի վրա ետևից բռնել են. այդտեղ հորեղբայրը տեսել է, որ երեք չեն ու հինգ են - երկուսն էլ ետևն են կանգնած: Շտոթ թոքերը խանչալով խառնված հորեղբայրը ուրթի մոտ փշերի մեջ թաքնված է, ուրթը աչքի առաջ է, ուրթում հարազատ մարդիկ են, իր կիսն է՝ որ փորձանքը թերևս զգում է, բայց թե որևէ հաստատ բան չգիտի... և խեղճ հորեղբայրը փշերի ետևը ձեն չի հանում, քանի որ մորե մերկ է ու արնաթաթախ:

Շարանի պոչը ձորը մտավ, լանջը դատարկվեց, բայց հեռադիտակավորը դեռ երկար գամված էր այլևս անդառնալիորեն ամայի լանջին, որի ամենավերևում հնօրյա ուրթն էր եղել, հետո պարապ հայացքով մեզ դարձավ.

- Ա տի գավարիշ:

Շեռավոր դղրդոց էր գալիս, հետո լեռների ետևից դուրս եկավ երկրախույզների ուղղաթիռը: Նորոգող մեխանիկը ձեռքի գործիքը ետ դրեց ասաց. «Բերեց», և սկսեցին վայրէջքին սպասել: Ուղղաթիռից երևի թե տեսան աղջիկների շարանը ձորում, ուղղաթիռը մեր գլխավերևից շուռ եկավ, գնաց պտտվեց

ձորի գլխին, ցածրացավ, համարյա թե նստեց, իսկ այստեղ ասում էին՝ «Ռուբոն է», «մեխիր», «Ռուբո, մեխիր՝ թող չշարժվի», հեռադիտակավորը գոռում էր՝ «առաջին շարքի չորրորդին, չորրորդին», մյուսները ծիծաղում ասում էին՝ «բադերի պես հիմա շաղ են անցել, էստեղ հիմա շա՞րք մնաց», եկավ պտտվեց ու նորից գնաց, և մեր չոբանի ոչխարը նրա հռնդոցից ու ստվերից խրտնեց և նույնիսկ մենք էինք կույզ գալիս և մեր նժույզն էր խրտնում, հետո եկավ իջավ: Մենք ձիու բաշը շոյում ասում էինք՝ «հանգիստ, հանգիստ», երբ ինքներս էինք անհանգիստ ու նույնիսկ վախեցած:

Օդաչուն ուղղաթիռի լուսամուտը բացեց, գունավոր ակնոցը բարձրացրեց ձակատին ու նայեց բացակա հայացքով, հետո, ինչպես որևէ ծանր գործից հետո, կտրուկ հոգոց հանեց ասաց.

- Արի ստորագրիր ստացիր:

Շեռադիտակավորն ասում էր. «Բադերի շարքը քայքայեցիր. բողոքելու պոչդ ավիացիայից խուզելու են»: Իր ավիացիան օդաչուն հեգնեց՝ «Ավիացիայից... ավիացիա», հետո ձեռքի թուղթը, ըստ երևույթին ստացականը, մեկնելու և հեռադիտակավորի վերցնելու հետ ասաց՝ «Էս մեկ, ձի՞շտ է», և թելերով, ինչպես փոստային ծանրոցը, կապած ու զմռսած ծանրոցը հանձնելուց հետո՝ «Էս էլ երկու, ձի՞շտ է. տարա՞ճ»: Նրանք ուրեմն մտապահուկի էին խաղում, հեռադիտակավորը տարվեց, ձեռքի կապոցը գցեց ու օդաչուից դիտողություն ստացավ՝ «Նե բրասատ. ցեննեյշի ստեկլո», հետո՝ «Գառս բեր»: Շեռադիտակավորը կապոցը քանդում, ասում էր. «Մենք քեզ համար էստեղ չոբան չենք. գառների հարցով էս գյուղացիներին դիմեք», և գլխով մեզ էր ցույց տալիս:

Օդաչուն մեզ նայեց, մենք նրա ծիծաղը շարժեցինք, ասաց.

- Էդ ինչի՞ ես փքված, հեծելագոր:

- Մենք էլ չենք գառնարած,- ասացինք:

- Գառնարած չես, բայց ինչի՞ ես փքված, քեզ ո՞վ է փքել,- ասաց:

- Դուք,- ասացինք:- Դուք բոլորդ մեզ փքել եք:

Մեր հակահարվածին նա նշանակություն չտվեց, քանի որ ուշքը բացվող ծանրոցին էր, մեզ ասաց.

- Անտառում գերան-մերան չունե՞ս, մի ոչխարով գամ տեղափոխեմ:

Շեռադիտակավորը փաթաթան փաթաթանի ետևից էր բացում և արդեն ժպտալով կռահում էր, որ ծանրոցի մեջ ոչինչ էլ չկա, իսկ օդաչուն նայում էր պարապ, ծանծրացող հայացքով: Գերծայնային ռեակտիվ ինքնաթիռների եռյակը եկավ, երկինքը ուղիղ տողելով անցավ, հետո եկավ եռյակի դղրդոցը, հետո հորիզոնի ետևից՝ որոտը, և ուղղաթիռի օդաչուն այդ ամբողջ ժամանակ հայացքով կառչած էր երկնքին: «Ավիացիա, հեզնեց, ավիացիա, ցիվիլիզացիա, մեխանիզացիա, ամորտիզացիա, մորալիզացիա»: Ծանրոցի մեջ դատարկ պահածոյի տուփ էր, տուփի մեջ՝ անկյունը ժապավենով կապած՝ ձապոնուիու նկար, որը ժպտաց ու աչքով արեց, իսկ օդաչուն այդ ժամանակ լուսամուտը վրա էր բերել ու դղրդոցով գործարկում էր մեքենան:

Մեր նժույգը կուչ եկավ, իր մեջ կուչ եկավ ու խրտնեց: Եվ մենք չհասկացանք՝ օդաչուի կողմից դա դիտումնավորությո՞ւն էր թե պատահաբար էր այդպես լինում, բայց մենք ուղղաթիռի տակից չէինք կարողանում ազատվել, ուզում էինք կաղնու տակ մտնել ու հետապնդումից ազատվել, բայց խրտնած նժույգը ծառի մոտով մեզ սլացրեց հեռու: Փորձեցինք ետ նայել ու մատ

թափ-տալ ուղղաթիռի վրա, բայց նժույզն իրեն կտրատելով փախչում էր:

- Դե լավ,- ասացինք,- դե լավ, բան չկա, սովորական մեքենա էր, էլի, հայ տղա էր:- Նժույզը զսպեցինք, հետո ճանապարհ ընկած գնում էինք, բայց կարծես ծեծված երեխա լինեինք, շատ ուժեղ վիրավորված էինք, շատ:

Թեքվեցինք անտառ մտանք, փչակավոր բոխու մոտ կանգ առանք, հայիոյեցինք՝ «Ես քու խուլիզան հերն անիծեմ», փչակից հանեցինք մեր հրացանը և նորից հայիոյեցինք՝ «գերան-մերան չունե՞ս, գամ մի ոչխարով... քու խուլիզան հերն անիծեմ... բա էն քաճը, քաճը»:

18

Շնտո, երբ կողբեցի լածիրակը եկավ մեզ դեմ ընկավ ու համեստորեն ճանապարհը հարցրեց, մենք արդեն մեզ վերագտել էինք, խազեին էինք, ինչը որ շան լածիրակը իսկույն նկատեց: Թեթև բեռնատար էր, իրենց սարվորի համար միրգ ու աղ էր տանում, ասաց.

- Ո՞նց եմ դուրս գալու Կողբա սարը:

Մենք հասկացանք ինչ է հարցնում, բայց նույնիսկ այդտեղ հանդիսավոր ու հպարտ եղանք, ինչը որ շան լածիրակն իսկույն նկատեց ու մեզ խազեին կնքեց. ասացինք.

- Կողբն էստեղ սար չունի, մատաղ, էս մեր երկիրն է:

- Ասել են Ծմակուտ կգնաս կհարցնես՝ տեղը նշանց կտան:

- Էդ արդեն ուրիշ հարց է, մատաղ,- ասացինք,- դու էն սարն ես հարցնում՝ որ Ծմակուտը մի երկու ամառով, մինչև ինքը նորից տարածվի, տվել է Կողբին:

- Լսում եմ,- ասաց,- խազեին. էսպես ուղիղ գնա՞մ:

- Ուղիղ գնա,- ասացինք,- փչակ տանձենու մոտից աջի վրա ձամփա է ջոկվում՝ քու ձամփան է, քեզ հանելու է նշանավոր Մամռուտ խոտհարք: Մենք ժամացույցին նայեցինք: Էնտեղ աշխատող ժողովուրդ կա՝ շարունակելիք ձամփադ քեզ կասի. կնանիք ու ջահել ժողովուրդ է, եթե սխալվի ասի Մուրադենց հին գոմատեղերից աջ կթեքվես՝ չթեքվես - ուղիղ:

Ուշադիր լսեց, ասաց.

- Շնորհակալություն, խազեին:

- Մի խորհուրդ էլ,- ասացինք,- քու երկրի ղեկավարությանն ասա՝ Ծմակուտի Մամիկոնյանը՝ Ռոստոմը՝ Ռոստոմ Մամիկոնյանը խնդրում ասում էր Էդքան մի հողովեք «Կողբա սարը, Կողբա սարը», թե չէ կկարծեք իսկապես Կողբինն է ու զրկվելուց հետո շատ ուժեղ կհիասթափվեք: Լսեցի՞ր:

- Լսեցի, խազեին,- ասաց.- Ռոստոմ Մամիկոնյանը կենտրոնից անկախ երկիր է ստեղծում:

Մենք դժվարությամբ, բայց տվինք մեր համաձայնությունը: Համարեք, ասացինք, ապա միայն ձանապարհ տվեցինք մեքենային:

Շան օտարերկրացին դուրս էր եկել մեր Մամռուտ ազատ խոտհարքները ու իրեն ամենևին էլ օտարի պես չէր պահել. խեղճ ժողովրդի մեջ կանգնել նախ մեր ոճն էր ծաղրել, հետո էլ մեջներն ուշագրավ աղջիկ էր տեսել, ուզել էր վռազ փեսայանալ: Խեղճ՝ այսինքն թե պաշտպան տղամարդ չկա, տղամարդը, եթե կարելի է նրան առհասարակ մարդ համարել, Մուրադենց Հրանդն է՝ խոտհավաք կոմբայնի վարորդը, նա էլ կողբեցու առաջ մնացել է բերանը հիացմունքից բաց, քանի որ ինքն ահա երեք օր քանդել թափել է ու չի կարենում մեքենան

գործի գցել, կեղտի-մրի մեջ կորած՝ հուսահատությունից արդեն լաց է լինում, Շովրտի մեր ղեկավարությունն ստիպված է եղել ժողովրդին ձեռքի աշխատանքի հորդորել - կողբեցին այնինչ, զուտ ականջով, ուշքումիտքը Մարոյի մեր գեղուհուն և կոմբայնի աղմուկը անուշադիր ընկալելով՝ ասում է փչացած է քո մեքենայի այսինչ մասը: Մյուսները՝ չորուկ, սև, այրի մեր Շուշան քույրն է, հին կրակից ու ուրախ կռվից մեջը դեռ կա, Մուրադենց կարծուգնդիկ Վերգինը, փոցխը գցում ասում է՝ «Ախչի, էս երբ պառավեցինք. էս անտեր կռներս ուզում չեն ետ գան», չորուցամաք մեր տիկինը՝ որ մեզնից գաղտնի է եկել խոտհավաքի, մի երկու պառավ, բարձր դասարանների մի հինգ-վեց աղջիկ և երեք տղա՝ Հրանդի տղան, գնդապետի տղան՝ որ կոմբայնավարին ուզում է օգնած լինել, բայց մեքենայից բան չի հասկանում, և որսագող ու անտառագող մեր Ալբերտի տղան - մի կերպ հավաքած ժողովուրդ՝ որ չի կարողանում այդ ծանր աշխատանքի դեմ խմբվել համայնք դառնալ, չի ցանկանում: Մեզանից հեռու՝ մեր տիկինն ազատություն է ստացել, երբեմն պատվի է բռնում ու աղջիկ ժամանակվա զնգոցով կանչում. «Երկրորդ օդակ, քայլով մարշ», բայց շոգ է, ոչ ոք չի ուզում աշխուժանալ, և մեր տիկինը ստիպված առկա վիճակն այդպես էլ ընդունում է. «Քանդվեք դուք, քայքայվեք դուք թե օդակ եք», բայց սիրտը չի տանում ու նորից է զայրանում. «Դուք ի՞նչ տղերք եք, արա, մի քիչ արագ շարժվեցեք»: Խոտհարքը բարձր է, գյուղից չի երևում, խոտհարքից երևում է Գործարանի ծուխը. սև, դեղին ու սպիտակ՝ ձորից ելնում, կծկվում, ծավալվում, հալվում ու տարածվում է - նրա շոգ մշուշը ամբողջ հորիզոնը սվաղել է. քաղաքը նաև իրենց՝ հենց ժողովրդի մեջ է՝ այդ աղջիկների ու տղաների հագուստի, շարժումների, սանրվածքի.

տղաները շատ ավելի ֆուտբոլիստ են քան խոտ-հավաքող, աղջիկները շատ ավելի հավաքելու պարային ձև են անում քան հավաքում. ինչ որ է, մեր քույրը Ալբերտի տղայի հետ մի տասը բլուլ արդեն կապել է, դրանք հիմնավոր ու սիրուն կույտեր են՝ ինչպես որ միայն հնում էին դնում: Դա կարծես թե աշխատանք է, բայց այդ մեծ, շոգ, հնձած ու չհավաքած խոտհարքի առաջ գուր ջանք է թվում: Մարոյի աղջկան ուղարկել են ջրի. տասնչորս-տասնհինգ տարեկան՝ կանանց համար նա դեռ այնքան է երեխա, որ անուն չունի, ասում են «Մարոյի աղջիկ»։ Շատ ավելի իր լվացվելու կարոտից, Մուրադենց գնդիկ Վերգինը աղջիկների խմբին ասում է. «Որ լավ աշխատե՞ք՝ իրիկունը ջուրն անցնելիս թողնելու եմ երեսներդ բացեք ու մի լավ չոփ-չոփ լվանաք», ինչին նրանք գոնե ժպիտով կամ քամահրանքով չեն արձագանքում - նրանք իրենց համար փակ գաղութ են: Պառավներից մեկը ասում է. «Էս՝ Մարոյի աղջիկը չեկավ, մեզ ծարավ սպանեց»։ մյուսը ասում է նման դեպքերի համար պատրաստի խոսքը. «Թուրքերը փախցրած կլինեն»։ հետո արդեն իրենց իսկական վերաբերմունքն է այդ աղջնակին. «Ուր է էստեղ աղջիկ՝ որ փախցնեն. դեռ խակ երեխա է»։ Գերձայնային ինքնաթիռների եռյակի դղրդոցից պառավները կծկվում, ժպտում ու անչար անիծում են. «Զահրումա՛ր... ասա կարալ չե՞ք մի քիչ դենը քշեք»։ Մեր քույրը մի թույլ տրվում է մի հին, սիրելի, ջերմ հուշի. «Կալերից հարսներով, ասում է, պատերազմով, եկել էինք լողանանք, լցվել էինք ջուրը. մին էլ տենանք ջուրը խնձոր է բերում, էն էլ էստեղի խնձոր չի, միրգն էստեղ դեռ խակ էր. դատարկվի նա՝ ինչ դատարկվեց - Օսեփանց Սարիկը՝ Սարգիսը, բանակից վիրավոր գալիս Դսեղա հին այգիներից ինքն է քաղում թե փրկված եկողի պատվին

պահակներն են ծառ թափ-տալիս՝ շալակի բանակային պարկը լիքը խնձոր է. գալիս տեսնում է ձորում ձեններս գցած կշկշում ու լողանում ենք՝ էլ իրեն աչքառ չի հանում - գնում վերևը պարկը ջրի մեջ շուռ է տալիս. մեկ էլ տեսնենք մեր ջուրը խնձոր է բերում՝ Դսեղա խնձոր»։ Մեր տիկինը հուզվում ասում է. «Օսեփանց Սարիկը. Օսեփանց տղերքը - էլի իմ ախպերները», բայց մեր քույրը մեղմորեն, մի տեսակ խնդրելով առարկում է. «Անոշ, պատերազմով բոլորն էլ բարիացել էին, բարի էին. Հիտլերն ինչքան տղա թողներ՝ ձորի այգիներից էդքան խնձոր կգար», և մեր ցեղի բանաձևային վճռականությամբ հավելում է մեզ հայր համարվածի ծանր խոսքը. «Էդ՝ կուշտ փորին է որ ժողովուրդը չի դիմանում, լափում ու գազազում է - սովից խեղձանում, բարիանում է», ինչի դեմ մեր տիկինը ծաղրով արդեն բռնել է մեզ հայր համարվածի կեցվածքը. «Շա՛տ, նանը. Նժույգ-ձին ամեն գյաղի բան չի. թվանքն ամեն լակոտի ձեռը չեն տա. հացն ամեն մարդի բան չի, անարժանը հացից գազազում է»։ Մեզ հայր համարվածի խոսքը մեր քույրն այնու-ամենայնիվ ավելի լավ գիտի, մեր հոր նույն կեցվածքով ավելացնում է. «Շա՛տ, նանը. ձիու վրա՝ իրենից սավայի աստված չկար, ձիուց իջեցրին՝ աստծուց սավայի բան չկա»։ Մի բուռ ժողովուրդ էինք, բոլորիս խոսքը բոլորիս բերանում էր, «Շտրա՛փ, ասում է մեր տիկինը, մեր նշանավոր խոսքը փչացնելու համար՝ հա՛տ, նանը պրանենք՝ երկու աշխօրի շտրափ. ձիուն վեր էլավ՝ աստծուն մոռացավ, ձիուց վեր բերին՝ ձիուն մոռացավ»։ Ասում ու ծիծաղում են, դա իրենց հին մեծ թատրոնից ու ծիծաղից մի ծվեն է, մեր քույրն ու պառավները բոլորը ծիծաղում թուլանում են - երիտասարդությունը նայում ու կռահել չի զորում ինչի վրա են ծիծաղում, իր կոմբայնի մոտից

մի թեթև արձագանքում է միայն Շրանդը՝ «Էդ ի՞նչ ծիծաղ ընկավ փորներդ, ախչի», բայց կանայք նրան լռեցնում են. «Ֆողեմ մեխանիզատոր գլուխդ՝ որ եկար էս ժողովրդին քայքայեցիր. մարդ ես դառել՝ մեջ ես ընկնում, էլի»։ Կանայք նրա մասին դարձյալ ասում են. «Ախչի, ապրեց, է... խեղճ Թամարի ֆոքին կերավ ու ապրեց»։ «Արա, միտդ ա՞, որ թփի տակին հանդում քեզ մտահան էինք արել ու գնացել»։ «Յետո՞վ, ասում է մեխանիզատորը, գտա՞ք»։ «Ի՛ի, ո՛չ գտնեինք, ասում են, կամուրջն անցնում էինք, էն խեղճ մերդ ասավ՝ ախչի, ըրեխեն էս խի՞ չի խտրտիս»։ «Փսլնքո՞ւտ լակոտ էիր, ըրեվում էր որ մեխանիզատոր պտես դառնալ», ասում են։ Շետո կանայք ասում են. «Էսօր էս է անտեղի անցավ - հովըտեցու ասած՝ յէքուց ըռավողը հոփիս թքած խոտհարքի կողքին կանգնած եմ... ախչի, էս խոտը բա ափսոս չի՞ որ փչանում է», և անցած օրերի ափսոսանքով հոգոց են քաշում. «Է՛է, հոփ չմնաց, հոփներս էլ, ուրախություն-ծիծաղնիս էլ հատավ-հանգավ»։ Եվ նրանց ամբողջ խոսքուզրույցը անսահման հետաքրքիր է միայն գնդապետի երեխայի համար։

Խոտհարքի շոգ հեռուներում կողբեցու մեքենայի երևալու վրա ասում են. «Էն մի՞ ործկաճուտն ով է, մինն էլ հրեն, մի օգնական էլ ունեցանք»։ Գալիս մեքենան կանգնեցնում, քաղաքավարի «բարի օր» է տալիս ու «Կողբա սարի ճամփեն» հարցնում, բայց թե կանայք իրենք են արդեն ծաղրուծիծաղով լիքը - ծիծաղում ասում են (մեր տիկինն է ասում)։

- Ասենք թե բարիօր ու ճամփեն էլ նշանց տվինք՝ յեդո՞, դրանից մեզ ինչ օգուտ։

- Ի՞նչ օգուտ էիք ուզում,- ասում է։

- Օրինաա՛կ, մեր քույրն է ասում, մրգաստան երկրից ես

գալիս, մի երկու խնձոր բերեիր քու Շուշան մորքուրի համար:

- Խնձո՞ր, ասում է, խնձորի եղա՞ծն ինչ է: Բարձրանում է թափք, մի արկղ խնձոր է շարտում: Թափքի վերևից խոտհարքի մեծությունը տեսնում, մեր խոսքը հիշում է. Էս է ուրեմն ձեր Մամռուտ նշանավոր խոտհարքը: Եվ կանայք հասկանում են, որ նա ճանապարհին մեզ հանդիպել է: Մեր քույրը հին սիրով ու պարծանքով ասում է. «Սպիտակ ձիավոր Ռոստոմս ուրեմն էս մոտերքում պտտվում է»։ Մեր տիկինը մի քիչ իրոք վախենում ասում է. «Նա ինձ էստեղ որ տեսավ՝ օրս գլխիս սև է անելու», ինչի դեմ մեր քույրը խանդով բողոքում է. «Մեկը չեղավ, որ մի անգամ մեզ ասի՝ դու քու բաժինը վաստակել ես, Շուշան, ծանր աշխատանքը քեզ վրա էլ իրավունք չունի»։ Ստիպված՝ մեր տիկինը մեղմորեն բացատրում է. «Նա իմ աշխատանքին չի դեմ, նա Հովըտի կառավարությանն է դեմ»։

Նրա մեքենայի խափան դռնոցի վրա կողբեցին իր մեքենայի թափքից սուլում, Հրանդին խնձոր է շարտում ու հետև էլ ասում. «Էյ, ախպերացու, յուզդ տեղ չի հասնում»։ Հրանդը գնում խնձորը գտնում, գալիս մեքենային լավ նայում ու կողբեցու վրա հիանում է. «Շիտակ, այ, երեք օր է լցնում եմ, ինքը տակից թափվում է»։

Հիմա բոլորն էլ խնձորով ու խորհրդով կաշառված են, ու լռություն է, ու լռության մեջ Մարոյի աղջիկը ջրից գալիս է: Գիտի, որ ինքը լավն է. վառվռուն կարմիր շոր է հագել, ծաղկապսակ է հյուսել դրել գլխին: Չասենք թե կողբեցին մագնիս է ու նրան քաշում է, կողբեցին դեռ չգիտի էլ նա ով է ու ինչ է, մագնիսը ինքը Մարոյի աղջիկն է. թերևս լրիվ բնագդաբար, թերևս դրա մեջ մի քիչ էլ խաղ կա՝ ինքն է քշվում դեպի տղամարդիկ: Մի պահի թերևս տատանվում ու ինքն իրեն

ասում է՝ ես ինձ վրա իշխեմ, բայց հաջորդ պահին իր ձեռքից իրեն բաց է թողնում ու քշվում դեպի փորձանքը, ու՝ համարձակ, ու՝ ժպտալով, ու՝ գայթակղելով ու չթաքցնելով, որ մարդու հենց փորձանքի է քաշում: Կարելի է ասել, որ նա պարտավոր էր ջուրը նրանց տանել, ովքեր իրեն ջրի են դրկել, բայց՝ ոչ - մի պահի վարանում ու քշում է դեպի անծանոթը՝ կողբեցին, և կողբեցու հեռանալուց հետո էլ՝ դեպի տղաները և ոչ թե կանայք: Կողբեցին ջուրը խմում, նայում, տեսնում հասկանում է, որ նրա ուզածը այդ է՝ ասում է. «Արի քեզ սարը տանեմ»: Ոչ հարցմունք՝ թե ուր ես տանում կամ դու ով ես, ոչ քաշվել - ոտը համարձակ գցում ու արդեն խցիկում նստած է: Մեր քույրն էլ իր մեղքն ունի. նրանք դեռ իրար դեմ կանգնած են, դեռ չեն հասկանում իրենք իրենցից ու միմյանցից ինչ են ուզում, մեր քույրը նայում ու վռազ «արձանագրում է».

«Վույ, վույ, վույ... սիրահարվեցին, այ»: Դպրոցական տղաներն այնինչ, ինչքան էլ երեխա լինեն, էլի հասակակից են ու նրան մի քիչ ծանաչում են. Ալբերտի տղան և՛ խանդով, և՛ սրտմտությամբ ասում է.

«Վառեկն էլի սկսեց»:

- Այ տղա, էյ, այ օտարական, կանչում է մեր քույրը, գիտես որ սիպտակ ձիավոր Ռոստոմն էստեղ է ու քեզ օտարական չես պահում:

Կողբեցին խցիկ է մտել ու մեր քրոջ սպառնալիքին ուշք չի դարձնում, ինքն ու Մարոյի աղջիկը իրենց մեջ խոսում են, ինչ են խոսում՝ անհայտ է: Պառավները վռազ կռահում են. «Փախցնիլ տի, պայմանավորվում է՝ որ փախցնի»: Ալբերտի տղան թափ է առնում, եղանը շարտում մեքենայի վրա: Բայց փախցնելու մասին՝ դեռ ծիշտ չեն, դեռ չի փախցնում - աղջիկը խցիկից իջնում է: Գնդապետի տղան, ինչքան չլինի քաղաքաբնակ է, մի

բան հասկանում ու վազելով գալիս է, ի՞նչ է ուզում, թերևս ուզում է այս գյուղի համար հայրենասիրական որևէ արարք կատարել, հանուն այս գյուղի՝ կողբեցուն խփել, բայց մեքենան արդեն շարժվել է - ձեռքի խնձորը շրխկալով խփվում է կողքի ապակուն: Կողբեցու տրամադրությունը դրանից չի փոխվում, ծիծաղելով քշում գնում է: Նրա հեռանալուց հետո կանայք նայում տեսնում են Մարոյի աղջիկը հասած աղջիկ է ու սիրուն է, ասում են. «Անունդ ի՞նչ է, այ անունդ վեր թափի»: Անուն չունի, չի պատասխանում, չի ասում կողբեցին ինչ խոսեց, ուսն է բարձրացնում: «Բեր, բեր, ասում են կանայք, ջուր պիտի բերեիր՝ բեր»: Ջրի ամանը վերցրել ու դեպի ուզողները չի գնում - գնում է դեպի տղաները, կողբեցու բացակայությամբ՝ տղամարդ են արդեն դպրոցական այդ երեխաները:

19

Մենք այդ ժամանակ ավերակ կարմրաքար մատուռի դռանն էինք. հավատացյալ չենք և կուսակցության բերումով այդ իրավունքը չունենք էլ, բայց ծիուց իջանք ու գլխաբաց կանգնեցինք այդ նախշուն խաչքարերի առաջ, շոյեցինք, հիացանք, մեր գլուխը այդ մանրամասն աշխատանքի վրա օրորեցինք և այդուհանդերձ դրանց ոչ իմաստը, ոչ էլ գեղեցկությունը չէինք ըմբռնում, ինչ-որ խորթություն կար մեր ու այդ քարերի միջև: «Չես հասկանում, քոնը չեն, դու ծի ես», ասացինք ծիուն, բայց դա հավասարապես նաև մեզ էր վերաբերում, «Ժողովուրդ է ապրել, չարչարվել, հուսացել ու հավատացել - հիմա անտառ է, ո՞ր եմ... օրը մի զկեռ են կերել կամ մի բաժակ իծի կաթ... Էժը, չէ, հովըտեցիք էժը գողացած կլինեին...»: Մենք մտանք մատուռ, խորանի առաջ գլխաբաց կանգնեցինք:

...Անտառապահ, ավազակի դեմ ավազակ և խոնարհի առաջ հնազանդ մեր հերացուն՝ մշտապես յափնջավոր-ծիավոր-հրացանավոր՝ մի պարզ արև օր հանկարծական անձրևից հալածվել է, երեսի խաչը հանելով մտել է մատուռ, ասել է մի րոպե պատսպարվեմ, երեսը դեպի դուրս ու թիկունքը դեպի ներս կանգնել է, հետո զգացել է, որ մատուռում իրենից բացի մի ուրիշ շունչ էլ կա: Սրսիացել, երեսի խաչը «Հիսուս Քրիստոս» ասելով նորից է հանել, դանդաղ դարձել է դեպի մատուռի մուֆ ներսը: Թաց լուցկին վառելու վրա չարչարվել, մոմի կտոր է գտել կպցրել և խորանի սեղանին գտել է սև շալով խանձարուրած մեզ: Եվ քանի որ աստվածամոր խամրած պատկերից զատ այդտեղ ուրիշ մարդ-մարդաշունչ չի եղել, ուրեմն կարելի է համարել, որ մենք աստծու ծնունդ ենք: Գրկել դուրս է բերել, ձիուն ասել. «Խելոք, հիմա երկուսի պատասխանատու ես»:

Հեծել է վզին զանգակ կապած իր ձին, ձիու գլուխը չորս կողմի վրա պտտել, մռնչացել է. «Ա՛յ մոռ քաղոդ, ա՛յ ծամփորդ, ա՛յ ժողովուրդ, էս ով է էստեղ երեխա դրել, է՛յ»:

Պատասխան չի ստացել ու իր նման խռպացել է. «Հա՛ատ, ձեր հանցավոր ծնողը՝ որ բողկն ուտում ու հանցանքի տակ տապ եք անում»:

Ձիու զանգի վրա ընտանիքը վեր է թռել, ասել «հայրիկը եկավ»:

Բերել է տուն, դուռը ծնկով հրել ու դռների մեջ թրջված, լլկված, մրսած կանգնել է: Մայրը վառարանի մոտ ձաշը խառնելիս, կինը անկյունի թախտին ծծկերին կերակրելիս, տղան ու աղջիկը լամպի տակ սեղանի վրա երկուսով նույն դասագրքին գլուխ-գլխի հակված են եղել, մայրը եկել յափնջու կապն արձակել ու տեսարանի առաջ զարմանք է կտրել՝ «Վույ, էս ինչ է», տղան սեղանի տակով դուրս եկել ասել է՝ «Հայրիկը գիլի ծուտ է բռնել», աղջիկը եկել նայել, հոր գրկից աղջկաբար

մեզ առել, ասել է. «Վույ, ախպերիկ է»։ Ասել է. «Տուր մորդ»։ Աղջիկը՝ մեր քույրը՝ ասել է. «Ես կպահեմ»։ Վառարանի մոտ թաց սապոգները քաշած, հետո գուլպաներն էլ հանած, աղջկա առաջ քնքշացել, ասել է. «Դու ծիծիկ չունես, տուր մորդ»։ Պառավը ծանր յափնջին պատից կախել, հրացանի ջուրը թափել պատի մեխից կախել, նիհար, հնազանդ, վախեցած հարսին նայել, որդուց՝ մեր հորից պաշտպանել է. «Ես խեղճ աղջկա միջին ինչ ուժ կա՝ որ էս օտար անտերը տակն ես գցում. էս է գոռով իրենից էլածին է պահում. քաշում է, քաշքշում է՝ պտուկը դատարկ է»։ Մեր քույրն ասել է. «Ե՛ս տե՛մ պահիլ. գրկիլ տե՛մ ու դպրոց տե՛մ տանիլ»։ Անտառապահը վառարանի խողովակը գրկած դողալիս է եղել, մայրը դարձյալ ասել է. «Ով գիտի որ թուրքի կծեից վաստակել, բերել ասում ես վանքիցն եմ գտել»։ Անտառապահը մռնչացել՝ «հա՛ատ», տեղից թռել, աղջկա ձեռքից մեզ առել տվել է ծծմոր գիրկը. «Շամարի, որ Տիգրանը դանակով ձախ ծիծդ կտրել ու գցել է շների առաջը. մինը քու լակոտինն է, մինը էս որբինը, իմացա՞ր»։

Մենք մեր ծիծընկերոջը գետնում, նրա բոլոր շարժումները կաշկանդում, վրան պինդ նստում ու երեխայի բաց հպարտությամբ դառնում էինք անտառապահին. «Շաղթեցի»։ Մի տեսակ արտասովախառն ծիծաղում ու հայիոյում էր. «Շա՛ատ, հորդ դվաթը պրանենք»։

Կատվի պես քսվելով՝ մենք անտառապահի ծնկների արանքն էինք քաշվում, դեմքն ի վեր նայում հարցնում էինք. «Դու հայրիկ ես, բայց էդ խի՞ ես մի տեսակ»։ Զարմանո՛ւմ խռպում էր. «Տես, է, սեփականը հարցնում չի, օտարն է հարցնում», և ծանր ձեռքը դնում էր մեր գլխին, ասում. «Անտառս գողանում են՝ դրանից էլ մի տեսակ եմ»։ «Ո՞վ է

գողանում», հարցնում էինք. «փչացած ժողովուրդը», ասում էր. «անտառը քոնն է՞», հարցնում էինք. «իմն է, պատասխանում էր, մեծանաս մեծ տղա դառնաս՝ քեզ եմ տալու»:

Շետո նա պատշգամբի թախտին անկողնում շապիկ-վարտիքով նստած էր, բոբիկ ոտքերը թախտից կախ՝ բահի կոթի վրա դանակով կաշի էր քերում, մեր հագին նոփ-նոր տրեխներ էին, ըստ երևոյթին վատ չէինք հագցված, անտառապահի գլխարկն ըստ երևոյթին մեր գլխին էր: Մեր քույրն ու եղբայրը բակում տնգլի էին խաղում: Մենք պիտի որ չափարին կանգնած, չափարի ցիցը գրկած, երեխայի մեր մտքերի միջից դեպի անտառ կանչելիս լինեինք՝ «մեծ անտառ, մե՛նեծ անտառ» և ունկնդրելիս տների մեջ պատեպատ խփվող մեր ձայնի արձագանքը: Շետո հիշում ենք, որ տան ետևը, խնձորենու ստվերում, օտար, այլերկրացի, լավ հագնված մի աղջիկ-կին էր կանգնել ու մեզ լուռ կանչում էր իր մոտ և մենք չէինք վստահում, գլխով «ոչ» էինք անում ու ետ-ետ քաշվում, իսկ նա և՛ վախեցած, և՛ սիրով ու թրթիռով մեզ լուռ ասում էր «արի», և մենք գլխով մերժում ու ետ-ետ էինք անում: Երեխաները խաղը դադարեցրել էին, մեր քույրը մեխվել, կարծես հարձակվելուց առաջ՝ չարացած նայում էր օտարուհուն. սա ետ քաշվեց ստվեր ու մեզ դարձյալ ասում էր «արի»: Մեր քույրը մրմնջաց. «Ցիգանն ըրեխա յա գողանըմ»: Շետո անտառապահը հանկարծ «հա՛ատ» մոնչաց ու պատշգամբից այդպես սպիտակ շապիկ-վարտիքով, բահի կոթը ձեռքին դուրս թռավ: Անմիջական շարունակությունը չենք հիշում - հիշում ենք, որ դիմաց այգիներում տղամարդիկ բղավում էին՝ «Տիգրանին բռնեցեք, Տիգրանին», ու անտառապահը սպիտակ շապիկ-վարտիքով վազում էր, կարծես թե օտար այդ կինն էլ երևաց:

Շետո. այդ կինը դեմքը դրսից սեղմել էր դասարանի լուսամուտին, ներս էր նայում, ըստ երևույթին ներսում բան չէր ջոկում, տեղը լուսամուտի վրա փոխում էր, ձեռքով հովանի էր անում, և երեխաներս պապանձվել էինք: Մենք արդեն տասը-տասնմեկ տարեկան տղա էինք: Մեր պապանձված լռության մեջ դռան կամացույթ թակոցի՝ թվում է ձանկռտոցի վրա մազը կարճ կտրած, մուգ բաժկոնակով, բուկը կոճկած սպիտակ մաքուր վերնաշապիկով խստաբարո օրիորդ ուսուցչուհին գնաց դրսի հետ ինչ-որ բան քչփչաց, հետո, դուռն այդպես բաց թողած, հագիվ նկատելի ժպտալով «Սարգսյան, Ռոստոմ Սարգսյան» ասաց ու մեզ գլխով դեպի դուռը ցույց տվեց. և ահա երրորդ՝ հեռավոր նստարանաշարքի վերջին նստարանից մենք ելել ենք, այդ հլու գլուխների վրա պահը մեզ դարձրել է հպարտ ու հանդիսավոր, ատլասե կարմիր փողկապի ծոպերը մեր ուսերը ծեծում են, և պարտաձանաչ ու հպարտ փոքրիկ զինվորի նման մենք սահում ենք կարծես այդ գլուխների վրայով նստարանաշարքերի ու գրատախտակի արանքի միջանցք, կտրուկ, մի տեսակ բանակայնորեն ձախ ենք դառնում - և մեր դեմ դասարանի բաց դուռն է, դրսում սպիտակ արևի մեջ՝ օտար այդ կինը, որ զույգ ձեռքի եղունգները բերանն է առել ու դանդաղ քաշվում է դեպի շենքը, հետո ձեռքերը դեմքից հեռացրել է և մեղավոր աչքերը մեզ հառած՝ ուզում է ժպտալ ու չի կարենում, դարձյալ ուզում է ժպտալ ու չի կարենում, վախեցած ժպիտը բերանի անկյուններում կծկվում է, իսկ մենք երեխայորեն լուրջ ու շիտակ նայելով ահա արդեն շենքին ենք հասնում, և վերջապես՝ թևերը փռած այդ կինը նվաղուն ձկլթոցով վրա է ընկնում դեպի բաց դուռը՝ մեզ վրա ասես սկսի թևավոր խաչ շրջվել, և մենք նույն փոքրիկ զինվորի քայլով,

կտրուկ շուռ գալուց հետո, չարագանալով ու չդանդաղելով՝ ուսուցչուհու կողքով անցնում, երկու նստարանաշարքի արանքով գնում ենք դեպի լուսամուտը, մեր պինդ, փոքրիկ բռունցքով, դեռ զուսպ՝ բայց արդեն չարանալով, խփում ենք երկու փեղկի միացման տեղին, ապակիները ջարդվելով փեղկերը ետ են թռչում, և մենք լուսամուտի գոգին ենք, հետո դուրսը գետնին մի պահ ընկած, ապա ջղաձիգ, անձայն արտասվելով փախչում ենք, և մեր ականջներում անհուն լռություն է, չնայած ամբողջ դասարանը, հետո ամբողջ դպրոցը մեր ետևից է ընկել, մեզ է փնտրում, և մենք բունը խլուտ ու կատարը խիտ փունջ մենավոր բոխու վրա ենք, վերևից ենք տեսնում՝ որ մեզ փնտրում են, իրար ցույց են տալիս, թե մենք որ կողմ փախանք, ենթադրում են որ ծառի վրա ենք, իսկ օտար այդ կինը թևերը կրծքին խաչած կանգնել է հեռու շեկ ծանապարհին, և ցավալի է, անչափ ցավալի է: Մի ձիավոր, ձիու վրայից մի ուրիշ ձիու սանձը նույնպես բռնած, այդ կնոջն է սպասում, իսկ նա լուռ ու անշարժ մեխվել է ծանապարհին և նրա ու մեր արանքում, նրա ցավը մեզանից ավելի խոր զգալով, դեպի բոխի եկող նույն արահետին կանգնել է դասարանի աղջիկներից մեկը՝ որ մեզ հետ նույն նստարանին է նստում, և լաց է լինում:

Ընտո, երբ մենք արդեն մենք էինք, խանութը շատ ապրանք էր ստացել ու շատ ապրանքի մեջ՝ մի հատուկ փամփշտակալ գոտի. գլխի ծանր ծարմանդն արծաթ էր, արծաթանախշ էին դաշույնի պատյանն ու կոթը: Խանութը լիքը ժողովուրդ էր, ապրանքը տնտղում էին, դեռ չէին առնում: Մենք գործիմացաբար մեզ համար գերանդի էինք ընտրում - փորձում էինք դրանց կարծրությունն ու ձկունությունը, չէինք վստահում, ետ էինք դնում ու նորը վերցնում: Տղերքի ու մեզ հասակակից

գործակատար աղջկա խոսակցությունը մեր ուշադրությունը գրավեց. դեռ անմեղ, դավը ոչնչով չմատնող խոսք էր, բայց մենք լարվեցինք ու չարացանք: Տղերքը գոտին փորձել էին ու գնի պատճառով ետ էին դնում. գործակատարուհին ասել էր՝ «հազար մանեթ», փորձող-վերադարձնողն ասել էր. «էս պետությունը շաշվել է... մի դատարկ փորքաշին էս ինչի է հազար մանեթ կպցրել»։ վաճառողուհին ասել էր. «կպցրել է՝ որ քեզ նման անարժանը հանկարծ առնի ոչ»։ տղերքն ասել էին. «էս աղքատ ժողովրդից դու էդ ումի՞ց ես հազար մանեթ պոկելու»։ վաճառողուհին ասել էր «նայած»։ Այդ պահին մեր ծանր պարանոցը մենք ոլորեցինք և տեսանք նրա խաղացկուն ժպիտը, դավը և որ տղերքին թաքուն հասկացնում է, թե գոտին մեր լայն մեջքի համար է: Դեռ ոչինչ չհասկանալով կամ հասկանալով ու չմատնելով՝ մենք մոտեցանք ասացինք «տեսնենք»։ Գոտին մեր մեջքը ձիշտ ու ձիշտ գրկեց: Ուրախության տրվեցինք, մեզ զսպեցինք ասացինք. «Գինն իսկապես ի՞նչ է»։ Վաճառասեղանի վրայով մեր վերնաշապկի փեշերը շտկեց, ասաց «հինգ մանեթ» ու վրիպեց, ասաց «տասը մանեթ» ու ավելի վրիպեց: Արձակեցինք դրինք վաճառասեղանին, ասացինք. «Միգուցե թե նվեր է»։ Արդեն վախենալով ասաց. «Նվեր է»։ Ասացինք՝ «քո՞ւ նվերն է», վախենալով ասաց՝ «իմ»։ Մեր բռունցքը դրեցինք սեղանին, ասացինք. «Ում մեջքի լենքը փորձելու ես՝ քու նվերը նրան արա, իմացա՞ր»։ Կարկամեց, ասաց. «Ամեն խոսքդ մի փութ մեղրով ուտվիլ չի», հետո լաց եղավ: Դարձանք, տղերքին ու ամբողջ ժողովրդին գրկեցինք դուրս թափեցինք, դռան նիզը ներսից գցեցինք, ետ եկանք վաճառասեղանի մոտ: Անկյունում մի խեղճ պառավ էր մնացել, ասացինք. «Էս սուրբն էլ քեզ վկա... Ռոստոմից կլինի

թե ուրիշ շանից՝ քու լակոտը քու տակին կպահես, որ նվերդ ետ ըռխիդ չգա, իմացա՞ր: Մի նստարանի իրար կողքի ենք նստել, բայց իմ անտեր որբությունը ես եմ քաշել, դու չես քաշել, ու ներումը՝ ես եմ ներելու, դու չես ներելու, քեզ անտեղի ոտի տակ մի գցիլ, իմ էս գլուխը, էս սիրտը, էս մարմինը չի՛ ներում, չի՛ ներում, ես ծառի ու խոզի ծնունդ եմ, ես նրա ծնունդը չեմ»:

20

Մամռուտ խոտհարքի ժողովուրդը կարծես թե արդեն վրա է ընկել աշխատանքի, կարծես թե արդեն չարացած, լուռ աշխատանքը, ինչպես որ միայն հնում էր լինում, արդեն վերածնվել է - աչքների մեջ միայն շոգ արևն է և ականջներում՝ չոր խոտի խշշոցը. նկարի նման գեղեցիկ կույտերն ավելացել են. բայց հիմա էլ կաղնուտ լանջի արահետով կանանց տուրիստական արշավախմբի շարանն է ելնում, մտնում խոտհարք, մեր մեխանիզատորը ձեռքով ցույց է տալիս նրանց հետագա ծանապարհը, և աշխատավոր ամբողջ ժողովուրդը մեկառմեկ դադարում, թախիծով նայում է նրանց ետևից:

- Պատերազմով, տխուր ասում է մեր քույրը, պատրոնիս հետ գնացինք գնացք նստեցինք, գնացինք Թիֆլիս. Ակոփը հիվանդանոցում վիրավոր էր, գնացինք տենանք. գաթա էի թխել, ծամփի պաշար հաց էի թխել, ձու էի խաշել. գնացինք տեհանք լավացել ու էդպես կիսալավանալ էլյետ ծակատ են քշել: Գնաց խփվեց:

Պառավներից մեկն ասում է.

- Տենաս որ չխփվեին՝ հիմի ի՞նչ, ի՞նչ բանի կլինեին:

Մեր տիկինն ասում է.

- Որ չխփվեին... հիմի հանդերը լիքը ծափուծիծաղ կլիներ:

Պառավներից մեկը ասում է.

- Ետով գաթեն ի՞նչ արիք:

Մեր քույրը մտածում ու չի հիշում: Միտս չի, ասում է: Ընտո, իր հին երանության մեջ է, ասում է. Քու Գիքորն ինձ փախցնիլ տեր. ասել էր «կողքիդ շարված թեկուզ իրեք ըրեխա ունենաս թեկուզ չորս, ու ես էլ թեկուզ վեցն ունենամ՝ քեզ պտեմ փախցնիլ»։ Ակոփի ձեռից ինձ փախցնիլ տեր:

Պատասխան է ստանում. ասում են.

- Իի՛ի, ֆողեմ գլուխդ, քու էդ ինչը տեր փախցնիլ, վրեդ ինչ կա՝ որ ինչ փախցներ:

Մեր քույրը վիզը ծռում, երանության մեջ հիշեցնում է.

- Ընդով, անոշ, քառասուն տարի սրանից առաջ:

Պառավներից մեկը կատակում է.

- Էն ա կփախցներ, ասում է, կտաներ ատամնին ոսկի կզցեր:

Լրանց ձայներից կցկտուր ծվեններ մենք լսում էինք. ձիու սանձը քաշելով, խոտհարքի աշխատավորին աչքառ չելնելով՝ անտառի եզրով մենք գնացինք: Կտրած կլպած կաղնին չէին տարել՝ տեղում էր, հեռվի բաց սարահարթում պարապ շխկշխկալով գալիս էր կողբեցու մեքենան: Մենք հիմա ժողովրդի մեջ էինք մտնելու և հարմար տեսանք, տեղը թեկուզ վայրէջք էր, հեծնել: «Կներես, ասացինք Նժույգին, ժողովուրդը մեզ միշտ ձիավոր է տեսել»։ Ինչպես որ նկարվելուց առաջ հայելու դեմ են իրենց կարգի բերում, մենք մեզ ներկայանալի տեսքի բերեցինք: Մենք մի քիչ ծիծաղելի էինք, բայց դե էդ էր, հետո կաղնիների միջով ձիավարեցինք դեպի ժողովուրդը:

Կանգ էին առել, չէին աշխատում: Չէինք լսում ինչ են խոսում, բայց խոսում էին: Միակ շարժվողը գնդապետի երեխան էր, փոցիս էր անում: Մեխանիզատորը արդեն մեքենան սարքելու

վրա էր: Մեզ չէին տեսել: Մեր քույրը հանկարծ ուշքի եկավ ասաց.

- Էս ի՞նչ բանի ենք, գործն էլլետ կանգնել է, և կարծես թե վերսկսեցին, բայց մեր տիկինը «դալոյ» ասաց.

- Դալո՛ւյ, կորչի գործը, և ջրամանը եղանով շարտեց դեպի աղջիկները: Մարոյի աղջիկ, վազիր ջրի, բայց գալդ չմոռանաս:

Սա արձակ-համարձակ, մեջը միշտ չգիտես խուլիզան տղայի մարտահրավեր թե քմայքոտ պարմանուիու աղջիկ չդառնալու երդում, փեշի կարծությունից չքաշվելով և տղայական շարժման հետ ազդրերը բացվելուց չամաչելով, չգիտենք լեզուն թե ծամոն ծամելով դանդաղ մոտեցավ, թափով հանկարծ քացի տվեց ջրամանին, դարձյալ դանդաղ՝ երկար, սիրուն ոտքերը կատվի պես փափուկ փոխելով՝ գնաց դեպի ջրամանը, հետո հանկարծ ինչ մտածեց՝ կարճ թափ առավ, ձեռքերն ուսերին խփեց ու թռավ գնդապետի տղայի վրայով: Բարակ ու հանկարծակիի եկած երեխան չդիմացավ՝ ընկավ, իսկ աղջնակը ընկնելուց փրկվեց մի ձկուն կքանիստով, հետո դանդաղ գնում էր չգիտես ինչ մտածելով:

Սիրո, քնքշանքի, ափսոսանքի պես մի բան մեր կոկորդը բռնել մեզ խեղդում էր: Մենք ասես մեռնում էինք և գույների ու հնչյունների հրաշալի աշխարհը մեզանից հեռանում էր: Մենք հազիվ էինք զսպում մեզ խեղդող լացը: «Քառասուն տարի ուշ ես եկել, մրմնջացիկք, գառը ջան, քառասուն տարի»:

Մեր ժողովուրդը՝ մեր քույրը և մյուսները, հաց էին փռում՝ հանդի իրենց հացերը միացնում էին, ասում էին՝ «գաթա էիր թխել, ի՞նչ եղավ», մեր տիկինը խնձոր էր գտել ու, անատամ, բերանի մի կողմով դեմը կռվում էր, ու, տեր աստված, այդ խակ պարմանուիուց հետո դրանք էդ ինչ մեռած տգեղություն էին -

այդ կնճիռները, հագուստի այդ քրջերը, այդ խամրած աչքերը:

Կողբեցու մեքենան ահա այդ ժամանակ եկավ կանգ առավ: Մենք դեռ պառավների հացի պատրաստությանն էինք հետևում, մեկ էլ՝ մեքենայի դռան շխկոց լսեցինք, կարծես հասցրինք նկատել, որ պարմանուիու կարմիր կերպարանքը մեքենա է խցկվում, ջրամանը շարտել էր՝ գլորվում էր, հետո տղա երեխաները մեքենայի ետևից վազում էին, մեր քույրը ձեռքը բերանին էր դրել, զարմացած ասում էր՝ «վույ, շիտակ փախցրուց, այ», հետո կանայք խառնվեցին ու ձվձվացին՝ «տարավ, տարավ, տարավ, տիրամեռի լակոտը էն քածին փախցրուց», և մենք ուզում էինք հեծնել ու չէինք կարողանում, չէինք կարողանում: Ընծանք, ինչպես մարդ սպանելուց առաջ՝ սևակնեցինք քարացանք ու լուռ ասպանդակեցինք: Խփեցինք անցանք կանանց մոտով և այս աշխարհի վերջին ծայները որ լսեցինք՝ մեր քրոջ խոսքն էր. «Թվանքդ տանիլ մի, Ռոստոմ ջան, կտաս կսպանես՝ արնի տակ կմնանք, հրացանդ գցիր»:

Կանայք ու նրանց ծայները ետ մնացին: Մենք հետո առհասարակ ոչ մի ուրիշ ծայն, ձիու թոքերի խռպոտ հեքից զատ, չէինք լսում - ամեն ինչ կատարվում էր մի տարօրինակ լռության խուլ հատակներում: Մեր մեխանիզատորի մեքենան չգիտենք խափանվեց թե ինքը կանգնեցրեց, խցիկից թռավ ու մեզ ինչ-որ բան էր հասկացնում: Երեխաները ձանապարհից դուրս եկել, Մամռուտ հնձած խոտհարքով դեպի հեռու անտառ էին վազում, գնդապետի երեխան ետ էր մնում, թոքերը երկի չէին զորում: Երեխաներից անցանք, խոտհարքը ետ մնաց, հետո ցանցառ, արևոտ անտառն էր: Զառիթափի գլխին, ուրկից դեպի գետափ գերաններ էին արձակել և սողանի անկումը թունելի նման ծառուղի էր բացել, մեր նժույգը կանգ առավ: Մենք չէինք

հասկանում, որ անկման գլխին ենք կանգնած, նժույգի սանձը ձգձգատում, ասպանդակում, ստիպում էինք առաջանալ, բայց ո՞ր: Քարտաշն ու աշակերտը իրենց խաչքարը Մուրադենց կարմիր քարհանքում տաշել, մի ջահել ծառի վրա կապել, եզան նման երկուսով լծվել, բերել հասցրել էին ահա-ահա սողանի գլուխը: Ձիու գլուխը թեքելով՝ մենք նրանց մոտով, մի տեսակ նրանց չնկատելով, զառիթափի եզրով քշեցինք մինչև քարհանք, մի լուրջ ալիքի ծիծաղով արձանացանք քարհանքի բլրակին՝ երկնքի ու մեր երկրի պատկերի վրա, բայց ոչինչ չէինք տեսնում ու չէինք հասկանում: Չէինք ըմբռնում նաև մեր արարքը, հոգեվարքային ինչ-որ դող մեզ կալել ու դեսուդեն էր քշում: Ասպանդակեցինք, բայց չգիտեինք դեպի ուր: Վարպետն ու աշակերտը դարձյալ երևացին, չգիտենք ինչու՝ ասացինք «ձեզ հետ հետո կխոսենք», անցանք, ձին գայթեց, մենք ցատկեցինք, հետո չհասկացանք ինչպես՝ հայտնվեցինք սողանի տակ:

Շայտնվել էինք սողանի տակ, ձին ելնում էր, մենք արդեն ոտքի էինք, ուրեմն սահել ու գլորվել էինք, և լավ չըմբռնելով թե ինչ ենք արել՝ տակնիվեր դիտում էինք սողանի թունելը, որի լուսավոր բերանում վարպետի ու աշակերտի կերպարանքներն էին:

Քիչ հեռու մեր թիկունքում գետափնյա այգին ու ցանկապատն էին և ծանապարհը: Թեթև քամի կար, ուռենու ճյուղերը տարուբերվում էին, հետո՝ գետակն էր, ուրեմն ինչ-որ ձայներ պիտի լինեին, գետափնյա այգում վիթխարի կինը թները կանթել մեզ նայում էր, ուրեմն մենք լիովին իրական այս աշխարհում էինք, բայց ամեն ինչը մեզ երագի նման անիրական էր թվում: Այգու մոտ մեր և հիմնական ծանապարհները միացան, վիթխարին մեզ ձեռքով արեց, գուցե ասում էր իջիր, գուցե

ուրիշ բան էր ասում, մենք չլսեցինք ու չհասկացանք - արդեն դանդաղ՝ հիմնական ծանապարհով մի քիչ ետ եկանք ու կանգ առանք:

Այդպես կանգնած էինք մեզ թվում էր արդեն երկար, մեր առջև ծառուղու մութ երախն էր, և ահա մենք տեսանք մեր պապի սպանության հստակ պատկերը:

Մեր պապը մեր այս նույն ձիով էր, հետո, քանի որ նրա նկարը կամ իրեն երբևէ չենք տեսել, մենք էինք մեր պապը՝ Տիգրանի նույն քուրքը ուսերին. բարձած ձին քաշելով հասավ այս նույն ծառուղու բերանին, կանգ առավ, սրսփաց ու երեսի խաչը հանեց, և այդ ժամանակ կենտ կաղնու տակ երեք հոգի ելան, քամակները թափ տվին, հանգիստ մտան ծանապարհ, ձիու սանձը ձեռքից առան, իրեն առաջ գցեցին ու ձին քաշելով մտան ծառուղի:

- Արյուն ենք տեսնում, ասացինք, արյուն պիտի լինի: Բայց մեր ձայնը մենք չլսեցինք: Մեր քրոջ ձայնը մեր հիշողության խոր հատակներում տազնապում էր, ասես չարչարվում էր խոր, անելանելի ծորերից ելնել և ելավ, լսեցինք. «Շրացանդ դեն գցի, Ռոստոմ ջան, թվանքդ դեն գցիր»: Դանդաղ՝ մեր ուսի վրայով մենք ետ նայեցինք - վիթխարին սպիտակ լույս այգում ձեռները կանթած կանգնել մեզ էր նայում: Մենք ժպտացինք: Մենք ուրախ էինք, որ նա իրականություն է:

Խցիկը կարմիր ցուլքերով բռնկված մեքենան ծառուղու թունելից դուրս պրծավ արևոտ ծանապարհ, աղջնակը գլուխը վահանի տակերը կոխեց, բայց դեմ հանդիման արևի տակ, կտրտող-կուրացնող ցուլքերի մեջ խցիկը դարձյալ լիքն էր նրա կարմիր շորի հրդեհով:

Խաչվելու նման՝ մենք մեր ձեռքերը պարզեցինք, այսինքն թե

ձանապարհը կտրում ենք, երկփողանիս մեզանից մի տեսակ անկախ, այսինքն կարծես մոռացել էինք որ հրացանավորված ենք, մեր ձեռքի հետ մեզանից հեռացավ, նախ մեկ, ապա երկրորդ փողը մենք օդ կրակելով պարպեցինք, և առաջին կրակոցից հետո մեր լսողությունը աշխատել սկսեց, և ահա մեքենայի առաջ մենք լրիվ անգեն ենք:

Եկավ կիպ՝ ձիու կրծքից սանտիմետրի հեռավորությամբ արգելակեց, գլուխը խցից հանեց, լուռ հարցրեց թե ինչ է պատահել: Շակվեցինք նայեցինք ձիու ու մեքենայի արանքը, այսինքն թե ձիուն հո չի՞ դիպել, շտկվեցինք, հրացանի ծայրով հրահանգեցինք աղջկան իջեցնել խցիկից: Իբր թե չհասկացավ (բայց աչքերում անվախ ժպիտ էր), լուռ հարցրեց՝ ի՞նչ է մեր պահանջը: Ասացինք.

- Էդ՝ որ կարմիր ցուլը գլուխդ բռնել է:

- Ցուլը քու աչքերն է բռնել, ասաց:

- Էս ամառվա կեսին ուրթդ կքոչացնեմ, իշի գլուխ, ասացինք:

Արգելակած՝ մեքենան շատ ուժեղ գազ տվեց, կանգնած մեքենան ուղղակի թալտում էր:

Կռացանք մեքենայի ու ձիու արանքը նայեցինք, շտկվեցինք սպասեցինք: Մեզ թվաց մեքենան առաջ եկավ ու ձիու լանջը սեղմում է, և կիսից բռնած՝ հրացանը կտրուկ շարտելու բարձրացրինք: Մեզ իսկապես արդեն չէինք կարողանում հսկել: Ծիծաղեց ասաց. «Է, հետո՞»: Աղջկան գլխով լուռ իջեցնել հրամայեցինք: Շասկանում էր, որ մեր տեղից աղջիկ չի երևում - մեր կարգադրությունը չհասկանալ ձևացրեց: Ասպանդակների վրա կանգնեցինք, ձգվեցինք - վահանի ետևը կատվի պես տապ էր արել: Կողբեցին ծիծաղով խփեց նրա կոնքին - ընդոստ վրա նստեց, բարկացայտ նայեց: Շրացանի ծայրով ասացինք իջիր:

Պարմանի ձկուն մարմինը մեքենայից թեթև թռավ, կանգնեց, շիտակ նայեց, ասաց.

- Քու ի՞նչ գործն է, դու ո՞վ ես:

Ձին ետ տալով՝ մեքենայի ու մեր արանքով անցնելու տեղ բացեցինք, ասացինք.

- Անցիր էնտեղ կանգնիր:

Անցավ, հայացքով ուղեկցեցինք, դարձանք կողբեցուն՝ որ հայացքով ուղեկցում էր աղջկան. ուշքի եկավ, դարձավ մեր ծանր հայացքին հանդիպեց, ասաց.

- Էդ երեխան քու, օրինակ, ինչի՞ն է պետք՝ որ խլում ես:

Անդրադարձրինք.

- Էդ երեխան քու, օրինակ, իսկապես ինչի՞ն էր պետք:

Ծիծաղեց ասաց.

- Հո դեն չէինք գցելու. որ տանում էինք՝ ուրեմն մի բանի պետք կա՞ծեինք: Հետո. Տար կեր, խազեին, բկումդ մնա: Եվ դարձյալ. Տուր, ծամփա տուր գնանք:

Մենք լուռ կանգնած էինք որպես մարմնացյալ կշտամբանք, ծամփա չէինք տալիս, բայց և չգիտեինք ինչ անենք: Ինքը ձեռքը երեսին դրեց ու ձևացրեց, թե երկար, համբերատար բայաթի է քաշում: Աչքերը ծաղրով ու անվախությամբ լիքը՝ ուղիղ մեր երեսին էր նայում ու մեքենայի դռնոցի մեջ բայաթի էր ձևացնում: Մեր գլուխը կշտամբանքով օրորեցինք, ծիու գլուխը թեքեցինք ճանապարհից ելնելու և այդտեղ մեզ թվաց մեքենայով մեր ծիու գավակին խփեց. ձին գայթեց, համարյա թե նստեց, և զայրույթը մեզ կալավ. մենք մեզանից արագ, մի կարճ վայրկյանում հրացանը լցրինք (մեքենան արդեն բավական հեռացել էր), և այդպես ծիու վրայից, մի ձեռքով, գրեթե առանց նշան դնելու կրակեցինք, և ետևի անիվը պայթեց: Հետո ետ

հակվեցինք տեսնելու ձիու ոտքը վնասվե՞լ է:

Կողբեցին մեքենան կանգնեցրեց, խցիկից դուրս թռավ, նայեց ծակված անիվը, հետո՝ դեպի մեզ, և դեմքը մեզ արած՝ արձակեց տաբատի բերանը: Եվ դեմքը դեպի մեզ այդպես չամաչելով ու միզելով՝ դեռ խոսեց էլ: «Դե լավ,- ասաց,- չմոռանաս»:

- Մոռանալու պատկեր ես, ասացինք, որ մոռանանք, չենք մոռանա: Եվ աղջկա գլուխը հրացանի ծայրով թեքեցինք դեպի կողբեցին, ասացինք. Նայիր, հանկարծահաս սիրուդ պատկերը տես ու հավիտյան հիշիր: Հրացանի ծայրը կտրուկ դեն հրեց, իսկ մենք՝ ուրիշի տգեղության առաջ մեր նժույգի վրա մեր բարոյականությամբ ու դիպուկ կրակոցով հպարտ՝ մի հատուկ իշխանավորությամբ դարձանք այգու վիթխարիին, որ թևերը կանթած, լուռ ծամելով այդ ամենի ականատեսն էր.

- Ես բոլորը դուք եք, ինչ որ լինում է՝ Ես ամբողջի պատճառը դուք եք: Ես աստծու տակ էլ մաքուր անկյուն չեք թողել: Հանգիստ, անհողդողդ որոճում էր: Դարձանք աղջնակին, ասացինք. Առաջ ընկիր:

Թեթևոտն, քայլն ազատ, ձկուն՝ սուրաց: Գետակի քարերին ոտ խփեց ու ուլի պես ցատկոտելով անցավ: Հետո նեղ արահետն էր, բարձր խոտերի միջով գնում էր: Արահետն ի վեր, զառիվերի պատճառով մի քիչ կռացած ու երբեմն ծնկներին հենվելով սուրում էր, բայց դե ձին ձի է, ձին շուտ-շուտ ետևից հասնում էր, շնչում ահա-ահա նրա ուսի վրա, և նա, երևի արահետը ձիուն թողնել ուզենալով, ծանապարհից մի կողմ էր կենում, բայց ձին գնում էր նրա ետևից, և նա ծանապարհը հիմա էլ մյուս կողմի վրա էր կտրում, և պատկերը տպավորություն է տալիս՝ թե նա ահա ուզում է փախչել, իսկ մենք՝ հեծյալ փաշա՝

չենք թողնում, գերեվարում ենք:

Քարտաշ վարպետն ու աշակերտը սողանի տակ էին, եզների պես լծված՝ իրենց խաչքարը ջահել ծառի վրա քաշում էին: Ետ կացան, վարպետը գլխարկը մեր առջև հանեց, աշակերտը նայում էր հարգանքով ու նախանձով: Մեր արարքի վեհության գիտակցությամբ՝ մենք զուսպ, մեր բերանը համարյա թե չշարժելով բարևեցինք, անցանք, սողանի տակ կանգ առանք ու նայեցինք թունելն ի վեր: Մեր գլուխն օրորեցինք ու ծլթծլթացրինք (զառիթափն ուղղակի գահավիժում էր) մեր տղայական կտրիճության վրա՝ այսինքն որ վտանգը անտեսել ու ծիով գլորվել էինք՝ ժպտացինք, ու ձին շարժեցինք: Եվ մեր ուսի վրայով ասացինք դեպի վարպետն ու աշակերտը՝ որ դարձյալ լծվել էին.

- Հինը տարա՞ք, կանգնեցրի՞ք առաջվա պես իրա տեղը:

Կարևորը տիրոջ նման հարցնելն էր - չնայեցինք ու չլսեցինք ինչ պատասխանեցին: Մեր բերանում արդեն պարոնտիրոջ մյուս խոսքն էր.

- Էդ ջահել ծառը որ կտրել եք՝ համարեք որ չտեսանք: Բանվոր ժողովուրդ եք, բան չենք ասում:

Աղջկա ետևից հասանք, և նույնը դարձյալ կրկնվեց. ձիու առջևից աղջիկը մի կողմ էր կենում, բայց նժույգը գնում էր նրա ետևից և աղջիկը անցնում էր արահետի հիմա էլ մյուս կողմը, և մենք կարծես գերի էինք քշում: Ձին կանգնեցրինք, երևի հոգնել էր՝ երեխան նույնպես կանգ առավ: Ետ չէր նայում, գլուխը կախ կանգնել էր: Այդ շիտակ, բարակ, անմեղ մարմինը, ծաղիկների մեջ կանգնած այդ ծաղիկը մեր սիրտը շարժում էր:

- Մենք ու հերդ ընկերություն էինք անում, ասացինք, ընկեր էինք: Հորդ հիշո՞ւմ ես:

Չէր հիշում կամ իր համար դա հարց չէր - նայեց վայրենու կասկածանքով:

- Մենք հիշում ենք, ասացինք, հերդ ու մենք մի բաժակ շուկավերա գինի խմեցինք ու հովըտեցու հարսանիքը ջարդեցինք: Ի՞նչ էինք ուզում - աշխարքում ինչքան սիրուն աղջիկ կա մերը պիտի լիներ. չգիտեինք՝ որ քու հոր բաժինը մերդ է լինելու, մեր բաժինը մեր չորուկը: Արբունք էր, մեր ներսում հանգավ ու նոր ուլերի մեջ զարթնեց: Ներողություն ենք խնդրում:

Ձին շարժվեց, և ինքը հոգոցով շարժվեց: Ասացինք.

- Էդ արդեն մեզ ծանր վիրավորում ես, օրիորդ. քու Ռոստոմ հոպարը թուրքի փաշա չի ու դու էլ նրա գերին չես:

Մոտեցանք, մեր ոտքն ասպանդակից հանեցինք, թաթը ձգած մեկնեցինք, ասացինք. «Նստիր»: Մեր ձեռքից բռնեց, ոտքը մեր թաթին դրեց, ասացինք՝ «մյուսդ, ձախդ», ոտքը փոխեց ու մեր թարքը ելավ: Եթե ասենք պարմանի, անկրծկալ, անմեղ մարմնի հպումը մեր թիկունքին մեզ դուր չեկավ՝ ձիշտ չենք լինի, բայց ձիշտ չենք լինի նաև՝ եթե ասենք մենք տրվեցինք քաղցր մեղքին: Դուր գալը՝ դուր եկավ և այդ պահին էր որ մենք, մեզ վրա կարողանալով ծիծաղել, ասացինք. «ըհը՛ը, դառանք վրացու աղջիկ փախցնող չերքեզ», բայց նաև այդ պահին էր՝ որ քարանձավի գռեհիկ լրբության հուշը մեզ շամփրեց. անասունի պես չորեքթաթ, աչքերն ու բերանը մեղքով լի՝ վրա քշած գալիս ու ասում էր «չեմ գալիս», «ուզենամ՝ չեմ գա» և երբեմն իսկապես կանգ էր առնում, բայց հետո կաղկանձում ու վրա էր քշում: Շին աղբն ասես մեր քիմքին պինդ ծեփված էր, ամբողջ մեր բերանը քերելով մենք խուխ արինք ու թքեցինք:

Ձիու գայթելու հետ՝ աղջնակը բարակ թևերով գրկեց մեր

հաստ մեջքը, բարակ, մատղաշ ոսկորներում ինչքան ուժ ուներ սեղմեց, հեծկլտաց ու մեր մեջքը կծեց, հետո գլուխը մեր թիկունքի փոսում՝ քնել էր:

Անտառից ելանք մեր մամռոտ խոտհարքները, և երեխաները անտառեզրի նոսր, արևոտ կաղնուտից ընդառաջ էին վազում: Դեռ երեխա էին, տղա չէին, և մենք նրանց համար պաշտամունք ու պատվի օրինակ էինք. մեր դերի մեր այդ ընկալումը հպարտ հեծյալի մեր կեցվածքն ավելի ձգեց: Գնդապետի երեխան կաղնու «ծտի բարձիկավոր» տերևներից մի փունջ էր արել, ձեռքին բռնած էր: Մենք անդրադարձանք, որ մեր կրծքին՝ աղջնակի զույգ ձեռքին՝ ծաղկապսակ է: Եկան հիացումով նայեցին, ասացին՝ «քնած է... քնել է», հետո մեկը ձիու սանձերն էր առել, երկուսը մեր երկու կողմից հպարտ ու երջանիկ մեզ տանում էին Մամռոտ խոտհարքներով, և մեզ դիմավորելու էր կանգնել խոտհարքի հիացած ամբողջ ժողովուրդը:

21

Գյուղամիջում իրիկունները բնիկ և օտար բավական ժողովուրդ է լինում: Գրասենյակը՝ մեր ժողովրդի հին գրուցատեղին, ծանր կողպեքով թեկուզ փակ է (հեռախոսը բաց լուսամուտով հանված դրված է պատշգամբում), բայց խանութն ու ակումբի հեռուստացույցը ժողովուրդ դեռ հավաքում են - գալիս են առուտուրի ու զրույցի: Գարեջուր է լինում, ֆուտբոլային հաղորդում է լինում - խմում ու անկարևոր բաներ են ասում՝ կարևորները պահելով որպես թաքուն գործունեություն, դիտում ու շատ ուժեղ ոգևորվում ու քննադատում են՝ քանի որ դա արդեն իրենց գործունեությունը չի:

Մահվան շունչն առած հասակավորներ են՝ որ վախեցած

կասկածով են նայում գործակատարի գեղջկորեն դանդաղ ու կոպեկը կոպեկին արդար առուտուրին, և անտարբեր, անմիտ, սիրտները փակ երիտասարդներ. իրենց կառավարումը հանձնել են կողքի Շովրտին ու դեմքները կորցրել: Տեղական պատվախնդրություն, նախաձեռնություն, քննարկում, վեճ, կռիվ, խելքի ու լեզվի թատրոն չկա: Հին պահեստները լքված են, վարչության հին շենքը մաշվել ահա ավերակ է դառնում: Հասակավորների մաշված կերպարանքները մեր սիրտը մի քիչ շարժում են, սիրո ինչ-որ ցուլքեր նրանց հանդիպելիս մեր դեմքը ողողում են - այսպես կոչված երիտասարդության հանդեպ մենք փակ ենք, ինչպես որ ինքն է փակ մեր ու բոլորի առջև: Մեր սերը մեր հայրերի հին սերունդն էր՝ որ գնաց պատերազմում ջարդվեց, և մեր հասակակիցները՝ որ քաղաք քոչեցին, բայց թե նրանք էլ արդեն մռայլ նկարներ ու անուններ են զոհված տղերքի հուշարձանի պատվանդանին ու առաջավորների պատվո հին տախտակին՝ փակ գրասենյակում:

Երբեմն թուրք սարվոր է իջնում խանութ - խանութը սրբում տանում է, և նրա առողջ առուտուրի վրա մենք հիանում ենք, ձին բեռան տակ ձկնում է. ընտանիքին սարերում ամեն ինչ պետք է գալիս, բացի հեռուստացույցը՝ որ մեր գործակատարը, հիմա արդեն կատակով, ուզում է նրան պարտադրած լինել. նավթ - նավթ. մոմ - մոմ. շաքար - մի պարկ. կոնֆետ - մի բուռ. մակարոն - խանութում ինչքան կա. ռադիոյի ու լապտերի լիցք - լիցք. շիբ - շիբ. կոնսերվա - քառասուն հատ՝ կըրիս. կոշիկ: Տեղացի պառավը պահանջում է այդքան մակարոնը թուրքին չտալ, ինքն էլ է վերցնելու: Թուրքն ասում է. «Դու պառավել մեռել ես, մակարոնը քեզ ինչ տի օգնիլ»:. դա նրա կատակն է: Առևտրին հետևում է ու փողը բռան մեջ է, փողի մի կապուկ էլ

տակի վերնաշապիկի գրպանում է: Մերոնք նրա առաջ իրենց այնպես են պահում, ինչպես հին Թիֆլիսն է իրեն պահել մերոնց առաջ, բայց ահա մենք նախանձով ենք հետևում նրա ամեն մի շարժումին, օգնում ենք բեռը ձիուն գցելու:

Ինչ որ է՝ ժողովուրդ են, և մենք գյուղամեջ էինք գնալու մեր վարքի փառաբանությունը չլսելու տալով լսելու, չտեսնելու տալով տեսնելու:

Շաղթողի ու բարեգործի կեցվածքը մեզ չէր լքում: Թարմ սրբիչը թևին մեր տիկինն սպասում էր լվացվենք վերջացնենք՝ որ մատուցի, և մեր նոր հարևանների քաղաքային անբարո կյանքին մեզ տեղեկացնում էր, այսինքն թե թաքուն համաձայն չէր՝ որ մենք նրանց հովանավորենք, բայց մենք այդ տգեղ պատմության տակ փոխանակ ընկձվենք՝ շոյվում էինք, քանի որ անբարոյականը մենք չէինք և փլուզվածը մեր ընտանիքը չէր:

- Փեսեն ու տղեն մեջն են եղել, ավտոն դիպել է ծառին, դատարանը տունը խլել, տանից իրենց դուրս է արել: Փեսին ութ տարի են տվել, տղին հինգ:

- Ավտոն ծառին խփելու համար ութ տարի չեն տալիս, տիկին, ասում էինք: Ավտոյի մեջն ուրեմն աղջիկ է եղել, աղջկան ուրեմն սպանել են:

- Չեն ասել, ի՞նչ աղջիկ, ասում էր:

- Չեն ասի, ասացինք, օտար աղջիկ: Փեսի աղջիկը ու, կներես, տղայի աղջիկը՝ երկուսի էլ աղջիկը, ու երեքն էլ՝ հարբած: Ինչից որ մեր սիրտը խառնում է, տիկին, նրանց համար հիմնական կեր է:

Մեր մաքուր, ազատ կահավորված պատշգամբից՝ մեր դեմ մեր խնամված այգին էր, այգում՝ բացված մեծագլուխ արևածաղիկը, քիչ հեռվում՝ չցանված ու անծառ բացատում՝ մեր

տկյոր ձին:

Մենք սրբվեցինք, հագնվեցինք, հայելու մեջ մի հատու հայացք գցելով՝ բութ ու գոռոզ՝ մեզ դուր եկանք, մեր թիկունքը պահեցինք՝ որպեսզի տիկինը, ձգվելով, բաձկոնը մեր ուսերին գցի, ապա, երբ պատրաստ էինք գյուղամեջ ծանապարհվելու, նկատեցինք, որ այգում փոփոխություն է եղել. մեծագլուխ արևածաղիկը չկար, անգլուխ հասակը դեռ շարժվում էր: Անշտապ, մեր գոռոզ հանդիսավորությունը չկորցնելով մենք պատշգամբի աստիճաններով իջանք ծանրումեծ հին աղայի պես, այգու դռնակը բացեցինք ելանք, մտանք գյուղամեջ հանող արահետ, և երկու քույրը իրենց դռնից մեզ տեսան և, չնայած հեռու էին, մենք իրենց չէինք բարևելու և իրենց հարգանքը չէինք հայցում, ոտքի ելան խոնարհ կանգնեցին: Մյուսը՝ աղջնակը, մեր չափարի վրա էր, արևածաղիկը ինքն էր պոկել, փորին սեղմած, փեշի մեջ երևի նաև սալոր, հիմա-հիմա ցատկելու էր չափարի վրայից, բայց քույրերի ելնելու հետ հասկացավ, որ մենք այդտեղ ենք, սառեց մնաց: Մենք իր ոտքերի մոտով, ոտքերին գրեթե քսվելով, լարված-պահված շունչը գրեթե լսելով էինք անցնելու, անհնար էր չնկատելու տալ, բայց մենք տվեցինք: Շպարտ, իբրև թե կույր ու խուլ՝ մենք անցանք և երբ հեռու էինք՝ նա ցատկեց, ընկավ, մենք շուռ չեկանք, թաքուն ժպտացինք, անցանք քույրերի մեղավոր ու ակնածող հայացքների միջով:

Այդպես հպարտ ու հանդիսավոր էլ մեզ հանձնեցինք գյուղամիջին. մի՛ հուշարձանի բրոնզե զինվորն էր, մի՛ մենք, և ժողովուրդը մեզ ակնածում էր. ուշ նկատեցինք, որ մեր մեծությունը չընդունող, մեզ նախանձող ու հակադրվող էլ կա, և դա մեր քվեր զավակն էր ու նույնիսկ խումբ ուներ, բայց դա ի՞նչ

էր գնդապետի երեխայի հիացմունքի առաջ՝ որ մեր գյուղամեջ մտնելու հետ մեր երեսից կախվեց ու այդպես էլ չպոկվեց:

Գործակատարը զարեջուրը վերև չէր հանել. այդտեղ՝ լքված ներքնահարկի ու հուշարձանի հրապարակում էլ մեքենայից թափել ու թուրքի գալու հետ գարեջրի այդ վաճառքից իր գլուխն ազատել էր. «Դուք ու ձեր խիղճը, ախպեր, ուզում եք խմեք, ուզում եք ջարդեք»։ սեղանին հաշվիչ, բացիչ, փողի համար կոշիկի մի տուփ էր թողել ու բարձրացել վերև. մեքենան այդտեղ էր, վարորդը՝ մեր քրոջ մյուս զավակը, կողմնակիորեն դեկավարում էր գարեջրի վաճառքը, մոտեցող բացող խմողներ կային. սայլակավոր մոտոցիկլետ կար. թուրքի յոթ-ութ տարեկան տղա-երեխան լքված ներքնահարկի դռանը կապած ձիու սանձը բռնած սպասում էր, օտար երկիր էր ընկել ու երեխայաբար մի քիչ վախենում էր, պարզ է: Մեր երևալու հետ խանութի պատշգամբից մեր քույրը հիացավ ու ծղրտաց. «Ո՛ւյյ, ցավդ տանեմ, ցավդ, ցավդ, ցավդ... պահել եմ, է՛, էս ձեռներիս վրա եմ մեծացրել, ցավդ տանեմ, ցավդ, ցավդ»։ Եվ մենք իսկապես մանկության մի գեղեցիկ ծվեն հիշեցինք. մեզ սիրուն հագցրել, մեր ձեռքը մի փոքրիկ, ծայրին երեք տերև ձիպոտ էր տվել, ինքն էլ մազին խառը մի կարմիր ժապավեն էր հյուսել, ու մազը կրծքին գցած, մեր թաթիկը բռնած՝ գյուղամիջի շատ ժողովրդի առաջ կանգնած էինք. մենք խոլոր նայում էինք ժողովրդին ու սեղմվում մեր քույրիկի փեշերին, իսկ ժողովուրդը ուրախ էր, ասում էին, «արա, ծմակի տղա», մեր հոր տնազով ասում էին՝ «հա՛ատ, անտառն իմն ա», բոլորը մեզ նայելով ժպտում ու ծիծաղում էին, բայց, չգիտենք ինչու, մենք հանկարծ լաց եղանք:

Ֆուտբոլային խաղը վերջացել էր, գոհ ու ոգևորված տղերքի

մի խումբ ակումբից ելել դեպի գարեջուրն էին գնում. մեզ տեսան, քայլերը դանդաղեց, հետո կանգ առան, մենք թեթևակի բարևեցինք ու անցանք, և մինչև որ մեր ծանրումեծ քայլերը մեզ պատշգամբ չհանեցին ու խառնեցին այնտեղի ժողովրդին՝ նրանք մեր ետևից նայում էին: Իրենց խեղճ առուտուրը դույլներում՝ մեր քույրն ու ուրիշ մի քանի կթվորուհի պատշգամբում կանգնած էին, ֆերմայի մեքենային էին սպասում: Մեր քույրը, մեզանից քաշվելով, հետո՝ ներքին կաշկանդվածությունը քանդելով և այդ իսկ պատճառով հատկապես բարձրաձայն ու թատերական, մեզ հպվեց, մրմնջաց՝ «ցավդ տանեմ, ցավդ», ետ կանգնեց դիտեց մեզ ու արդեն բարձր՝ «արծվի ձանկից ճուտ է խլել, գիլի բերնից գառն է խլել, ցավը տանեմ, ցավը»։ պատշգամբի մյուս ծայրից՝ մեր քրոջ զավակի խմբից, մեկն ասաց. «զույգ տրաքոցը ես լսեցի. նայեցի՝ ժամի ուղիղ չորսն էր. հետո որ մին էլ տրաքեց՝ չորսն անց հինգ էր»։ հանգիստ, հանդիսավոր՝ թույլ տվինք այդ խումբը, կանանց խումբը և ովքեր առհասարակ կային (խանութից զուտ մեզ տեսնելու համար ելնողներ եղան) մեզ նայեն, հետո ցածրաձայն, համեստորեն ասացինք. «Պարտավոր էինք, մեր պարտքն էր»։ ճիշտ մեզ նման բաձկոնն ուսերին, ճիշտ մեզ նման ծանրումեծ՝ մեր քրոջ զավակը պատշգամբի ծայրին ետուառաջ էր անում: Մենք նրան հիմա ուշադրության չառանք, բայց հենց նա էր մեր ապագայի վրա կախված սպառնալիքը: Նայեցինք կանանց խմբին, նայեցինք դույլերին, և մեր քույրը խեղճացավ ասաց. «Իրիկնակթի ենք գնում, անոշ, կաթան ավտոյին ենք սպասում»: Պատշգամբից ներքև, մեր քրոջ մյուս՝ վարորդ զավակին ասացինք իշխանաբար. «Էս ժողովրդին ինչի՞ չես, արա, ֆերմա տանում»: Ծիծաղեց ասաց. «Դրանց ավտոն ուրիշ

է, քեռի. բայց կենտրոնը թող կարգադրի՝ տանեմ»։ Իշխանաբար ասացինք. «Մեր գործի թողտվությունը մեզ Հովի՞տն է տալու»։ Հիացած ծիծաղեց ասաց. «Դու հատուկ ես, քեռի, դու քեզ մեզ մի խառնի»։ Ավելի փքվեցինք, դանդաղ ու հանդիսավոր պատվեցինք պատշգամբում, հետո խանութ մտանք։ Առնելու բան չունեինք, մտել էինք ներսի ժողովրդին մեզ ցույց տալու։ Թուրքն ու գործակատարը հաշվի վրա չարչարվում էին։ Ժողովրդի ակնածող հայացքների տակ մի քիչ մնացինք խանութում, նայելու բան չունեինք՝ բայց նայեցինք ապրանքը, հետո մեզ հանդիսավոր ու դանդաղ հանեցինք խանութից։

Հանդիսավոր ու դանդաղ՝ ճիշտ մեզ նման, մեր քրոջ զավակը պատշգամբում ետուառաջ էր անում։ Խեթեցինք ու շարունակեցինք մեր պտույտը։ Մեզանից ամաչելով, թաքուն՝ կանայք բռների մեջ գալեթ էին ուտում. ուտում, թաքուն ժպտում ու պառավ աչքների մնացորդ փայլով մեզ նայում էին։

Մոտոցիկլետի տերը երկրախույզներից էր. պահածո իջեցրեց լցրեց սալակ, օդի ու գարեջուր դրեց սալակում, հաց, մի գարեջուր էլ հենց այդպես շշից խմեց, եկավ մեքենան գործարկեց ու այս գյուղին շատ ուժեղ հայիոյեց.

- Ձեզանից էլ կծծի, գյուղացուց էլ ժլա՛տ... ոչխարի միսը՝ ոնց որ ձեր մսից պոկեք. մի ամիս է փողը դեմ արած խնդրում եմ՝ մեկն աչքը չի ձապացնում։

Պատշգամբից իշխանաբար ասացինք.

- Երիտասարդ... ձենը կտրի, բան ենք ասում։

Շատ էր զայրացած, արհամարհեց.

- Տո դու ի՞նչ պիտի ասես, է, ինչ սիրտուխելք ունեք՝ որ ինչ ասեք։

- Երիտասարդ, ասացինք, մի երեխա վերցրու, գնացեք Ռոստոմի դուռը. Հափարի մեջ գառներ կան, Ռոստոմի գառներն են... մենակ թե, մատաղ, կառավարությունը կորցրած էս խեղճ ժողովրդին մի մեղադրիր:

- Քու փքված Ռոստոմիդ էն մերն էլ, ասաց:

Անակնկալի եկանք, մեզ զսպեցինք, ասացինք.

- Ներելի է, չգիտի ում է հայիոյում:

Քշեց գնաց, բայց գնացել իսկապես գառ էր վերցրել:

Խուրջինը քարշ տալով թուրքը դուրս եկավ խանութից: Ծանր էր, չարչարվում էր. մեր մի ձեռքը գցեցինք մի հակը բարձրացրինք, մյուսն ինքը բարձրացրեց ու մեզ հիշեց. «Ա, Ռոստոմ քիշի»: Խուրջինը ձիուն դրինք, ձին ձկռեց: Բարևեցինք: «Սախլասըն» - «Խոշ կյալըփսըն» - «Նա՞ վար, նա՞ յոխ - Մեր թուրքերենը պրծավ, ասացինք, համար»: Բայց վերևը ուրիշ բեռ էլ ուներ, գնաց բերելու:

Ֆերմայի կաթան կոշված մեքենան, որի վարորդը նույն Ալբերտն էր, եկավ կանգնեց. կաթան ցիստեռն էր՝ ետևը կցված բաց սայլակ, ուր ոտքներն անիվին դնելով բարձրանալ էին ջանում պառավ կանայք, անիծում, ծիծաղում, իրար օգնում ու չէին զորում:

Մենք այդ տեսարանի առաջ և՛ իսկապես ցավակցաբար, և՛ իշխանաբար-թատերաբար ծլթծլթացնում էինք, ոխով հոգոց էինք քաշում, և նկատեցինք, որ սարվոր թուրքը խնդրողաբար կախված է մեր հայացքից:

- Լսում ենք, ասացինք:

- Դու քու դոստոմին մի նայես,- ասաց,- դու քու դոստոմի ձիուն նայես:

Բեռնված ձիուն նայեցինք, ասացինք.

- Զին՝ ի՞նչ:

- Դոստոմիդ ձին քյուլփաթի տակին քյափանակ ընկել մաշվել էս,- ասաց,- սատկում էս:

Միտքը մի քիչ կռահեցինք, զգուշացանք, ասացինք.
«Այսինքն»:

Վիզը խնդրողաբար ծռեց. «Ռոստոմ քիրվա»:

Հասկացանք ու մերժելով մերժեցինք:

- Փողը էս սհաթիս համբարես, ասաց ու ձեռքը ծոցը տարավ:

- Քու խնդրողական տեսքով Ռոստոմի վրա եթե չազդեցիր, ասացինք, փողով ուրեմն չես ազդի: Յոխ:

Մեր քրոջ զավակը՝ վերնինը, պատշգամբի հեռավոր ծայրից (բազրիքին հենվել, մեզ էր նայում) ասաց.

- Իրեն պետք է, չի տա. լակոտների ձեռից խակ մատղաշ է խլելու՝ որ մեր մորից արծիվ ասվի ու փքվի:

Մեր գլուխը դանդաղ նրան դարձրինք, ուզեցանք յուր գնալ լուռ կշտամբանքով, բայց նրա տեսքը մեզ գրգռեց (լուցկու չոփով ատամը քչփորում ու հանգիստ նայում էր), ասացինք.

- Ներեցեք, ձեր հեռվից դուք ի՞նչ գիտեք մենք ինչի մասին ենք խոսում:

- Զիու մասին,- ասաց,- տակիդ ձիու մասին. ուզում է՝ չես տալիս, քեզ պետք է, օրը մի աղջիկ էս փրկելու:

- Ներեցեք, ասացինք, քվեր տղա, մեր հարցի համար ներողություն ենք խնդրում. քառասուն տարեկան եք, ձեր քառասուն տարում ուրիշի համար, հանուն ուրիշի՝ ձեր մի ոտը մյուսի առաջ մի անգամ դրե՞լ եք, այսինքն որ ասեիք էս մարդը ցավի մեջ է՝ մի քայլ մոտենամ, տեսնեմ ով է, ինչ է, ինչ է ուզում:

- Գնեք ցանկանում,- ասաց,- ոչ ցավի մեջ գցել՝ թաքուն, ոչ էլ ցավից հանել՝ ժողովրդի աչքի առաջ, ու պարծենալ, թե լավ

նայեցեք ու տեսեք, ցավից ազատում ենք:

Մեզ էր խփում, ծանր հարված էր: Ասացինք. «Այսինքն»:

- Ուզում ենք մեր սահմաններում մնալ, ասաց:

- Դե ուրեմն ձեր սահմաններն իմացեք ու ձեր սահմաններում

կացեք:

Թուրքն ասաց.

- Ըհը, էրկու հայ կռվեսին՝ սարվորիս գործն աջողես: Շազար մանեթ:

- Երկու հազար, ասացինք:

- Շազար էրկու հարյուր, ասաց:

- Տասը հազար ռուբլի, ասացինք: Էդ մասին էլ խոսք չլինի, շատ ուժեղ կնեղանանք, բեռան տակ հայվանդ սպասում է, գնա:

Շուսահատվեց, իր ձիուն ու բեռանը դառնալով ասաց.

- Ձին ախար քու ինչի՞ն է պետք. դու գեղի կուլտուրական հայ, ես սարի չոբան...

Ծանրումեծ պատշգամբ բարձրանալով, շատ ուժեղ վրդովված ասացինք.

- Մենք ինքներս սարվոր, չոբան ու թուրք ենք - հայ չենք. չե՞ս տեսնում՝ հին ժամանակի թուրք են գտել ու չորս կողմից քար են գցում:

Գործակատարը ներսում գործը վերջացրել, ելել բազրիքին հենվել էր. նա մեր հասակակիցն է ու մաքուր մարդ է, մեզ հետ կատակելու իրավունք ունի. մեր հերացվի նշանավոր ծաղրով ասաց.

- Շա՛ատ, նանը. թուրքի առաջ մենք հայ, հայի առաջ էլ ուրեմն թուրք ենք, մենք պիտի անհատ լինենք, մեր կողքին չպիտի մարդ լինի:

Ժպտացինք, բայց մեր վիրավորվածությունն ու ծանրությունը

չկորցրինք. նեղացած ու զուսպ ասացինք.

- Եթե կա՝ թող կանգնի, մենք դեմ չենք:

Լուռ պտտվեցինք պատշգամբում՝ ուր ժողովուրդը բազրիքին ու պատին հենված մեր պտույտի առաջ փաստորեն հրապարակ էր բացել և միայն մեր քրոջ զավակն էր արմունկները բազրիքին հենած հետույքը մեզ արել, եկանք կանգ առանք, հետո անդրադարձանք՝ որ մեզ նման հպարտ ու փուչ մեկ էլ հուշարձանի զինվորն է: Նկատեցինք, որ գործակատարը աչքի պոչով զննում է մեզ և իր համար մենք թեև սիրելի, բայց և ծիծաղելի ենք: Գլխով արինք դեպի հուշարձանը, ասացինք.

- Որ նոր էինք դրել՝ հին տղերքից ոչ մեկի նման չէր, հիմա նմանություն ենք տալիս, բայց չենք հիշում ում:

Նայեց, ասաց. «Ձոհված տղերքից ոչ մեկին - քեզ»:

Կոտրատվեցինք, համեստացանք, ասացինք.

- Ձեռքներին նկարելու հարմարանք կար, կարո՞ղ է շան տղերքը թաքուն մեզ իրոք նկարել ու նկարն արձանացրել են:

- Չէ՛ հա,- ասաց,- պատրաստի ունեն, փողերը հավաքում ու բերում պատրաստի կանգնեցնում են. մինն էլ հրեն Դարպաս են դրել: Դարձյալ նայեց, ասաց. նմանություն իսկապես եթե կա էլ՝ պատահական է:

- Պատահակաա՜ն, քմծիծաղեցինք:

Մեր քրոջ զավակը պատշգամբի մյուս ծայրին շուռ եկավ, ասաց.

- Էդ ինչո՞ւ էր քեզ նման լինելու, դու զոհվածների օրինակ ի՞նչն ես:

- Մենք զոհվածների՞, ասացինք. քեզ էինք խոսեցնում՝ որ երեսդ մեզ անես, որովհետև քանի անցանք-դարձանք՝ քո տեղը

քրոջ տղա չկար - քամակ էր:

Ասաց.

- Մենք ամեն մարդու իրեն արժանին ենք տալիս:

Ասացինք.

- Մենք քեզանից նոր ստանալիք չունենք. մեր ստանալիքը քեզանից մենք ստացել ենք ու շնորհակալ ենք. էն որ գերանդի բռնել էինք սովորեցնում, էն որ ձիուն էինք դնում ու ծղրտում ու մեր վզից պոկ չէիր գալիս ու սիրտդ գնալով ասում էիր «քեռի, քեռի ջան, քեռի», էն որ մեր քրոջ փոխարեն գալիս էինք դարբնոցից ծնողական ժողովի ու ասում էին «մոր տեղն ինչի՞ է քեռին եկել», ասում էին «կարելի է, ծնողը ծնող է»... մեր ստանալիքը քեզանից մենք ստացել ենք:

Ասելիքը չասաց, խեղճացած լռեց: Մի բոպե խղճահարվեցինք, բայց «քեռու ու քվեր զավակի» մեր ժամանակն անցել էր, հիմա «հացի ու պատվի» ժամանակ էր, և մենք գիշատչի նման նայեցինք, ասացինք.

- Կարծում ենք ներող կլինեք:

Շետո պատշգամբում՝ ժողովրդի կապած հրապարակում մենք լուռ պտտվեցինք, ետ եկանք պատշգամբի այս ծայրը, և այդ ժամանակ հեռախոսը զանգեց. ապարատին մոտիկը մենք էինք և բացի այդ էլ այդքան ժողովրդի մեջ հեռախոսի իրավասուն մենք էինք, վրդովված իշխանի հանդիսավոր հպարտությամբ ընկալուչը դանդաղ բարձրացրինք. ուզենայինք՝ ետ կդնեինք, ուզենայինք՝ կլսեինք. ընկալուչի մեջ դժգոհում էին, բայց դա մեզ չշտապեցրեց, դանդաղ դրեցինք մեր ականջին, լսեցինք, ասացինք.

- Ծմակուտի Ռոստոմը լսում է: Վարիչ կոչվածն էր, երկարբարակ մեզ շնորհավորում էր մեր հաղթանակը և դա հաճելի էր,

բայց մենք մեզ թույլ չտվեցինք կլվել նրա շողոքորթությանը, ձգվեցինք ասացինք.

- Բայց մի ծանր հանգամանք կա, ընկեր. ծմակուտեցու վերաբերյալ մի ուրիշ ծմակուտեցու լավ արարքը Շովիտն ու հովըտեցին իրավունք չունեն գովել, այսինքն դու իրավունք չունես Ռոստոմ Մամիկոնյանի ուսը թփթփացնես, քանի որ ինքդ անգիտակից ողորմելի մարդասպան ես, դու մի ամբողջ դրոշակակիր գյուղ ոչնչացրիր, դու քու աթոռի վրա դիրեկտոր չէիր լինելու - դու ավտոյով աղջիկ փախցնող էն լաժիրակն էիր լինելու: Ցիրկ ենք՝ պատճառը դու ես, ցավ ենք՝ մեղավորը դու ես, տեղաշորն ընկած մեռնում ենք՝ մարդասպանը դու ես: Եթե մարդ էիր ու կարեցար վիրավորվել՝ խնդրում ենք վիրավորանքդ կենտրոն հասցրու, որպեսզի Ռոստոմ Մամիկոնյանը հնարավորություն ունենա ձակատիդ ղեկավարության առաջ թքի, թո՛ւ...

Մեր բառերը հատ-հատ ու ամբողջ խոսքը դանդաղ էր, բայց մեր կատաղությունն աճում էր, մենք արդեն-արդեն մեր ինքնատիրապետումը կորցնում էինք, ժողովուրդը մեր կատաղության մասին մի բան գիտեր՝ որ անհանգստանում էր, գործակատարը «է, չեղավ, չեղավ» ասելով նետվեց ընկալուչը մեզանից առնելու: Նվաղելուց այս անգամ փրկվեցինք, բայց մեր քունքերը տրոփում էին ու շնչահեղձ էինք լինում: Ընդունեցինք, որ չափն անցել ենք, «դե լավ, դե լավ» ասացինք, հետո անդրադարձանք, որ լուսամուտի գոգին հենված լուռ կանգնած ենք: Ասացինք դեպի պատշգամբի մյուս ծայրը՝ դեպի մեր քրոջ զավակն ու իր խումբը.

- Ձեզանից ո՞վ է Սենիկը, հեռախոսը նրան էր ուզում:

Սենիկը հենց մեր քրոջ զավակը դուրս-եկավ - խմբից

զատվեց ու վիրավորված, թափով եկավ: «Կարծենք քեզ հայտնի պիտի լինի, որ Սենիկը մենք ենք», ասաց:

Ողորմելու նրա բարկությունը քամահրեցինք, հենց այդտեղից էլ, չգիտենք ինչ մտածեցինք, լուսամուտով մտանք հին գրասենյակ, փեղկերը վրա դրինք, խլափեղկերը՝ նույնպես, և մեզ տվեցինք հին բույրերին:

Կենտրոնում թիթեղյա վառարանն էր, երեք պատի տակ՝ երկար նստարանները. ծխողը որտեղ էլ լիներ՝ պիտի ելներ գար կրճոնը վառարան գցեր. կողք-կողքի՝ նախագահի և հաշվապահի գրասեղաններն էին. հաշվապահի սեղանի մոտ մի գրապահարան կար, պահարանի մոտ՝ հարյուր հիսուներկու աշխատավորի ցուցակը. հուլիսի ուղիղ կեսին կարգացանկը կանգ էր առել. նախորդ կիսամյակը «հիվանդության» ոչ մի նշան չէր մատնում, խիտ լրացված կարգացանկի ռիթմը ընդհատվում էր միանգամից. հետո՝ պատի թերթն էր՝ հնձվորներիս շարքով և նույնիսկ ոտանավորով. այս գյուղում այն ժամանակ ուրեմն ոտանավոր գրողներ կային:

Լույսը բացվեց, գնանք հանդը...

Իր համար ոչ լավ ոչ վատ ոտանավոր էր, բայց ահա մեր հոգու խոր ծալքերում զարթնեց կանանց հին երգը.

Լույսը բացվեց, գնանք հանդը,
Քանդենք գերմանացու բանդը,
Ազատենք ընկեր Թելմանին՝
Կոմպարտիայի առաջնորդին:

Շետո՝ առաջավորներիս պատվո տախտակն էր, վերը՝ համարյա թե առաստաղի տակ՝ հին քաղբյուրոն: Մենք պտտվեցինք գրասենյակում, լացն ու հուզմունքը մեզ խեղդում էին, հետո եկանք նստեցինք այնտեղ՝ ուր հին ժամանակ էինք նստում -

Նախագահական գրասենդանի առջև դրված աթոռին: Այդտեղից
Նայեցինք, քիչ էլ, մի քիչ էլ՝ և երեք պատի տակ դրված
Նստարաններին տեսանք հին տղերքին այնպես, ինչպես Նստում
էին իրիկուններն ու անձրև օրերին: Ծանր, քչախոս, հա-
վատավոր՝ Նայում ու լռում էին: Ծխողներ՝ կային, որտեղ էլ
Նստած լինեին՝ կարծ, բութի ու ցուցամատի արանքում
չերևացող, վերջացած սիգարետը բերում գցում էին վառարան:
Մենք ելանք, ինչպես որ Նրանք էին ելնում, մոտեցանք թիթեղյա
վառարանին, կափարիչը բարձրացրինք՝ ինչպես որ Նրանք էին
անում... և ծանր միզահոտը խփեց մեր երեսին: Երկու
գրասենդանի մեջտեղը բարձր լուսամուտն էր, Նկատեցինք, որ
այնտեղից չարչարվում են մեզ տեսնել, մեր մասին երևի
անհանգստանում էին, գնդապետի երեխան էր: Թակեցին Նաև
փակ դուռը - գործակատարն էր: Տխուր կատակ արեցինք.
ասացինք.

- Կենտրոնից կարևոր մարդ է եկել, Նիստի ենք, չի կարելի:
Ապա մեր խոսքը դաժանացավ. Էդ կողքիդ անասուններին որ
հում գարեջրի ես քաշում՝ Նախ պետքարանի մասին մտածիր,
ես ի՞նչ է:

Նայեց «կողքի անասուններին»՝ հարբած, թմրած, անմիտ՝
իրոք «անասուն» էին, պատշգամբի մյուս ծայրին հացթուխը
չոր արաղը ջանն էր քաշում - լցնում, հյուրասիրում, մերժվում
կամ չէր մերժվում, խմում էր, բայց գործակատարն ասաց.

- Էդ ի՞նչ է եղել:

- Զահրումար է եղել, ասացինք, իրենց ջուրն ալարում են հե-
ռացնեն, մտնում են գրասենյակ ու չեն ամաչում: Լուսամուտով
դուրս եկանք, ասացինք. Ո՞րդ եք անում:

Բոլորն էին, երևի, անում ու անելու էին, մեր զայրույթը ուշա-

դրության չառան ու ընդհակառակը՝ հացթուխը շիշն ու բաժակը բռնած եկավ.

- Պարապ գրասենյակի վրա ի՞նչ եք կռվում, պարապ գրասենյակ է,- ասաց,- դե տղերքն էլ... օղին մեզ համար էր լցնում. բաժակը դրեց բազրիքին, լցրեց ասաց. Տղերքը քու արարքի կենացը խմել են, դու էլ խմիր՝ ասենք հա:

Բաժակը ներքև ընկավ, զզվանքով ասացինք.

- Գրասենյակը պարապ է, լիքն էդ է դուք եք:

- Ես իմ հացը թխել բաժանել եմ, մինչև էգուց առավոտ ազատ քաղաքացի եմ: Մեր քրոջ վարորդ զավակին վերևից ներքև ասաց. Թե չի կոտրել՝ էդ բաժակը դեսը գցիր, թե կոտրել է՝ էդ է...

Դա մեռյալ ժողովրդի պարապ խոսակցություն էր, նույնիսկ գործակատարի ասածը, որ վերջին հաշվով տագնապալի բան էր, պարապ ու մեռյալ հնչեց. «Այտա, խանութը փակելով ասաց, պահակս չկա, պահակս. հա միտս է գալիս՝ հա մոռանում եմ. անտեր-անտիրական հալիվորը մեռա՞ծ չլինի՝ խայտառակ-վենք»:

Նույնիսկ ահա այս՝ սրանց համար նշանակություն չէր ստանում. հարբած հացթուխը ներքևն ասում էր.

- Դե հացն ու խմիչքն է՝ ժողովրդին լիառատ բաժանեցինք. էլ ինչի՞ կարիք ունեն՝ որ կողպեքդ կոտրեն ու պատը ծակեն:

Եվ միայն մեր քրոջ զավակի՝ մեր կեցվածքը նմանակողի ինչ-որ թաքուն վերաբերմունքից մենք հասկացանք, որ այդտեղ մի «ևրս» կա:

Բաձկոնը հագնելով մենք արագ իջանք պատշգամբից, ձա-
նապարհը կտրեցինք, ավերված ցանկապատն անցանք,

անխնամ այգին անցանք, դուրս եկանք պահակի դուռը. գնդապետի երեխան՝ մեր ետևից: Մտանք տուն. երանի չմտնեինք. քված գերեզմանոց էր հիշեցնում ամեն-ամեն ինչ, և նույնիսկ քաղաքաբնակ որդու-հարսի գլուխ-գլխի «սիրելի հայրիկին իր զավակներից» լուսանկարը տարօրինակ, հին ու մեռյալ էր թվում: Մենք երեխային ասացինք՝ «երեսդ շուռ տուր», անկողնի վերմակը ետ քաշեցինք, բայց սխալվել էինք, անկողինը պարապ էր: Թիթեղյա վառարանը սառն էր: Սեղանի վրա զամբյուղ կար՝ մեջը ձվեր, երեխան կասկածելով նայեց մեզ, ասացինք՝ «թռռների համար քաղաք դրկելու է հավաքում», դուրս եկանք, ոտքի ծայրով խառնեցինք բուխարու կրակատեղը՝ կրակ չկար, սուլեցինք և ժպտացինք, քանի որ հալիվորը խուլ էր, ինչ էր լսելու, հետո գնացինք մտանք գոմը - կտուրը մի երկու տեղ փլված պարապ, մեծ գոմ էր, դուրս եկանք, կանգնեցինք, և այդ վայրկյանին վճռականորեն գիտեինք մեր անելիքը: Նույն ճանապարհով՝ թափով ետ եկանք, բարձրացանք բեռնատար մեքենայի խցիկ, ասացինք.

- Քրոջ տղա, եթե քեռի ու քրոջ-տղա ենք:

Ժպտալով, մեր եռանդուն վճռականությամբ վարակված, բարձրացավ ղեկի ետևը. «Ո՛ր ես հրամայում»:

- Դու գիտե՛ս, ասացինք. բոլորդ գիտեք ու Ռոստոմից թաքցնում եք:

Զգիտեր, լուռ անտեղյակացավ:

- Դու չգիտես՝ քու ախպեր Սենոն գիտի, ասացինք:

Սենոն իսկապես անհանգստացել էր, պատշգամբից թափով իջնում էր. մինչև մեքենան կգործարկվեր, մինչև ետուառաջ անելով կմտնեինք ճանապարհ, Սենոն եկավ անցավ: Ասացինք. «Ուզում է նստի, պահիր»: Իրար հետ չէին խոսում. «Էս

ավտոյում նրա համար տեղ չկա», ասաց: «Ախպերդ է», ասացինք: «Ով որ ընկերս է՝ ախպերս նա է», ասաց:

Գնդապետի երեխան մեր երկուսից էլ իր մասին անհանգստություն, սեր ու հոգածություն կորզելով՝ մեքենայի ետևից վազեց, հասավ, կախվեց ու բարձրացավ թափք: Այդ երեխայի արարքն ու գոյությունն էին, որ մեզ, չնայած ամենևին էլ լավ բանից չէինք խոսում, ողողեցին ինչ-որ լույսով ու հույսով: Ասացինք.

- Մենք խորթ ու հանդից գտած ենք. թշնամական անհարազատությունը մեր միջով մի օր իհարկե պիտի անցներ, բայց դուք մի հորումոր ծնունդ ախպեր եք:

Ծանրամիտ, թշնամանքի ու հավատարմության մեջ վերջնական՝ կրկնեց իր կարծիքով իմաստուն ու սպառնիչ խոսքը.

- Իմ ախպերը նա է՝ ով որ ընկերս է: Մի բան էլ բերանբացության կարգով. ֆերմայի պաշտոնից մի աղջկա գծով հանել են, քու անտառապահության վրա է պտտվում:

Մենք սպասեցինք մանրամասների, նույնիսկ խոսքով խնդրեցինք («Շետո՞»), բայց նա իր բայն ասել էր:

- Ես իմ բայը պրծա, ասաց:

- Զգիտենք, քրոջ տղա, չգիտենք սրա վերջը ինչ է լինելու, ասացինք:

- Սրա վերջը՞. սրա վերջն էն է լինելու,- ասաց,- որ ժողովուրդը պիտի ապրի:

- Թող էլի ապրի, ասացինք, բայց՝ կարգով, ապրելու կարգ կա:

- Իրա կարգը ժողովուրդն ինձանից ու քեզանից չի հարցնելու, ասաց:

Դա փաստորեն վիրավորանք էր աշխարհի մեր ըմբռնմանը, աշխարհում մեր՝ Ռուստոմի կերպարին մեզանից տրվող նշանակությանը. լուրջ կշտամբանքով, բայց քանի որ մեր քրոջ զավակն էր՝ ամեն վայրկյան կատակի պատրաստ, այնքան նայեցինք՝ մինչև որ չդիմացավ ու ծիծաղեց: Ասացինք.

- Ա՛յ էդպես կծիծաղես:

Մոտոցիկլավոր երկրախույզը մեզ, ճիշտ է, հայիոյեց, բայց մեր շքեղ-թատերային ժեստով ընձեռված հնարավորությունը ձեռքից բաց չէր թողել. գնացել մեր տիկնոջից գառն ուզել էր. մեր քրոջ զավակը՝ մյուսը, այդ առևտրում դեր ունեցել էր թե չէր ունեցել՝ չգիտենք, բայց նրանք՝ երկրախույզն ու մեր քրոջ զավակը, հիմա միասին էին, մոտոցիկլետով եկան մեզանից ծանապարհ ուզեցին (մեր քրոջ զավակը գառը գրկին նստած էր կցասայլակում), իրեն հատուկ հպարտ արհամարհանքով մեր քրոջ վարորդ զավակը ծանապարհ տվեց. չնայած ստոր վիճակում էր, մյուսը թրի կտրող հայացքով մի պահ ետ՝ մեզ նայեց (երկրախույզի հայացքի մեջ, ընդհակառակը, շնորհակալություն կար), և մոտոցիկլն անցավ: Սխալվեցինք, կարծեցինք գնում է երկրախույզների հետ հացի նստի, ասացինք.

- Օտար ժողովուրդ է՝ անտուն, անհայրենիք... փոխանակ բերի իրա տանը հյուրասիրի՝ ինքն է գնում նրանց հացին:

Մեր սխալի վրա ժպտաց (վարորդը), ասաց.

- Ես ուրիշ կասկած ունեմ:

- Ի՞նչ կասկած, ասացինք:

- Տեսնենք, հիմի կերևա:

- Իսկ... ասացինք, ի՞նչ հիմունքով եք գժտվել՝ հասարակակա՞ն թե անձնական, այսինքն ի շահ ժողովրդի՞ ես արհամարհում թե...

Մեր բարձր ոճը նրան զայրացրեց.

- Այ ընկեր,- ասաց,- մի անտերը ֆերմայում կա, պատիվը պաշտպանող ոչ ախպեր ունի ոչ մարդ. ուզում ես հասարակական համարիր, ուզում ես անձնական. հետը կապվել է ու ժողովրդի մեջ գոնե չի ասել, թե էդպես բան չկա - էդ գործի տերն եմ ու ե՛մ, այսինքն վախ չունեմ, աչքներիդ առաջ՝ կղնեմ ու կձնշեմ:

- Առանց վախի ու քաշվելու, արձագանքեցինք:

- Ումի՞ց քաշվի ու վախի, ասաց:

Մեր կարծիքով մենք հարգանքի ու ընդօրինակման կենդանի տիպար էինք, բայց մեր քրոջ զավակը չէր տեսնում և դա վիրավորական էր:

- Մեկ է, ասացինք, մենք մեզ նայող ու մեզանից սովորող ունենք. ունենք թե չունենք՝ մեկ է, ամենագաղտնի բաներն էլ մարդ պիտի էնպես անի, ժողովուրդն ասես կանգնած քեզ նայում է:

Դժվար ասելիք ուներ. տատամսեց չուզեցավ ասել, բայց վճռականությունը հավաքեց, դաժանացավ ու ասաց.

- Լավ օրենք ես ստեղծել, բայց պըտեիր վաղուց ստեղծած - էն որ խոտը ցնորվածի ու քու վրա շուռ էր գալիս:

Մեղքն ու բողոքը մեր բկում մնաց. փուլ եկանք, ինչպես որ մեռնողը կհարցնի, ասացինք.

- Է՞դ նկատի ունես:

- Էդ, ասաց: Գյուղում ինչ երևացել է՝ մեկը չի ասում «Վարոսի տղեն կամ Էլինորի տղեն», բոլորը մի բերան՝ «Ռոստոմից էլածը, Ռոստոմի պատկերը»:

Մեքենայի արգելակը քաշեցինք, ասացինք.

- Շնորհակալ ենք քու ծառայությունից. այ թե ուրեմն ինչի էիր

ավտոդ հնագանդ մեր տակ քաշում: Եվ մեքենայից իջանք, առջևով անցանք, ճանապարհից այդպիսով ելանք ու մտանք զառիվեր արահետ՝ որ գնում անտառ էր մտնում: Երեխան թափքից ցատկեց, եկավ մեր ետևից: Բայց մենք չկարողացանք մեր խոսքն այդքանով սահմանափակել, դարձանք մեր վերևից ասացինք. Ձեր աստծու երեսին թքեք ու ասեք լավ երես չի՝ թուք է բռնում, քացի տաք ցեխը գցեք ու ասեք լավ աստված չի, ցեխոտ է: Ձեր մեջ որ Ռոստոմ է դիմացել՝ պիտի մոմ գտնեք ու ոտի տակ վառեք:

Ասաց.

- Թատրոն չի, լսող չունես, ձենդ անտեղի մի բարձրացրու:

Ասացինք.

- Մենք քեզ բացատրելու բան ունենք, էս երեխային հիմա հետդ ետ տար: Գնա կողքին նստիր ու ետ գնա, ասացինք երեխային:

Ոչ նա, ոչ էլ մյուսը սակայն ետ չգնացին. մեր քրոջ զավակը մտատանջվել, վատ բանի հոտն առել ու ձիշտ ամենաձանր պահին եկավ դեպքի մեջտեղը կանգնեց, իսկ գնդապետի երեխան շան նման այդպես էլ մեզանից պոկ չեկավ. ինչպես որ շանն ասես «տուն գնա» և վիրավորվի ու մի քիչ ետ քաշվի՝ այդպես մի քիչ ետ քաշվեց, հետո մեր ետևից արահետն ի վեր եկավ, մտավ անտառ. մենք նրա ներկայությունն անգիտանում էինք, բայց անտառային մեզ ծանոթ դժվար նեղուցներում մեր քայլը դանդաղեցնում, թույլ էինք տալիս մեզ մոտենալ ու տեսնել ինչպես ենք անցնում և անցնել մեզ նման. ծառի ծյուղը մենք բարձրացրինք ու տակով անցանք (ինչպես և ինքը), մասրենուց անցանք թևքով մեր դեմքը պաշտպանած (ինչպես նաև ինքը), և արահետը կտրող ոլործուն արմատով ընկանք ու գայթեցինք

դիտմամբ, որպեսզի երեխան նկատի ու արմատով չընկնի: Դուրս եկանք մեծ, պարզ լուսնի լույսով ողողված բացատ ու կանգ առանք: Աստվածային պատկեր ու լռություն էր. լեռնալանջերը իրենց իսկ լեռների ստվերում էին, և մշուշոտ խիտ լույսի մեջ թրթռում էր միայն բացատը, թվում էր լույսը լանջերով հոսել լճակ է կապել բացատում՝ ուր լուսապսակված մի կենտ գանգուր բոխի էր միայն: Առաջ անցանք, կանգ առանք արահետին ընկած քարի մոտ: Այդ քարը ժամանակին այդտեղ չէր եղել ու գլորվել էր վերևի կրաքարե ժայռերից, մենք էինք պոկել ու գլորել: Ասացինք.

- Սեփական էլեկտրակայան էինք շինում, այսինքն որ մեր լույսը մեզանից էր լինելու, շատ կիր էր պետք, մի ամիս կիր էինք վառում, գերանի տակ երկու եզ սպանեցինք: Ես քարը վերևից է եկել, եկավ խփվեց, վռվեց ու մնաց: Ես գյուղից մի տղա, թևերը՝ ահա, որ խփում էր՝ բռնոնցքը փորդ էր մտնում, էստեղ ահա էսպես թիկնած ծխեց, կրակը ոտի տակ տրորեց ու ասաց՝ «ես գնացի քաղաք»:

Խոսքը հոր մասին էր, երեխան ասաց.

- Շիմա էլ ասում է թողնում եմ գնամ գյուղ:

- Կգան, ասացինք, թոշակի անցնելուց ու մանավանդ մեռնելուց հետո անպայման կգան:

- Էդ՝ վախեցնելու համար է ասում կգնամ գյուղ,- ասաց,- վախեցնում է՝ որ խնդրեն գեներալություն տան:

- Գեներալ, ասացինք, գեներալ. իսկ Ռոստոմը երեսուն տարի առաջ էս քարի կողքին կանգնած էր ու կանգնած է:

- Կրակի հոտ է գալիս, ասաց երեխան:

- Շաճարու կրակի հոտ է գալիս, ասացինք. ու մի չորացած տանձի կար, կտրել են՝ վառվում է:

- Ինչի՞ չենք գնում, ասաց երեխան:

- Ինչի չենք գնում, քարից պոկվեցինք ու քայլեցինք. վատ բանի ենք գնում ու չենք ուզում գնալ, այ թե ինչի չենք գնում:

Շետո երեխան մեզ կանչեց՝ կանգնեցրեց.

- Հոպար, մի բան հարցնեմ, հոպար...

Եվ մեր սիրտն ուղղակի ծուլ ելավ, ուղղակի շնչահեղձ եղանք ու լցվեցինք, «հոպար, արձագանքվեցինք, հորեղբայր. որևէ մեկի համար մենք ուրեմն արյան հարազատություն ու նախնի ենք, որևէ մեկն ուրեմն մեզ վրա իմաստ է դնում, մենք ուրեմն գետնին սողալիս մեկի համար ամոթանք ենք, հպարտ հովատակի վրա հպարտ՝ պարծանք»։ Կանգ առանք, ասացինք. Լսում ենք, մատաղ... Հոպար՝ ասացիր՝ հորեղբայր:

- Հոպար, կրկնեց, դու ինչո՞ւ ես հոգնակի խոսում՝ «լսում ենք, ասում ենք, մենք», այսինքն դու, որ թոքը խանչալով խառնել են՝ Սումբաթ պապը, հին անտառապահ Տիգրան պապը, Սարգսյան մեր ազգը՝ բոլո՞րս:

Երանության տրվեցինք, հավատացինք՝ որ մի մեծ տոհմի ժառանգ ու նահապետ ենք, երանությունը մեր դեմքը ողողեց, ասացինք.

- Էդ անպայման էդ է ու կա. բայց մենք ուրիշ հանգամանք նկատի ունենք, մատաղ. տասնութ թվի հեղեղ-անձրև հունիսին մեր էս սարերով, գաղթական ամբողջ Հայաստանը ետևը ծփալով-ծփալով՝ մի Անդրանիկ զորավար է անցել. անցել, Ջարխեչա վրա իջել ու ժողովուրդը ետևից արտի նման ծփալով-օրորվելով, ինքը ժողովրդի առաջ սպիտակ ձիավոր՝ խփվել է ասում են դեպի Պարսկաստան. որ «մենք» ենք ասում՝ ուզում ենք, մատաղ, Անդրանիկ զորավար լինենք, բայց թե ոչ ետևներիցս եկող ժողովուրդ ունենք, ոչ էլ առաջներս՝ թուրքի թշնամի:

Մեր քրոջ զավակը՝ Ֆերմայից ազատվածը՝ մեզանից առաջ մոտոցիկլետով հասել էր կրիորի բուրգին, խառնիչը ձեռքից առել ու հալիվորին դենն էր քշել, կտրտած-ձղձղած-դարսած փայտից փայտ էր տալիս հնոց և խառնիչ երկար ծողով խորք հրում: (Հին կրիորի տեղը, ուր մենք մեր պատանությունից կիր վառելու վրա մի ծանր ու հիանալի շաբաթ էինք անցըրել, ուրեմն նորից կրաքարի աշտարակ էին կապել, կողքին խորամետրերով փայտ էին դարսել ու խանութի հալիվոր պահակին հնոցապան էին դրել, թերևս ասել էին՝ «Մեկ է սովոր ես, խանութի դռանը չես քնում» էստեղ մի քնիր ու ներսը կամաց փետ տուր, էս էլ քեզ հացուցուր»): Անձար ծերունու համար մի փոքրիկ դրախտ՝ ուտելիքի մի իսկական մսուրք էին սարքել - թեյ ու թեյաման, բաժակ, շաքար, երշիկ, պահածո, հաց): Ծայրը խանձված, ամեն անգամ բռնկվող ծողը փայտը կրակ հրելու համար էր, բայց մեր քրոջ զավակի՝ Ֆերմայից հեռացվածի ձեռքին շատ հարմար էր գալիս և՛ որպես խարազան՝ երկու ձեռքով քաշեր ու թիկունքախառը վրա բերեր, և՛ խցիչ՝ մեկներ ու վառվող ծայրը մարդու բերան խցեր - մանավանդ որ քեֆը քեֆ չէր, բերանը կծկել, երեսից թույն էր թափում. եթե մենք չհայտնվեինք, այսինքն եթե կատաղությունը մեր վրա չժայթքեր, թերևս չխնայեր նույնիսկ հալիվորին: Ծերունին խուլ էր, նրա ցածր ֆշշոցներից բան չէր հասկանում, չէր կռահում ինչ է պատահել, ասում էր.

- Այտա, էս գի-գիշերն էր մնացել, կհամ-համբերեիք, էլի: Եվ դարձյալ. Այտա, ջահ-ջահել օքմին ես՝ տանը ջահ-ջահել խիզան ունես. իմ ձ-ձամփես պահո՞ղն ով է:

Իսկ «գործի տերը» նրան չէր լսում, անցուդարձի մեջ նրան

ուղղակի ոտքում էր, ծողի բռնելու ծայրը իր թիկունքում ուղղակի նրա աչքն էր կոխում, փայտի հետ քիչ էր մնում նրան հնոց նետեր:

- Այտա, էդ անտերը չպիտի, է, էդքան թ-թեժ լինի:

«Զպարգաբանված» ծերունին, նրա ատելությունից չնայած գլուխ չէր հանում ու չնայած համաձայն չէր կրակի բերանը միանգամից այդքան փայտ տալուն, քարշ գալով, համարյա թե սողալով (ոտքերը թույլ էին) ջանում էր գործին շահեկան լինել - նրա ոտքի տակ ընկնելով փայտ էր բերում:

Մեր քրոջ զավակը մեզ մի պահ նայեց թանձր, խուլ ատելության ուղղակի վարագույրի ետևից, հետո անընդհատ նրա ծոծրակն ու թիկունքն էին, փայտ էր բերում լցնում, իսկ երբ կրկին նայեց՝ ատելությունը խուլ չէր - կծկված, ծռված բերան, ուժեղ պարանոցի վրա ետ քաշված գլուխ, մեր ուսի վրայով նայող մի կենտ աչք - թռչելու խփվելու պատրաստ օձ:

Մեր հայտնվելու վրա ծերունին ասաց.

- Այտա, էս ի՞նչ եք չ-չիմըդ էլ թոփ ըլում, դ-դ-դե որ ինձ բերել էիք՝ ես կվառեի, էլի:

Կռացանք, ականջի տակ հարցրինք.

- Քեզ ո՞վ է բերել:

Ասաց.

- Ա-ավտո դ-դրիք բ-բերիք:

Կռացանք ասացինք.

- Ո՞վ, ո՞վ - մե՞նք՝ Ռոստո՞մը:

Ասաց.

- Շ-հա, կիր ենք վառում, կ-կիր:

Կռացանք ասացինք.

- Ո՞ւմ համար ես վառում:

Ասաց.

- Մ-մնացել է էս մ-մի կենտ գ-գիշերը: Շատ լավ կիր տի ըլիլ, շ-շատ:

- Այո, ասացինք, կտանես օձորքիդ մրերը կսպիտակեցնես: Ձեռքի փայտը վերցրինք, կռացանք ասացինք. Աման-չամանդ հավաքիր, քեզ գյուղ եմ տանում: Կեսկատակ-կեսլուրջ ավելացրինք. Տանում եմ ակտավորեմ ու քեզ խանութի տակ դատարկ պահեստը գցեմ. չորս խորամետր փետ ես վառել, չորս:

Միամիտ, անտեղյա՛ակ.

- Տ-տասը, տասը մետր փետ է գնացել, տ-տասը:

Մեր քրոջ զավակը հնոցի դռանը ծողը ձեռքին կանգնել ու օձի նման գլուխը ետ քաշած մեզ նայում էր: Ատելությունը վարակիչ է, ծերունու նկատմամբ սիրո ու ներողամտության մեր վերաբերմունքից՝ երբ դարձանք մեր քրոջ զավակին, հետք էլ չմնաց:

- Էդ փետը կրակը գցիր, ասացինք, ու առաջ ընկիր. քրոջ զավակ ես՝ էս հանցանքի վայրում դու գործ չունես: Եվ մեր ձեռքի փայտը գցեցինք իր ոտքերի առաջ:

Ոչ մի շարժում. գլուխը ետ-քաշած անթարթ ինչպես նայում էր, այդպես էլ մնաց:

- Գյուղում էլ մի հարգեվորը կա, ասացինք, քեզ նման էդպես կինոյի օձի նման է նայում. չգիտենք մեկմեկո՞ւց եք նայել ու սովորել, թե՞ Ռոստոմի մեջ հատուկ մի բան կա՝ որ ձեր ներսը օձ է շարժում: Ձեռիդ փետը գցիր՝ ասում ենք ու առաջ ընկիր: Եվ հայացք ածելով կրակի, քարի խնամքոտ շարվածքի, վառելիք փայտի խնամքոտ դարսվածքի վրա, կշտամբանքով ու սրտմտությամբ ծլթծլթացրինք:

Երեխայի համար այստեղ ամեն ինչ հետաքրքիր էր՝ և՛ մեր

իշխանական քամահրանքը, և՛ մեր քրոջ զավակի հուսահատ ատելությունը, և՛ թե ինչպես է ստեղծվում կիրը՝ ամեն ինչ, և միայն նա կնկատեր, որ մեզանից մեր քրոջ զավակի առջև նետված փայտի կեղևին եզան նկար է. եկավ ծնկեց ու զննել սկսեց: Տարիներ առաջ Ծիրան ընկեր-եզանը մենք էինք նկարել ու տակը գրել ԾԻՐԱՆ: Այստեղ մենք օրեր էինք թողել՝ որ մեզ համար թանկ էին: Շալիվորը հին հուշերին տրվեց.

- Այտա, Ռոստոմ ջան, էն տ-տարվա կի-կի-կիրը միտդ ա՞, թ-թե՞ դու ըրեխա էիր:

Մեղավորի ու ինքը իրեն ստորացրածի՝ մեր քրոջ զավակի առաջ մենք օրենքի մարդ ու ինքնիշխան էինք, ծերունու խոսքի վրա մենք ժպտացինք.

- Որ եզը մնաց գերանի տակ, միս կերար, միս, շաա՛տ միս կերար:

- Մ-մի՞ս, ասաց: Մինչև Սիրանուշի հանձնաժո-ժողովը չեկավ՝ եփրեմը մսին մոտ չթողեց: Նեղացա, ասի ուտիլ չտեմ, բայց դե կարգ էր, մինչև հանձնաժո-ժողովը չգար՝ լերդի վրա իրավունք չէր:

Տխուր ժպտացինք, դարձանք մեր քրոջ զավակին.

- Խատուտիկ քուռակը հովըտեցու անարժան ձեռը մատնեցիր ու առաջը ծառայության անցար. հիմա՞ ում դռանն ես թուրը ձեռիդ էդպես պահակ, արա:

- Իմ երեխեքի, ասաց:

- Քու երեխեքի, կրկնեցինք: Ծանր պատասխան է. դուրս է գալիս, որ Ռոստոմը իր քրոջ թոռների հացին թշնամի է: Էդ փետը գցիր ու առաջ ընկիր, մենք չենք ուզում մեր քրոջ զավակին օտար թշնամու առաջ ծառա տեսնել:

Գնդապետի երեխան մեր քրոջ զավակից ապտակ կերավ.

չհասկացանք ինչպես եղավ, նրա սապոգավոր ոտքերի առաջ ծնկած երեխան վերժանում էր եզան հին պատկերն ու գրերը, մեկ էլ տեսանք ոտքով երեխային խփել է, հիմա էլ անխղճորեն ուժեղ ապտակ շրխկացրեց:

- Կսպանե՛մ, պայթեցինք և նետվեցինք, ականջներդ տակից կպոկեմ:

Խառնիչ ձողը բարձրացնում էր, մեր ոտքի տակ գցեցինք ու կոտրեցինք, կեսը մնաց ձեռքին բարձրացրած և վրա էր բերում: Ձեռքը բռնեցինք ու ոլորեցինք: Բարձր կուրծք, ուժեղ պարանոց, անկենդանորեն կարծր ձեռք, մենք դժվար ոլորեցինք, ասես երկաթի ձող էինք ձկում, բայց ոլորեցինք: Երբ արդեն տեղի էր տալիս, զգում էր որ տեղի է տալու, արցունք ժայթքեց ու ջղային ծիծաղ քրքռաց, հետո, երբ ոլորել մեջքին էինք դրել (ձեռքը վերջում ետ գնաց միանգամից, կարծես կոտրվեց), և քանի որ լարված սեղմելիս մեր դեմքերը իրար ավիրելով քսվել էին իրար՝ մենք ինչ-որ հարազատություն այդուհանդերձ զգում էինք ու մեր արարքի համար արդեն շփոթվում ու զղջում, նա պարանոցը ետ շրջեց ու թքեց մեր աչքերին: Մեր դեմքը, իրենով սրբելու պես, դրեցինք իր ուսին, և ինքը իրեն թափ տվեց ու մեզանից հեռացավ:

Ոչ մի զղջանք, ոչ մի շփոթմունք: Կեղտոտ անասունի ծնունդ,- ասաց,- խոզի ծնունդ՝ որ փորումդ խոզի սիրտ է. ուրիշի դռներից գնա բժերիդ բեր քու դուռն ու նոր քրիստոս եղիր:

Խուլ բղավեցինք, դեպի ինքը քայլ դրինք ու քարացանք. մեզ հետ կատարվել սկսվեց այն, ինչի մասին մեր թշնամիներն ու նախանձողները ուրախությամբ էին տեղյակ, համակիրները՝ ափսոսանքով - նվաղումը:

Ոչ խղճալ ոչ բան: - Սատկի՛ր,- ասաց,- եղևեդ լացըլող չի

ըլելու, վախիլ մի, սատկիր:

Մեր տեսած վերջին պատկերը երեխան էր, փայտը գետնից երկու ձեռքով զավթել ու նետվում էր դեպի մեր քրոջ զավակը, և վերջին հոգսը դարձյալ երեխան էր. «Իրավունք չունես, Ռոստոմ, իրավունք չունենք. այլանդակը երեխային կծենձի ու հավիտյան կթունավորի»»: - Չի կարելի, մրմնջացինք, հը՛րը, բղավոցով սաստեցինք:

Բայց բղավողը մենք չէինք. մեր բախտը բերել էր. մեր քրոջ մյուս զավակը՝ վարորդը, եկավ հասավ, խցիկից դուրս նետվեց և «հը» բղավողը ինքն էր:

22

Չգիտենք ի՞նքն էր զավակի վրա մեր կողմից վտանգ զգացել, զավա՞կն էր մորը միջնորդ կարգել, ինչպես որ փոքրավորը մեծավորի ոտը խնդրանքի գնա՝ մեր քույրը այդպես եկավ մեր դուռը - չարքաշ աշխատավորուհին, այրին, պառավը: Ուսաշալի տակ կրծքին բռնած կաշառք էր բերում մեծավորի տուն: Շնագանդ, վախեցած, խնդրողական, երբեմն միայն հավատալով՝ թե մենք իրոք քույրուեղբայր ենք ու ժպտալով, եկավ այգու դռնակի մոտ շանը դեմ ընկավ ու վիզը ծռած կանգնեց: Պատշգամբում թախտին նստած մենք ձիու թամբը կարկատում էինք, ինքը մեզ տեսնում էր ու չէր համարձակվում կանչել, չէր համարձակվում որևէ նշանով իր ներկայությունն իմացնել: Մարոյի «կուսանոցը» իրենց դռանը տախտակաձևորթի էր կախել, կարճ փեշերն ազատ փռռացնելով գնում ու գալիս էր - ուրախ, անմիտ, անհոգս՝ «հովտաց շուշանի նման»:

Նրանց ձայները լսում, աշխարհիս բանը չհասկանալով ժպտում ու ակնոցը դրած կարկատում էինք թամբը, մեկ էլ մեր գլուխը

բարձրացրինք տեսանք՝ մեր քույրը անցորդ մուրացկանի նման մեր դռանը կանգնած է: Ինքն այդ պահին մեզ չէր նայում, ակնոցը թաքցրինք, թամբը գցեցինք ու ոտքով թախտի տակ հրեցինք, մեր մաքուր տունուապրուստի մեջ գորգերի վրա մեզ կտրիճի ու իշխանի հարկավոր տեսքի բերինք ու նոր միայն ասացինք:

- Չի հաչում, առաջ արի:

Ուշքի եկավ, խեղճ ու քծնողաբար ժպտաց, հետո իրեն սիրտ տվեց:

- Շենց էլ՝ չպիտի հաչա. իմ ախպոր շունն ինչի պիտի իրա տիրոջ հարազատի վրա հաչա:

Ամոթից ու անհարմարությունից գետինը մտանք, իսկ Մարոյի «կուսանոցը» տաք հեքուքոքոցով ձկորթի էր ձոճում, աղջիկներից մեկը թե մայրը դրսի փայտերին նստած մեզ համար կոտորատվում էր:

Անազատ, կաշկանդված, այս տան ամեն առարկայի հանդեպ ամեն պահի անընդհատ անազատ՝ մառանի առջևով մեր քույրը գնաց պտտվեց, ոտքերը չգիտենք որտեղ հանած՝ եկավ հիմա էլ պատշգամբի դռնակի առաջ կանգնեց մնաց:

- Առաջ արի, ասացինք: Նկատեցինք՝ որ գուլպայով է: Գնա ոտներդ հագիր ու նոր արի, բարկացանք: Չազդեց:

- Չէ, անոշ,- ասաց,- վայել չի:

Եկավ, աթոռից կարծես վախենալով սեղանի տակից աթոռը զգույշ հանեց ու եզրին նստեց: Իսկ Մարոյի «կուսանոցը» իր խաղին էր, աղջիկներից մեկը փայտերի մեջ նստել ու մեզ համար այսպես ասած ուշագնաց էր լինում:

- Շարսս ո՞ր է, ասաց: Տանը չի՞ հարսիկս: Ինքը մի պուճուր, սրտառուչ, մեր սիրտն ուղղակի լցնող խարդախություն էր արել -

առավոտյան կթից հետո չէր գնացել խոտհավաքի. կցկտուր ծիծաղեց, ասաց. Չգնացի խոտհավաքի. աղջկերքին ասի «դուք գնացեք, ես գալիս եմ» ու Սարգսանց հին տների տակովը փախա: Իր եղբոր դուռը կաշառքով էր եկել. դրանք՝ իր գործած մի զույգ սպիտակ գուլպան, թաշկինակը, իր քաշած մի շիշ օղին ու գլուխ պանիրը՝ իհարկե կաշառք չէին, բայց իրեն այնքան ազատ չէր զգացել՝ որ կարողանար դատարկաձեռն գալ. հանեց դրեց սեղանին:

- Ի՞նչ աղջկերք, հարցրինք:

- Դե կթի ընկերներս, էլի, անոշ - էնօրվա ժողովուրդը:

- Դուք պարտավոր չեք, ասացինք, առավոտը կթի գնաք ու կթից խոտհարք, խոտհարքից՝ իրիկնակթի. ու դեռ ճամփին էլ՝ գուլպա գործեք:

Չհամաձայնեց, մեղմորեն առարկեց. Չէ, անոշ,- ասաց,- ձմեռը որ Մարալ կովը երեսիս մտիկ անի ու սովից մզզա՝ էլի իմ սիրտն է կտրատվելու, հովըտեցու սիրտը չի կտրատվելու:

- Գյուղը լիքը պարապ ժողովուրդ է, ասացինք, պարապությունից ջարդվում են:

- Դե նրանց ծակատին էլ պարապություն է գրած, անոշ,- ասաց,- գրած է, որ պտեն քաղաքացի ու պարապ ըլիլ, իրենք ի՞նչ անեն, գան կո՞վ կթեն, կովի լեզուն ինչ են հասկանում՝ որ գան:

- Քանի՞ տարեկան ես, ասացինք:

- Քեզ վրա տասնչորս տարով եմ մեծ, անոշ,- ասաց,- նշանած աղջիկ էի՝ որ դու եղար. հարսանիքն ուշ էր լինելու, բայց նշանել էին՝ որ Տիգրանը միտքը չփոխի: Ակոփը կանֆետով-խնձորով գալիս էր: Չորս տարվա տուն էինք՝ որ Շիտլերի պատերազմն սկսվեց:

Ուշքի եկանք տեսանք՝ գործով մեզ նայում ու մրմնջում է.

- Ցավդ տանեմ, ցավդ, ցավդ... շալակել քեզ կալերն եմ տարել, պոկել ձեռդ ձիպոտ եմ տվել՝ գառան ետևից վազել ենք: Չէ, անոշ,- ասաց,- մի ասա թե քույրս ինձ համար աչքը կուրացրել գուլպա է գործել. Ակոփի գուլպան է՝ երեսունո՛ւյրթ, վեց, չէ՝ հինգ թվից:

- Դե լավ, ասացինք, մի հիշեցրու: Էդ արաղը զուր ես բերել, բայց ավելի վատն էն կլինի՝ որ թևիդ տակ դրած ետ տանես:

- Հիմի դատարկ ձեռով ուրիշի տուն չեն մտնում,- ասաց,- համ էլ դու ուրիշ չես. քու քվեր տղերքը ես սեղանի վրա մի իրիկուն կնստեն, իրենց քեռու հետ կխմեն:

- Իմ քվեր տղերքը ինձ քեռի չեն համարում, ասացինք, մենք հանդից սխալով գտած թուրքի ծնունդ ենք: Եվ զգացինք, որ մեր խեղճ քրոջը դժվար կացության մեջ ենք դնում. ցամաք բերանը շարժում, նայում ու լուռ խնդրում էր: Հանցագործի պես ինքը ետ է քաշվում ու մեր առաջ քեզ է թողնում, ինչի՞, ասացինք, դու ինչի՞ց ես տեղյակ:

- Երեք երեխա է պահում, անոշ,- ասաց,- ես իրենց ոնց պահեցի՝ հազարումի հանցանքով, նույնն էլ հիմի է:

- Պատերազմ էր, ասացինք, ժողովրդի տեղը նեղ էր:

- Հիմի էլ է պատերազմ, ցավդ տանեմ, առանց թուրութվանքի իրար ուտում ենք. ֆերման ուզում էին ձեռից առնեն՝ հովըտեցիք աղջկա դեպքից օգտվեցին, թե չէ ինչ էր եղել, աղջիկ էր, էլի, երեսուն-երեսունհինգ տարեկան՝ որ էդ էլ չլինե՜ր՝ էլ ում էր պետք, էլ նրա տանողն ով է լինելու. հիմի որ երեխայիս քջեցին՝ հովըտեցո՞ւ հետ չի կապված - կապված է, անոշ, մեղք դնելու չի, ժողովուրդ է, ամեն մեկը մի կերպ իրա գլուխը պահում է:

- Շովըտեցին հովըտեցի է, ասացինք, մենք չենք կարող ամբողջ աշխարհի համար պատասխանատու լինել. ի՞նքը. դու ֆերմայում ես, ինքը գիտի, որ քու աչքի առաջ՝ դա քեզանից թաքուն չի լինի ու շարունակում է, հա՞:

- Անոշ,- ասաց,- աղջկերքս տեսնում էինք ու չտեսնելու էինք տալիս, որոշում կար՝ մեր աղջկերքիս գաղտնի որոշումը, քանի որ մի երկու օր ծաղկեցինք, երգեցինք ու պրծանք՝ պատերազմն սկսվեց, հիմա էլ ո՞ւմ ենք պետք: Խեղճ աղջիկ է՝ ասինք, քանի ժամանակը շատ չի անցել՝ թող իրա բաժինը առնի, անոշ:

- Էդ ձեր մարդկային որոշումն է, ասացինք, բայց Ռոստոմն էլ իր որոշումն ունի. տարիներ ու տարիներ մենք ուրեմն մեզ ուղղենք, ձգենք ու սրբենք՝ որ էս երկրի առաջ ընդօրինակելի տիպար լինենք, ու մեր ջանքը զուր անցնի, հա՞, մեր ընդօրինակելի ներկայությունը մեր հարազատից էլ չտեսնվի, հա՞: Մենք ելանք կանգնեցինք, և մեր քույրը մեր խոսքով, մեր ճուլածո պինդ հասակով հիանում ու «ցավդ տանեմ» էր մրմնջում, և աստծու մեր կերպարի առաջ նա երկրպագողի էր նման: Մեր մեջքն անպտուղ չլինի, մեղքը մենք մեզ վրա առնենք ու մեր ցամաք օրիորդին դուրս չզգենք, ու ոչ ոք չհասկանա՞, որ օրինակելի վարքը սա է, հա՞:

- Ցավդ տանեմ, մրմնջաց, իսկական մեր հեր Տիգրանն ես՝ խո՛սքդ, պահվա՛ծքդ...

- Ի՛նչ Տիգրան, ասացինք. մեր կերպարը մենք զուտ մեզանից ու ինքներս ենք ստեղծել:

Երանելի հին օրերին տրվեց, մենք՝ նույնպես:

- Ձեռքիցդ բռնո՛ւում,- ասաց,- տանում էի կալերը, կալերից բերում էի՛րի գյուղամեջ:

- Մի զույգ կարմիր կոշիկ ունեիր, հիշեցինք, Քոշաքարա սար-

վորի տոնավաճառից նշանա՞ծդ էր բերել թե Տիգրանը...

- Կարմիր կոշիկ ու կանաչ դեյրա,- ասաց,- հագիցս ուզում էի հանեմ:

- Շանել ափին թողել էիր, ինձ ջուրն անց էիր կացնում, հիշեցինք, ես գրկիդ լաց էի լինում՝ թե կոշիկները մնացին, կորցրինք, հեռանում են...

Ծառայական մեքենայով, միլիցիայի գնդապետ Վլ. Սարգսյանը, անընդհատ հեռավոր մի մտերմություն զգալով ու այդպես էլ չկարողանալով լիովին վերապրել այստեղ անցըրած օրերը, եկել գյուղ էր մտել, լքված դպրոցի մոտ ասել էր «դանդաղ քշիր», ամայի գյուղամիջում մեքենայից իջել, հեռավոր հարազատության ու խորթության խառն զգացումով դիտել էր ակումբի, գրասենյակի ու պահեստների փակ կամ բոլորովին լքված շենքերը, զոհված տղերքի հուշարձանին մոտեցել, զոհվածների անուններին նայել ու մի տարօրինակ կատակ էր արել՝ «Կարո՞ղ է ես հիմարները հարգանքից մեր անունն էլ են զոհվածների մեջ գցել... Սսսսս... էէ, չկա», բարձրացել էր գրասենյակի պատշգամբ, աննպատակ՝ վերցրել էր ընկալուչը և ներողամիտ հեզնանքով ասել՝ «Ծմակուտը լսում է», հետո գերեզմանոցում էր հայտնվել ու մեր հայր Տիգրանի հուշաքարի մոտ թեթև ժպիտով ասել՝ «հաատ, նանը, անտառն իմն է», հետո ետ էր եկել կանգնել իրենց հին տան դռանը. մեքենան՝ նույնպես. մեքենան այդ ամբողջ ժամանակ դանդաղ ընթացքով հետևելիս էր եղել իր պետին. այդտեղ թիկնապահին նշանով կանչել էր մեքենայից և նշանով դրկել երեխային տնից բերելու. հին տան դուռը բաց, երեխան բուխարու պատը նորոգելու վրա զբաղված էր եղել, թիկնապահը դռների մեջ

կանգնել, դուռը ծեծել, հարցրել էր՝ «Ֆելիքս Վլադիչը հյուրեր կընդունի՞»։ Երեխան ամեն ինչ հասկացել, ձեռքի աղյուսը ցած էր դրել, որպես թե ենթարկվում է՝ եկել ու կողքի բաց լուսամուտից իրեն դուրս էր նետել։

- Աա՛, սուկին սին, շատ ավելի իրեն զայրացնել ջանալով քան իսկապես զայրանալով՝ գնդապետը ամայի գյուղի խուլ լռության մեջ ատրճանակը երեք անգամ երկինք էր կրակել։ Սվլոլոչ նեսչաստնի... Հիմա էլ լակոտների հետ ենք գլուխ դնելու։ Եվ վազել էր դեպի տան ներքևի զառիթափի գլուխը։

Մեր դռնից՝ մենք տեսանք զառիթափն ի վար գլորվելով փախչող երեխային, թիկնապահին՝ որ թփերից բռնելով իջնում էր, և գնդապետին՝ որ հայտնվեց զառիթափի գլխին։ Քիչ հետո նրա կողքին մեքենան երևաց։ Երեխան ձորի թփուտներում չքացավ, իսկ թիկնապահը՝ անձկուն ու տեղանքին անսովոր՝ թփից թուփ էր վազում ու կառչում մնում։ Թիկնապահը թաքնվեց թփի ետևը այն արահետի վրա, որտեղով իբր գալու էր միամիտ երեխան, և մենք ժպտացինք. լանջն այն լանջն էր, որտեղով տարիներ առաջ չքվել էինք մենք։ Մենք սևեռվեցինք այն տեղին, որտեղից մեր փախուստի ժամանակ ինքներս էինք ելել, և քիչ հետո մունջ գազանիկի նման թփերն այդտեղ երեխան ետ տարավ։

- Էդ քու տունը, էդ էլ՝ դու, մեր պատշգամբից ծանրումեծ իջնելով՝ կարգադրեցինք մեր քրոջը, եղած-չեղածից հաց գցիր, էս գյուղի ձակատագրի վերաբերյալ մենք էսօր մի վեհանձն որոշում ենք հանելու. էս գյուղի ծնունդ է ու պարտավոր է։

Գնդապետին ու մեքենան տեսադաշտից չկորցնելով՝ մենք այգուց դուրս եկանք, արահետով իջանք և որտեղ ձանապարհ էինք մտնելու՝ զգացինք, որ երեխան այդտեղ բանջարկուտի

ետսն է:

- Շանկարծ մեր տուն չգնաս, ասացինք, գալու ենք հացի նստենք: Իմացա՞ր: Մենք ենք՝ Ռոստոմը:

Լսեցինք, ասաց.

- Խելագար դերասանի մեկն է, մի գնա, հոպար:

Ասացինք.

- Ծնողի մասին չի կարելի էդպես արտահայտվել, էն էլ՝ գնդապետ ծնողի:

Լսեցինք, ասաց.

- Գնդապետ չի, հոպար, սո՛ւտ, գնդապետի դերասան է, վախկո՛ւտ:

Մեզ համար հաճելի էր, որ բարձր պաշտոնյան տեղյակ բերանով այդպես վարկաբեկվում է, բայց և պարտավոր էինք կրտսերներից պաշտպանել ավագներին. ժպտացինք ասացինք.

- Շատ ուժեղ սխալվում եք, ընկեր Սարգսյան, վախկոտը գնդապետության չի հասնի:

- Մի գնա, հոպար, լսեցինք, բայց գնացինք:

Մեկ րոպե եղանք այդ մարդու առջև թե երկու - թռուցիկ այդ հանդիպման ընթացքում այդ մարդը հասցրեց և՛ բարձր պաշտոնյա լինել գյուղացի մեր կախյալի առաջ, և՛ համահանրապետական ու նույնիսկ համասովետական՝ տեղական մեր նեղմիտի հանդեպ, և՛ հին գեղջուկ ու ընկեր տղա, և՛ մարմնացյալ ներողամտություն՝ այսինքն թե ինքը հենց այդ և մենք էլ այս էինք լինելու: Մինչև մեքենայի մոտենալը, հասկանալով որ մեր արածը ստորաքարշություն է և մեր արարքին տնավարության տեսք տալով («Շուտ արա, Ռոստոմ, շուտ արա, ուշացրինք»), մեր խեղճ արգելափակոցը իջեցրինք և մեր

ձեռքերն ու դեմքը վեր պարզելով ասացինք ամենահանդիսավոր կերպով.

- Ստոռո՛ւպ, իջեք:

Մեքենան ազդանշանեց:

- Ոչ մի առարկություն, իջեք, ասացինք: Իջան, գնդապետի ձեռքը թոթափեցինք խոնարհվելով («Բարո՛ով, բարով ես եկել»), թոթափեցինք նաև թիկնապահի ձեռքը, գնացինք բարևեցինք նաև վարորդին՝ որ մեքենայից չէր իջել: Շլագ-բաումի մասին գնդապետն ասաց.

- Էս ի՞նչ եք արել, արա:

- Արել ենք, ասացինք: Արել ենք, քծնեցինք, որ էս երկրի կարող ուժերն ու ինչ որ մեծարժեք է այլևս քաղաքին չտանք ու ինքներս մնանք անու աղքատ:

Քծնվելը շոյիչ էր, ծիծաղեց ասաց.

- Ի՞նչ երկիր, արա:

- Ընկեր գեներալի է՛էս հայրենիքը, ասացինք:

- Շան որդին մեզ գեներալ էլ դարձրեց, ծիծաղեց, ձեռքը մեր մեջքով գցեց և այդպես՝ մեր մեջքը թոթափելով՝ նայեց բացակա լուսանկարչի չեղած ֆոտոաչքին: Մանկության ընկերս է, ասաց ոչ թե թիկնապահին, այլ կարծես ուրիշ բացակա ներկաների. Ռոստոմն ես, չէ՞. մանկությանս ընկերն է:

- Ձեր տղայի հետ ենք կապել, ասացինք, շատ լավ երեխա է՝ իսկական ծմակուտյան հայրենասեր. համարեք, որ դուք դեռ չեք գնացել ու դեռ էստեղ եք՝ էդ ուրեմն ինքն է - մարդամոտ, հարեհաս, մեր ցեղի ամբողջ պատմությունը...

- Ծխում-խմում է՞, արա, սուկին սինը,- ասաց:

Բթացել ու խլացել էինք, ասացինք.

- Ինչպես որ ձեր կամքը հուշի:

- Կբռնես,- ասաց,- եկող մեքենայի հետ կուղարկես:- Եվ գրպաններում, ձևականորեն, փնտրել սկսեց այդ ծանապարհա-
ծախսը, ինչը որ գրպանում չկար, ոչ էլ՝ նույնիսկ թիկնապահի -
այդ փողը վարորդը բերեց դրեց, հակառակ մեր շփոթված
դիմադրության, մեր գրպանը: Մինչ այդ, մենք մեր փոքրիկ
սխալը հասկացանք և ջանացինք շտկել:

- Ի՞նչ ծխել-խմել, ասացինք, հայրենասեր՝ ասում ենք, ցավա-
կից. հայրենիքի ծաղիկն ու թռչունը, անցյալն ու գալիքը... Ձեր
աչքով դուք ինքներդ կտեսնեք:

Նա, սակայն, իր գործը վերջացրել ու իր մեքենային էր
դառնում:

- Էդ ո՞ւր, ասացինք, նախ և առաջ մեր հացը չկտրած, էս
երկիրը հազիվ ոտք եք դրել՝ մի շաբաթ մեր հյուրն եք: Եվ
մոտեցանք բռնելով պահելու, դա սակայն դարձավ բաժանման
ձեռքսեղմում:

- Մի ուրիշ անգամ, ասաց:

- Չէ,- իսկապես, համառեցինք,- երկու օր պիտի մնաք, մեր
շահի վերաբերյալ ծանր խնդրանք ունենք:

Օտար ու վանող՝ նայեց ասաց.

- Լսում ենք:

- Էսպես ոտի վրա չի լինի,- ասացինք,- երկու օր պիտի մնաք՝
որ Հովիտը լսի, որ կենտրոնը լսի՝ որ ընկեր գնդապետը Ծմա-
կուտ է, որ Ծմակուտն անտեր չի, Ծմակուտն ընկեր գնդապետի
հայրենիքն է:

- Ի՞նչ Հովիտ, ասաց:

- Հովիտը,- ասացինք,- հովըտեցիք. ղեկավարությունը զավ-
թել են՝ էս գյուղը քայքայում են, կարմիր դրոշակիր տնտե-
սությունից մի գերեզմանոց ու մի պատվո տախտակ է մնացել:

Մեր պապերի ջաղացատեղը չգիտենք ինչ օտար թշնամի...

Ձեռքի նշանով արգելափակոցը բարձրացնել հրահանգեց, ասաց.

- Հովիտը, Ծմակուտը... վերջ տվեք ձեր էդ տեղական գզվռտուքին:

...Հետո մենք վատ լափ կերած շան նման գնում-գնում գլռտում էինք, գնում-գնում դիվոտում ու թքոտում էինք.

- Թու, Ռոստոմ, թո՛ւ, թքեմ ձակատիդ... թու, Ռոստոմ, թո՛ւ:

23

Մեր բարձրամտությունը պիտի պատժվեր, բայց այդպես ստորաբար, այդպես անմարդի եղանակով՝ երբեք չէինք սպասում, քանի որ Ծմակուտն իհարկե դեպի վատն էր փոխվել, բայց անունը դեռ Ծմակուտ էր և դա մեզ խաբում էր. բռնել մեր նժույգի բերանը մետաղալարով կապել, լարի ծայրերը իրար հետ ոլորել ու ոլորքն այնպես էին կտրել՝ ատամով ու դանակով անգամ անհնար էր խցկվել ոլորքի արանքը, մատների համար «ականջներ» զատել ու պողպատալարը ետ-ոլորել: «Փառքդ մե՛ծ, աստված, ասացինք, Ծմակուտ դեռ էսպես մատներ կան՝ որ պողպատի հետ խաղ են անում»:

Մենք, ուրեմն, բաճկոնը մեզ նման ուսներիս գյուղամեջ էինք բարձրանում, մեզ նայող ժողովուրդ չկար, բայց այնպես էինք գնում, կարծես գնում էինք մեզանով հիացող ժողովրդի միջով: Կալերի տակ, քայքայված շեկ լանջին մեր նժույգը երևաց. բարձրագլուխ-սրականջ-արծվատես պահվածքը չէր - տարօրինակորեն երերուն քելքով գալիս-գալիս, գայթում կանգ էր առնում, դարձյալ գալիս գայթում, կանգ էր առնում. հատուկ իր համար ստեղծած մեր շվիաձայն շվշվոցը մենք սուլեցինք և, մեր

տեղը ցույց տալով, բարձրացրինք մեր ձեռքը - չպատասխանեց վրինջով ու գլուխը հպարտորեն վեր նետելով. տարօրինակ էր. կասկածեցինք, ուզեցանք ընդառաջ գնալ, բայց և չգնացինք - շարունակեցինք մեր ծանապարհը գյուղամեջ:

Գաղտնիքները չէ՞ առաջինը երեխաներին են հասու դառնում. այն, ինչը մեր մեջ միայն թույլ կասկած արթնացրեց, վիճակված էր բացահայտվել Մարոյի աղջնակից՝ մեր այսպես կոչված փրկածից. նրա կարմիր շորը մեր աչքովն ընկավ - պառավ, լքված այգուց դենը թփուտ անտառում ցլաց ու չքացավ: Գլուխը ծաղկապսակով, ականջները բալի ողկույզներով, պարանոցը մորեշարուկով զարդարած՝ այնտեղ նա շատ ավելի քաղաքացի օրիորդի նման խաղի էր եղել քան գեղջկուհիորեն մոռահավաքի, չնայած ձեռքին խոտափյուսկեն փոքրիկ զամբյուղ էր եղել: Ձորի վրայով դեմառդեմ շեկ ծանապարհին ձիուն տեսել ու խոսել էր ավելի շատ ինքն իր ու մոռի թփերի քան ձիու մասին. «Մենա՞կ ես մնացել, անոշ ջան, ընկեր չունե՞ս... Գնա, գնա, գնա՛ս սարերը. ես տիրոջդ կասեմ էստեղից փախավ», ու գաղտուկ ծիծաղել էր: Շետո ձիուն տեսել էր մի քիչ ավելի ներքևում ոչ թե իր հպարտ պահվածքի մեջ, այլ աներևույթ ինչ-որ բանից տարտամորեն քշվելիս և շատ ավելի կնոջ իր գաղտնարաններում քան ձիուց եկող նշաններից հասկացել, որ մեր նկատմամբ թշնամանքը այս գյուղում դարանած է:

- Արա Ֆելո՛ոո, տագնապել ու բղավել էր, դուրս արի, մեր ձին մեռնում է, արա Ֆելո՛ոո...

Դիմաց տներից՝ ոչ մի պատասխան, ոչ մի շարժում, գոնե՝ փռած լվացքի - անշարժ լռություն:

- Արա Ֆելո՛ո, ծղրտում ու խզվում է, մեր ձիու վրա թշնամին

կրակել է, ձին մեռնում է, արա Ֆելո՛ո... և ինչպես միայն կինը կտազնապի ու ինքն իրեն կմոռանա, մոշուտներում ճանկռտվելով, քծծվելով, ընկնելով ու ելնելով իրեն նետում է դեպի ծորը՝ դեպի շեկ ճանապարհի մեր նժույգը:

Մենք գյուղամիջում քարե սանդուղքին նստած էինք, գործակատարն ու մեր քրոջ վարորդ զավակը մեքենան բեռնաթափում էին՝ հիմնականում գարեջրի արկղեր, աղջկական այդ հեռավոր ձղրտոցի վրա տխուր ժպտացինք:

- Փառքդ մեծ, աստված, ասացինք, Ծմակուտը դեռ ջահել ձեն ունի, կանչում են, կռվում են, հաշտվում են, ինչին գործակատարը պատասխանեց գործից չկտրվելով.

- Ա կան, է, կան. իրենք կան, մենք չկանք: Ելանք օգնելու: Իրենք կան, կրկնեց, ես ու դու չկանք, մերը պրծավ:

Տխուր ժպտացինք, ասացինք.

- Ինչի՞, էդ ե՞րբ ապրեցինք՝ որ պրծանք:

- Խի՞,- ասաց,- էն որ դեզի տակ հարսներ էինք քաշում հաշիվ չի՞. հաշիվ է, գումարվում դառնում են կյանք:

- Դեզը հիշում ենք, հարսներին՝ ոչ, ասացինք. շալակել շարուկ էինք կապել է՛է Մուրադենց հին գոմերից Ածարկուտ ուրթի գոմերը:

Մի րոպե տրվեց հին պատկերին, հետո՝

- Խոտ էր՝ կերվեց վերջացավ. բայց երեխային բերել անօրինական շինության վրա բանեցնում են՝ որ պատկերդ տեսնես ու լեզուդ կուլ տված պահես:

- Սեդրակ, ասացինք, Սեդրակ... Քանի՞ երեխա ունես - հինգ: Մենք պրանենք աստծու էն արդարությունը՝ որ էս աշխարքում հինգ տեղ քու պատկերը դու կնքելու էիր, Ռոստոմը՝ ոչ մի տեղ: Կնքել ենք, լավ ենք արել: Բայց մենք էդ ոնց կանգնենք ասենք

էդ գործի տերն ենք, ո՛ր զոռով կանգնենք խեղճին ասենք՝ «խփել ու կնիկդ տակիցդ քաշել ենք, քու կողքին՝ քոնը չի եղել, մերն է եղել»»։ մենք մարդասպան չենք, ասացինք։

Քձձվելով, ընկնել-ելնելով, պարմանի գոյության ողջ ինքնամոռացությամբ աղետյալին տրվելով՝ Մարոյի աղջնակը զառիթափը գլորվում, կոշիկներից մեկը գետակում կորցնում, մյուսն ինքն է ոտքով հանում ետ թողնում և բզկտված, պատառոտուն, բոկոտն՝ շեկ, քայքայված լանջն ի վեր իրեն խփում է դեպի նժույգը։ Քանի որ մտքում քաղաքաբնակորեն ու աղջկորեն վճռել է՝ որ հրացանագարկ են արել, նախ ուրեմն ձիու կուրծքն է զննում, վերք չի տեսնում, հետո ետ քաշվում երեսին է նայում, «Լաց ես լինում» ասում է ու բռան մեջ ձմռված քամված մոռն է դնչին մոտեցնում և մետաղալարե ոլորքը տեսնում. «Վա՛յ, բերանդ կապել են՝ որ ծաղիկ չուտես», և ուզում է հանել նետել ու կարծր ամրությունից սարսափում է, կախվում գոռում է՝ «Արա Ֆելո՛ո», «Մամա՛ա», և նույն ինքնամոռացությամբ, ինչպես որ կողբեցու հետ փախչում էր, ատամներով է ուզում ոլորքը ետ տալ, հետո բաշը բռնում քաշում է դեպի մեր դուռը։

Թե դա ում արարքն էր՝ մենք այդպես էլ չհասկացանք - յուրաքանչյուրի և ոչ մեկի. թշնամու անասունին միայն երեխաները կտանջեն, բայց մեր տղայությունը մեզանից արդեն շատ էր ետ մնացել՝ որ կարողանայինք նայել ու նրա մեջ տեսնել պատկերը այն անզիջում, մռայլ անասնական, քո մարմնավոր ուժի առջև միայն մի քիչ ու ժամանակավորապես ընկրկող չարի, որ այսօր իր կարձ հասակի ցածից հեծյալիդ նայում ու իրեն դեռ ստվերի մեջ էր պահում։ Գնդապետի տղան ու Մարոյի աղջնակը

երեխայի պարզատեսությամբ կռահել էին ով է, բայց նա մեզ համար ծիծաղելի կլիներ և, բացի այդ, իրենց գաղտնիքը նրանք պահեցին իրենց հասակային փակ գաղութում. մատնիչ որոշ նշաններ այդ գաղութից դուրս եկան՝ գնդապետի երեխան ծեծվել էր, բայց դրանք մեր մեջ միայն թույլ կասկած շարժեցին:

Բոկոտն, քծծված աղջնակը, ուրեմն, ձիու բաշը բռնած, «արա Ֆեւել... Ֆելո՛ոո» բղավելով ձին քաշում է դեպի մեր դուռը և տներից մեկի բակում տեսնում է իրենց հասակակից մի տղայի, ում մենք գետափնյա այգում երեխաների խմբի մեջ էինք տեսել՝ մեզ վրա քար շարտեց: Զիուն օգնելու, ատամներով կապը կրծելու աղջնակի նույնիսկ նորից է բռնկվում - նորից է ուզում ատամը ոլորքի արանքը խցկել, և հաստամոռութ, սերն ու մարդկային կարեկցանքը անասնական յոթ կաշվի տակ պահած այդ տղային ասում է՝ «Մեռնում է, արի օգնիր, արա», բայց նույն վայրկյանին էլ զգում է, որ ի՞նչ օգնել - հենց այդ հաստամոռութն է արել, և աղջիկ-երեխայի շիտակ անվախությամբ ասում է. ասում է՝ «Դու ես արել»: Ոչ մի պատասխան - մի քիչ միայն ընկրկում է: Մենք հետո նրան տեսանք և զգացինք, որ նրանից վախենում ենք: Գնդապետի երեխայի անունը նորից բղավելով՝ «արա Ֆելո՛ո», աղջիկը ձին քաշում է, իսկ հաստամոռութը նրան՝ «Շոֆերի տարած». վիրավորված գեղեցկուհին նրան՝ «Ռոստոմ քեռուն կասեմ», իսկ նա նրան՝ «Ռոստոմի տարած», գեղեցկուհին զգվանքով նրան՝ «Յախկ, անձոռնի», իսկ նա ցանկապատի ներսից ցանկապատի հետ գալով՝ «Ասում ես ասա, քու Սարգսանց կռտած խոզն ինձ ինչ տի անիլ որ»:

Մեր տիկինն է ձեռքերն իր նման ծոցում ընդառաջ գալիս աղջնակին ու ձիուն, հետո գնդապետի երեխան է հայտնվում - երեք անգոր-անձար գոյություն մեր դռանը խառնվում ու

պատվում են ձիու շուրջը, մեր տիկինն ասում է՝ «Ռոստոմը որ տեսավ՝ ինձ էլ կսպանի, անողին էլ», արքան է հայտնվում տղայի ձեռքին, աղջնակը չի թողնում արքանով ետ ոլորել՝ «Ցավում է, ցավեցնում ես», հուսահատված մեր տիկինն անիծում ասում է՝ «Տեսնում ես չեն սիրում, ատում են, թշնամի են - ծախիր, բեռներդ կապիր, գնանք էս երկրից, ինչ ես կանգնել արմատակալում, ով ունես էստեղ», և նորից է փորձում արքանով և նորից է ձախողում, «Անտերը, ինչ էլ ուժեղ ձեռ են ունեցել», ասում է ու հուսահատված ետ քաշվում:

Առանց մեզ տեսնելու կամ մեր ոտնաձայնը լսելու՝ մեր տիկինն զգում է, որ մենք մոտեցել տուն ենք գալիս, և խուճապից քարանում է. «Եկավ, ասում է, մինդ գնացեք ճամփեն կտրեք»: Տղային ասում է. «Պապերի ժամանակից, հնից, անցածից խոսեցրո՛ւ՝ թող խոսի, ոտը կապիր», բայց աղջնակն է վայրի եղնուի ու նման թռչում՝ «Ես»:

Գործակատարի հետ խոսակցությունը մեզ ծանր տպավորություն էր արել, զգում էինք, որ մեկնումների վրա մեր բարկությունը պայթելու է: Ճանապարհից թեքվեցինք մտանք մեր տան արահետ - տե՛ր աստված, էդ ինչ գեղեցկություն ու թեթևություն էր, այդ գեղեցկության ու թեթևության առջև մենք որքան ծանրաշունչ ու ծեր էինք. Մարոյի աղջնակը մեր չափարի վրայով, բարակ թևերը փռած, գալիս էր (չափարն, ուրեմն, քարի պատ է, պատի մեջ, հավասար հեռավորությամբ, ցցեր են և ցցերի գլխով մեկնած ուղիղ լատաններ). չկարողացավ իրեն պահել, այգու ներսի վրա ընկավ, ետ բարձրացավ ու մեզ երեսերեսի եկավ, իբր թե մեր ներկայությունից տեղյակ չէր՝ զարմացավ. «Վա՛յ»:

- Ուլի՞կ, ասացինք, խակ շլո՞ր եք գողանում:

- Խակ չի, հասած է, ասաց: Բաժակը մի ռուբլի՝ ձամփին ծախում են:

- Կծախեն, ասացինք, ձեր քաղաքում կծախեն:

Լատանի վրա շուռ եկավ ու մեզ հետ, լատանի վկայով, եկավ:

- Երկու բաժակը՝ երկու ռուբլի,- ասաց,- բայց ինձ երկու ռուբլի տվող չկա - ամեն առավոտ՝ քսան կոպեկ:

- Դասի ժամանակ շլո՞ր եք ուտում:

- Դուք դասի ժամանակ էի՞ք ուտում, ասաց:

- Մենք, ասացինք, նստարանների արանքում սոված ու վախեցած կույ չէինք գալիս ու ուսուցչի վախից ոչ թվաբանություն էինք հասկանում, ոչ էլ աշխարհագրություն:

- Բա էդ որտեղի՞ց գիտեք, որ շլորը դասի ժամանակ են ուտում:

Մի բան մեզ կասկածելի թվաց. նրա ոտքերի մոտով ծառերի տակով նայեցինք դեպի մեր բակը, Այծի՞կ, ասացինք:

Մտանք մեր բակը - բակը տազնապալիորեն ամայի էր:

- Այծի՞կ, ասացինք, չե՞ս ասելու ինչ է եղել:

Կանացիորեն իմաստուն պատասխան տվեց. ասաց.

- Որ ախպերս ու փեսեն ավտոն ձորն էին գցել, ախպերս եկավ տուն. եկավ գլուխը վերմակի տակ քաշեց ու քնեց: Միլիցիան եկավ տեսավ քնած է: Չարթնացրեց, ասաց «դժբախտության մեջ է ընկել, թող քնի»». թեյ խմեց, զրուցեց, ախպերս էլ քնած էր:

Մենք նրան լսում ու մեզ դեպի մառանն էինք քշում, դեպի գոմի դուռը գնացինք, «դեպքը» մեզանից ամեն դուռ ու ստվեր էին թաքցնում, այնինչ մեր տիկինն ու գնդապետի երեխան նժույգը քաշել էին տան ետևը, տքնում, ձգնում, ջանում էին

մինչև մեր վրահասը հանցանքը սրբել: Ինչ-որ խուլ ձայների ու անհայտ նշանների վրա մենք դեպի տան ետնաբալկն անցանք, աղջնակը՝ մեր ետևից:

- Այծի՞կ, ասացինք. թե գիտենաս հերդ քո տեղն ինչ օգնական-տղա էր սպասո՞ւմ... բայց դու աղջիկ ծնվեցիր:

Մեր տիկինը մեզ տեսավ, իրենով ձիուն մեզանից ծածկեց ու՝

- Բան չի եղել, էլ քեզ կորցնիլ մի, բան չի եղել, ասաց:

Թափով, մեզ իսկապես կորցրած մոտեցանք, չզգացինք որ տգեղ ենք վարվում՝ ձիու դնչից կախված երեխային մի կողմ նետեցինք, բայց մեր մյուս վատ արարքը, ավելի ծիշտ՝ մեզանից արտածված սարսափը մեր կողմից աննկատ չմնաց - այն, որ մեր տիկինը կարծեց իրեն ենք խփում ու ձեռքերը պաշտպանելու արավ. այդ, ահա, նկատեցինք և խոր կշտամբանքով խայթեցինք. «Մենք քեզ հետ, ասացինք, հետո կխոսենք»։ Ոլորքի ծայրը երեխան կարողացել էր մի քիչ՝ խխունջի պոզերի չափ ետ տալ. մատներով շարունակել՝ հնարավոր չեղավ. աքցանը ոտքով մենք հեռու նետեցինք. ինքնաշեն, բերանը դժվար բացվող մեր դանակի շեղբը խրեցինք ոլորքի արանքը, լնգեցինք՝ և շեղբը կոտրեց:

- Ծըլթ-ծըլթ-ծըլթ, արեցինք. Ծմակուտը դեռ ուրեմն էս ուժի մատներ ունի. փառքդ մեծ, աստված. թե՞ հովըտեցոնց ձեռն է, հովըտեցիք են արել:

Խոսեց մեր արտասովոր տիկինը.

- Դու էլ՝ ամեն ինչը «Շովիտը, հովըտեցիք»... էս երկրում մեր ապրելը ուզող չկա:

Սաստեցինք. «Մենք քեզ հետ խոսելիք ունենք, հիմա կխոսենք», ասացինք: Երեխայի առաջարկած աքցանը օգնեց. բացվածքը մեծացրինք, հետո պողպատալարը ետ ոլորվեց արդեն

մեր մատների ուժով. ամեն մի ետ-պտույտը ձիու հոգին հանում էր, ձիուն ասացինք.

- Քու հիմար սիրուն գլուխը ի՜նչ խոստումով են բռնել... Մենք էլ կարծում էինք ընկեր ունենք՝ որ մի Ռոստոմ է ծանաչում... Սրանից հետո դու ի՜նչ կարծիք ես տանելու մարդուս վրա... Մեր սրտի թույնը մենք ո՛նց ենք մաքրելու: Աղջնակը մեր աչքի անկյունը մտավ՝ անպաշտպան, շիտակ մաքրությունը: Այծի՞կ, ասացինք, ուր ես՝ չես երևում: Ոլորքն արձակվեց: Ձիու գլուխը գրկեցինք ու աչքերը երկար տրորեցինք. դա՛ այդ տրորելը, իսկապես պահանջվում է, բայց ճիշտ է նաև այն, որ մենք այդպիսով մեր խեղդուկն էինք թաքցնում:

- Բաշից բռնիր ու ծառերի մեջ կամաց պտտիր,- պատվիրեցինք տղային:- Մենք ժողովրդի հետ գործ ունեինք:- Կռացանք գետնից վերցրինք լարը:

- Ինչ եղել է՝ եղել, գնալ մի, բողոքով պահանջեց մեր տիկինը:

- Նախ՝ դու, ասացինք, մենք քեզ վրա քանի՞ անգամ ենք մեր մատը բարձրացրել՝ որ մեր առաջ դու կուչ ես գալիս. մեր աչքունքից, մեր վարքից դու քանի՞ անգամ ես քեզ համար վտանգ հանել՝ որ հիմա կուչ եկար:

Մեզ հազիվ թե լսում էր. բարակ, արդեն ձերմակող, զգայուն որպես ինքը մարմնացյալ տազնապը՝ իր մտածածն էր մտածում ու իր վախերը ապրում. հազիվ թե հասկանալով ինչ է անում՝ քաշվեց դեպի մեզ, քաշվեց, հետո մեր կրծքին նետվեց ու լաց եղավ: Մեկ է, գնալ չպտես, ասաց:

- Ոո՛ռչ, ասացինք. մենք քու կողքին եդ քանի՞ անգամ ենք մարդասպանություն մտածել՝ որ դու մեզ մարդասպանի տեղ ես դնում ու կուչ գալիս: Մեր բաձկոնն աղջնակի ձեռքին էր,

վերցրինք մեր ուսերին գցեցինք, գետնին մեր աչքով ընկավ կոտրած դանակը, կռացանք վերցրինք նայեցինք ու նետեցինք, պողպատալարը ծալեցինք մեր գրպանում դրինք ու գնացինք:

Սարգսանց հին տների տակ ձորալանջի կաճանով անձոռնի լակոտը հեծանվով գալիս էր. լանջը զառիթափ ու կաճանը վայրիվերո է, հեծանիվը չէր քշում, հրելով գալիս էր. գեղեցկության մասին իր կայուն ու վերջնական պատկերացումը ուներ - հեծանիվը պաճուճել էր մորթիներով ու հազարումի պաճուճանքով: Կամրջակը երկու կից լատան էր, հանդիպեցինք կամրջակի վրա. ինքն այն ծայրն էր, մենք այս: Մենք կանգ առանք, ասացինք փոքրերի նկատմամբ սիրո և անձոռնու նրա ու մանավանդ հեծանվի նկատմամբ ներողամիտ քամահրանքի ինչ-որ խառնուրդով.

- Համեցիր: Բեր տեսներք քու ձին ինչ ձի է:

Տեղը մեխված էլ մնաց ու նայեց:

- Մեծերին ճամփա ես տալիս, ասացինք, ապրես: Կամրջակն անցանք, մոտը կանգ առանք, որպես գյուղի հայր՝ լավ վերաբերմունքի մի արտահայտություն, մի քաղցր խոսք էինք ասելու - մեր ձեռքը շոյելու տարանք՝ գլուխը ետ քաշեց ու նայեց անասունի ոխով: Հո՛ւու, հորդ կացինը խլած կլինենք, ասացինք: Թե՞ հերդ էլ է դինամիտի անցել: Մի քիչ միայն ընկրկեց, աչքերում զարհուրելի ամայություն էր: Երեխեքից թաքուն բան չի լինում, էս երկրի տղա ես, ասացինք, մեր ձիու մոտերքն ո՞ւմ ես նկատել: Բայց մենք նահանջեցինք այդ ամայության առջև, ուղղակի նահանջեցինք՝ հապճեպորեն ասելով այն խոսքը, որ սովորաբար ասում են երեխաներին. Դե լավ, լեզու չունես:

«Բոլորին էլ իրավունք ես տվել, տեր աստված, զարմ ունե-

նալ ու շարունակվել... բայց դա ի՞նչ իրավունք է», հեռացանք ու բողոքեցինք. դա մեր ուղղակի փախուստն էր և եթե չէինք վազում՝ զառիվերի ու մեզ խեղդող խզզոցի պատճառով, այնինչ ստիպված էինք նորից դառնալ այդ երեխային:

Խուլ, լարված ձկլթոցի վրա շուռ եկանք՝ կամրջակի մյուս ծայրին Մարոյի աղջնակն ու անձոռնին կռվում էին - աղջնակը թեթև ձյուղի նման ետ շարտվեց ընկավ, անձոռնին կանգնած էր հեծանիվը մի ձեռքով բռնած. ձեռքին մեր կոտրած դանակը՝ աղջնակը ոստնեց գետնից, գրոհեց, անխիղճ հարված կերավ ու դարձյալ շարտվեց:

- Հը՛ր, սաստեցինք ու մեր եկած արահետով ետ վազեցինք:

Մեր ձայնը նրանք հագիվ թե չլսեցին, բայց ուշադրության չառան, դա նրանց՝ մեր առջև փակ գաղութի կռիվն էր, մենք նրանց համար չկայինք - ոչ աղջիկն էր մեզ գանգատվում ու օգնություն ուզում, ոչ էլ տղան էր ազդվում մեր ներկայությունից: Հասանք, ինչպես որ իրար կալած շներին բաժանես՝ բաժանեցինք, մեր կոտրած փակ դանակը բռնեցքի մեջ՝ աղջնակը ետ քաշվեց, այլանդակ ծեծ էր կերել, բայց մեջը ահ չկար, ամեն վայրկյան վրա կքշեր, մեզ ուղղակի չէր տեսնում, այնպես որ բարկացած ասացինք՝ «Կորի՛ր էստեղից», «ձեռինդ էդ ի՞նչ է՝ դեսը տուր», բայց ոչ հանձնեց, ոչ էլ հեռացավ, վրա էր քշում, և ասացինք՝ «Կհաղթես, կհաղթես, վերջը անպայման կհաղթես» և անձոռնուն դարձանք. Չես էլ ամաչում, անունդ էլ տղա է, աղջիկ ես ծեծում, բայց սա ի՞նչ հաղթվող էր. ուզում էինք ծոծրակը հրել՝ մեր թևքը բռնեց. ինչպես որ խեղդող շունը կոկորդ է բռնում ու էլ ազատում չկա՝ մեր թևքը բռնեց ու կաշկանդեց: «Ուժեղ ես, ասացինք, թող»: Բայց չթողեց: «Վախիլ մի, խփում չենք» ասացինք, սակայն մենք էինք վախենալու:

«Դե թո՛ղ», ասացինք ու մեր ձեռքը քաշեցինք - մեր վերնաշապկի թևքը վերից վար ձղվեց: «Կորե՛ք էստեղից», ծղրտացինք, և տարբեր կողմերի վրա դանդաղ, կռված շների նման քարշ գալով հեռացան:

24

Գնացինք Ալբերտի դուռը: Կինը փռնում հաց էր թխում, երեխաները մորը օգնում էին, յուրաքանչյուրը իր որոշակի անելիքը ուներ, միմյանց չէին խանգարում, դա լավ կազմակերպված ընտանիք էր: Տանտերը բակում սեղանի առաջ նստած հրացան էր կարկատում: Լուռ բարևեցինք, անցանք նստեցինք տանտիրոջ մոտ: Երեխաներից ամենափոքրը միայն մեր ներկայությունից քաշվեց մոր փեշի ետևը, մյուսները նայեցին անվախ-համարձակ և դարձյալ իրենց գործերին կացան: Տանտերը գործը մի կողմ դրեց և սպասեց մեր խոսքին: Կինը գունդը փուռն արեց: Փռան բերանը փակեց և մեզ դարձավ.

- Գնացեք տուն, անհարմար չի՞ օտարի պես դուրսն եք նստում:

- Էստեղ էլ է տուն, ասացինք:

Եկավ սեղանի երեսը սրբեց գնաց, ամենափոքրը եկավ քաշվեց հոր ծնկների արանքը: Մինչ մենք ծամծմում էինք մեր ասելիքը և տանտերը լուռ սպասում էր, երեխաներից մեկը բերեց սեղանին օղու շիշ դրեց գնաց, մյուսը բերեց հոր և մեր առջև օղու երկու բաժակ դրեց գնաց, երրորդը բերեց երկու ափսե ու պատառաքաղ դրեց գնաց - պատրաստակամությամբ, արժանապատվությամբ: Մեր հիացմունքը նրանք շարժում էին, հոր համար դա այնինչ այդպես էր, հայրը չէր նկատում կամ չնկատելու էր տալիս:

- Ափսոս, ասացինք. ափսոս, որ մեր ծանր խոսելիքը էս սուրբ իրիկունն էր լինելու: Ելանք ու նշանով հասկացրինք, որ մենք ու ինքը պիտի առանձնանանք:

Կինը բերեց պանիր ու հաց դրեց սեղանին, մեզ ասաց.

- Նստիր: Մեր հացը դու մի օր կտրելո՞ւ ես թե չէ:

Կինը գնաց իր փռան գործին, տանտերը՝

- Նստիր իսկապես, խազեին. խոսքդ եթե մեզ է վերաբերում՝ մենք էնպես բան չենք արել, որ առանձին խոսեինք. եթե ուրիշների մասին է՝ խնդրենք: Ոտքի ելավ: Փռան առջևից ընտանիքը շարված նայում էր:

- Իսկապես ծանր պատկեր կլիներ՝ եթե ընտանիքիդ աչքի առաջ իրավատիրոջ ետևից մեղավոր շան նման քարշ գաս, բայց եդ է:

Ինքը նստեց ասաց.

- Նստիր, նստիր: Նստիր ու խոսքդ չափավորիր:

Նստեցինք ասացինք.

- Բողկն ուտում ու Ռոստոմի առաջ ընտանիք եք դնում կամ քույր: Իսկ որ մի անգամ ասեիք «էդ ձեր կացինը՝ էս էլ մեր բաց վիզը» - էդ արդեն՝ ոչ, էդ արդեն համարյա թե ազնվություն կլիներ:

Երեխային ծնկից ցած դրեց, կնոջը երեխայի մասին կարգադրեց՝ «մի թույլ ել քաշիր», ինքը շիտակ ու համարձակ նայեց, սպասեց: Պողպատալարը հանեցինք դրեցինք սեղանին իր առաջ: Նայեց, չհասկացավ, ասաց.

- Ի՞նչ է:

- Զահրումար է,- ասացինք,- դու ասա:

- Քու ձեռին էր,- ասաց,- դու կիմանաս:

- Ռոստոմի վրա ատամներիդ կրճտացրել ու ոխը անլեզու

անասունից ես հանել,- ասացինք,- երկուսդ գիտեք՝ դու ու ձին.
ձին լեզու չունի, էս ի՞նչ է:

Ոստնեց ու կտրականապես արգելեց այդ մասին խոսել.

- Դե, դե, դե. չեղավ, խազեին, էդ արդեն չեղավ. քու աչքում
երթե էդքան անմարդ եմ,- ասաց,- այ էսպես կսրբեմ կքոչեմ
Գործարան, էս ավերակում կմնաս բվեճի նման մենակ վայ-
կանչելով:

Ասացինք.

- Վերջը հենց էդպես էլ լինելու է:

Ասաց.

- Ափսոս որ խազեինիդ մթնեցրել են, մենք քու արև օրին
էինք սպասում՝ որ էն կաղնու մասին խնդրեինք. բայց որ,
խազեին,- ասաց,- մթնեցրել են՝ ուրախ ենք. քու թշնամին ուրեմն
մենակ մենք չենք, էս ամբողջ երկիրն է քու թշնամին:

Մոլորված մնացինք-մնացինք, ընտանիքը կանգնած նայում
էր, հրացանը մեր աչքովն ընկավ, վերցրինք, զննեցինք,
ասացինք.

- Մատներդ է՛-էն ժամանակից են ձարտար՝ որ դպրոցական
էիր ու դարբնոց էիր գալիս:

- Բողոքավոր չենք, ասաց:

- Բայց սրա նպատակն ի՞նչ է,- ասացինք,- ի՞նչ նպատակով
ես չարչարվել:

Զպատասխանելու նման պատասխանեց.

- Նայած:

Ասացինք.

- Էս երկրում ինչ որ լինում է՝ ամեն քարութփի համար մենք
պատասխանատու ենք:

- Խազեին ես, հասկանալի է, ասաց: Ասում եմ «էս

տունուտեղը հավաքում Գործարան եմ իջնում», ասում ես «իջիր, կնիկդ թող կռանա ուրիշների ոտի տակն ավլի»: Բայց մենակ դու չես, խազեին. մի ուրիշն էլ ա՛յ քու օրինակով կանգնել ասում է «քու ձին իմ հանդերը չախտի արածի»:

- Օրենքով ու անօրենք, թաքուն ու բաց,- ասացինք,- հարսանիք ու թաղում, առակավոր ու անառակ՝ ինչ որ, հին խոսքի ասած, էս գյուղի ջաղացին մի մկան ցեթի շահ, էս ավերակի սարսափին մի ճրագի լույս, էս Ծմակուտի կյանք ու ուրախութենին մի ծաղիկ է նվիրում՝ թող լինի, մեր ուզածն է: Բայց դուք ո՞ւմ եք ծառայության կանգնել: Ասում եք ձեր օգուտի, ձեր շահի, ձեր երեխեքի առաջ: Ընդունելի է, գլուխս հարյուր անգամ գետնով տամ ձեր կնկա ու երեխեքի ոտների առաջ, ընդունելի է: Օտար-անհայրենիք թզուկի առաջ Ծմակուտի կաղնին քսան մանեթով մեկնում եք, գիշերը կիր-վառելու եք կանգնում: Ծմակուտա սարերի արծաթե քուռակը մատնում եք հովըտեցի չխմողի՝ լակողի՝ ձեռը - ձեր երեխեքի երկիրը քսան մանեթով ծախում, էգուցվա օրը ձեր ժառանգին հայրենիքից զրկում ու ասում եք՝ երեխեքի առաջ ենք ծառայության կանգնել:

Կարծես թե լսում ու հասկանում էր, հետո աչքերը փախցրեց:

- Էդ է, ասացինք. ու ոչ հասկանալու զորություն, ոչ էլ չհասկանալով ենթարկվելու կարգապահություն ունեք:

Ձեռքը օղու շիշը բացելու գցեց: Ելանք, պողպատալարը վերցրինք, նայեցինք, նետեցինք ու շարժվեցինք գնալու:

- Շաց ուտեինք ու գնայինք, խազեին, ես էլ եմ գյուղամեջ իջնելու, ասաց:

- Որ ժողովուրդը տեսներ՝ որ օրենքն ու հանցանքը թև-թևի տված մարդամե՞ջ են իջնում,- ասացինք,- լինող բան չի:

- Էդ արդեն չափազանցում ես, խազեին,- ասաց,- մենք

իսկապես անպարտ չենք, բայց քեզ էլ՝ շատ ուժեղ
չափազանցում ես:

Մեր ուսի վրայով իշխանաբար ետ նայեցինք, ասացինք.

- Խնդրենք: Մեր մեղքերի համար մենք մեզ հրապարակից
հանում ենք. դուք մտեք հրապարակ՝ տեսնենք էդ ո՛րդ եք չորս
կողմից նայվում ու ժողովրդի առաջ առանց ամոթի մնում:

Հին ելուզակը՝ Օսեփանց հալիվորը, աղբյուրից ջուր էր
տանում. մաշվե՛լ, հատել հանգել էր, դա կյանք չէր՝ կռիվ էր
կյանքի դեմ: Հասանք, դույլը ձեռքից առանք, բարձր՝ քանի որ
կարծում էինք խուլ է՝ բարի իրիկուն տվինք. «Բարի
իրիկո՛ւն»:

Ինքը իր անկարության վրա ծիծաղեց.

- Այտա, դե տանում էի, էլի, ասաց:

- Երեխեքից ի՞նչ լուր կա, ի՞նչ են գրում, ասացինք:

- Երեխեքի՞ց... Մոռացավ: Էդ խի՞ ես բարձր խոսում, հո խուլ
չեմ, ասաց: Ականջս էլ է տեղը, աչքս էլ, ամեն ինչս էլ տեղն է:

- Բա էս ջուրը ինչի՞ ես կիսատ առել, ասացինք:

Տխրե՛եց, տխրության ծովն ընկավ: Ի՛իի հա, այ որդի,-
ասաց,- ինձ էդ էլ է շատ: Կեղտոտ թաշկինակի գնդով աչքերը
սրբում էր, զզվեցինք:

- Գցիր,- ասացինք,- էդ ի՞նչ է: Ձեռքից առանք ինքներս
շարտեցինք, քառաձալ արդուկաժ սպիտակ նորը հանեցինք մեր
գրպանից, իրեն տվեցինք: Ճանաչեցի՞ր ով ենք, ասացինք:

- Տիգրանի թոռն ես՝ Շուշանի տղերանցե, ասաց:

- Էէ՛է, սուտ նեղացանք, Ռոստոմն ենք, մոռացել ես:

- Մի շուն են, ասաց: Անխիղճ ժողովուրդ են: Թուրքի Սա-
լահիվից է՛է նալը ոտը ծեծելով եկանք տեղ հասանք, ես եղա՝

ինքը, չխղճաց: Էն խեղճ անասունը տակին տանջվեց, տանջվեց:

«խոսեցրինք».

- Էդ ո՞վ էր՝ Ռոստոմը:

- Է՛է, նեղացավ, Ռոստոմը երեկվա լակոտն է - Տիգրանը:

- Բա թուրքի Սալահլու, «խոսեցրինք», Էդ ինչի՞ էիք գնացել:

Ծիծաղն ու երանությունը հին ելուզակի մեջ զարթնեցին - ծիծաղեց:

- Այտա,- ասաց,- ծըլթ, ծըլթ, ծըլթ: Շիմի էլ բռնել, ծերունական անզոր բարկությունը մի պահ կայծկտաց մեջը, քուռակը տակին մադյանս ծախել է:

- Ո՞վ,- ասացինք,- Ռոստոմը:

- Շուշանի տղեն՝ Տիգրանի թոռը. Ռոստոմը անտառապահն է, սարերն իրենը չեն, մենակ՝ անտառը, ասաց: Ծախելը՝ չի ծախել, է, բերել հաշված ասել «առ հալեվորիդ վաստակը».

Ծախել կորցրել ու ասվում է «ձին էլ քու ինչի՞դ է պետք, ոտիդ վրա էդ է զոռով ես կանգնում»:

Դա մեզ խոցեց, բայց «խոսեցրինք»:

- Դե ձիշտ է ասում, էլի, ձին ինչի՞դ է պետք:

Մեր կյանքում այդքան գեղեցիկ խոսք չէինք լսել. ասաց.

- Այտա... այտա, ինձ չի պետք, է, ինձ - ձեզ է պետք. բա ինչ էն է՝ անցորդը նայում ասում է «Էն ի՞նչ ավերակ է, Էն ավերակ է, սար չի» ու Էն է՝ որ ասում է «Էն կարմիր ձին ու քուռակը որ արածում են՝ Ծմակուտա սարն է»:

Մենք մի պահ հանձնվեցինք հալեվորի տված պատկերին, դա մեզ խեղդում էր, հետո «խոսեցրինք».

- Շետո, էդ ի՞նչ անցորդ է:

- Այտա, ես եմ, ձիով անց եմ կենում. նայում եմ՝ պարապ

սարեր են. նայում եմ՝ կարմիր մադյանը քուռակի հետ արածում է. ո՞րն է լավը - լինի՞, թե՞ չլինի:

- Արածի՛,- ասացինք,- լինի՛:

- Բա չկա, է, ո՞նց արածի. Տիգրանի ժառանգը տվել է մսի կոմբինատ:

- Դե լավ,- ասացինք,- որ էդպես ձիավորվել ձիու վրա ես՝ պատրաստ կացիր, էս գիշեր ուժեղ տրաքոց է լինելու. դու Ռոստոմի բանակից ես, զգույշ՝ բանակդ հանկարծ փոխս չգցես, դու մեր բանակից ես:

Ծի՛հծաղեց. թոք չուներ - խուլ, համարյա թե անձայն՝ ծիծաղին կուլ գնաց: Այտա՛, ասաց. այտա, եդով Ամերիկո՞ւ վրա ենք գնում թե Հովըտի:

- Քաղաքացիակա՛ն,- ասացինք,- քաղաքացիական: Ամերիկան ու Հովիտն ի՛նչ են՝ որ նրանց վրա մենք բանակ չարժենք:

Դույլը մենք անցըրինք, պատշգամբում մերկ սեղանին դրինք, ինքը մնաց բակում: Երբ ետ բակ ելանք՝ տրամադրությունը դեռ լավ էր, բայց տխուր բան ասաց. ասաց.

- Դե որ վերևների հետ էդպես կապ ունես՝ ասա առաջ հալիվորներին տանի, նոր՝ պառավներին. էս ի՛նչ է իմ օրը:

Փայտը կոճղի վրա կրծել-կրծմրծել ու չէր զորել ջարդի. նրա ցամաքող գոյության առաջ մեր առողջ ուժի ողջ հրձվանքը վայելելով (մեր բաձկոնը մենք իրեն պահելու տվեցինք)՝ կացնի մի քանի հարվածով մենք փայտը ջարդեցինք, կացինը մղեցինք կոճղ, ասացինք.

- Դե դու էլ, թուրքի նման, մի երկուսը պահեիր. եթե ժամանակին մտածած լինեիր, հիմա... բաձկոնը նրա ձեռքից մենք առանք, մեր ծանր ու պինդ մարմնի զորությունն զգալով՝ գցեցինք մեր թիկունքին. կամ թե չէ, երեք տղա ունեիր, հենց

սկզբից էլ ասեիր երկուսը քաղաքի համար են, մինը՝ գյուղի՝ իմ:

Հին ելուզակը, մի տեսակ դարանած, ծերունական անօգ մարմնի միջից մեզ նայում էր. դավաճան կեղևի՝ ծերության դեմ ըմբոստանալով, համարձակվեց ասաց.

- Ուրիշի գործերը դասավորելը հեշտ է. բա քոնը դու էդ ինչի՞ քու կողքին չպահեցիր՝ որ զցեցիր օտարի դռները:

Դավը մենք զգացինք, բայց կարծեցինք մեր սրված զգուշությունն է: Մենք Ռոստոմն ենք, հիշեցրինք:

- Ռոստոմը, հա, հաստատեց, հովըտեցի բուղիցն էլածը՝ Տիգրանի տղեն: Դե որ Ռոստոմն ես - Ռոստոմի երեխեն Մուրադենց Վարոսի՝ Լոշտոյի դռանը գործ չունի, գնա բեր քու դուռը: Լոշտոն քաղաքում է, գործարանում, բայց գործարանում չի - գործարանը խոզանոց ունի, խոզանոցը ընտանիքով ինքն է պահում. կնիկը գժանոցում մեռել է, մեծ ընտանիքի տակ չարչարվում է խեղճ տղեն:

Մեր հզոր ուսով նրան կամա-ակամա ետ հրելով՝ ծերունու առջև սապոգի քթով գիծ քաշեցինք, ասացինք.

- Քու սահմանն է, սահմանիցդ դուրս ես գալիս:

- Ո՛ւր է, այ որդի,- ասաց,- լավ տեսնում էլ եմ, տեսածիցս շատ լսում էլ եմ, շատ բան էլ առանց տեսնել-լսել եմ իմ մե՛ջ հասկանում, եռում, բայց անտեր մնա ծերությունը - սահմանիցս կարում չեմ դուրս գամ:

25

Գյուղամեջը իր երեկոյան եռուզեռին է. վիթխարի կնոջ ներկայությունը տղերանց մեջ ինչ-որ հիվանդագին տենդոտ ոգևորություն է առաջացրել, բոլորն ու յուրաքանչյուրը կարծում է նրա ուզածն ինքն է և ինքը զորու է լինել նրա ուզածը.

անասնորեն առողջ ու գեղեցիկ, ծամոնը ինչ-որ խարդավանքով բերանում (ծամելը նրա անասունի խաղաղ վարքին ինչ-որ խարդավանք է տալիս)՝ նա շինարարության ջահելներին մոնթերի պես ետևը գցած այստեղ առևտրի է, մեքենայով եկել են խանութ, առևտրի են. թղթի վրա գրած ունեն, գիտեն ինչ են առնելու և ինչքան. շինարարության ջահելներից մեկը նա է՝ ում ժողովուրդը համարում է մեզանից սերված. գնումների է եկել նաև մոտոցիկլավոր երկրախույզը. գնդապետի երեխան անձոռնուց ծեծ է կերել՝ աչքի տակը կապտած է, տխուր նստած է հուշարձանի ցանկապատին. անձոռնին իր հեծանվով վերը՝ պատշգամբում մեր քրոջ զավակի խմբում է, նրանք նրան բամփելու պես շոյում ու շոյելու պես բամփում են ու ծիծաղում, ինքը՝ ոչինչ, սովոր է. խումբը օղի ունի, հացթուխը կամաց ծծում է, առաջարկում է սրան-նրան, մերժում են, ասում է՝ «դու էսօր գործ չես արել, ճիշտ ես անում որ չես խմում, ես իմ պլանը, ախպեր, կատարել եմ» և ինքն է խմում. առաջարկում է անձոռնուն, մեր քրոջ զավակը՝ որ այդ խմբի հոգևոր պետն է և մեր շարժումնով ետուառաջ է անում պատշգամբում, ասում է՝ «երեխային փչացնիլ մի». գլխին բամփում, գրպանից ծխախոտ են հանում ասում՝ «սրա ի՞նչն է երեխա, թող անես՝ էն կնկանը հում-հում կուտի». «իմ նվազ տեղովը էն կնկանը ես էլ կուտեմ, բան ասա», ասում է հացթուխը ու խմում. երկրախույզը խանութում հենց շշով էլ գարեջուր է խմում՝ աչքը «էն կնկան»՝ վիթխարուն. վիթխարին կառավարում է իր մոնթերի առուտուրը. տեղացի մի երկու պառավի գործակատարը հարցնում է՝ «ինչի՞ եք եկել, ի՞նչ եք ուզում. քո ուզած շալը բերել եմ». պառավներն ասում են՝ «էդ քաղաքացի ժողովրդի հետ գործդ պրծի, մենք էստեղ ենք». պառավներից մեկը, նկատի առնելով մեզանից

սերվաձին, ասում է՝ «դրանք էլ են մերը. որ երկու օր է քաղաք են գնացել՝ քաղքցի են - Մուրադենց հարսի տղեն է», և մեզանից սերվածը զգուշանում, նեղվում, կաշկանդվում է. փոստատարը գանձապահի մոտոցիկլետով գալիս, բերում ներքևը՝ գյուղական բեռնատարի մոտ մեր քրոջ վարորդ զավակի մի կենտ լրագիրը (շրջանային թերթը) իրեն է տալիս, բարձրանում մյուս զավակի լրագրերը (կենտրոնական, հանրապետական, շրջանային)՝ մյուսին, սա ծալում ու սապոգի ձիտքն է խրում, մեր լրագրերը՝ գյուղում ամենամեծ փոստը, զատում հին գրասենյակի բաց լուսամուտին հեռախոսի մոտ է դնում, մտնում է խանութ, ժողովրդի գլխի վրայով գործակատարի լրագիրն է իրեն շարտում և նույնկերպ մի տուփ ծխախոտ ու լուցկի ստանում. գանձապահը գալիս, բարձրանում, բաց լուսամուտով մտնում է գրասենյակ, դրամի կապուկները հանում, ցուցակները հանում, ասում է՝ «ես պատրաստ եմ. ով աշխատել է՝ աշխատածը, ով չի աշխատել՝ պարտքով, համեցեք»։ Կթվորուհիների խմբին առաջ են թողնում, հետո մեր քրոջ վարորդ զավակն է ստանում իր քիչ աշխատավարձն ու դժգոհում, ինչը որ նկատում է մեր քույրը և ցանկանալով ի ցույց բոլորի անել՝ իր աշխատավարձը որդուն է տալիս, «ցավդ տանեմ, քու Շուշան մերը մեռած չի», որդին հրաժարվում է, բայց երևում է, որ կուզենար թաքուն ստանալ. խոտհավաքի կոմբայնավարը իջնում գնդապետի երեխային փող է տալիս, սա ոչ մի կերպ չի ուզում հասկանալ թե ինքը ինչու էր փող ստանալու («խոտ ես հավաքել, ասում է կոմբայնավարը, երեք օր հետս ընկերություն ես արել»)։ մեր քրոջ զավակը՝ մեզ նմանակողը, որ վիթխարու ներկայությունից հատկապես է իշխանացել, վերևից երեխային կարգադրում է՝ «վերցրու»։ ան-

ծոռնին է աշխատավարձ ստանում՝ տղերանց հովանավորությամբ - կասկածող գանձապահին տղերքն ասում են «ինքն է», «հոր փոխարեն փաստորեն ինքն է» և ծիծաղում ու գլխին բամփում են. վիթխարին գնումների ցուցակը ձեռքին հավում է մեզանից սերվածին, երկուսով թուղթը նայում են, և մեզանից սերվածը գործակատարին ասում է՝ «տասը կիլո մակարոն», ինչի վրա փոստատարն ասում է՝ «Ռոստոմի թուրքին գրկեցիք»։ դա անշառ կատակ միջամտություն է, բայց արի ու տես, որ մեզանից սերվածին դուր չի գալիս - ինքնամեծար, հայացքը սառը և դեռ կնոջ ներկայությունից իրեն կորցրած՝ գլուխը դանդաղ փոստատարին է անում ասում՝ «ինչպե՞ս», և փոստատարը վախենում, թուրքը կույ է տալիս ասում՝ «ոչինչ. ասում էի չոբանը գալու է տեսնի մակարոն չկա»։ «ա՛», անժպիտ, արհամարհանքով ասում է մեզանից սերվածը և գործակատարին կրկնում՝ «տասը կիլո մակարոն»։ հետո վիթխարին դարձյալ խլրտում, հավում է մեզանից սերվածին, երկուսով նայում են գնումների ցուցակը և մեզանից սերվածը ասում է՝ «յոթ բոքոն»։ նրա ընկերները գնումները տանում մեքենա են դնում. մեր քրոջ զավակը՝ մեզ նմանակողը, աշխատավարձ չունի, «Էս ո՞նց է, ախպերացու», ասում է գանձապահը, հետո հիշում. չնչին՝ մեկ կամ երկու օրվա աշխատավարձը մեր քրոջ զավակն ստանում, բռան մեջ չխկչխկացնում է, բայց տրամադրությունը վատ չէ, հանդուգն ու ցինիկ՝ կոպեկները դնում է պատշգամբի բազրիքին. կաղ կթվորուհին այդտեղ է, կապը նրա ու մեր քրոջ զավակի միջև է եղել, նա է փաստորեն մեր քրոջ զավակին պաշտոնից հանել, բայց չի զղջում, եթե առիթ լինի՝ դարձյալ կհարձակվի. երկրախույզն իրեն վիթխարու վերաբերմամբ վատ է պահել, ինչ է

արել՝ ինքն էլ չգիտի, միայն՝ մեզանից սերվածը, որ կռվի է ձգտում, և վիթխարին, որ կանացի ինչ-որ փափուկ ուժով զսպում է նրան. վիթխարին հիմա նվեր է անում մեզանից սերվածին, խանութում երկմատնանի կաշվե լայն գոտի կա, այդ գոտին ահա ուզում է առնել մեզանից սերվածի համար. «կնկա չի», ասում է գործակատարը, բայց տալիս է. վիթխարին վերցնում, մեզանից սերվածի մեջքին փաթաթում, հավանում է. «պրծեք, ասում է երկրախույզը, մեջք չափելու ժամանակ չի» - դարձյալ մի առիթ մեզանից սերվածի անբարյացակամությունը բացահայտելու. «ձնշումդ ինչի՞ է բարձրանում», ասում է երկրախույզը, և մեզանից սերվածը նենգորեն ժպտում է, ուրեմն վճռեց, որ ծեծելու է. վիթխարին այլ, իր դրամապանակից հանում վճարում է գոտու համար և խանութից ելնում՝ կանչելով մեզանից սերվածին՝ «Ռուբո, գնացի՛նք»:

Մենք Օսեփանց հալիվորից բաժանվում էինք, բայց մեր ոտը դեռ կախ էր, երևի թե ուզում էինք շուռ գալ մի երկու բան ասել: Գյուղամեջ իջնող ծանապարհին երևացին զուգված զարդարված Ալբերտն ու կինը. համերաշխ զույգ էր, այս աշխարհում ամեն ինչի մասին մեկ և նույն կարծիքի էր, կինը գոհ էր ամուսնու ամուսնական զորությունից, ամուսինն արժանապատվությամբ էր կրում իր միայն իրեն հայտնի արժանիքներն էլ, կնոջ չափավոր զուգսը, չափավոր գեղեցկությունն ու չափավոր փափկությունն էլ. ամուսինը կնոջ ժպիտը շարժող բան էր պատմում, երիտասարդ սիրահարների նման, թեկուզ թևանցուկ չէին, գալիս էին:

- Նայիր, է, նայիր ու սովորիր,- ասացինք,- ոտներդ սրա-նրա դռանը մաշեցիր ու խեղճ պառավիդ սիրտն էլ՝ հետը:

Կնոջը բարձրակրունկ էր հագցրել, ուսը տվեց նրան, նա

հենվեց, կոշիկը հանեց ու նորից հագավ, հետո խփեց ամուսնու թևին, այն թևին՝ որ երևի թե անպարկեշտ կատակ էր արել նրա լիքն ու ջահել մարմնի հետ, եկան հավասարվեցին մեզ, և ամուսինն այդտեղից տեսավ գյուղամիջի կռիվը՝ որ մենք չէինք տեսնում, աչքերը կայծկլտացին, «արա, տվին իրար, հասեք», ասաց ու վազեց, և երևաց, որ կռվից նրա մեջ հրձվանք է արթնանում:

Ծերունու բակից մենք ելանք գյուղամիջի ձանապարհ՝ ամուսնու ետևից կինն էր վազում, նրանցից դենը, գրասենյակի պատի տակ, երկրախույզը չորեքթաթվել էլնում էր, նրանից դենը՝ վիթխարին ու ընկերները տանում էին մեզանից սերվածին, որ նրանց ենթարկվում էր, բայց գնում էր ետ-ետ նայելով և կարող էր ամեն րոպե պոկվել ու ետ գալ:

- Դե լավ, լավ, հասկացանք: Իր ծեծվելու փաստը երկրախույզը հենց այդպես էլ ընդունեց՝ այսինքն որ իրեն խփել են և դա այդպես է:

Ժողովրդի մեջ ասել էին «Ռոստոմն եկավ, Ռոստոմը», մեզանից սերվածը իրեն տանողներից պոկվեց, մենակ, հպարտ ու կռվարար կանգնեց,

- Ռոստոմն ով է, ասաց:

Տեղ հասանք, «Ռոստոմը մենք ենք, մատաղ», - ասացինք, - ժողովուրդը քարացած նայում էր, «ծըլթ, ծըլթ, ծըլթ, - ասացինք, - քառասունհինգ թվից դեսը, քառասունհինգ թվի աշնան հարսանիքներից դեսը էս գյուղամեջը կռիվ չէր տեսել, դուք ո՞վ եք, մատաղ, որ էս խաղաղ գյուղը կռիվ եք բերում»:

Գործակատարը խանութից դուրս էր եկել, բազրիքին կռթնած նայում էր, ասաց.

- Էլ վերջ, էս գյուղը էլ խմիչք չի մտնի:

Երկրախույզը մոտոցիկլը գործարկեց, հրապարակում պատմեց, եկավ անցնելու գնալու, բայց մեզանից սերվածը նրա ձանապարհին կանգնած էր ու ձամփա չէր տալիս: Մենք բարկացանք, թափ առած գնացինք մի կողմ քաշեցինք, մոտոցիկլն անցավ, մենք մի պահ մեզ հագիվ զսպեցինք ու չխփեցինք այդ ջահել ցլիկին՝ ում զսպեց ըստ երևույթին վիթխարու ձեռքն ու ձայնը՝ «Ռո՛ւբո»: «Էս ամբողջի պատճառը դու ես, տիկին, ասացինք. էս կռիվների էլ, էն անօրինական շինության էլ, էս որ ժողովուրդը խառնվում է - ամբողջի»:

Ծիծաղով, կյանքով ու հմայքով լիքը՝ շան աղջիկը մեզ ձեռ առավ - մի տարօրինակ ձևով գլուխ տվեց ասաց.

- Բարև ձեզ: Եվ՝ ցլիկին. Ռո՛ւբո, գնացինք:

Կանանց առջև ըստ երևույթին դեռ չենք կարողանում հանգիստ կանգնել, ժպտացինք, մեր ժպիտը թաքցնելու համար շուռ եկանք - հին գրասենյակի ամբողջ երկար պատշգամբում շարված ժողովուրդը մեզ լուռ նայում էր: Մի ինչ-որ կասկած մեզ ստիպեց ետ նայել, և մեր տպավորությունը այդ ցլիկից՝ ավելի քան տհաճ էր, «ինչ անդուր լակոտ ես», մտածեցինք և բարձրացանք դեպի պատշգամբ. պատշգամբ հանող քարե սանդուղքն արդեն պատրաստի պատվանդան էր, կանգ առանք սանդուղքի բարձունքից ասացինք իշխանաբար.

- Ժողովուրդ եք, հավաքվել եք - մի երգից-ուրախությունից, մի զրույցից-պատմությունից, մի խաղից-տեսարանից... Նայողը նայի, փառավորվի ասի հայ ժողովուրդ է... Լակում ու գլուխներդ ծանր՝ կանգնում փըսսացնում եք... ինչքան էն լիքն ալրապարկի մեջ լույս կա՝ էնքան էլ ձեր մտքում ու սրտում:

Բազրիքի ամբողջ երկարությամբ շարված էին, պապանձվել լսում էին. մեր քրոջ զավակը միայն՝ մեզ նմանակողը,

պատշգամբի կենտրոնում էր, բայց նա էլ էր կանգ առել ու երևի նաև ազդվել. հացթուխը գլուխը մեզանից պահում էր, քանի որ հենց միայն ինքն էր հարբած, շիշը նրա ձեռքից ընկավ ներքև, «վայ, արա» ասաց, և ժողովուրդը ծիծաղեց:

Բարձրացանք պատշգամբ, մեր քրոջ զավակը՝ մեզ նմանակողը, հրապարակը մեր առջև ազատեց, բայց մենք պտույտի չգնացինք - մեր լրագրերը վերցրինք, այդտեղ հեռախոսի մոտ էլ հենվեցինք լուսամուտի գոգին և լրագրերը բացեցինք հավուր պատշաճի, այսինքն չէինք կարդում և առհասարակ չենք կարդում, մանավանդ կենտրոնական թերթերը՝ քանի որ ռուսերեն չգիտենք: Մենք իրենց չէինք նայում, բայց զգում էինք, որ իրենք մեզ նայում են. անձոռնին ժողովրդի մեջ մեզանից թաքնվում էր, հացթուխը իր շշի ետևից իջավ ներքև, Ալբերտի կինը գործակատարին ներս առուտրի տարավ: Մյուսները մեզ լուռ նայում էին, մեզ թվում էր մեզանից պատկառում էին և արդեն ինքներս էինք մեզանից պատկառում, և այդ ժամանակ մեզ նմանակողը ոչ թե բաց ծաղրով, այլ մի տեսակ ստուգիչ ծիծաղով ասաց.

- Գազեթդ շուռտված ես բռնել, ընկեր, թարս ես կարդում:

Անակնկալի եկանք, դրսի՝ իրենց կողմից թերթը նայեցինք, ասացինք.

- Նախ և առաջ՝ թարս չենք կարդում, երկրորդ՝ վաղի ժամանակ թե որ թարս էլ բռնած լինեինք՝ դու չէիր համարձակվի նկատել. չգիտենք եդ ինչ ենք արել՝ որ մեր հեղինակությունը քու աչքում խախտվել է: Զիու բերանն ո՞վ է կապել, գոռացինք:

Մեր քրոջ զավակը, այդ գործում քանի որ անպարտ էր, մեր գայրույթը անտեսեց, քրթմնջաց նույն ստուգիչ ծիծաղով.

- Քու ձիու գլուխը բռնե՞լ կլինի:

- Ձիու դունչը պողպատալարով ո՞րդ եք կապել, կրկնեցինք:

Մեր քրոջ զավակը հասկացավ, որ խոսքը հենց ձիու դնչի մասին է, «ձիո՞ւ», ասաց: Ալբերտի կինը խանութից ելավ, ամուսնուց փող վերցրեց, սա տվեց ցուցադիր հպարտությամբ, ետ խանութ մտավ և դուրս եկավ գնումների ծանրոցով. ամեն ինչը շատ լավ էլ դասավորված էր, բայց չէ՞ ժողովրդին պիտի ցույց տային իրենց կարգուկանոնավորությունը. մարդուկնիկ վերադասավորեցին «երեխեքի կոնֆետը», ժպտալով և ամուսնու թաքուն արած խուլիզանությունը սաստելով՝ երշիկը, ուսաշալը, հատկապես՝ օղիները:

Ժողովրդի մեջ ծիծաղ ընկավ. կարծեցինք մեզ վրա է կամ ամուսինների, բայց հարբած հացթուխի վրա էր. իր կոտրված շիշը գտել էր, շշով լախտի շրջան էր քաշում. քաշեց, գոտին հանեց դրեց, վրան կանգնեց՝ և պատրաստի լախտվոր էր, ասաց.

- Ինչ եք ծիծաղում, բա ի՞նքը չասավ լախտի քաշենք մտիկ անենք:

Մենք վերևը՝ ժողովրդի առաջ ձեռքներս մեր կրծքին խաչած.

- Ձիու դունչը կապել եք. լավ չի, տղերք,- ասացինք,- կապել ու ծիծաղում եք, լավ չի:

Սիրուն կնիկը կողքին, գնումները ձեռքներին, տրամադրությունը տոնական՝ Ալբերտն ասաց.

- Տո մեր դունչը դու որ կապել ես՝ լավ է՞:

- Անտառի վերաբերյալ՝ այո՛, ասացինք:

- Տո անտառի էլ, ամեն ինչի էլ, ասաց:

- Բայց ոտդ փախուստի մի պահիր, ասացինք:

- Բոլորովին, ասաց:

- Մենք քո դունչը անտառի առաջ կապած ենք պահելու,-
ասացինք,- որ թռռներդ գան տեսնեն ծառուծաղիկն ինչ է:

Սա բերանը լպստում էր, չէ՞ կնոջ մոտ ինքն անպատասխան
չէր մնալու, բայց ինքը դեռ չխոսած՝ մեր քրոջ զավակը՝ մեզ
նմանակողը, ժողովրդի միջից արեց մեր հերացվի՝ իր պապի
տնազը.

- Հա՛տ, նանը. անտառն իմն է:

Ծիծաղ էր բռնկվում, մեր ոտքը գետնին խփեցինք, «խիղճ
ունեցիր՝ ձենդ կտրիր», ասացինք:

Բոլորը լրջացան, կարծես թե ազդվում էին, և այդ ժամանակ
խանութից քարշ գալով ելավ ծանրականջ ծերունի պահակը,
մեզ տեսավ ու՝ միամիտ, անտեղյակ՝ «Ա-այտա, Ռոստոմ ջան,
էն անտեր հ-հավը ձուն էլլետ կ-կորցնում ա, գիդեմ ոչ կատու-
մատու կա՝ ուտում ա՞ թե ածում չի»: Էդ ի՜նչ ծիծաղ բռնկվեց,
նույնիսկ ինքներս չկարողացանք չժպտալ, գլխով արինք
ասացինք.

- Շատ բարի, կկռանանք հավաբունդ կնայենք:

- Ասեի,- ասաց,- թե կ-կատու-մատու ա՝ թ-թվանքի քաշեիր,
ձուն ուտում ա, ափսոս ա:

Գլխով արեցինք: Ալբերտը կնոջն ուղեկցեց ներքև, նրանից
բաժանվեց, հարբած հացթուխի առաջ՝ որ գոտու վրա կանգնած
էր՝ գնաց ղստպստաց, խաբեց, ետ ցատկեց, հրեց, գոտին
ոտքերի արանքից դուրս քաշեց ու վրա բերեց թիկունքին՝ որ
պաշտպանված էր մի սպիտակ խալաթով ու մի բարակ
շապիկով:

Լախտի դաժան հին խաղն այդպես բռնկվեց գյուղամիջում՝
զոհված տղերքի հպարտ հուշարձանի և վարչության հին,

գրեթե ավերակ շենքի հրապարակում: Շրջանը վերագծվեց, մեր քրոջ զավակի բեռնատարը հանվեց հրապարակից, հանդիսատես չունեինք, ընդամենը երեք հոգի՝ վիթխարին, ծանրականջ պահակը, անձոռնին՝ որ առհասարակ խաղերին անհաղորդ գոյություն էր: Բաժանվեցինք թիմերի. մեր կողքին կանգնեց գնդապետի երեխան. և մեր քրոջ զավակը՝ մեզ նմանակողը, նրան դիտողություն արեց. «Լավ չի, ընկեր գնդապետ, ուժեղի կողմն ես անցնում». երեխան ուզում էր մեր շարքից ելնել, բայց ուսը բռնեցինք ետ քաշեցինք, ասացինք. «Ասա՝ հոպարն ուժեղ է, բայց ապագան քոնն է». իր գոտու ետևից՝ որ նրա ձեռքից առավ բերեց Ալբերտը՝ եկավ նաև մեզանից սերվածը, ետևից՝ ընկերները. ինքը՝ Ալբերտը մեր շարքում կանգնեց, մեզանից սերվածն ընկերներով՝ մեզ նմանակողի. հարբած հացթուխը մեր կողմն անցավ, փոստատարը՝ մեր քրոջ զավակի. մեր շարքն ավարտվեց մեր քրոջ ծանր ու լուրջ մյուս զավակով, մեզ նմանակողի շարքը՝ ակումբավարով. մինչև ակումբավարի գալը գործակատարին կամ անձոռնուն ուզում էին խաղի մեջ քաշել՝ գործակատարը իր նման «այեե» արեց («Մինչև մի օգուտ չունենաս՝ տեղիցդ ժաժ չես գա» ասացին: «Ավել-պակաս քիչ խոսիր» ասաց), անձոռնին մի ձեռով հեծանիվը բռնած՝ մյուսով կառչեց պատշգամբի սյանը, և գործակատարը նրա գլխին խփեց. մենք մեր սապոգները հանելով և բաձկոնն ու սապոգները մի կողմ դնելով՝ կատակով, բայց և ոչ առանց վերաբերմունքի, վիթխարուն հրավիրեցինք. «Մադամ, դուք համեցեք». ուզում էին, խմբերը հավասարեցնելու համար, գնդապետի երեխային չխաղացնել՝ ինչը երեխային շատ կվիրավորեր, և ակումբից եկավ ակումբավարը. «Էն անտերը չաշխատեց»՝ իր խոսքն է հեռուստացույցի մասին.

«Դե փառք աստծու», ասացինք. «Ալլա Պուգաչովան երգելու էր»՝ իր խոսքն է. «Ես քու Պուգաչովայիդ», պատասխանեցին:

Թիմերը կազմուպատրաստ էին, վիճակ գցեցին, մեր թիմը ծեծվողն էր լինելու՝ եթե իհարկե թույլ տայինք, և այդտեղ մեր քրոջ զավակը՝ մեզ նմանակողը, մեր ոգևորված գլխին սառը ջուր մաղեց, երեխայի մեր նյարդերի հետ խաղաց մեր քրոջ զավակը. գոտին կապեց մի կողմ քաշվեց, ասաց.

- Ես չեմ խաղում: Մեծ աշխատավարձիս վրա՞ եմ ուրախացել, շքանշա՞ն եմ ստացել - ինչի՞ պիտի խաղայի:

Այնպե՛ս հիասթափվեցինք, այնպե՛ս տխրեցինք. նայեցինք տեսանք արձակ վերնաշապիկով ու սպիտակ գուլպաներով հիմարի նման կանգնած ենք:

- Ի՞նչ է, կամավոր չի՞, ասաց:

- Ձեզանից կամավոր մի ուրախություն, մի թատրոն, մի գեղեցկություն, այսինքն որ մի որևիցե միտք արտահայտեք... և ետ քաշվեցինք հագնվելու:

- Վիճակդ նայիր, ծիծաղեց:

Նայեցինք, ասացինք.

- Միշտ էլ էս ենք եղել, մատաղ, մեր վիճակը նոր չի էս:

- Քու նազուկ չարը տանենք, ասաց: Դե լավ, կատակ էինք անում:

Երբ բոլորն իրենց տեղերը շարվել էին և ազատ էր միայն մեր պաշտպանելիք գոտին, մենք մի տեսակ կողմնակիորեն մտանք շրջանի մեջ: Մեր դեմ մեզանից սերվածի ընկերներից մեկն էր, բայց մեր քրոջ զավակը նրան կարգադրեց. «Դրանից ձեռ քաշի, արի էստեղ». գնդապետի երեխայի վրա էին պտտվում, բայց Ալբերտը նրա հարևանն էր, պաշտպանում էր, բացի այդ էլ՝ երեխան ինքն էր լավ պաշտպանվում. դավադիր, լարված

լռություն էր. մեզանից սերվածը հայտնվեց մեր դեմ, ոչ մենք ու ոչ էլ ինքը չգիտեինք որ հերուտղա ենք, բայց բոլորն էլ ահա գիտեին - իրենց խաղը թողած՝ մեր մենամարտին էին հետևում. փորձեց գոտին տանել մեր ոտքերի արանքից - փորձեցինք ծոծրակի վրա շապիկը բռնել, չհաջողվեց. նորից - նորից. դարձյալ - դարձյալ. մյուսների անշարժ լռությունը մեզ կասկածելի թվաց, մեր ուսի վրայով ետ նայեցինք և տղան մեր անուշադրությունից քիչ էր մնում օգտվեր, բայց շապիկը մեր ձեռքին թողեց. «Էդ արջից ձեռքաշեք, չէ»՝ մեզ նմանակողի խոսքն է. արջը՝ մենք, շապիկը գցեց շրջանի մեջտեղը, անդրդվելի կանգնեց. ընկերը եկավ մեզանից սերվածին օգնելու, դա հուզիչ էր, բայց ահա նրանց մյուս ընկերը շրջանի մյուս կողմից՝ մեր քրոջ վարորդ ծանրամեծ զավակի մոտից տվեց կտրեց շրջանը՝ տանելով և՛ ընկերոջ շապիկը, և՛ գնդապետի երեխայի գոտին. այդ գոտիով զինված՝ երեք ընկերը եկան մեզ վրա. գնդապետի երեխայի բարակ մեջքը լախտ կերավ, ասացինք՝ «Բա՛, գյուղն էդ է» և ետ՝ մեր թիկունք մղեցինք. «Դրանից ձեռքաշեք», ասաց մեզ նմանակողը, հրեց փռեց հացթուխին, գոտին խլեց, խփեց քշեց շրջանի մեջտեղը և ինքը, եղբորը շրջանցելով (քանի որ խռով էին) եկավ մեզ վրա. եկավ քաղաքաբնականերին դենն արեց, ինքը մի երկու անգամ մեր ոտքերին-գոտուն լախտ քաշեց ու ձեռքի լախտը տանուլ տվեց՝ խլեցինք, ինքը պտտվեց գնաց Ալբերտի դեմ չարչարվելու, մեր խլած լախտը մենք երեխայի հետ ուղարկեցինք Ալբերտին. Ալբերտի մոտով ինքը խփվեց, երեխայից լախտ կերավ, երեխայի քացուց խուսափեց և ուսով՝ գլորվող քարի նման՝ բախվեց մեր ծանր հետույքին. գծից չորեքթաթ դուրս ընկանք ու մեր թիկունքին լախտ կերանք. մեր պաշտպանած գոտին տարել էին, մեզ նմանակողի ձեռքին էր,

խփեց, զոհված տղերքի հուշարձանը նկատի առնելով ասաց՝ «Քու թայերը երկաթի արձան են դառել»։ Նահանջեցինք շրջան, ասացինք՝ «Կռիվը որ սկսվեց՝ մենք էս երեխայից փոքր էինք»։ «Տո ո՞նց էիր փոքր որ - որ հարսին ու աղջկան խնդրեցինք՝ մենք Ռոստոմինն ենք ասաց» ու խփեց. «Դե՛, շան քվեր տղա», սաստեցինք քացի նետելու հետ - մեր ոտքը գրկեց ու շրջանից դուրս քաշեց, «տվեք, արա» ասաց. ազատվեցինք, քաշվեցինք շրջան, գնացինք օգնելու վարորդին՝ որ քաղաքաբնականներից հիմա նեղվում էր. մեզ հետ եկավ նաև մեզ նմանակողը, բայց դեմը եղբայրն էր, ում հետ խռով էին, և ինքն ուրիշ տեղ գնաց. մեր ու վարորդի դեմ հիմա քաղաքաբնականներն ու մեզանից սերվածն էին. «քեզ բան պտեմ ասիլ», ասաց վարորդը, բայց տաքացած խաղում էինք, ուշադրության չառանք. և դարձյալ նույն դավադիր, լարված լռությունը, դարձյալ միայն տնքոց, լախտի շաչոց ու ոտքերի քստքստոց. մեզանից սերվածի գոտին մենք խլեցինք, բայց մերոնցից էլ գնդապետի երեխան կորցրեց գոտին. կատվի պես կախվել էր, չէր տալիս, բայց կշիռ չուներ, գծից հանեցին, գոտին թողեց ու ետ փախավ:

Շետո արդեն՝ գետնին գոտի չկար, երկու գոտի մերոնց՝ ներսիններիս ձեռքին էր, մյուսները՝ նրանց, և մի ամբողջ հավիտենություն մեզ մոռացած ու ամեն ինչ մոռացած իրար դաղում էինք, և ավերակ ամբողջ գյուղի վրա մեր խաղի ծիչերը, վեճերը, շառաչն ու տնքոցներն էին:

Երբ դադրած ու երջանիկ մեզ կարգի էինք բերում, ուշքի եկանք տեսանք դեկավար կոչված հովրտեցի խեղկատակը մեքենայով եկել կանգ է առել, սուտ կշտամբանքով՝ քանի որ դեկավարություն էր ու պարտավոր էր, և իրապես մուրացկանորեն՝ քանի որ մուրացկան էր և եկել էր հերթական

խնդրանքի, մեզ նայում է: Կարծեցինք երազ է, մեր գործին կացանք, բայց երազ չէր. իր թիզուկես հասակն ու շարժումները շատ ուժեղ հարգելով, ինքը իրեն շատ ուժեղ կարևորելով, իր թիզուկես ներքևից ձեռքը մեզ նմանակողի ուսին գցելով (և սա պարտավոր էր իր երկար հասակը հարմարեցնել դեկավարությանը) եկավ դեպի մեզ: Մեր մի սապոգը մենք հագել էինք, մյուս ոտքը դեռ սպիտակ գուլպայով էր, ինչպես որ գայլը որս տեսնի՝ մեր աչքերը վառվեցին, թո՛ւ, արեցինք, և որպեսզի ստիպված չլինենք իր կողքին թեկուզ մեր գործով մի վայրկյան ավելի մնալ, մյուս սապոգը վերցրինք ու հեռացանք. մատը մեր ետևից տնկեց. շուռ եկանք, նորից թքեցինք, կռացանք մեր սապոգը հագնելու:

- Խոտհավաքը կազմակերպելուդ համար մենք քեզ շնորհակալություն ենք բերել,- ասաց,- դու կանգնում թքում ես. չեղավ, է, այ ընկեր:

- Խոտհավաքը մենք չենք կազմակերպել, դու էլ ուրիշ բանի ես եկել,- ասացինք,- բանիդ կաց, էս անտեր ավերակում քեզ խանգարող չկա:

Մատը մեր ետևից տնկեց, ապա տեղնուտեղը իսկապես «բանին կացավ»։ Խեղկատակորեն լուրջ, այսինքն ինչպես որ խեղկատակները կարող են լուրջ լինել, մեր քրոջ զավակին՝ մեզ նմանակողին դեմառդեմ կանգնեց, ասաց.

- Մի գործի համար մի որձ է պետք, ո՞վ ունի:

Մեր քրոջ զավակը չգիտեր, պռոշ արեց, մտածեց, երևի թե ուզեց խուսափել, ասաց.

- Մենք ինքներս չունենք: Ալբերտը կգիտենա: Շուռ եկավ ժողովրդին, Ալբերտ, կանչեց:

- Բայց գործը գուցե քեզ համար է, խեղկատակն ասաց,

ինչո՞ւ ես վռագ «չէ» ասում: Եվ ղեկավարի ու տնեցու նման ձեռքը դրեց կրծքին:

26

Մեր դեմքից թույն էր թափում: Մտանք տուն, երգող հեռուստացույցն անջատեցինք, պայծառ վառվող ջահերը նվազեցրինք, տոնական, մարելիք ուրիշ ինչ կար՝ չգտանք, եկանք ծաշի դեմ վեր ընկանք ու ափսեն ետ հրեցինք:

- Միգուցե, ասացինք վախեցած մեր տիկնոջը, դռները փակում ու պար էլ ես գալիս, հա՞:

Վախեցած, խեղճուկրակ, նիհար՝ ուզեց բան ասել. Ձին... ասաց:

- Ի՞նչ ձի, ասացինք: Ձին չէ՝ օրիորդը, որ թաշկինակն առած քոչարու գլուխն է անցել, ֆրոնտ նահատակ է ծամփում: Տո իշի նահատակ, որ գիտեիր զավակատունդ ավիրել ես՝ ոտդ ո՞նց էիր էս շեմքից ներս դնում: Ռոստոմի խիղճը մեծ է, հա՞, ամեն մի հիմար մերժվածի պաշտպան կկանգնի, հա՞, թե՞ Ռոստոմն արժանի չի որ շարունակվի, ցամաք մեջքն էլ է նրան շատ ու շատ: Ոնց որ հիմա մենք ենք զգվելի՝ դու ամեն օր ես մեր առաջ զգվելի, քու ողորմելի արարքը ամեն ժամ է մեր առաջ:

Լաց էր լինում:

- Դու քու ո՞ր խղճով ես մեր երեսին նայում, երեսդ շուռ տուր,- ասացինք,- և շուռ եկավ ու՝ փոքր-մոքր, երեխայի պես հնազանդ՝ գնաց անկյուն: Լաց էր լինում, ձայնը գալիս էր: Ձե՛նդ, ասացինք, և ձայնը կուլ տվեց, միայն ուսերն էին ցնցվում: Էդ է, ասացինք, նկարս էլ վերնդ կկպցնես ու ամեն օր կաղոթես: Շանցագործն իրենք լինեն ու կարծը՝ Ռոստոմի լեզուն, ու տեսեք ում պատճառով - էս ողորմելու:

Քնել էինք չէինք քնել՝ արթնացանք. համարձակվել թախտի եզրին նստել, ոտքերը տակն էր քաշել, փայտե սնարի վրա գլուխը ձեռքերին դրած քնել էր: Նիհար, փոքր-մոքր, կծկված՝ ուղղակի մի բուռ երեխա էր: Մեր շորերը թևատակեցինք ու տնից սուսուփուս դուրս եկանք: Պատշգամբում հագնվեցինք, սապոգները՝ որ դռան տակ էին, վերցրինք պատշգամբից իջանք. այդտեղ այգուց ելնելուց առաջ սապոգները մեր ոտքերին քաշեցինք և այգուց ելանք: Խաղաղ լուսնակ գիշեր էր, բոլոր տները նայում էին մութ ակնախոռոչներով, և մենք սրսփացինք ու մեր երեսի խաչը հանեցինք: Իջել էինք, մեր այգու սահմանն արդեն անցնում էինք, երբ զգացինք՝ որ այգու ստվերներում թաքնվելով մեր տիկինը մեզ հետևում է. կանգ առանք՝ և ինքը կանգ առավ, քայլեցինք՝ և ինքը ստվերից ստվեր անցավ: Կանգ առանք, առանց ետ նայելու ֆշշացինք. «Ուրու չես, մարդ ես, չքվիր. որտեղ դու՝ էտեղ մի վտանգ ու վնաս. մարդ չես՝ ուղղակի լալկան կնկա պատկեր ես»:

Դա ծանր, սպանիչ, հիացում շարժող աշխատանք էր. կաղնու հսկայական գերանը Ալբերտը բեռնել էր համարիոր ինքնաշեն, ողորմելի կցասայլին, քաշում էր կաթան ցիստեռնավոր ավտոմեքենայով. կցասայլը գերանի տակ ուղղակի ջնջխվում էր, անգամ չնչին վերելքում շարժիչը ուղղակի պայթում էր. ինքը մեքենայի հետ մեռնում, նրա զորելու հետ կենդանանում էր, «պռուգի ջան»՝ գովում էր, ինչպես որ հնում լծկան գոմեշին էին գովում. մի ոտն անընդհատ ոտնասանդղին՝ համարյա թե խցիկ չէր մտնում, ցիստեռնի տակով ու գլխով ետ՝ գերանին էր նայում. աննշան քարաբեկորն անգամ արգելք էր դառնում, իջնում, կարճ լույսի սահմաններում ծանապարհը քարից մաքրում, ետ դառնում կցասայլը զննում ու

գալիս կառչում էր ղեկին ու ոտնահարթակին. ահա և գյուղի առաջին տները՝ անլույս, ավերակ, լուռ տները. իջավ կցասայլի տակից քար հեռացրեց, այնուամենայնիվ այնքան հայքրիստոնյա էր՝ որ միզեց թիկունքը մեքենային արած, «Հիսուս Քրիստոս, շնչաց, մի օգնական չունենք», ետ եկավ տեսավ մենք խցիկում նստած ենք, իրեն չենք նայում - նայում ենք ուղիղ առաջ: Հուսահատ ծիծաղեց ասաց. «Երազդ տեսել էի»: Չպատասխանեցինք: Բարձրացավ, ղեկին նստեց ու քարացավ, ուժեղ հուսահատված էր: «Քշիր,- ասացինք,- քշիր գնանք»: Մտքերի հետ էր, ելք էր փնտրում, «հը՞» հարցրեց: «Էս ո՞նց ես բարձել», ասացինք: «Բարձել եմ», արձագանքեց, բայց հազիվ թե մեզ էր պատասխանում: «Թե՞ օգնական ես ունեցել», ասացինք: Չպատասխանեց. մեզ չէր լսում, մտքերի հետ էր, ելք էր փնտրում: Երեսը դանդաղ մեզ դարձրեց, բայց մեզ չէր տեսնում, ուշքի եկավ ասաց. «Օ՛ֆ, խազեին, հոգնեցրիր»: «Քշիր,- ասացինք,- քշիր գնանք»:

Խաչմերուկն անցնելիս մենք հատկապես լռեցինք, հատկապես ջանացինք անվերաբերմունք մնալ, անցնելուց հետո ասացինք. «Էս ինչի՞ ձախ չգնացիր, միգուցե թույլ էինք տալիս»: Ընկճված էր, ասաց. «Քեզանից էդքան մարդկայնությո՞ւն»:

Զառիվարելուց առաջ արգելակեց ասաց. «Իջիր, խազեին, լավ չի պահում, կփախչի ձորը կընկնի՝ քու երկիրը պատկերիցդ կգրկվի»: Ասացինք. «Էդ սխալ ես կարծում, թե մեր կյանքը ուրախություն է»: Մտացրիվ, մեզ սպանելու միտքը կարծես թե ընդունելով ու վանելով, ժպտաց ասաց. «Իջիր, իջիր»: Մեր տեղը պինդ նստեցինք, չիջանք: Վճռեց ասաց. «Դե քու հաստ գլուխդ էլ...»: Դա վայրէջք չէր ու մահ էր - մի մետրի գնացք ու

արգելակում, մի վայրկյանի գնացք ու արգելակում, անընդհատ, երկուսս էլ մեռանք ու ետ եկանք: Զառիթափը վերջացավ, ասացինք. «Երկիրը Ռոստոմինը չի, քոնն է, երկրում քո երեխեքն են ապրելու, Ռոստոմի կյանքն իրենով վերջանում է, Ռոստոմը շարունակություն չունի»: Շանգիստ, ցածր խոսում էինք, տեսնողը կասեր զրուցում են, չէր զգա՝ որ երկուսիս ձեռքին էլ կարծես բաց դանակ կա: Ասաց. «Անտեր հարսներիս ձկռացնելու ժամանակդ անցըրել ու քրիստոս ես դարձել»: «Չենք հրաժարվում, ժամանակին էդպես բան եղել է», ասացինք: «Դե հիմի էլ մեր ժամանակն է», վրա բերեց: «Դու դրա կարիքը չունես,- ասացինք,- քու կնիկը քեզ երեք տղա ու մի աղջիկ է տվել. մերը չէր տալիս, մենք չէինք կարող թևից բռնել ու դուրս գցել»: «Ու մեջքիդ զորությունը անտերի վրա փորձեցիր», ասաց: «Փորձեցինք, էդ է», ասացինք: «Աստված տար իմը լինե՞ր՝ կացնի բնքով գլխիդ գայի», ասաց: Ասացինք. «Ոչ ամուսինը գիտի, ոչ էլ ինքը երեխան... ձեր սուրբ պարտքը լինի տեղեկացնեք»:

Շասանք գյուղամեջ: Մի րոպե թե մի երկու, այնքան էլ աղերսանքի չտրվելով, հույսը մեր կարեկցանքին դրած՝ մեզ նայում էր: Խղձալու-չխղձալու մեր վերաբերմունքը չմատնեցինք. իջանք, մեր կոպերը ծանրորեն վար բերինք, ձեռքով ցույց տվեցինք՝ թե մեքենան ինչպես է քաշելու հին գրասենյակի հրապարակ: Մեր խղձի վրա հատուկ հույս չէր դնում, «ահ, արեց, քու հաստ գլուխն էլ», գերանը քաշեց հրապարակ: Վիթխարի գերան էր, մեր աչքերի առջևով գնում ու գնում ու չէր վերջանում:

Խանութի խուլ պահակին իրիկունն ինչպես բազրիքին հենված թողել էինք՝ այդպես էլ կռթնած էր, ասաց.

- Այտա, էդ պ-պըտի որ էն կրի տ-տիրոջը լիներ, էդ խի՞ բ-բ-բերիք էստեղ:

- Բերել ենք քու պահակությանը հանձնենք, նետեցինք:

- Էդ՝ հին գե-գեղամեջը էյետ հ-հավաքում ե՞ք, ասաց:

Երանի մեզ, «հին գեղամեջը էյետ հավաքում ենք», տխուր ժպտացինք: Մեքենայից իջավ, տեսավ գերանը չափերով հիացած դիտում ենք:

- Ճիշտ՝ էս ո՞նց ես բարձել, ասացինք:

Մեր վճռին էր սպասում:

- Է, հետո՞, հարցրեց:

- Իբր ես գիտե՞մ,- ասացինք,- և իսկապես չգիտեինք մեր անելիքը:

- Ափսոս էլ է իհարկե, բայց էս է, հը՞, խազեին,- ասաց,- և դա ներման խնդրանքի նման մի բան էր:

- Արի,- ասացինք,- բարձրացանք պատշգամբ: Մեր ետևից եկավ: Լուսամուտի փեղկերը հրեցինք, բացեցինք ներս մտանք, լույսը վառեցինք, արի, ասացինք: Ճկուն ու թեթև՝ լուսամուտի գոգը ելավ ու ներս մտավ ոչ միանգամից - մտնելիք տեղը կատվի նման նախ մի զննեց. գողը նույնիսկ այդտեղ՝ այդ հասարակ արարքի՝ ներս-մտնելու մեջ երևաց: Մենք հին գրասենյակը՝ մեր սրբատեղին, դիտում էինք - պատի թերթը, պատվո տախտակը: Պահակը եկավ լուսամուտի մեջ կռթնեց, ասաց.

- Էս՝ գիշերով ժո-ժողով ե՞ք անում:

Փեղկերը վրա բերինք, ասացինք.

- Նայիր, լավ նայիր:

Նայում էր, ասաց.

- Նայում եմ:

- Երեսուն թվից առ այսօր,- ասացինք,- գողություն ասած բանը էս երկրում չի պատահել: Եկանք նստեցինք հին նախագահական տեղը: Ներողություն,- ասացինք,- մի դեպք եղել է. Բերբերանց Սարոն ղազախեցու ցուլը անտառ էր քաշել կապել. թոկից ձանաչեցին, ու գնաց տուգանային զորքի մեջ կորավ խեղճ երեխան, այսինքն տասնվեց-տասնյոթ տարեկան էր: Երեսուն թվից առ այսօր էդ մի դեպքն է եղել: Բա նրանք էլ էին մարդ, մենք ու դուք է՞լ: Լռեցինք, հետո շարունակեցինք. Իրիկունները որ հավաքվում էին՝ հերդ այ էնտեղ էր նստում, Անդրոյի կողքին: Նրանից դեսը Ավագն էր, դեսը՝ զույգ Ակոփը, Աշխարբեկը, Սիմոնը, Ղարիբը...

- Էդտե՞ղ ով էր նստում, քու տեղը, ասաց:

- Մենք անթերի չենք,- ասացինք,- բայց էս տեղի արժանին առայժմ մենք ենք. թող մեզանից արժանավորը գա՝ մենք վեր ենք կենում:

- Օ՛ֆ, խազեին, ձանձրացավ: Որ իմանաս ոնց եմ հոգնած: Ի՞նչ ես ասում, պրծիր:

Վեր կացանք, լույսը մարեցինք, գլխով ասացինք «դուրս արի», ինքներս դուրս եկանք: Մեր առջևը գցած՝ իջեցրինք, քշեցինք նկուղի դուռը: Բանալին շեմքի տակից հանեցինք, չարչարվեցինք բացել կախովի ժանգոտ կողպեքը: Չէր բացվում, չբացվեց: Ինքը սյունին հենված զզվանքով մեզ էր նայում: Ասացինք.

- Մատներդ ձարտար են, արի բացիր: Բանտարկում ենք, ասացինք. էս երկրում պիտի կարգ լինի՞ թե չէ:

Ուսով խփեցինք՝ դուռը տեղահանվեց ներս ընկավ և մենք էլ հետը: Մեզ թափ տալով ելանք - մեր ձախորդության վրա ինքը չէր ծիծաղում, զզվանքով նայում ու ձանձրանում էր: Նորից

գերանին դարձանք.

- Ճիշտ՝ էս ո՞նց ես բարձել:

Գերանի տակ ժամանակավոր ոտնակներ էր դրել՝ որպեսզի չգլորվի: Գնացինք կացինը խցից բերեցինք, երկու հարվածով ոտնակներն իրենց տեղերից թռցրինք:

- Մարդ եղիր,- ասաց,- մարդ:

Տաքությունն ու խելագարությունը մեզ կալել էին, կացինը շարտեցինք, կռացանք կցասայլի անիվի խցանը բացեցինք՝ օդը շեշտակիորեն դուրս մղվեց: Մարդ եղիր, լսեցինք, անտառը մենակ ձերը չի: Մեր ուսի վրայով տեսանք, որ կռացել կացինը վերցնում է, կարծես տեսանք նաև մեր տիկնոջ պատկերը, որ մատները բերանն առած առաջանում էր, կռացած գնացինք դեպի մյուս անվաղողը, թեքված սայլակից գերանը սահում թե գլորվում էր, էլ բան չենք հիշում:

Մատուռի սեղանին՝ սև շալով խանձարուրած երեխա էինք իբր թե, յափնջավոր մեր հերացուն կռանում էր մեզ վերցնելու, բայց իբր թե արդեն այսօրվա Ռոստոմն էինք, ծանրանում մեր հերացվի ձեռքերից կախկիսվում էինք, չէր կարողանում մեզ քաշել ձիու վրա և խեղձը հուսահատ ծիծաղում ասում էր. «Մարդու վրա էն է բեռն էիր ու բեռն ես»:

Մենք բեռ էինք դարձել ուռի չափ բարակ մեր տիկնոջ ու նույնքան նիհար Ալբերտի վրա - մեզ քաշում էին մեքենայի խցիկ ու չէին զորում, չէին կարողանում:

- Այտա, էդ կ-կացինը գլխին դ-դիպա՞վ, ասում ու վերևից օգնելու էր քարշ գալիս պահակը:

Ուղղակի մեռնելով՝ Ալբերտը վերևից մեզ խցիկ քաշեց, նրան օգնելով՝ մեր տիկինը մեր մարմնի հետ մտավ խցիկ ու նստարանին մեզ նստած պահեց, ինքն Ալբերտը իջավ, կացնի

բնքով խփեց հանեց մեքենայի ու սայլի կցանը, հեռատեսորեն՝ կացինը գցեց հուշարձանի ծաղկանոց, եկավ նստեց դեկին: Երկու կողմի վրա մեր ծանր մարմինը ձնշում էր նրանց, մեր ու մետաղի նեղվածքում նրանք ուղղակի ջարդվում էին, բայց ահա մեզ թվում էր, թե մեզ են ձնշում:

Իբր թե հին պատանին էինք և հին օրերում կրծքահար ծյունը ջահել գայլի նման ձղելով քաշում էինք կանանց խոտի քարավանը, մեր բեռն ուղղակի ծիաբեռ էր, բայց քաշում ու խեղդվում էինք, ծյունը ձղած գնում ու խեղդվում էինք, հետո զառիվերին դեմ ընկանք, բեռը մեր գլուխը ձնշեց, բերանքսիվայր՝ ընկանք խոտի բեռան տակ և չէինք կարողանում ելնել, անասունի պես չորեքթաթվում ու դարձյալ ընկնում էինք և դարձյալ չորեքթաթվում և դարձյալ ընկնում էինք և բեռը մեզ հաղթեց, հիմա նրա տակ չէինք էլ շարժվում, բեռն անշարժ էր, և մի կնոջ ու մի տղամարդու ծայն մեր գլխին խոսում էին:

- Ախր մեղավորն ինքն է, շատ է մեղավոր, ասում էր Ալբերտի ծայնը, կարծում է մենակ ինքն է:

- Աշխարքում էլ բան չունի, ասում էր մեր կնոջ ծայնը. մի ձի է ու մի ծառ:

- Բա էլ ինչի՞ եմ էստեղ ապրում՝ որ անտառից չպիտի օգտվեմ, ասում էր Ալբերտի ծայնը:

Զոհված տղերքի արձանի տեղը պատվանդանին հիմա իբր մենք էինք, մեզ բրոնզում էին, մետաղը մեզ կաշկանդում էր, մենք տնքում, ձգնում ու ազատվել չէինք զորում մետաղի գերությունից - իբր թե հանձնվում ու արձանանում էինք և մեր մասին խոսում էին.

- Շիմի էլ տեսնում ես հարգդ պահում թաքուն եմ տանում՝

չտեսնելու տուր, գիշերվա կեսին ի՞նչ ես...

- Չէ, ի վիճակի չի, առարկում էր մեր տիկնոջ ծայնը. կարելի չի, թող չի անի:

- Դե թող չի անի՝ էս է, ասում էր Ալբերտի ծայնը:

- Ունևորի առաջ կարծում է իմ հաճույքի համար եմ ծառայության կանգնել, գանգատվում էր Ալբերտի ծայնը. ո՞ր շանորդին կուզենա իրա երկիրը թշնամու ձեռք տա. ծերը ծերին զոռով եմ հասցնում. փող է, բերանդ է խցկում, դե մերժիր. դու մերժես՝ ուրիշ էնքան ցանկացող կա՛մ:

Մեր հպարտ, մռայլ արծանը նրանց խեղճ գանգատների առաջ անտարբեր էր: Մեր տիկինը մեր պատվանդանին, իբր, ծաղիկ էր դրել ու կորված խուլ հեկեկում էր: Լսեցինք, Ալբերտի ծայնն ասաց.

- Ոնց որ ուշքի է գալիս:

Մեր շաղված, պղտոր աչքերը բացվեցին, նայեցին, անիմաստ և ծանրորեն դարձյալ փակվեցին, և նրանց գանգատների ու վշտի առջև մենք նույնքան էինք անտարբեր, ինչքան մեր արծանը:

- Որ զարթնեց տեսավ Հովիտ է՝ վայ մեզ: Պիտի ասենք հիվանդանոցի ավտոն է տարել, ասում էր մեր կնոջ ծայնը:

- Կյանքը թանկ է, շնորհակալ կլինի, ասում էր Ալբերտի ծայնը:

- Հովիտը հատուկ հանգամանք է, անոշ, ասում էր մեր կնոջ ծայնը, երեխա ժամանակ երևան էլ է եղել, Թիֆլիս էլ - ոտով մի ժամվա ծամփա է՝ մի անգամ Հովիտ չի մտել:

Իբր, մենք էինք ու երեխայի պես խանձարուրած էինք, ճգնում էինք կապերը քանդել ու չէինք զորում: Զգացինք, որ մեր թևատակերից մեզ գրկեցին, որ մեզ պառկեցրին, որ Ալբերտի ու

մեր կնոջ ծայները փոխարինվեցին ուրիշ երկու կնոջ ու մի տղամարդու ծայնով.

- Վույ, բալեդ մեռնի, ինչ էլ ծանր է, ասաց կանացի մի ծայն:

- Էն որ ուզում էիր քեզ ուզի՝ չգիտեի՞ր որ ծանր է, ասաց մի ուրիշ կնոջ ծայն:

- Օգնիր, արա, ի՞նչ ես մոլորվել, ասաց տղամարդու ծայնը: Ծան տղա, ուրիշներին կխտար ես տանում, բժշկիդ խո՞զ:

Մեր վերնաշապիկը քաշեցին հանեցին, սպիտակ շապիկով, գալիֆեով ու սապոգներով հիմա պատգարակին պառկած էինք հիվանդանոցի ընդունարանում, մեր աչքերը բացեցինք, բայց ոչինչ չէինք հասկանում: Բուժքույրերը մեր սապոգները քաշում էին՝ դուրս չէին գալիս:

- Աչքերը բացեց, ընկեր Ստեփանյան, ասացին բուժքույրերը, բացել նայում է:

Բազմոցին թեք ընկած բժիշկը.

- Նշանակություն չունի:

Մեր վիճա՞կը չէր ծանր, ուրիշների ծանր վիճակների առջև բժի՞շկն էր ցինիկորեն անտարբեր, մեր խեղձ, ողորմելի համա-գյուղացուն ուղղակի խեղդեց.

- Որ բան ես խոստանում՝ ժամանակին ինչի՞ չես անում, այ ընկեր:

Դռան տակ ուզվոր մուրացկանի նման կանգնած՝ ձմռթվեց խեղձ տղան, ձմռթվեց. «Ինչքան կարենում անում ենք, բայց դե մեր տեղն էլ չի հեշտ, բժիշկ»:

- Ինչո՞վ ես խփել՝ կացնո՞վ, բազմոցից ելավ բժիշկը, մեր դեմքը բռնեց ու աչքերը զննեց: Ը՞ր, կացնո՞վ ասում ես: Խեղձ տղան դռան տակ ուղղակի մեռնում էր, ինքն այնինչ հանգիստ իր բանին էր - մեր սապոգների ձտքերը վերից վար դանակով

ձղեց՝ քաշել հանելն արդեն թողնելով աղջիկներին, գալիֆեի նեղվածքը նույնպես ձղեց վարից վեր՝ ծաղրի տալով. Ընկեր Ստալինի ժամանակ հագել ու հագից էլ չի հանել: Ըն՞, ասում ես կացնո՞վ խփեցինք:

Խեղձ տղային աչքի առջև, թեկուզ և ծաղրով, զրպարտում էին, ինքը մեր տիկինը կենդանի վկա էր՝ որ դա չոր զրպարտանք է և այդուհանդերձ կանգնել չէր ժխտում, չէր ասում զրպարտում ես:

- Դե լավ, բժիշկն էր, դուք ձեններդ կտրած էդպես կացեք, ինքը հետո կպատմի: Գիտեք, չէ՞, որ մեռելները լսում ու միլիցիային մանրամասն զեկուցում են:

Բայց մենք իսկապես լսում էինք. իբր թե՝ մաքուր, լիքը գետնի վար այդպես սպիտակ շորերով էլ լող էինք տալիս և լսում էինք բժշկի հիմարախոսությունները. գետափի մաքուր խոտուծաղկին իբր թե սպիտակ շատ շապիկներ էին փռած, Մարոյի աղջնակը գետափն ի վար վազում էր ծաղիկների միջով. մենք լող էինք տալիս, ինքը վազում էր: Միևնույն ժամանակ մենք հասկանում էինք, որ դա երազ է ու զառացանք, որ մենք անկենդան բռնի պես ընկած ենք այստեղ՝ հիվանդանոցի ընդունարանում, որ մեզ ուզում են ներարկեն: Հիվանդանոցային քարտ էին լրացնում:

- Ռոստոմ, պատասխանում էր մեր կինը: Սարգսյան, ասում էր մեր կինը: Սարգսյան Ռոստոմ: Տիգրանի, ասում էր մեր կինը: Սարգսյան Ռոստոմ Տիգրանի: Քսանյոթ:

Բժիշկը ներարկման շիժուկ էր պատրաստում, ասաց.

- Էդ ո՞նց է Սարգսյան՝ որ Վաթնանց Եգորի տղեն է - Վաթինյան:

- Չէ, անոշ, խնդրելով առարկեց մեր տիկինը, Սարգսյան. թե

որ Սարգսյան չպիտի լինի՝ Մամիկոնյան, Ռոստոմ Մամիկոնյան: Ես երկիրը հին հնում, ասում է, Մամիկոնյան իշխաններինն է եղել, ինքը Մամիկոնյան է ստորագրում:

- Տես, է, հեգնեց բժիշկը, Վաթնանց Եգորից Մամիկոնյան իշխաններ են առաջանում:

«Ես չաչանակը մեզ հիմա կսպանի ու կմոլորվի, նեղվում էինք մենք, ջանում ելնել մեր միջից և չէինք զորում, չէինք զորում: Ես հարբեցող հիմարը մեզ հիմա կսպանի ու մեղքը էն ողորմելու վրա կընկնի»:

- Բժիշկ, ետ է գալիս, ասաց մյուս բուժքույրը:

- Գիտե՞ք ինքը հիմա ինչ բանի է. մաքուր ջրեր է գտել ու լող է տալիս: Մեզ վրա հակվող բժիշկն էր: Ռ՛ր, ախպերացու:

Երբ մեր արմնկածալը սպիրտով շփված էր և բժիշկը հիմա պիտի ներարկեր, խելացի, փորձված, տարիքոտ բուժքույրը՝ մեր քարտը լրացնողը, «Բժիշկ,- ասաց,- միգուցե հիվանդություն ունի»:

- Առայսօր մի տեղը մի անգամ ցաված չկա, ասաց մեր տիկինը:

- Վաթնանք ընկնավորություն ունեն, բժիշկ: Նույն բուժքույրն էր:

- Շանգուցյալը, պատահաբար, ասում եք, ընկնավոր չէր, չէ՞, բժիշկն էր: Մեր տիկինն ասաց «չէ», Ալբերտն ասաց «ունի», մեր տիկինն ասաց՝ «Գյուղերի միացման կռվի վրա մի անգամ պատահել է, այսինքն որ ուզում էին գյուղերը միացնեն, ու ինքը դեմ էր», բժիշկը Ալբերտին նայեց և դրական պատասխան ստացավ, և խեղճ բժիշկն այդտեղ սուլեց ու սառավ. Ձեր տիրոջ հերն անիծած, մարդուն սպանելու էինք:

Մեր բացակայությունը տխրեցրել էր թերևս միայն գնդապետի երեխային, մյուսների համար եղել ենք թե չենք եղել՝ միևնույն է. ազատություն են ստացել, խանութի դռանը շիշն իրար ձեռքից խլելով խմում են, անհամ կատակներ են անում ու ծիծաղում, և այդ ամենը երեխայի համար զգվելի է, երեխան ներքևը կանգնել է մեր խլած գերանի մոտ ու տխուր է, լացը գալիս է. մյուսները՝ բնիկները, խփում են հեծանվավոր անձոռնու գլխին, ծիծաղում, ասում. «ճալի գոմշին սիրահարվել է», «Սիրահարվել ե՞ս, արա», «Որ քեզ ուզի՝ ի՞նչ պոխս անիլ», «Գիտի՜ր, կգիտենա՛ւ», «Գործ չունես, Ռոստոմի Վարոսիչը կտա աջունձախ կանի», խորհուրդ են տալիս, գլխին խփում ու ծիծաղում. բացարձակապես առանց խանդի են ընդունում օտար, թշնամական երևույթի հայտնությունը իրենց հայրենիքի երկնքում. երկրախույզների ուղղաթիռը մեր հանդի կիրը մետաղական բաքով փոխադրում է հին ջաղացատեղի շինարարություն. և չեն ասում՝ էս ինչ է, և ընդհակառակը՝ «Կիրը հասավ», «Քանի՞ տոննա կլինի», և միայն գործակատարն է հեռավոր կարոտով հիշատակում մեր անունը՝ «Շեյ գիդի Ռոստոմ, մի դուրս գայիր էստեղ, սիրտդ տեղնուտեղը տրաքեր», բայց նրան էլ, խոսքը չնայած մեր հանդեպ մեծ հարգանք չի էլ պարունակում, չարությամբ խեթում են (մեզ նմանակողը). ավելին, ուղղաթիռի գյուտից իրենց համար օգուտ են կռահում. Ալբերտը ծակատին խփում, «արա» է ասում, պատշգամբից վազում գյուղամիջի բաց՝ ուղղաթիռից տեսանելի հրապարակ, այսինքն քիչ էր մնում հնարավորությունը ձեռքից բաց թողներ, վերադարձող ուղղաթիռին գլխարկով-բաձկոնով հասկացնում թե այստեղ նրա կարիքը կա:

Ուղղաթիռը մի համապատասխան տեղ իջեցնել են տալիս, իրենք այստեղ գերանը ծոպաններով կապկալում, գերանին էլ դեռ օդի և հացուպանիք ու կոնֆետ դնում. չեն զգում, չեն տեսնում, որ այդտեղ իրենց վարքն ու կերպարը մաքուր հոգու ամբողջ ուժով աստղ մի շնչավոր կա՝ գնդապետի բարալիկ երեխան, որ իրենց հրմշտոցների արանքներում դեսուդեն է քշվել, խոսքեր է ստացել՝ «Ուտի տակ մի ընկնիլ, այտա», բայց հիմա գերանին նստած է ու համաձայն չէ, համաձայն չէ, չի ուզում նրանք այդքան անինքնասեր լինեն: Մեզանից հետո չէ՞ գյուղի պատվելին մեր քրոջ զավակն է լինելու, նա ահա օդաչուին բերում գործը ցույց է տալիս, օդաչուն հնարավորությունները նայում ասում է՝ «կարելի է», մեր քրոջ զավակը օդի է բացում, գործակատարի մեջ վախժխելով արդեն խղճի խայթ է առաջացել, պատշգամբից ասում է՝ «Այտա, տղերանց արձանը», բայց զոհերի արձանը ոչինչ չի ասում ոչ օդաչուին, ոչ էլ զոհերի ժառանգներին, օդաչուն նայում ասում է՝ «չի խանգարում»: Օդաչուն գնում է ուղղաթիռը բերելու կախելու մեր հնօրյա գյուղամիջի գլխին, սրանք այստեղ գերանի վրայից իրենց ուտելիք-խմելիքը հավաքում, պարապ շիշը, որպես փոքրի, գնդապետի երեխայի ձեռքն են տալիս ու իրեն էլ, դեռ չհասկանալով որ վիրավորում են, գործի մոտից հեռացնում են. գերանի երկու կողմը իրենք ահա կանգնել (Ալբերտը, մեր քրոջ զավակը և ուրիշ մի երկուսը) սպասում են ուղղաթիռին. այդ հեշտ դավաճանության, այդ անպատվախնդրության, այդ հիմար հարբեցողության կողքին երեխան լարվում-լարվում ու մեկ էլ շիշը խփում է գերանին: Կարող էր նաև գերանին չխփել, կարող էր խփել ամեն մեկին ու բոլորին, բայց շիշը գերանին է դիպչում ու փշուր-փշուր լինում: «Գժվե՞ց, ասում են, Սարգսանց

խը»։ Մեր քրոջ զավակը հասկանում է, որ դա հենց էնպես գժվելու բան չի, որ դա ուրիշ խոր արմատներ ունի, ձեռքի երեսին մեխված ապակու փշուրն ու արյունը բերանով վերցնում թքում, մոտենում ու երեխային ծանր, դաժան ապտակ է հասցնում, «Դե ռա՛դ եղիր էստեղից, հոտդ էս երկրում էլ չտեսնեմ», ասում է. երեխան գետնից քար վերցրած է ելնում, ուզում է խփել, բայց իրեն արդեն լրիվ մենակ ու մերժված է զգում, լաց լինելով հեռանում է, խեղճ թշնամանքով ետ է նայում ու հեռանում։ «Խեղճ որբին էդ խի՞ խփեցիր, այտա», վերևից ասում է գործակատարը և պատասխան ստանում. «Որբ է, չէ մի զոհվածի տղա է, մինիստր գնդապետն էլ մեր հերն է»։ «Ա դե, անկամ առարկում է գործակատարը, որ քաղաքի հետ հաշտվում չի ու էստեղ էլ որևէ հարազատ չունի՝ բա որբ չի ի՞նչ է»։

Ուղղաթիռն արդեն եկել վերևը կանգնել, կեռավոր ծոպանը կախում է։ Նայում հիանում, նայում իրենց արածից վախենում, կեռը կցում ու փախչում պատշգամբի տակն են մտնում։ Քաշում գետնից կտրում, բարձրացնում է, և մղձավանջի նման ծանր՝ գերանն ահա սլանում է հին գյուղի երկնքով։ Պատշգամբից հիացած իջնում, պատշգամբի տակից զարմացած ելնում ետևից նայում են, բայց ամենից շատ հիացած է անձոռնին, հեծանիվն առել կողքից վազելով ուղղաթիռի ետևից է ընկել, սիրտն ուղղակի թռչում է։

Մեզ վրա արդեն վաստակ ուներ և ինչպես որ շունը կամ ասենք ոչխարն են չոբանինը, իր՝ բժշկի կարծիքով մենք այդպես իրենն էինք, մեզանով ուրախանում, հովանավոր շեշտով մեզ քամահրում էր։ Նրա այդ հովանավոր տոնը մեզ

գայրացնում էր, բայց մեզ զսպում էինք այնքան ժամանակ, մինչև որ մեր աչքի առջև սկսվեց հանգուցվել մի դաժան դեպք - Հովիտ այդ «քաղաք» գյուղում տրակտորը մի ձանապարհով, բուլդոզերը՝ մի ուրիշ, մտան դիմացի դաշտն ու սողացին դեպի մենավոր տանձենին, հետո բուլդոզերը տանձենու արմատը քանդում, տրակտորը ծոպանը գցել բունը ձգում էր, տանձենին շուռ էին տալիս:

Բժիշկն ու մենք նստած էինք՝ հիվանդանոցի բակում մի սիրուն ծածկ կար՝ ծածկի տակ: Ինքն ուրեմն բժիշկ էր՝ մի փոքրիկ թագավորության մեծ տեր, մենք իր թագավորության բնակիչն էինք՝ իր հպատակը, այդ բուժքույրերը բուժքույրեր էին, բայց մի քիչ էլ՝ իրենց մնացորդ թարմության ու վարքի ազատության չափով՝ իր հարձերը, թեթևակի անհարմարությունն այն էր, որ երկար ոտները դնելու տեղ չէր գտնում, բայց այդ անհարմարությունը շուտով վերացավ - բուժքույրերից մեկը բերեց ոտքերի տակ աթոռ դրեց՝ ինչը որ լողլողս ընդունեց առանց շնորհակալության արտահայտության, կարծես այդ հենց այդպես էլ ի վերուստ սահմանված էր:

- Գոգեն, ասում էր, Գոգեն. որտեղից ենք գալիս, ով ենք, ուր ենք գնում. Գոգեն. որտեղից ենք գալիս, ով ենք, ուր ենք գնում... հը՞, ասում ու մեզ գնում էր, մենք չէինք կարողանում մեր հայացքը բարձրացնել, հովանավոր ու ծաղրական հայացքը դրել էր մեր երեսին, և մենք վատ էինք զգում:

- Կարգադրիր շորերը տան՝ մենք գևանք, ասացինք:

- Նստիր,- ասաց,- զրուցում ենք:

Ելնելու էինք շարժվել՝ նստեցինք:

- Ուսանողության տարիներին, վեց տարի, մանավանդ առաջին երկու-երեք տարին, հը՞... ասում էր: Դա դեռևս անմեղ

պատմություն էր, բայց մենք չէինք վստահում, կասկածում էինք, ասացինք.

- Պատերազմով դպրոցից ետ ընկանք ու եղպես էլ ետ ընկանք, մեր յոթնամյա անգրագիտության հանդեպ ներող եղեք:

- Անկեղծ չես. քո դասարանցիք ձեր յոթից հետո եկան էստեղի տասնամյակ: Խոսքն ահա ուր էր տանում - կտրուկ նայեցինք ասացինք.

- Մենք չեկանք:

- Էդ եմ պատմում,- ասաց,- էսքան փող ու մի պահարան հագուստ էր պետք - ինստիտուտում... սահմաններն ու ապագան որոշելու ժամանակներ են, էսինչ թաքուն մինիստրի էս աղջիկը ինչ ապագա է բերում, վերջը՝ ով ես լինելու... բայց Լեվանին որտեղի՞ց էդքան խելք ու փող, հը՞:

- Լեվանին՝ հորդ, ասացինք:

- Շորս՝ Լեվանին. էդքան բանը ո՞նց հասկացնես. իր հասկանալիքը նա հասկացել ու թռչում է՝ այսինքն որ պրոֆեսոր բժիշկ ենք դառնալու: Թիկնապահ զորք է պետք, բայց դու մենակ տղա ես, հը՞, ունեցած-չունեցած մի շալվարով ու մի թռչակի հույսի: Շանրակացարանի սենյակդ գիտեն, ինստիտուտի լսարաններդ. բացի էդ էլ՝ ինստիտուտը փակ է, կիրակի է: Բայց չգիտեն, որ փակ ինստիտուտում կանանց փակ զուգարանում դու ես. դու ես ու գիտե՞ս ինչ ես մտածում - որ Լեվանը պատերազմով երեք տարի էս քաղաքում է եղել, որ ուրիշ կանանցից քեզ համար ախպեր կլինի վաստակած, էսքան ժողովրդի մեջ տեսնես որն է իմ ախպերը, նրա տունը էսքան շենքի մեջ տեսնես որն է:

Գիրուկ, ծարիրված բուժքույրը բերեց բժշկի ոտքերի տակ

ցածր աթոռ դրեց, գնաց. նրա մոտենալու-հեռանալու մեջ գողային ու կատվային ինչ-որ բան կար:

- Տես, է, ասաց բժիշկը. ընտանիքն ու ամուսինը քիչ են, աչքը ուրիշ ուրախությունների է. համբավդ լսել է, քմծիծաղեց բժիշկը:

Տանձենու խողկալի գործողությունն սկսել էին, մեր ուշադրությունը դիմաց սարալանջին էր:

- Ձեռ քաշիր, ասաց բժիշկը, մանավանդ որ քու սահմաններում չի. պիտի գեկուցի թե՛ էսքան հեկտարի հողաշինական աշխատանք է արվել, փող չենք ուզում, բայց էնքան էլ մի հավատացեք թե խմող ենք:

- Մինչև հիմա իրար վրա մի շիշ բան չենք խմած լինի, ասացինք:

- Ինքն ընդհակառակը՝ մի ցիստեռնից մի շիշ պակաս:

- Շորերս, բժիշկ, կարգադրիր տան,- ասացինք,- մենք գնանք էստեղից:

- Ուրեմն կապ չես զգում,- ասաց,- թե՞ ընդհակառակը՝ զգում ու ուժեղ թաքցնում ես:

Չպատասխանեցինք:

- Շարագատություն, օգնության կարիք - թշնամու առաջ յոթ ախպերով կանգնած լինեիք:

- Կարմիր դրոշակիր տնտեսությունը քայքայեց, տակը գոմահանդ թողեց, ասացինք:

- Դու որ էստեղ՝ Շովիտ, դասի չեկար, դեռ չգիտեիր, որ կարմիր դրոշակիր տնտեսությունը ինքն է քայքայելու: Լսիր ինչ եմ պատմում,- ասաց,- Լեվանը բանակից որ եկավ, փոխանակ գիրկը թռչեմ՝ ետուետ էի անում, քար էի առնում քարով խփում էի, կարոտից: Ասում եմ գուցե քոնն էլ նույնն է, հը՞, չնայած դու հատուկ տեսակ ես:

- Շետո՞, կոպտեցինք, կանանց զուգարանից դուրս եկա՞ր թե դեռ էնտեղ ես:

Բուժքույրը բերեց բժշկի առջև կոֆե դրեց, նրա ծխախոտը իր գրպանի հրահանով վառեց, գնաց: Եվ դա, չնայած մեր կյանքում կոֆե մենք ոչ խմել ու ոչ էլ խմելու ենք, հետույքային այդ անտարբերությունը, այսինքն որ հետույքը մեզ արած կանգնել ու չէր ասում ետևս մարդ կա, կատաղեցրեց մեզ: «Դուք մեր տուն որ հյուր եք գալիս,- ասացինք,- շունը տանում այգու ներքևի ծերին ենք կապում, մինչև ծաշ հավաքնի դուռը չենք բացում՝ որ լուսամուտի տակ չկռթկռթան ու մինչև ծաշ ձեր քունը ծուղորուղուն չխանգարի, սրբիչը թևին ու օձառը ձեռին մեր տիկնոջը լուռ պահակ ենք թողնում՝ որ հյուրիդ ձեռին ջուր լցնի»:

Շասկացավ, ազդվեց, ուսի վրայով «կոֆե» բղավեց, «Կոֆե, էս կոֆեն էս ինչի՞ մի հատ բերեցիք»:

- Մի մարդ են տեսնում՝ մի հատ բերեցին, ասացինք: Կշարտենք, անտեղի նեղություն մի քաշեք, մենք կոֆե խմող չենք ու ոչ էլ մյուս տեսակի լրբերից:

- Կոֆե խմելու լրբությունը հասկացանք, բայց մյո՞ւս տեսակը որն է:

- Շորերս տուր, թե չէ ծանր բաներ կլսես,- ասացինք,- հովտեցի չե՞ս: Չենք ասի, թե մեզ միայն ու հենց բժիշկն էր գրգռում. մենք ուղղակի չէինք կարողանում խուլ լինել տրակտորի ու բուլդոզերի հռնդոցի հանդեպ և կույր լինել ու չտեսնել ծառի ծանր ձիգը՝ որ բեկվեց միանգամից, այն բանից հետո, երբ բժիշկն ասաց՝ «գոնե անասուն չի՝ որ փախչի. կանգնած ծառ է» և մենք չար հեգնանքով շշնջացինք՝ «դի-նամիտով, դինամիտ դրեք ու դինամիտով»... և մեր զգացմունքին

հարազատ մի միտք էլ բժշկի մյուս խոսքն էր. «Կար ու ահա
չկա. տեսարանը փոխվեց. էսօրվա ծնունդ հովըտեցին կասի
էնտեղ տանձի չի եղել»։ Նրանց մեքենաները մի բոպե այդպես
կանգնած էին, հետո վարորդները պայմանավորվեցին և
մեքենաները հիմա ծառը քարշ էին տալիս։

- Մեր տունուտեղը անտեր ենք թողել, շորերս տուր, բժիշկ,
ասացինք։ Մի բան էլ, խնդրեցինք. կարգադրիր էս գյուղից մեզ
փակ ավտոյով հանեն. մենք չենք կարող լուսամուտներին ու
ժողովրդին մեզ ցույց տալով գնալ։

- Զրուցում ենք,- ասաց,- տղամարդու իր կոմպլեկտի
առկայությանը վստահեցավ,- ասաց,- էն հարսի պատմությունը
պատմիր՝ բյուլետենդ կնքեմ, ավտոն տակդ դնեմ - ազատ ես։

Թեթևակի կռահելով և այդքան էլ թշնամանքով՝ մենք
նայեցինք։

- Առբաժնի ժողովրդին պատմեցի, ծիծաղեցինք, բայց դե
մասնակիցն ու ականատեսը դու ես։

- Ի՞նչ ես պատմել, հարցրինք։

- Իրականությունը՝ ինչպես որ եղել է՝ տղամարդու պես դու
հետո կասե՞ս։

Մենք գլխով արեցինք։

- Մի հարսն է լինում, պատմեց, էս հարսը հիմարավուն ու
բարոյական է լինում. էս հարսը Ռոստոմիս աչքն է մտնում,
ասում է սրան մենք պիտի թամբենք. արջի մի դատարկ բուն է
գտել՝ ծակուռ. հարսը համաձայնում ասում է դու մտիր, հետո էլ
ես մտնեմ՝ հարսը. երկու տարվա հույս է կատարվում, Ռոստոմս
ուրեմն ո՛րնց կմտնի - գետինը վարելով. հարսը դրսից՝ «հիմի
գա՞մ». ոնց թե գա՞մ՝ տասը տարի էս բոպեին ենք սպասել.
հարսը՝ «ինչի՞ ես կանչում, գամ ի՞նչ անեմ». ոնց թե. ծակուռի

դռանը մի կտրած փշոտ մամխի կա, հարսը բռնում ծակուռի բերանն է խցկում ու ինքը գնում. մյուս օրը գյուղամիջի ժողովրդի մեջ՝ «բարի լույս, ո՞նց ես, դուրս ես եկե՞լ»:

Այդ պահին տրակտորների բարբարոսությանը ավելացավ այն, ինչը մեզ հանեց հունից - ուղղաթիռը գերանը բերեց, եկավ, պտտվել-հարմարվել սկսեց սղոցարանի գլխին. սղոցարանը գյուղի տակ էր, գյուղից մի քիչ զատված: «Տես, է, Հովիտն ինչեր տեսավ. շտապ դեպքերի համար հինգ տարի է խնդրում ենք՝ չկա. գերան է տեղափոխում, չկա, ասաց բժիշկը: Դե հիմա՝ թե իրականում ո՞նց է եղել, խնդրեց բժիշկը. դու էն Ռոստոմը չես՝ որ թողնես ծակուռից էդպես շորորալով կնիկ հեռանա»:

Գերանի պատմությունը մենք կռահեցինք, փնջալով ելանք, ասացինք.

- Իրականությունը դու տեսել ես, գիտես. մեր անգիտակից վիճակում մեր շալվարը ձղել տանձերը տեսել ես՝ կարծում ես հոգին ես տեսել:

Ծածկի բագրիքի վրայով մենք շեք արինք անցանք, հետո հիվանդանոցային մետաղալարե ներկած չափարն էր. մետաղալարե ցանցերը շրջանակված էին մետաղե ձողերով, շրջանակների արանքում ներկած խողովակե ցցեր էին. «Սրա որձակի թագավորությունն ու ծախի վանդակները» ասացինք, ուսով խփեցինք շրջանակի մեջտեղը ցանցին՝ ամբողջ շրջանակը տեղից դուրս թռավ, հետո լոբուտ ու տնամերձի չափար էր, խփեցինք՝ փայտե մանր ցցաձողերի շարուկը շուռ եկավ. հետո դարձյալ տնամերձ էր, մի շուն էր հասել, հիմա շուլալվում էր մեր ոտքերին, բռնաքարով խփեցինք՝ ինքն իրենով փաթաթվեց, կաղկանձեց ու գազագեց, բայց մենք արդեն տնամերձից դուրս էինք եկել, սղոցարանների վերևը

թութունի սովխոզային դաշտում էինք, տրորելով ու թքոտելով գնում էինք, խնայդրամարկդի ու փոստ-հեռագրատան կանայք դուրս էին եկել, շարված նայում էին, սրանց շիլ, ծաղրածու հովիվը ինքը իր քամակին զարկեց, ծիծաղեց ու կանչեց.

- Արա՛ա... Վաթընանց մենձ բուղին ասեք բուղենիդ խառնվեցին՝ հասիր, բուղենիդ կռվում են՝ հասի՛իր... հա՛ա, քու նանը:

Մենք քար թե ծանր գուղձ առանք շարտեցինք դեպի կանանց երամը՝ «ձեր գյուղը, թե դուք գյուղ եք...»: Հետո դարձյալ թութունի դաշտը ոտքելով իջնում էինք սղոցարան, ուր գերանը ուղղաթիռից արդեն ընդունում էին մեզ նման մարմնեղ-թափով երկու տղա, ծլի նման բարակ նրանց աշակերտը և, բոլորովին ավելորդ, ղեկավար կոչված հարբեցողը:

Երբ թութունի դաշտից ելանք ու խուժեցինք սղոցարան՝ որ գուտ սյունների վրա առանց պատերի մի երկարուկ ծածկ էր, գերանն արդեն իջեցրել ու ինքն ուղղաթիռը արդեն գնացել էր. երկու հսկան սղոցաբանի էին, խլացնող աղմուկի մեջ կանգնած հարբեցողը մեզ ժպտում էր, իսկ աշակերտը մետաղե լինգով քանդում էր գերանի ճոպանները. լինգը ձեռքից խլեցինք, հատուկ ուշք չդարձնելով՝ այնպես՝ մարմնով՝ կոնքով դիպանք մի կողմ նետեցինք և մոտեցանք քաշեցինք եռաֆազ հոսանքի եղանը: Խոր լռություն եղավ, բոլորս իրար էինք նայում, ծանր լինելիք մի բան բոլորիս մեջ թերևս ամենաշատը ղեկավար կոչված հարբեցողն էր զգում, սղոցողներից մեկը արդեն քայլ էր դրել դեպի մեզ, և հարբեցողն ասաց.

- Ծմակուտի մեր ախպեր Ռոստոմն է: Ապա, զգալով մեր անհաշտ, կատաղի թշնամանքը, հավելեց. Աշխատանքի իմաստով եմ ասում, աշխատավոր ժողովուրդ ենք:

- Ով ուզում է լինի, և սղոցողներից նա, որ դեպի մեզ քայլ էր դրել, միացրո՛ւ, սպառնաց ու եկավ:

Մեր աջը բռնակի վրա էր, լինգ բռնած ձախով ու գլխով՝ կողքանց հարու տալու պես, մեր գլուխը իր կրծքին՝ մենք այդ բարձրահասակ, ջլապինդ, երկարավիզ աշխատավոր տղային հոսանքի բռնակից ետ պահեցինք, քաշեցինք, ոլորելով ու ձռնչացնելով պոկեցինք հոսանքի եղանը, շարտեցինք հեռու՝ թութունի դաշտ: Մեր հրելուց տղան շուլավեց թեփի ու կտորտանք տախտակների մեջ, ընկավ, դեմը ծանր բանալի-պտուտակադարձիչ կար՝ մեկնվեց վերցնելու, մենք երկու ծանր քայլով հասանք մեր ոտնաթաթը դրինք դարձիչը բռնած ձեռքին: «Մեր ախպերը էն գերանն է,- ասացինք,- էն երեխան, էն ոչխարը, էն սարերից դենը ինչքան բարձր բարոյական բան կա՝ մեր ախպերն է. մենք գողին գործակից ախպեր չունենք պառավների հավաքներում. կձգմե՛նք», ասացինք ու բարձրացրինք լինգը: Շարբեցողը ետևից մեզ գրկեց: «Թո՛ղ» մռլտացինք, բայց նրա այդ գրկելը մյուսին փրկեց լնգով խփվելուց: «Թո՛ղ» ծղրտացինք, մեզ թափ տվինք, չտեսանք հարբեցողն ուր շարտվեց. ընկածի ձեռքը ոտքեցինք ու խլեցինք ծանր պտուտակադարձիչը, հետո թափով բարձրացրինք լինգը, և սղոցողներից մյուսը ետ-ետ արեց, բայց մենք իրեն չէինք խփում - ամբողջ ուժով խփեցինք թոցրինք սղոցի՝ գերանի միջից երևացող կիսաշրջանը. այդտեղ կարծես այլևս անելիք չունեինք, արդեն կարծես գնում էինք, բայց չգիտենք ինչ մտածեցինք ու անցնելիս նետվեցինք ուսով զարկվեցինք ծածկի անկյունային սյանը. տեղից թռավ, մենք էլ հետը, ծածկի անկյունը կախվեց. ելանք արդեն առանց լնգի, բայց դարձիչը մեր ձեռքում պինդ սեղմված էր: Շենց այդտեղ, սղոցարանի

մոտ, առվակը ցատկելիս նկատեցինք, որ մեր մի ոտքը բոլորովին բոբիկ է, թքեցինք ու ցատկեցինք: Շետո թեք լանջ էր, ձորում տներ էին, լանջին՝ արահետներ, մեր ներքևի արահետով կոպալը ձեռքին կոճղի նման գունդ մի ծերունի էր գալիս, ուժեղ բարկացած էր, «Շու, ես ձեր ծնողը» ասում էր, գալիս-գալիս ու դարձյալ՝ «Շու, ես ձեր ծնողը»։ մեզանից վերև՝ լանջին՝ այս գյուղի հոտն էր ու սրանց շիլ-ծաղրածու հովիվը՝ ում համար ծիծաղելի էինք մենք էլ, ծերունին էլ ու այդ ամբողջ պատմությունն էլ, բերանը բաց՝ պլշել ու ծիծաղելի նոր բաների էր սպասում. ծերունին մեզ հավասարվեց, կանգ առավ, ձեռնափայտը կարծես մեր աչքը կոխեր՝ մեկնեց ասաց. «Դու ո՞վ ես, ի՞նչ մարդ ես»։ մենք զգացինք ինքն ով է, մեխվեցինք, մի վայրկյան պրկվեցինք, հետո մեր ձեռքի պտուտակադարձիչը ետ՝ դեպի սղոցարան գցեցինք, պինդ խուփ արինք թքեցինք ծերունու գլխով դեպի ձորը. հովիվը կոնքին զարկեց, «Շո՛ւ քու տիրոջ» ասաց, ծիծաղեց. նրա մոտով անցնելիս մենք մանր մի խորամանկություն բանեցրինք - իբր թե իրեն բանի տեղ չենք դնում, իրեն իբր թե չենք էլ տեսնում՝ մեզ համար գնացինք, հետո, երբ հավասարվել էինք, միանգամից թեքվեցինք ու բռնեցինք ականջը. կարծես շան լակոտ քարշ տայինք, քարշ տվեցինք դեպի հոտի գլուխը, որ արդեն մեծ ծանապարհ էլել հոսում էր:

Ծերունին հասել էր սղոցարան, երեխան գալիս էր մեր գցած պտուտակադարձիչը գտնի, շփոթված տղերքը արդեն ուշքի էին գալիս և մեր ետևից նայում էին ոչ առանց սիրո ու հիացումի, ծերունին նրանց մեջ կանգնել թքոտում էր. «Դուք ի՞նչ ախպեր եք, որ էսքան վնասը ձեզ տա, աչքներիդ առաջ ձեր հորն անպատվի՝ դուք իրեն շան ծեծ չտաք»։ «Շան զարմ է, նրա

կողքով անցնե՞լ կլինի», ասում էր նա՝ ով իրարանցումից մի կողմ էր մնացել: «Ծմակուտեցին ո՞ւմ դռան շունն է, ո՞վ է», փրփրում էր ծերունին: «Սարգսանց Տիգրանի գտածն է, քու մատն ասում են խառն է», և իրարանցումից մի կողմ մնացածը՝ որ հոր հարձակմանը պատրաստ էր՝ նրա գավազանից խուսափեց, «Ժողովրդի խոսքն է, ի՞նչ ես ուզում, այ հալիվոր, ինձա-
նից»:

Տրակտորները տանձենին քաշելով եկել հասել էին սղոցարանին: Մեր տրոքածը վրա էր նստել, վնասված ձեռքը թևի տակ սեղմել, հիացած նայում էր մեր ետևից, ասում. «Ո՛րոնց չէ, ձեր զարմը կլինի. գնա հազար տարի էլ ապրի՝ որ նրա նման ուղիղ մարդ աշխարհ բերես»: Շետո բոլորն էին, դարձիչը փնտրելու գնացած տղայի գլխի վրայով, նայում մեր ետևից:

Սրանց չոբանի ականջը բռնած քարշ տվեցինք հոտի գլուխ, կանգնեցրինք, երեսը ետ՝ դեպի Շովիտ, այդ մեծ ու ծաղկուն գյուղն արեցինք, փայտը ձեռքից առանք, ճանապարհը գծով հատեցինք ասացինք.

- Աշխատավոր մարդ ես՝ ականջնիդ տակից չենք պոկում. քու երկրի սահմանն է: Լավ ցավեցրել էինք, ականջը տրորում ու խեղձ-խեղձ նայում էր: Շարագատը որ հարագատ է, հարագատին մինչև հողին չի տալիս՝ ունեցվածքի վրա կռիվ չի բացում. Ծմակուտը դեռ չի վերջացել, ասացինք, իր ձեռնափայտը հոտի մեջ գցեցինք ու շուռ եկանք դեպի Ծմակուտ:

Կոշիկի մեջ տարիներով նրբացած մեր ոտքը չէր դիմանում, զգում էինք յուրաքանչյուր ավազահատիկն ու հողակոշտը,

դժվար էր, բայց գնում էինք: Երկինքը շեղակի հատեց անցավ գերձայնային ռազմ. ինքնաթիռների եռյակը, իսկ մենք երկրի վրա էինք, ներքևի ձորակում լքված էշն ու քուռակն էին արածում, նրանցից դենը ավերակ գոմի նման մի բան էր, ուր տեղից տեղ մի խոզ վազեց, հետո կենտահաչ տվեց մի կարմիր շուն:

Գետակը մեր և Շովըտի հին սահմանն էր. փայտե հին կամրջակն անցանք, շուռ եկանք, կամրջակի ծայրը բարձրացրինք ձորը գցեցինք. մեր արարքն անհեթեթ էր, ինչպես որ անհեթեթ էր ինքը կամրջակը՝ որից մի քիչ վեր մեծ ու լայն խճուղային կամուրջն էր: Նստեցինք, հիվանդանոցային բաձկոնի փեշից մի երկար կտոր պատռեցինք, փաթաթեցինք մեր ոտքին, ելանք ճանապարհ՝ դեմ-հանդիման եկանք գնդապետի երեխային. խռովել մեր երկրից գնում էր:

- ճանապարհաճախս փող ունե՞ս, հարցրինք:

Ուներ. եթե չուներ էլ՝ մենք ի՞նչ էինք անելու:

- Բա, էս է, ասացինք: Գնդապետին կասես՝ «Ժողովուրդս անհայտ մի շան առաջ՝ մի Խանաղով-Արգուտինսկու, ծառայության է կանգնել ու շատ ուժեղ փոխվել է. քու երկրում էս ում պալատնին են բարձրանում՝ անհայտ է»: Իրարից անցանք, հետո մենք երեխային ձեն տվինք ասացինք. Է՛դ չասես. կասես «էդ որ մեռնում ու ձեզ Ծմակուտին եք կտակում - Ծմակուտը դրա՛ կարոտը չի, Ծմակուտը կենդանի հայրենասեր է ուզում»:. կնկարագրես, իմացա՞ր, ասացինք, բայց դա նույնպես պատվիրան չէր, մեր ձեռքը թափ տվինք ու երեխայից շուռ եկանք:

Շետո արդեն՝ մաշված, հազար անգամ հազար տեսակ մարդով շենացած ու այդքան անգամ էլ ամայացած մեր երկիրն

էր, մաշված ճանապարհը և մենք - մասրի խեղճ թփեր, մի երկու գաճաճ կաղնի, փշոտ մի սզնի, խարկված աղքատ լանջեր: Մենք գնում էինք և մեզանից արդեն մարգարեի կամ անցորդ-մուրացկանի տպավորություն էինք առնում, բայց մեզ այդ վիճակում՝ որ մեզ դուր էր գալիս՝ չթողեցին. մեքենայի ձայն էր լսվում, մենք ետ չդարձանք տեսնելու ինչ մեքենա է և ոչ էլ ճանապարհի տվեցինք, շարունակեցինք գնալ ճանապարհի մեջ-տեղով. ազդանշան տվեց, հետո դռան շխկոց եկավ ու կարճ ծիծաղի ձայն. մեր գյուղի փոստատարն էր, հիվանդանոցային մեքենայով իր փոստի հետ բերել էր նաև մեր հագուստի կապուկը. մեր տարօրինակ վարքի ու տեսքի վրա ծիծաղեց, հագուստը հանձնեց մեզ. այդտեղ կին չկար, բայց մենք հագուստը փոխելու համար սզնու ետևն անցանք, ինչը որ վարորդի ու փոստատարի համար և՛ բարոյականության դաս էր, և՛ անհասկանալի տարօրինակություն. ժպիտը փոստատարի դեմքին այնուամենայնիվ սառավ: Թփուտ ծառի ետևը մենք խնամքով, լրջորեն հագնվեցինք, մեր նախկին տեսքին եկանք, հիվանդանոցային հագուստը խնամքով ծալեցինք, թփուտի ետևից ելանք հանձնեցինք վարորդին և ճանապարհ ընկանք. այդտեղ նա սիրով ասաց.

- Նստիր, խազեին, տեղ հասցնեմ:

Փոստատարը նույնպես դրան էր պատրաստ, իր փոստը մեքենայից չէր հանել, բայց մենք մերժեցինք առանց ավելորդ խոսքի, կարծես չէինք էլ լսել: Փոստատարը իր բեռը մեքենայից հանեց, եկավ հասավ մեզ և քայլեց մեզ հետ: Չէինք խոսում, չէր խոսում, բայց զգում էինք, որ երբեմն մեզ գնում է, ասելիք ունի, չի ասում, լուռ գնում է: Շտոտ սկսեց ծիծաղել, կարծեցինք մեզ վրա է, բայց այդպես չէր. հասել էինք հին ջաղացատեղին՝ ուր

մենատան շինարարությունն ավարտվում էր - կտուրը կղմինդրում էին, վիթխարին իր հին տեղը արտասվում ու ճաշ էր եփում և այլն, բայց փոստատարի ծիծաղը մեր գյուղացի անձոռնու վրա էր. հեծանվով՝ եկել գերի էր ընկել վիթխարու հմայքներին, մետաղե ցանկապատի եզրով՝ քսվելով, բռնելով՝ պտտվում էր վիթխարու շուրջը:

Մենք ու փոստատարը այդտեղ նստեցինք. նստել էինք շինությունը դիտելու, բայց չէինք կարողանում նայել, գեղջկական մեր նախանձը թույլ չէր տալիս. դառը մի բան խցվում էր մեր կոկորդիները և կլլելը դժվար էր:

- Պավել Արդությանը,- ասացինք,- կնյազը, իր ժամանակին էստեղ նման մի շինություն բարձրացրել է. մեզ պատմությունն է հասել,- ասացինք,- ինքը շինությունը չի հասել, և չկարողացանք շարունակել:

- Վառվել է, ասաց:

Ուշացումով, մեր կոկորդի կծիկը կուլ տվինք ասացինք.

- Տղերքը վառել են:

Հետո այդպես դարձյալ նստած էինք, փոստից մեր թերթերը զատեց տվեց մեզ: Ծալեցինք խցկեցինք մեր սապոգի ծիտքը: Պաշտոնական նամակ ունեինք, փոստատարն զգում էր, որ մեզ համար տհաճ բովանդակություն է պարունակում, դառնացավ, ծիծաղեց, ծրարը ձեռքի հետ խփեց մեր ուսին, ասաց.

- Էս էլ քեզ շքանշան:

Չէինք ուզում վերցնել, մեր գլուխը թեքեցինք ձեռքի ու ծրարի վրա, ասացինք.

- Մեր շքանշանը մենք մեզանից ենք սպասում, էդ ի՞նչ է:

Նամակ չէր, հրաման էր. «հաշվի առնելով, որ իր անհաշտ բնավորության պատճառով անտառապետ Ռոստոմ Սարգսյանի

և տեղական բնակչության միջև ստեղծվել է կոնֆլիկտային իրավիճակ՝ ինչը որ փոխադարձ վտանգ է ներկայացնում երկու կողմի համար և մանավանդ վերոհիշյալ նույն Ռոստոմ Սարգսյանի անձի ապահովության շահի տեսակետից նպատակահարմար է, որ նա չգբաղեցնի...» և այլն:

- Բայց չէ՞ որ,- ասացինք,- անտառը մենք իրենցից չենք ստացել:

- Էդ ի՞նչ է գրած, հարցրեց:

- Ոչինչ,- ասացինք,- ձեր սրտի ուզածն է՝ շքանշան:

Վիթխարին հաց էր գցում, բանվորները լվացվում սեղանին մոտենում էին, մեր գյուղացի անձոռնին առաջվա պես մետաղե ցանկապատին կառչել՝ հացին թե այդ կնոջ հմայքներին գերի՝ ետուառաջ էր անում, և այդտեղ նստոտած մենք ու փոստատարը շատ էինք նման անձոռնուն, փաստորեն նրա կրկնությունն էինք. վիթխարին անձոռնուն հաց ու միս տվեց, բանվորները մեզ ասացին՝ «եկեք հաց ուտենք», նույնը ձեռքով ասացին, և մենք պարտավոր էինք հեռանալ. ելանք, շտկվեցինք, բայց անձոռնուն չէր կարելի այդտեղ թողնել.

- Արա, էյ, Պուլուզի տղա, և սուլեցինք ու մեր առջև ճանապարհ ընկնել հրամայեցինք: Երկու ձեռքով ճաղերից կառչեց ու հրաժարվեց: Ուզեցինք գնալ զոռով բերել, փոստատարը ծիծաղեց ասաց.

- Գործ չունես, մեկ է ետ կգա:

Փոստատարի հետ Սարգսանց հին փառահեղ, լքված տների մոտ թեքվեցինք դանդաղ մտանք գյուղամեջ - նույն ժողովուրդը կանգնած մեզ նայում էր, մեր քրոջ նորընծա անտառապահ զավակը ժողովրդի մեր հին հրապարակում հնօրյա փահլևանի նման բոլթա էր տալիս՝ ետուառաջ էր քայլում, կանգ առավ,

ժողովրդի գլխի վրայով պատշգամբի իր բարձրությունից ունքը ձգած նայեց մի պահ, ապա շարունակեց մեծի ու աղայի իր երթուղարձը. մնացյալը նույնն էր - նույն խեղճ առուտուրը, նույն թուրքը, նույն հարբած հացթուխը... Դանդաղ բարձրացանք պատշգամբ, կթվորուհիների խմբի մեջ մեր քույրն էր, մեղմ գորովով «ցավդ տանեմ» շշնջաց, կարծես նույնիսկ քայլ արեց մոտենալու զգվելու, բայց չմոտեցավ - մեր հայացքից թարախ էր ծորում: Ժողովուրդը թաքուն մեզ զննում էր: Խուլ պահակը իր հին հարցով այդտեղ էր՝ «այտ-տա Ռոստոմ ջան, էն անտեր հ-հավը...», ընդհատեցինք և մեր ուսի վրայով մատնանշեցինք մեր քրոջ զավակին.

- Ռոստոմը հիմա ինքն է, մենք էլ Ռոստոմ չենք:

Թաքուն ծիծաղողներ եղան:

Փոստատարը փոստը բաշխում էր, մեր քրոջ զավակը գյուղական աղայի իր պտույտն էր անում ժողովրդի հրապարակում, մենք կամաց-կամաց ետ-ետ էինք անում և հիմա-հիմա պիտի հենվեինք պատին ու դռնայինք սովորական ծմակուտեցի, և այդ պահին այնպես եղավ, որ մեր քրոջ զավակը իր պտույտի մեջ մոտեցել էր մեզ, հիմա թեքվում թիկունք էր անում, և մենք ձգվեցինք, դարձանք հին Ռոստոմը, ասացինք.

- Մենք չենք պարծենում, թե մեր բարձր բարոյական վարքը զուտ մեզանից է - պետական պաշտոնական էդ հագո՛ւստը: Ուրիշ ու շատ ասելիք էլ ունեինք, ասացինք. Սրա-նրա դռանը արաղի բաժակը ձեռին վիզը թեքածից անտառապետի պաշտոնը մենք բարձրացրել ենք Ռոստոմ Մամիկոնյանի ձիավոր աստիճանին, կարծում ենք մեր քրոջ զավակը... Բայց մեր խրատի ու խոսքի կարիքը նա չէր զգում, շուռ եկավ իր

պտույտին գնաց, և մենք՝ որպեսզի այդտեղ չխառնվենք ժողովրդին ու դառնանք շարքային մեկը, կարծես ոչինչ չէր պատահել, ծանր թափով իջանք պատշգամբից, հեռացանք:

29

Հին կալերի զառիվերը ելնելը դժվար էր, խզգում ու խեղդվում էինք, շուտ-շուտ կանգնում էինք շունչ առնելու և ետ՝ գյուղին էինք նայում: Դուրս եկանք կալերը - լքված պահեստ, քանդված մարագներ, ամայի գոմեր, կալերից դենը՝ չհերկված, չցանված, լքված լանջեր: Մեր նժույգը հին դաշտերի միջնակներում էր, մեր ներկայությունը մինչև մեր աչքառ ելնելն էր զգացել, երբ հին մարագների ետևից դուրս եկանք ուղիղ կալ՝ նժույգը միջնակներում մամխի թփերի մոտ գլուխը բարձրացրել մեզ նայում էր: Մեր բերանը հավաքեցինք՝ որ սուլենք իր կանչի սուլոցը - չկարողացանք, խեղդուկը մեզ բռնել էր. նորից ուզեցինք ու նորից չկարողացանք, խեղդուկն ու արտասուքը մեզ բռնում էին: Կտրուկ բարձրացրինք մեր ձեռքը՝ իմաց տալով, որ, այո, մենք ենք՝ իր Ռոստոմը. միջնակում հանգիստ ոտ փոխեց, հանգիստ մտավ խոզան, խոզանում գայթեց և դրանից հետո եկավ իր նման խաղալով-խաղալով, այսինքն ինքը հագիվ էր զսպում իր ուժն ու ընթացքը: Հին չոր կալերում նրա գնացքը մի րոպե տրոփ ու շեշտ առավ, հետո արդեն մոտենում էր, դանդաղեց, գլուխը եկավ դրեց մեր կրծքին: Իր մի բուռ շաքարը մեր գրպանից հանեցինք, կերակրեցինք մեր բռնից, շաքարի ընկած կտորը վերցրինք, աղտոտվել էր՝ փչեցինք, տվեցինք բերանը, հետո բաշից բռնեցինք ու կալերի զառիթափն իջանք. մեզ չէինք կարողանում պահել՝ թափ էինք առնում և թափից ու մեր ներսի ուժից սկսում էինք ակամա ժպտալ, ինչը որ մեր վիճակին

հարմար չէինք տեսնում և մեզ զսպում էինք: Կանգ առանք, և այդ պահին գյուղի ու ձորերի լռության մեջ, մեզ թվաց, հրացան պայթեց: «Շը՞, մտածեցինք, հրացան էր թե թվաց»:

Մեր վիճակին վայել զուսպ տխրությամբ լուռ բարևեցինք Մարոյի ընտանիքին՝ որ դռան փայտերին նստած իր հավիտենական չրթելաբանին էր, բայց նաև, փառք աստծու, հոգս էր քաշում - փռել սոխ էր չորացնում, մի երկու շորի վացք էր փռել, տաքդեղի ու չրի շարուկ արել, որ մեր բարևին արժանանալու համար ոտքի ելավ և նույնիսկ ցանկացավ չրթելը թաքցնել և ավելին՝ չհամարձակվեց աղջնակին՝ որ դպրոցական պայուսակն առած եկավ մեր ու ծիու ետևից մեր բակը, սաստել բարձրաձայն՝ «ախչի, ուշանում ես»: Աղջիկն իհարկե ետ չգնաց, մեր ետևից մտավ մեր բակը:

Մենք հատուկ կարգադրություն չարինք - մեր տիկինը մեզ լուռ հասկանալով ծածկի տակից լուռ բերեց մեզ տվեց ծիու սանձը: Սանձը մենք ծիու գլուխն անցըրինք, և աղջնակը սանձը բռնեց: Առանց բառի մենք նայեցինք, և մեր տիկինը ծածկի տակից բերեց աքցանը: Ձիու պայտերը մենք պոկոտելու էինք, բայց մինչև գործի կանցնեինք՝ զգացինք, որ այդ ամենը այդպես՝ այգին, մի երկու գառը, տունը, ծին, սանձը բռնած աղջնակը, գոգնոցը պատրաստ բռնած մեր չորուկ տիկինը՝ այդպես այդ ամենը այնքան է գեղեցիկ, որ կյանքից մենք ուրիշ ոչինչ չենք ուզում: Մեր ժպիտը թաքցնելով թե զսպելով՝ ասացինք ամենևին էլ ոչ այն, ինչ զգում էինք. «Եթե դռներին ես եղել՝ ականջդ հրացանի ձեն չի՞ ընկել»: Մեր մատները դեռ ուժեղ էին, ծնկեցինք ծիու կրծքի տակ, առանց հատուկ ճիգի և յուրաքանչյուրը միանգամից՝ սմբակների երեսներից աքցանի բերանով, չոր ձրկկոցներով, կտրտեցինք մեխերի ծայրերի

ուորքները, հետո ձիու ոտքը ծալեցինք մեր ծնկին առանք և պայտի վրայից մեկ առ մեկ քաշեցինք մեխերը: Պայտն ու մեխերը գցեցինք մեր տիկնոջ գոգնոցի փեշը: Ասաց.

- Հրացանից էլ պրծանք, հրացանի ձենից էլ:

Չոր ասացինք.

- Մենք քեզ ուրիշ բան չհարցրինք - հարցրինք՝ ականջովդ հրացանի տրաքոց չի՞ ընկել:

- Չէ, ասաց:

- Դե ուրեմն էս օտար երեխայի մոտ քեզ կոպտել մի տուր, ասացինք, անցանք մյուս ոտքին: Գետը՝ ջուրը, տանում էր, լող էինք տալիս այսինքն, ամբողջ ժողովուրդդ ափին շարված էիք, երազում, հիվանդանոցի մեր ծանր երազում, մեկդ չկար՝ որ կանչեր, ձեռ մեկներ, ջուրը քշած տանում էր, ասացինք. լավ չի, վատ է, մեր սիրտն ուրեմն ոչ մեկիդ էլ օգնական ու իրեն կանչող չի կարգում, վատ է: Ելանք, պոկոտված պայտերն ու մեխերը նրա գոգնոցն ածինք, ասացինք. Պայտերը պահիր, մեխերն էլ պահիր, չնայած պետք չեն գա, բայց դարբնոց չունենք, քու Հովիտը մեր դարբնոցն էլ կերավ:

Գնաց, եկավ բամբակած հին բաձկոնը ձեռին. բաձկոնի կոճակները դանակով մենք պոկոտեցինք, ինքը առանց մեր հուշելու գնաց մի կտոր պարան բերեց. կոճակները մենք իր գոգնոցի փեշն ածինք, պարանն առանք, ծայրերն օղ արեցինք, որպեսզի հետո, երբ բաձկոնի վրայով պարանը ձիու մեջքին գցենք՝ օղերը մեր ոտքերին ասպանդակներ լինեն. հետո ձիու այդ բաձկոնն ու պարանը մեր թևատակն առանք, սանձը վերցրինք աղջնակի ձեռքից և սպասեցինք՝ որ մեր տիկինը ձգվի ու բաձկոնը մեր ուսերին գցի:

Ձիու սանձը քաշելով ելանք գյուղամեջ՝ հին պատշգամբում

մեր քրոջ անտառապահ զավակը մեր կեցվածքով հսկումի էր կանգնել, ուրիշ մարդ չկար, մենակ ինքն էր: Բամբակած բաձկոնը գցեցինք ձիու վրա, պարանի կտորը՝ նույնպես, ձին պատի տակ քաշեցինք, հիմա հեծնելու էինք, բայց մեր քրոջ զավակին ասելիք ունեինք և մե՛ծ ասելիք: Ինքն անդրդվելի էր և մեր ներկայությամբ այդպես էլ մնաց, եթե իհարկե զայրույթի կամ քամահրանքի հետևանք չհամարենք այն, որ կանգնած տեղից շարժվեց ու պատշգամբով մեկ պտույտի գնաց:

Մի քիչ թատերավարի՝ ոխով և ափսոսանքով օրորեցինք մեր գլուխը, հեծանք, և այդ պահին արտահայտվելու առիթը ներկայացավ. առաջին դասարանցի երեխայի թաթիկը բռնած՝ երրորդ-չորրորդ դասարանցին դպրոց էր առաջնորդում. հին գյուղամիջում, զոհված տղերքի հուշարձանի հրապարակում ձիու վրա ոլորվեցինք, ասացինք.

- Ռոստոմը պըտեր մեռած ու իր զավակներին օտարի դուռն ուսման գնալիս չտեսած:

Պայուսակները մեջքներին կապել, իրենց ծակատագրին հլու՝ գնում էին: Մեր քրոջ անդրդվելի զավակը հաղթողի իր ամբարտավան պտույտին էր, կանգ առավ, տղամարդու իր գործիքները բազրիքին սեղմած՝ մեր գլխի վրայով նայեց հեռուներին, իսկ վերևի թաղերից գյուղամեջ իջնող ծանապարհով գլխեգլուխ փայտ բարձած ավտո էր գալիս, և մեր քրոջ զավակը գիտեր, որ գալիս է: Եվ մենք ոչինչ, դառնանալուց բացի, անել չէինք կարող - կարողացանք ընդամենը, քանի դեռ մեր ծանապարհը չէր թեքվել, մի կողմ չկենալ և մեքենային ծա- նապարհ չտալ. դիտմամբ դանդաղ, ձիուն դիտմամբ զսպելով ու ետ չնայելով՝ մեքենայի ծանապարհը փակում էինք: Շտոո հայիոյանք մրթմրթացինք և, ձին գնացք էր ուզում, սանձը

թուլացրինք - ձին քառատրոփեց ավերակ գյուղում, ուր կենդանության միակ նշանը մի հալևոր ու իր պառավն էին, որ իրենց դռանը խոտի մի փոքրիկ դեզ էին կապել, վրան ցելոֆանե թաղանթ քաշել ու շուրջը հիմա փոցխում ավլում մաքրում էին:

- Բարիլույս, ձմե՞ռ ենք մտնում, ասացինք: Ձիուն չէինք զսպում, սուրաց անցավ: Երբ արդեն գյուղից դուրս էինք գալու՝ զսպեցինք, տեղում պտտվել տվինք, ծանապարհի կեռմանում՝ մեր ձեռքը բարձրացրած՝ հեծյալ արծանի կեցվածք առանք, ծառերի ու լքված տների գլխով ձեն տվինք դեպի կենդանության մյուս նշանը - հեռու, մենավոր տան դռանը մի ծերունի տախտակ էր ռանդում:

- Հալիվո՞րոր:

Ռանդան բարձրացրեց:

- Սարն ենք դուրս գալիս, սարը,- ասացինք,- Ռոստոմն ենք. որ մեր ձին քու ձիու հետ ընկերություն անի՝ բողոքավոր չե՞ս լինի, բողոքավո՞րոր:

Չգիտենք ինչու՝ ժպտում էինք և ուրախ էինք. լսեցինք նրա ծիծաղի ծվենը և որ մեզ «ախմախ» կոչեց և որ գլխարկը բարձրացրեց:

- Չգիտե՞նք, կանչեցինք, ընկերովի հեշտ կլինի:

Ճամփաբաժանում ձին գնաց ներքևի իր լայն ծանապարհով, բայց մենք, չգիտենք ինչ մտածեցինք, ձին զոռով հանեցինք ծանապարհից, մտանք վերևի նեղ արահետ, էդպես, ասացինք:

Ծառուղու քարքարոտ վերելքն անցանք, դուրս եկանք կրիորի Տանձուտ լուսավոր բացատ: Եվ ձին, և մենք այդտեղ ուրիշ մի շնչի ներկայություն էինք զգում, բայց ձիուն մենք ասացինք:

- Ազատ գնա, հին հուշեր են:

Կրիորի մոտ կանգ առանք, պտտվեցինք, ետուառաջ արինք, դարձյալ կանգ առանք: Շեռավոր զանգուլակի ձայն էինք առնում, ասացինք «հին հուշեր են, մարդ չկա», բայց նույն պահին էլ սրվեցինք: Ձին հանեցինք թմբի գլուխը, ետ՝ բացատին նայեցինք - ամայություն էր, բայց մեզ թվում էր զանգի ձայն ենք առնում: Ուզեցանք մեր բանին գնալ և այդ պահին տեսանք. կարմիրն արդեն կորցնող՝ մոխրագունող եղ-նիկը ներքևի անտառակից փափուկ, դանդաղ ցատկերով բացատ՝ բացատը կիսող արահետ էր մտնում. վազքի մեջ տագնապ չկար, մոտավոր հետապնդում չէր զգում, վտանգն իր կարծիքով անցըրել էր. մտավ արահետ և ուղիղ դեպի մեզ եկավ: Զանգուլակը եղնիկինն էր, ժամանակին մենք էինք կախել: Խուճապը մեզ կալավ, ասպանդակեցինք, մեր թևերը թափահարելով ծանապարհը կտրեցինք՝ «ո՛ւր, հիմար, ուր», կանգ առավ, սիրուն դուռնը մեկնաժ հոտոտեց, արդեն ձիու ոտքերի տակ էր ընկնում՝ ցատկեց և բացատի քարքարուտ, կախված լանջն ընկավ. մենք հալածեցինք՝ մինչև որ ձին զառիվերին դեմ ընկավ, եղնիկը թեքությամբ հատեց կախված լանջը. ծանապարհից հանել էինք, բայց ուղղությունը փաստորեն չէր փոխել, վերններում պտույտ էր տալու գնալու այնտեղ, որտեղից փախցրել էին: Ասացինք. «Դու էդ ինչքա՛ն էիր հոգնած, որ մեր ոտքի տակ տրորվում էիր ու չէիր տեսնում: Առավոտվա կրակոցից մինչև հիմա դու ինչքան ես փախել: Չես փախել,- ասացինք,- գնում ես գիլի բերանը մտնես»: Զիուն շտապեցրինք, բացատից զառիվերով ելնող կաճանը մտանք:

Այդտեղ անտառը վերջանում, սկսվում էին բաց

սարալանջերը: Գեղջկական հին մշակույթի ավերված հետքեր կային. մեծ քարաժայռից անընդհատ հոսող մանրաքարը երբևէ բռնել էին խեղձ մի պատնեշով, որ հետո փլվել էր. պատնեշի մեջ խաչքարերի բեկորներ կային. անտառից զատված, բաց պայտածն հին փոքրիկ խոտհարքի գրեթե մեջտեղը մասրենու թուփ էր, թփի տակ՝ աղբյուր, թփի ու աղբյուրի մոտ՝ գետնաթաղ սալ քարեր. վերն ուրեմն բաց լանջերն էին, բացատի դեմը՝ անտառը. բացատից ներքև անտառուտ ձորն էր: Բացատի մեջտեղը ձիու վրա մենք քարացանք, հանգիստ ասացինք.

- Սարգսյան Ալբերտ, դուրս արի:

- Ալբերտ Սարգսյան,- ասացինք,- Ռոստոմն ենք, էստեղ ենք, դուրս արի:

- Մեզ ձիուց իջնել չտաս. քանի մենք մենք ենք՝ քու կամքով դուրս արի, ասացինք:

Ոչ մի պատասխան, ոչ մի ձայն:

- Էն որ դավաձան հորդ անունը տղերանց մաքուր անունների մեջ գրել տվեցինք ու ինքներս չենք ուզում Սարգսյան լինել - Ալբերտ Սարգսյան, խնդրում ենք, դուրս արի:

Ձիուց ոչ թե իջանք, այլ ուղղակի ընկանք ու գժվեցինք: Ալբերտ, ասացինք, գնացինք դեպի մասրենին, տակը մասրենու ուղիղ ոստերից տաշած-սարքած և դեռ կոթերը նախշած շամփուրների տրցակ էր, տրցակի վրա կանգնեցինք ասացինք. Քու ձեռի գործն է, ես քու ձե՛ռը, ես քու ծնո՛ղը, Ալբո, դուրս արի:

- Ալբերտ, մեր վիզը ծռեցինք ու ճարահատ ծիծաղով խնդրեցինք, որ հիմի պայթենք սատկենք՝ ստիպված քեզ չե՞ս բացահայտելու - բացահայտելու ես, դուրս արի, թե՞ էնքան ես անմարդ՝ որ քու վախից կթողնես մինչև գարուն էստեղ հոտենք:

Ձին ականջները սրել նայում էր:

- Ալբերտ,- ասացինք,- մենք, ծիշտ է, քեզ չենք տեսնում, բայց ձին տեսնում է, չէ՞, նայիր ու ամոթ ունեցիր, Ալբերտ:

Ոչ մի պատասխան: Խելագարվեցինք, հայիոյեցինք.

- Դե նշան ես բռնել՝ կրակիր, ես քու մերը, ուշունց ենք տալիս՝ որ կրակես, կրակի՛ր, քաշի՛ր ոտը:

Կրակոցին սպասելով քրտնեցինք, բայց լռություն էր: Շետոթուլացանք, մեր ձեռքը թափ տվինք ասացինք.

- Դե լավ, էլի՛ մարդկություն է՝ որ ամաչել թողել գնացել ես:

Եվ գնացինք դեպի ձին: Գետնի մեջ թաղված սալաքարերի մոտով անցնելիս չհասկացանք սայթաքեցի՞նք թե ծնկի եկանք, բայց զգացինք, որ սալ աղաքարը չորքոտանու նման լիզում ենք, լեզու ենք խփում, համին մի տեսակ ականջ դնում, թքում և նորից լեզու ենք խփում: Եվ մեզ թվաց նաև, թե մեր տնկված հաստ քամակի ու անասունի մեր վիճակի վրա թաքուն ծիծաղում են: Քարի վրա հենց այդտեղ էլ նստեցինք և, խոր հուսահատության ու խոր ատելության մեջ, այդ բոպեին կարող էինք իսկապես մեռնել, հայիոյեցինք.

- Դուք էդպես խելոք, մենք էլ էսպես հանդի անասուն ենք, հա՞-ա, աղով խաբում ու չոքացնում եք, հա՞-ա, մեզ. մենք ձեր խելոք մերը:

- Ալբերտ, կանգնեցինք, հանդի չի, մեր օրորոցի զանգը վզին է, հաշվելու ենք՝ թե մեր ծիու վրա ես կրակում: Զանգը մեր հեր Տիգրանի ծիու զանգն է, նկատի ունեցիր:

Լռություն:

- Դե լավ, հաշտվեցինք, անտեղի ես սպասում. հանդիպել ու ծամփեն ծռել ենք, նա էստեղ էլ չի երևալու... չնայած ձեր աղին, ավելացրինք:

Բաց սարերի, աշնան բացատավոր անտառների, թփուտ արևոտ լանջերի, մինչև Լավար ու Քռի հովիտ ու հովտից դենը աշնան մաքուր արևի տակ ելևէջող մեր հին, հազարիցս բնակեցված, մաշված երկրի պատկերի առջև մեր սիրտը բացվեց: Զգացինք, որ անչար, հաշտ ու խաղաղ լաց ենք լինում, արտասուքը թրջում է ծերացող մեր կոպերը և անքննադատ ու անչար ենք ընդունում նաև հեռու կիրճերում կուտակվող, խտացող ծավալվող գործարանային ծխի գոյությունը: Առատ, մաքուր լույսի առաջ կկոցվեցինք, անտառուտ ձորերից դենը նավականման լեռան սարահարթում տեսանք մեր ձիու ընկերոջը, գլուխը կախ արածում էր, լուռ, ամայի սարերի միակ բնակիչն էր, անխռով, իր բախտին հլու, մեր ներկայությանն անտեղյակ՝ արածում էր: Չկարողացանք սուլել, լուռ բարձրացրինք մեր ձեռքը: Դարձյալ՝ լուռ բարձրացրինք մեր ձեռքը և թախիծով ժպտացինք: Շատո մեր ձիու վրայից վերցրինք պարանի կտորն ու բաժկոնը, սանձը գլխից հանեցինք, դրանք փաթաթեցինք առանք մեր թևատակը, ջանքով՝ հազացինք խեղդուկից ազատեցինք մեր կուրծքը և ուժեղ ու սուր սուլեցինք ու բարձրացրինք մեր ձեռքը: Մեր ձիու ընկերացուն գլուխը գետնից կտրեց: Մենք զույգ մատով սուր սուլեցինք և մեր ձեռքը դարձյալ բարձրացրինք: Կարծում ենք մեզ տեսավ: Մեր ձիուն ասացինք. «Ինքը մեզ տեսավ. դու իրեն չտեսա՞ր», և մեր սուր ձայնը հատկապես սրելով կանչեցինք դեպի մեր ձիու ձմեռվա ընկերը. «Հալիվո՛ոոր... դու մեր ջահելին ապավե՛ն... ոնց հանձնում ենք՝ եկող մայիսին էդպես էլ ետ ստանանք, իմացա՛ր»: Մեր նժույգը ականջները սրել նայում էր: Եկավ մյուսի սուր, երկար, հեռավոր խրխինջը, և մենք տեսանք, որ նա ոտ փոխեց,

դարձյալ փոխեց: Մեր նժույգը խուլ, ներսում վրնջաց և ընդառաջեց: «Գնա,- ասացինք,- դու ուժեղ ես, բայց ինքը փորձված է, կ'ենթարկվես», ինքներս շուռ եկանք դեպի գյուղ ու անտառ:

Փչակավոր ծառի տեղ գիտեինք՝ չէինք գտնում. կանգ առանք, նայեցինք, ծառերի մեջ մեր տեղը փոխեցինք և տեսանք, որ կանգնած ենք եղել հենց փչակավոր բնի կողքին: Բաճկոնի ու սանձի փաթեթը բունն ի վեր խցկեցինք փչակ, հրեցինք, մեր ձեռքը մինչև արմունկ փչակում էր, բայց ձեռքը մենք չէինք հանում, քարացել էինք, մեր ձեռքը ներսում կարծես բռնել էին, մեր աչքը դրսում կարծես չարքի էր հանդիպել. ուզում ենք ասել՝ այն, ինչ մենք իրոք լսեցինք՝ կրակոցը՝ նախքան իսկապես լսելը մի անգամ էլ մեր ներսում լսեցինք և նույնիսկ հասցրինք չհավատալ՝ ոչ, ասացինք, երբեք, բայց կրակոցն իսկապես եկավ - եկավ բոլոր ձորերում բազմիցս կոտորակվելով, և մենք ծառի բունն ի վար սահեցինք ու նստեցինք:

30

Շենո, մասրենու բացատում արնոտ աղաքարն ու փորոտիքը տեսնելով, մենք խելագարվեցինք ու բղավեցինք, ինչպես որ անլեզու անասունն է արյան հոտից խելագարվում. չհասկացանք ինչպես արյունոտվեցինք, այդ արյունը կարծես մեր արյունն էր, կարծես մեզ էին խփել. և ոչ թե մենք էինք մեզ վազեցնում, հոտոտել ու փնտրել տալիս, կառավարում, այլ՝ ցավը. արահետը մեր ոտքի տակից փախավ, ձորն ընկանք, տերևածածկ ցեխի միջով առվակն ի վար գնում էինք ու չէինք հասկանում ցեխից ելնել. «Գտիր, շան ծնունդ, ասում էինք, որ շուն ես՝ շան նման

հոտ քաշիր ու գտիր. բռնիր ու թաքուն խեղդիր - իրենց նման, իրենց նման»։ Մի տեղ մեզ թվաց թե այն կաճանի վրա ենք, որով մեր թշնամին է գալիս մեր ետևից. ծառի ետևն անցանք, մեր թիկունքը սեղմեցինք ծառի բնին և, համակ չարություն ու հրձկանք դարձած, սպասեցինք։ «Արի, մտածեցինք, առանց ծնողի դու ո՞նց մեծացար, թող երեխեքդ էլ մեծանան»։ Մեր ուշքն ու ականջը ետ էին՝ որտեղից հիմա մեր վստահ կարծիքով թշնամին էր գալու, բայց արահետը դատարկ էր, և մենք կանգնած էինք ու չէինք տեսնում՝ որ կանգնած ենք գետափնյա մենատան դեմ, անտառից մենատուն իջնող կաճանի վրա, խորովածի բուրմունքի մեջ։ Կռահելու հետ՝ հոտ քաշեցինք, հուսահատվեցինք, ասացինք. «Բա իհարկե»։

Սիրտը հիվանդ, նիհարիկ, աչքերի տակը կապտած, տգեղիկ, սիրելի աղջնակի ու նրա հարյուր տարեկան տատի երազը նրանց հայրն ու զավակը՝ մեր թզուկ նախկին պետը, լիուլի կատարել էր. հիանալի մենատուն էր կանգնեցրել, ամբարտակ ու լծակ էր կապել ու ջրվեժը լռեցրել, լծակի վրա կամրջակի կամար էր կապել, այգում մի երկար սեղան էր գցել՝ Ծմակուտի ու Հովվտի մեր ժողովրդին շնորհակալության հաց էր տալիս։ Մեր ժողովուրդն էլ՝ ուրիշ ոչ մի անգամ այսպես քաղաքավար, կազմակերպված, լուրջ ու զուսպ չէր եղել - հավաքվել, մաքուր հագնվել, կազմակերպվել եկել էին։ Արկղերով խմիչք էին բերել, դյուժինով՝ ոչխար, իրենց հին գետափն էր, բայց այնպես էին քաշվում, կարծես կառավարության առջև էին կանգնած։ Մեր նախկին պետի պառավ մորը անտառի արքայական տեսարանի դեմ պատշգամբում բուխարու առջև դրված բազկաթռռից միացյալ տնտե-

սությունների ղեկավար կոչվածը համարեք գրկել հանել ու մենատան շուրջը պտույտի էր տարել, եղնիկի մեր մանկության զանգակը մեր քրոջ անտառապահ որդին հիվանդոտ-սիրելի աղջնակի համար կապում էր ոլործուն եղջյուրներով հպարտ խոյի վզին, իսկ մեր քույրը վերևի դատարկ սրահներում մի երկու ուրիշ պառավի հետ բարձր, փափուկ ներքնակներ էր կապում. Մարոյի գույգ աղջիկը, բժշկի գույգ բուժքույրը և կաշվե բաժկոնավոր երեք տղա՝ ջահել, մարգված, քաղաքավար, հնազանդ ու սպառնալի երեք թիկնապահ տղա վիթխարու կառավարությամբ սպասք ու ուտելիք էին շարում երկար, սպիտակ սեղանին՝ որ ժամանակավորապես հավաքվել էր շինարարական իշտոնուկներից ու տախտակներից. շուտով, կերուխումից հետո, շինարարության այդ մնացորդները դուրս կտարվեին, դուրս կքշվեր նաև լուռ հպատակների այդ զանգվածը, և կմնային զուտ մենատունն ու գետափը - իսկը երեխայի, պառավի ու նրանց ցածրախոս-դանդաղախոս, հանդիսավոր-դանդաղաշարժ, իր կարևորությունը հարգող և հարգանք պահանջող թզուկ տիրոջ երագ: Խորովողները խորովում են, եփողները եփում, իսկ ինքը՝ մեր նախկին պետը, չի էլ թաքցնում, թե հրաշալի մենատունը հրաշալի տեղ է կանգնեցրել - լուռ ժպտում, կարճ ոտները լայն դնում և սևեռվում է դեմի անտառին, և մյուսները պարտավոր են նրա հայացքի ուղղությունը իրենցից մաքրել. նայում ասում է.

- Է՛էն կաղնին...

Եվ մյուսները նայում ու սպասում են՝ թե էն կաղնին այսինքն ի՞նչ:

- Հը՞, ասում է, եթե մի քիչ ներքև լիներ... Ի՞նչ եք ասում:

Ի՞նչ ասեն. իրար են նայում և ամաչում՝ որ էն կաղնին մի քիչ

ներքև չի:

- Բայց ոչինչ, հը՞, ներում է, թող մնա: Եվ չեն հասկանում «թող մնան» ծառի՞ մասին է թե մենատան:

- Ռոստոմ, կանչում է, խազեին, հեգնում է:

Ռոստոմն այդտեղ չէ, բայց մյուսներն ու մանավանդ մեր քրոջ զավակը պարտավոր են հասկանալ, որ Ռոստոմը հիմա ներկա անտառապահն է: Մեր քրոջ զավակը գալիս զուսպ, ժպտուն ու պատրաստակամ ներկայանում է:

- Քեզ ինչքա՞ն աշխատավարձ եմ տալիս, հարցնում է:

- Շատ, ընկեր Մանթաշյան, ասում է մեր քրոջ զավակը, և նրա խոսքը մեր Ծմակուտի ու Հովըտի ամբողջ ժողովրդի առաջին և թերևս նաև վերջին խոսքն է այստեղ՝ իրենց հին ջաղացատեղը:

- Շատ՝ ինչքա՞ն, հարցնում է:

- Շնորհակալ եմ, ընկեր Մանթաշյան, ասում է մեր քրոջ զավակը:

- Ապրես, ասում է. այսինքն թե մեր ուզած պատասխանն ես տալիս: Ութսուներեք ռ. քառասունինը կ.: Բայց պիտի ե՛ս եկած լինեի էստեղ քո տեղը՝ ութսուներեք ռ. քառասունինը կ., և բռնցքում է մեր քրոջ զավակի վզին և ձեռքը չի հասնում, և մեր քրոջ զավակը պարտավոր է իր երկար հասակը «ուտել» ու հարմարեցնել նրա թզուկ ցածրությանը, քեզ տարած էնտեղ իմ տեղը: Շան տղերք, բացատրում է մյուսներին, էս դրախտում եկել ապրում ու ձեն չեք հանում:

Նրա պառավ մայրը, մեր գյուղերի հլու ղեկավարին թևանցուկ, պտտվում է որդու մենատան շուրջը, վատ տեսնող իր աչքերով տեսնում խնամքով ստեղծված նորանոր մանրամասներ և հիանում որդու ճարպկությամբ ու շնորհքով.

- Խելոք է, ասում է, լսողի վրա հեր, չլսողի վրա էլ դատավոր է իմ տղեն. ձեզ հնազանդ պահեցեք՝ որ աչքի լույսը դառնաք: Շերն էլ էր խելոք, բայց պապին՝ իմ հայրիկիս է քաշել: Ձեռք երկարել իմ հայրիկն էստեղ պալատ էր շինել, ասում էր Ծմակուտ տուն ունենք, էս է ուրեմն Ծմակուտը: Կանգ է առնում, սուր նայում ու բորբոքվում. Վառեցիք, ներելու բան չի՝ որ ասենք հա... Անպետք ժողովուրդ եք, վառեցիք հայրիկիս տունը:

Նրա տղայի սիրուհին՝ կես երգչուհի, կես բանաստեղծուհի, կես դերասանուհի գավառցի պչրուհին, իրեն բեմադրելու տեղ է գտել. ժողովրդից զատվել, կամրջի կամարին է, կարծում է ժողովուրդն իրեն նայում է, ժողովրդի առջև «մտածում», ժողովրդի առջև բանաստեղծություն է մտմտում. «Պտտվիր, պտտվիր, կարուսել, ես քո երգը վաղուց եմ լսել»: Ժողովրդի համար, այնինչ, այդտեղ մեկ երգիչ ու բանաստեղծ կա՝ մենատան տերը, որ հիմա գնացել ծաշի կաթսայի մոտ ժողովրդավարություն է անում - կաթսայի կափարիչը բարձրացրել, մատները այրելով միս է հանում, մատները սրբում է վիթխարու կոնքով, և դա միաժամանակ կամիթ է, և նրա վիթխարի զանգվածը նազելիորեն խրտնում է և նրա լեզուն նազելիորեն բողոքում է՝ «Է՛է՛, ընկեր Մանթաշյան», և բնիկները համարձակվում են ժպտալ, թուքները կուլ տալ և ապա հայացքները շրջել, և ինչքան գեղջկական է պետի այդ վարքը, նույնքան քաղաքավար է նրա մյուս արարքը - մսի փոքրիկ կտորը մի փոքրիկ կտոր լավաշի մեջ խնամքով ու բարակիկ փաթաթում, մանրիկ կծելով մոտենում է ժողովրդին և կարծես նույնիսկ ներողություն է խնդրում այդպես մենակ ուտելու համար՝ «Սոված մեռանք», և կարծես տնավարությունից զատ ուրիշ ոչինչ չկա՝ երբ ձեռքի կլորիկը դեմ է անում առաջին

պատահաճի բերանին՝ «Կծիր. դե լավ, մի քիչ կհամբերես»։ Նրա ամենատես աչքից չի վրիպում նաև սիրուի ու այդ ինքնաբեմադրումը՝ որ կամրջակն անցել, գետակի զառիթափ մյուս ափին, ուր մի ժամանակ մենք էինք ծի ու վրա արձանացել, «մտասույզ» ետուառաջ է անում, «խոր մտքերից ուշքի է գալիս» և իր հեռվից հարցական նայում այս ափի ժողովրդին. «Գիտե՞ք, չե՞, ինչ է ուզում»։ Ժողովուրդը գլուխը կախում և իբր թե ամոթխած ժպտում է. «Ժողովուրդ չե՞ք՝ հրեշտակ եք, ասում է, շան տղերք, որիդ վարքը քննեցինք՝ հարեմի փաշա էիք»։ «Ժողովուրդ է ուզում, հավելում է անկեղծ տխրությամբ, բոլորս դերասան ենք՝ ժողովուրդ ենք ուզում։ Բայց դուք կարծեցիք աղջիկն ուրիշ բան է ուզում»։

Պառավել իր պտույտը ավարտելու վրա է։ Այդքան լույսի ու գեղեցկության դեմ կկոցվում, գլուխը պտտվում է։ «Քա վո՛ւյ, հարբեցի», ասում է։ Մեր տնտեսությունների ղեկավարը նրա մեջքը գրկում է՝ արժանանալով նրա զավակի ուրախ ծիծաղին. «Շլա էն անառակին տեսե՞ք, մորս պաչեց։ Մա՛ա, կանչում է, տունն օրհնիր, չես օրհնո՞ւմ»։ Բժիշկն իրեն նետում է ծառայելու պառավին, բայց սրա զավակը բժշկի թևից բռնում ասում է.

- Անհանգստանալու բան չկա, հարյուր տարեկան է։

Եվ այդ պահին Ալբերտը մեզ տեսավ, «Ռոստոմը, տախը» ասաց և իրեն ետ քաշեց ժողովրդի մեջ, և մեզ նրա այդ առաջինը նկատելն ու իրեն ժողովրդի մեջ թաքցնելը միակ նշանն են այն բանի, որ եղևիկի բացատում դարանածը նա ինքն էր։

Թևի երկարության մի դագանակ չգիտենք ինչու, երբվանից ու որտեղից առած՝ մենք մուրացկանի թե գիշերային գողի զգուշությամբ մտանք ապարանքի սահմանները, անտառի

խորքերը գնացող արահետի վրա բացվող մետաղե ճաղավոր, ներկած այդ դռնակը զգույշ խնամքով ծածկեցինք, շուռ եկանք կանգնեցինք ապարանքի դեմ:

Կանգնած մեզ նայող ժողովուրդ, պատշգամբում նախշազարդ բուխարու առջև բազկաթոռում նստած հին թիֆլիսեցի պառավ, խուզած կարգի բերած պառավ խնձորենիներ, հացի երկար, սպիտակ սեղան, անմեղ ոչխարներ ծառերի հնձած մաքրած արանքներում, վիթխարու փեշերը հոտոտող անմեղ մի խոյ, փոքրիկ շնիկի հետ խաղացող սիրուն հագնված մի աղջնակ, նկարչորեն հատիկ առ հատիկ շարված շամփուրներ, ծխի ու գոլորշու աբելաբար շիտակ սյուն ուղիղ դեպի աստված, կամրջակի մոտ մի ցնորված անթև հրեշտակ - իսկը հնօրյա դրախտ. վիթխարու մոտից խոյը խրտնեց ու զանգակը զնգացնելով գնաց դեպի ոչխարները:

Երբ կամրջակին ոտք էինք դնելու և չգիտեինք ինչու խեթեցինք այդտեղ ետուառաջ անող անթև հրեշտակին, կարծեց հանձին մեզ հայտնվել է դարձյալ մի երկրպագու, ասաց.

- Սխալվում եք: Կարծում եք ծանոթ եմք, բայց ծանոթ չեմք: Դուք ինձ հեռուստացույցից եք հիշում:

- Մենք հեռուստացույց չենք միացնում, ասացինք:

- Որովհետև,- ասաց,- շատերն են բարևում. Էկրանից իրենք ինձ ճանաչում են, կարծում են ես էլ իրենց եմ ճանաչում:

Թշնամանքով խեթեցինք անցանք: Ծնիկը հաչոցով եկավ մեր դեմը կտրեց, ուղղակի չէր թողնում կամրջակից իջնենք, իսկ շնիկից դենը մեր դեմ խմբված ժողովուրդն էր՝ որ մենատան տիրոջը իրենից մի քայլ առաջ էր թողել և ինքը նրա թիկունքում պարսպի պես կանգնել: Մինչև աղջնակի վրահասնելը կանգնել

Նրանք մեզ էին նայում և մենք նրանց. մենատան տերը մանրիկ ծամում ու մեզ զննում էր, և մեր գոյությունը՝ որ մնացյալ ամբողջ ժողովրդի մեջ ծանր ատելություն էր կուտակում, նրա աչքերը լցնում էր քամահրոտ ժպիտով, այսինքն մենք իր առջև արգելք չէինք: Աղջնակը եկավ շանը գրկեց, մեզ նայել-չնայելով «լավ հոպար» հատկանշեց («Լավ հոպար է, Տուգիկ, ինչի՞ ես ծամփան փակում, լավ հոպար չի՞, լավ հոպար է. ձեզ վրա չի հաչում, քեռի, մահակի վրա է հաչում»), շունը տարավ, և հիմա իրար դեմ մենք և ժողովուրդն էինք: Խորամանակ, աչքը աչքի գցելով խաբո՞ող, նայեց ասաց մեր նախկին պետը.

- Երեխայի սիրտը տեսա՞ր ոնց ձանաչեց. ասում է լավ հորեղբայր ես, խազեին:

Չպատասխանեցինք:

- Քեզ նեղացրել ենք, նեղացած ես երևում, խազեին, ասաց: Բայց ի՞նչ իմանաս, քու օգուտի համար էսպես գուցե ավելի հարմար է:

Լռեցինք, նայեցինք, ասացինք.

- Անտառը մենք ոչ քեզանից ենք ստացել, ոչ էլ քեզ ենք հանձնում: Դու ո՞վ ես՝ մի հեռու օտարական, մենք քեզանից ի՞նչ իրավունք ունենք նեղանալ:

Իրեն նրան պաշտպան էր կարգում և՛ մեր քրոջ նորընծա անտառապահ զավակը, և՛ տնտեսության ղեկավար կոչվածն էր ուզում պաշտպանիչ խոսքով մեջ ընկնել, նրանց «սսսս» սաստեց, ասաց.

- Լավ չի, խազեին, մեր հարևանությունը լավ հիմքի վրա չենք դնում:

Չպատասխանեցինք: Լուռ կանգնած էինք, իրենք մեզ էին նայում և մենք չտեսնելով իրենց: Դրսի այդ ծանր լռությունը

վերևի դատարկ սրահներում պառավների հետ ներքնակներ կարող մեր քրոջ ուշադրությունը գրավեց - գործի վրայից ելավ, «էս ի՞նչ եղավ» ասաց և գուլպաներով ու փափուկ՝ պատշգամբ ելավ: Նրա զնգուն ծայրը մեր ծանր գլուխն ու կոպերը դանդաղորեն վերև՝ պատշգամբին դարձրին:

- Վույ ցավդ տանեմ, ցավը՞դ, ցավը՞դ, ախպեր ջան, եկել դու էլ ես հասե՞լ... Բա ասեցին հրաժարվել ես:

Նայեցինք, շատ ավելի մեր մեջ՝ ասացինք:

- Դու էլ ես էստեղ, քեզ էլ են բերել:

Նրա նորընծա անտառապահ զավակը ձեռքով նրան ետ՝ տուն մտնել հրամայեց, նա կարծես խելագար էր և գաղտնիքներ էր դուրս տալիս, այնինչ այդ կինը միամիտ ու բաց պարծեցավ իր արած գործով:

- Բրդեր եմ բերել, տղիս խազեհինի համար դոշակնի եմ կապում - փափո՞ւկ, մաքո՞ւուր... Բարի վայելում, խազեհին, միջին անուշ քնեք դու էլ, քու գերդաստանն էլ ու քու թանկ հյուրերն էլ:

Անտառապահ զավակը նրանից լուռ պահանջում էր ավելորդ չխոսել, ներս մտնել, նա այնինչ բացահայտեց նաև որդու այդ պահանջը:

- Վույ, ասում է խոսալ մի. էդ ի՞նչ եմ ասում՝ որ խոսամ ոչ. մեր պապի ջաղացն ու ծառերը խազեհինդ ասում եմ բարով վայելի:

Կարճ մարդու հանդիսավոր ու դանդաղ քայլով «խազեհինը» ընդառաջ եկավ՝ մեզ թևանցուկ անելու, այո, թևանցուկ անելու - մենք նրա պարզած ձեռքը պարապ թողնելով առաջ գնացինք, և մեր ծանր քայլի դեմից մի կողմ քաշվեց ինքը «խազեհինն» էլ, պարսպի պես կանգնած ժողովուրդն էլ ձեռքվեց: Բոլորը, բոլորը այդտեղ էին - բժիշկն էլ, երկրախույզների օդաչուն էլ, հովըտեցի

մեր եղբայրներն էլ, մեր քրոջ մյուս՝ վարորդ զավակը, նորընծա անտառապահի ետևը թաքնվող Ալբերտը, գործակատարը, ակումբի վարիչը, փոստատարը, շինարարության արդեն հագած-կապած բանվորները՝ բոլորը, և բոլորն էլ եթե ոչ սիրելի՝ գոնե մեզ հասկանալի մարդիկ, բայց մենք ականա դանդաղեցինք, մի վայրկյան գրեթե կանգ առանք մեզանից սերվածի առջևով անցնելիս միայն, «Դու էլ ես, հա՛, էստեղ» ասացինք, անցանք, հայտնվեցինք պատշգամբում բազկաթռռի մեջ նստած չորուկ պառավի առջև. մեր արանքում նախշազարդ բազրիքն էր, բազրիքի վրայով պառավը ձեռնափայտը մեզ մեկնեց, ուղղակի մեր աչքը խոթեց, ասաց.

- Դու ո՞վ ես:

Ատելությունն ու անհարմարության զգացումը մեզ կաշկանդել էին, իսկ պառավի ցուպն ու հայացքը մեր դեմքից չէին կտրվում: «Կենդանի միջանցքի» մյուս ծայրից նրա հաղթող զավակը՝ թիկունքում կամրջակի վրա սիրուհին՝ ձեռքերը գրպաններում, աչքերը փակեց ու չարածծի երեխա ձևանալով կանչեց.

- Մա՛ա... Հայրիկի ընկերոջ տղան է՝ Տիգրան Սարգսյանի - Սարգսյան Ռոստոմ, ծանոթացիր:

Պառավը լսեց, վերհիշեց ու պարզաբանեց.

- Նրա հերը քու հոր հետ ընկերություն չի արել, սխալ է ասում: Բայց քու հերը քեզ անտառից է գտել, դու դեն-զգա՞ծ ես եղել: Մի իրիկուն մի գառը կառնես կգաս քու պատմությունն ինձանից կլսես: Ոչխարի պանիր էլ կբերես, ավելացրեց:

Զանգակի զնգոց էր գալիս, շուռ եկանք տեսանք աստծու անմեղ խոյը եկել մեզ հոտոտում է: Ցածր, մեզ զսպելով, բայց մեռնում էինք, մեր կոպերը վար բերինք, մեր ձեռքը պարզեցինք

ասացինք.

- Բոժոժը տվեք՝ մենք էստեղից գնանք:

Եվ առաջացանք դեպի ժողովուրդը: Կրկնեցինք.

- Զանգակի ձեն լսեցինք, զանգակն էստեղ է, տվեք՝ գնանք էստեղից:

Մեր կույր ընթացքի առաջ ժողովուրդը ետ-ետ էր անում, կանգ առանք, ասացինք. «Մեր օրորոցի վրա էդ բոժոժն է եղել, տվեք՝ գնանք»: Շետո իսկապես խնդրեցինք. «Խնդրում ենք: Ոչ մեկիդ չենք սպանի, մեր աչքն էլ չենք բացի տեսնենք որդդ էիք - զանգա՛կը»:

Ծանր լռություն էր, միայն խորովածի թշշոցն էր, թվում էր արդեն լաց ենք լինելու, Ալբերտն ու մեր քրոջ զավակը եկան դեպի խոյը, խոյը զնգզնգալով փախավ, և մենք խելագարի նման մոնչացինք ու կատաղեցինք. մեր ուսի հարվածը նորընծա անտառապահին խփեց որսագողին ու երկուսին էլ շարտեց, վրա քշեցինք ժողովրդի զանգվածին՝ զանգվածը նահանջեց. միայն մեզանից սերվածի փախուստը փախուստի և վախը վախի նման չէր և ընդհակառակը՝ պաշտպանության ու նույնիսկ կռվի էր կանգնում. մոլուցքի մեջ ասացինք՝ «տո դո՛ւ ինչ ես» և խփեցինք գցեցինք ու դեռ ավելացրինք՝ «Մուրադենց ծորտ... տես ու մարդկություն սովորիր, ես քու մերը». հետո խեղճ փոստատարը հայտնվեց մեր ծամփին, խփվելուց վախենում էր, բայց չխփեցինք, թեկուզև նա էլ իր բաժինն ստացավ - փոստի պայուսակին քացի տվինք ցիրուցան արինք, ասացինք՝ «Դուրս էստեղից, էս թշնամու տնից դուրս». կաշվե սև բաձկոնավոր տղերքը մեզ մի պահ շրջապատեցին, կանգնեցին սպառնալիքով, բայց հետո չկային, մեզ հասավ թզուկի ձայնը՝ «թողեք խփի հանգստանա, թողեք», ինքը թզու-

կը չէր երևում, մեր գյուղի գործակատարն էր, ասաց՝ «հըմի էդ ի՞նչ ես դերասանություն անում», զգվեցինք շուռ եկանք՝ սղոցարանի մեր զույգ եղբայրն էին, նրանց արանքով խորովածի կրակին նետվեցինք, մեր սապոգի թաթը տակը տվինք քաշեցինք ու նետեցինք խորովածի ամբողջ սիրուն շարքը, «դե հիմի կերեք» ասացինք, գնացինք դեպի հացի երկար սեղանը, երեք բաձկոնավորը հայտնվեցին մեր առջև, ամեն վայրկյան կարող էին մեզ ծնկի բերել, բայց ժպտալով ու ծամոն կամ իրենց լեզուները ծամելով դեռևս ետ-ետ էին անում և եկավ թզուկի մեծահոգի հրահանգը՝ «Թողեք տրորի հանգստանա, թողեք», մենք շուռ եկանք, շշերի արկղը մեր ոտքի տակ ընկավ, մենք լիքն արկղը շարտեցինք դեպի արկղերի դարսված խորանարդը, ապա՝ կամրջակի վրա հրամանատարական իր բարձունքին թզուկն էր, թիկունքում՝ սիրուհու զարմացած կերպարանքը, մենք բառաչեցինք, նետվեցինք դեպի թզուկը, ասացինք՝ «Քու կապած ջրում քեզ հիմի թխսի պես կխեղդենք», ետևից մեզ գրկեցին ու սեղմվեցին ու տզի պես կպել էին, մեր թափահարվելով չէին պոկվում, մենք մեր գլուխը ետ նետեցինք, մեր գլխի հարվածը իր գլխին՝ նրան պոկեց մեր մեջքից, ընկավ, առաջ անցանք, մեր քրոջ վարորդ զավակը իրեն իրավունք տվեց խաղաղեցնողի ու խրատատուի իր կերպարանքը տնկել մեր առջև, ասացինք՝ «Տերտերի քու կարիքը չենք զգում, ռադ եղիր ծամփիցս», ասաց՝ «Երեխային տվեցիր սպանեցիր», և խոսքը մեզանից սերվածի մասին էր, ում վրա բժիշկն արդեն ծնկել էր, բայց մենք ասացինք՝ «Սպանված պըտեր ու ծնված չպըտեր» և մեր քրոջ վարորդ զավակին մեր ծամփից նետեցինք, «Բոլորդ դավաձան ու թշնամի եք, բոլորդ, բոլորդ» ծղրտացինք, հետո դարձյալ կաշվե

բաճկոնավոր տղերքն էին ու նրանց թիկունքում կամրջակին՝ հաղթական թզուկը... բայց այդտեղ եկավ մեր քրոջ սուր ծղրտոցը՝ «Էդ ո՛ւմ ախպորն եք էդպես որոշած սպանում, էդ որք եք գտե՛լ» և հետո ինքը եկավ թևերը փռած, հևալով, խեղդվելով, ձայնն արդեն կորցրած՝ «Էդ ո՛ւմ ախպորն եք սպանում, էդ ո՛ւմ պահածին եք սպանում», թևերը փռած մտավ մեր ու բաճկոնավորների արանքը, «Էդ ի՞նչ օրի ես, ախպեր ջան, մեռնեի՝ ես վիճակում քեզ չտեսնեի, իմ փաշա ախպեր ջան, իմ զորավար ախպեր ջան», մեր գլուխն իր չորուկ կրծքին առավ, և հետո մենք երեխայի պես կծկվել, նրա գոգում ցնցվելով լաց էինք լինում, և ինքը, նստած, մեր գլուխը իր գոգն էր առել և իր նույն խոսքն էր մրմնջում՝ «Ո՛րք ջան, զորքդ կորցրել մենակ ես մնացել, ցա՛վդ տանեմ, Սարգսանց Տիգրանի հիշատակ ջան»:

Ընտո ժողովուրդը քարացած կանգնած էր, մենք ելել գնում էինք, մեր քույրը մեր ետևից գալիս էր, երկրախույզների օդաչուն բերեց մեր գլխարկը մեզ տվեց, առանց նայելու վերցրինք մեր գլխին դրինք, մեր քույրը զատվեց ու արագ մենատուն վազեց, և մենք մեծ դարպասի վրա բացված նեղ դռնակից դուրս եկանք, և մեր ետևից նայում էին բոլորը և իր կամրջակի վրայից՝ թզուկը. մտահոգված թզուկը ոտքից ոտքի փոխվեց և ռուսերեն տակ արեց՝ «տա՛ակ»:

Մեր քույրը մենատուն էր մտել շալն ուսերին առնելու, շալն ուսերին դուրս թռավ դեպի դարպասի դռնակը, և նորընծա անտառապահը իշխանաբար հրահանգեց.

- Ե՛տ դարձիր... Ետ դարձիր ասում ենք: Գամփռ շուն ես մեծացրել՝ ասում ես ախպեր եմ մեծացրել:

Մեր քույրը նրա հրահանգն ու խոսքը բանի տեղ չդրեց, գնաց դուրս եկավ դարպասի դռնակից, հետո մեր ավիրած այգին ու

Ժողովուրդն էին և կամրջակի վրայից թզուկի վերին գնահատականը մեզ.

- Տա՛ակ... Իրա նման տասը տղա լինե՛ր՝ Ղարսը հիմա մերն էր:

Մենատունը ետևում թողնելով մենք դուրս եկանք ձանապարհ՝ կանգնած մեքենաների երկար շարանն էր - և՛ մարդատար, և՛ հիվանդանոցային, և՛ բեռնատար՝ որոնցից մի երկուսը գլխեզուխ փայտ էին բարձած, շարանի ծայրից դենը ձանապարհի հեռուներում դպրոցական երեխաների խումբը վերադառնում էր Հովըտից:

Մի քանի օրինապահ էր՝ այսինքն երևում էր որ սովորող են, մի երկու անկարգ՝ այսինք հենց էնպես էին գնում դասի, խմբից թաքուն երկուսը ծխում էին, պայուսակները մեջքներին կապած ու պայուսակը թաթիկով որպես բեռ քաշող մի երկու բոլորովին ծստիկ էր, Մարոյի աղջիկը, իր հասակի ուրիշ մի երկուսը, անձոռնին՝ հեծանիվը հրելով, որին դարձյալ մի երկու զարդ էր ավելացրել և իր գլխին էլ մոտոցիկլիստի կարմիր սաղավարտ էր դրել, առաջին-բարձր դասարանների մոտ քսան աշակերտ: Ետևից եկողները անձոռնու սաղավարտին մանր քարերով խփում էին, սա ուշք չէր դարձնում, որովհետև շատ ուժեղ տարված էր Մարոյի աղջկանով: Ծնողների բացակայությամբ՝ մեծերը փոքրերի վրա ծնող էին, փոքրերը մեծերի առաջ՝ երեխաներ - նրանց հովանավորությունն ընդունում, նրանց վատ արարքը հայտնում էին (որ, օրինակ, քարով խփողը «Էս Կարենն էր», որ, օրինակ, «Էս Կարենը պապիրոս է քաշում»): «Առողջապահության մինիստրությունը զգուշացնում է ձեզ, որ ծխելը խիստ վտանգավոր է ձեր առողջության համար» ծխելու մասին լսելիս ասում էր Մարոյի աղջկանով հիացած վերացած

անձոռնին. իր կարծ, փոքր կարիքով թփի ետևն անցած որևէ փոքրիկի մեծերից մեկնումեկը անպայման սպասում էր, հետո էլ շտկում նրա փեշը):

Մեր՝ մեծերիս՝ իրենց ծնողների, տատերի ու պապերի տնազն էին անում և նրանց համար ամեն ինչ ծիծաղելի էր՝ մեր սկզբունքն ու հոգսը, մեր հիվանդությունն ու ծերությունը, մեր վեհությունն ու նվաստությունը, և լավ շատ բան կար, բայց ամենալավն իրենք էին - պայծառաչվի, մաքուր, զնգուն:

- Բայց չէ՞ որ, մատաղ, Ծմակուտի տերը դեռ մեռած չի. մեր համեստության պատճառով մենք չենք կարող մատնացույց անել մեզ - դուք ինքներդ տեսեք ու ձեր սեփական խղճով մատնացույց արեք մեզ: Էդ ուրեմն մենք էինք, կապիկների աչքից մեր ոճը չէր վրիպել:

- Հա՛ատ, նանը պրանենք, հանուն ապագա սերունդների՝ անտառն իմն է: Ես էլ ուրեմն զրույցների մեր հերն էր՝ Տիգրան անտառապահը, ում դղրդուն բասը երեխայի կոկորդն ավիրեց, երեխայի կուրծքն ու կոկորդը կես վայրկյան չդիմացան, հազալ սկսեց, և նրա թիկունքը հազի դեմ ծեծեցին ու գուրգուրեցին մեր քրոջ տնազով.

- Վույ, ցավդ տանեմ, ցավդ, ցավդ, ցավդ... Վո՛ւյ, մեռնի քու տատը, մեռնի-մեռնի-մեռնի...

- Հա՛ատ, մեռած պտեինք ու մեր զավակներին թշնամու դռանը տեսած չպտեինք: Դարծյալ մենք էինք՝ առավոտվա մի թիզ աղջնակի բերանով. պայուսակի տակ ձպուռի նման գնում էր ու չէինք հասկանում, որ նայում ու տեսնում էլ է:

- Որպես սկզբունքային՝ Ես մի բաժակը քեզ հետ պըտի խմեմ: Խմում եմ՝ լավ եմ անում. պլանս կատարել եմ՝ ազատ քաղաքացի եմ: Էդ էլ ուրեմն հարբած հացթուխն էր:

Եվ սարերի թո՛ւրքն իր բաժինն առավ, և տնտեսությունների ղեկավար կոչվածի՛ն ոչնչացրին, և չխղճացին անգամ ծանրականջ պահակին ու ձին տարիներ առաջ կորցրած Օսեփանց հալիվորին:

- Այ Ռոստոմ փաշա. ախր լավ մարդ ես, է, շատ լավ մարդ ես՝ չոխ յախշի. ախր էդ ձին լավն ես, է, այ Ռոստոմ քիշի. ձին տաս քու դոստումին՝ լավ մարդ ես, չի տաս՝ փիս մարդ ես, գյադա: Սա ուրեմն թուրքն էր:

- Չէ, էս մի բաժակը ես քեզ հետ պիտի խմեմ, դու ինձ դուր ես...

- Այտա, Ռոռոստոմ ջ-ջ-ջան, էն հավն աչքովս չի ընկնում, գիդեմ ոչ աղվեսը կըլի տարած թ-թե Ս-սենոյի ը-ըրեխեքը: Սա խանութի պահակն էր, սրան ուրիշները շարունակեցին.

- Շ-համ էլ ասեղը կ-կորցրել եմ, շ-շավարս պատռել է, գիդեմ ոչ ոնց կ-կարկատեմ: Դարձյալ շարունակեցին.

- Ասեղս գդա, ծ-ծակը գդնում չեմ, ծ-ծ-ծակը կորցրել եմ, Ռոռոստոմ ջ-ջ-ջան:

Չէին ծիծաղում, քանի որ յուրաքանչյուրն էր պատրաստ հավելելու իր տեսածն ու հնարածը: Շետո «տնտեսության ղեկավարը» մի «ենթակայի» մի կողմ տարավ ու շատ ծանրումեժ պահանջեց.

- Կենտրոնից քու օգուտի վերաբերյալ կարևոր հյուր ունեմ. քու գառը էգուց եթե իմ սեղանին լինի՝ քու օգուտը մեժ կլինի: Շա, հետն էլ մի երկու գլուխ պանիր: Շավ չունե՞ս, հավ, էս անտեր ստամոքսս...

- Շա՛տ, նանը, երկիրս կողոպտեցիր, պատասխանեցին մեր կողմից:

- Շամմե՞. ձիս սարերից տարան կերան, կերան Տիգրանի

ժառանգին: Սա հին ժամանակներում ձին կորցրած, մեզ ու բոլորի վրա կասկածող հալեվորն էր:

- Շա՛ատ, նանը. թող արա հարցը պետական մասշտաբով վճռենք, քու ձին մեջ մի գցիր: Սա, հասկանալի է, դարձյալ մենք էինք:

Շտո առաջարկ եղավ, ասացինք.

- Երեխեք, եկեք պիես ներկայացնենք:

Մտածեցին ասացին.

- Թույլ չեն տա, մեծերը չեն թողնի:

«Մեծերն» անձնավորվեցին դարձյալ մեզանով.

- Շա՛ատ, նանը: Էս ավերակին Օֆեյադ էր պակաս: «Օֆ-Էյա, մտիր գժանոց»:

Մարոյի աղջիկն այնինչ արդեն մենախոսում էր. «Լինե՞լ, չլինե՞լ - այս է խնդիրը...», և դա անձոռնուն սաստիկ դուր էր գալիս, սա էլ իր լրացումն էր բերում.

- Առողջապահության մինիստրությունը զգուշացնում է, որ ծխելը խիստ վտանգավոր է ձեր առողջության համար:

Եվ ապա ծայները լռեցին, բոլորը լրջացան, թշնամանքի ու կասկածանքի մեջ դանդաղեցին, համարյա թե կանգ առան. հասել էին մենատանը:

Մենատան այգում ժողովուրդը հացի էր նստած, լուռ ուտում էին, թզուկը՝ որ սեղանի գլխին էր, առաջինը նկատեց երեխաներին, ձեռքով «եկեք» ասաց, հետո սեղանակիցներիս կարգադրեց.

- Երեխեքին կանչեցեք, երեխեքի համար սեղան գցեք:

Երեխաների խումբը թշնամանքով ու կասկածով նայում էր նրանց, կարծես թե կանգ էր առնելու, բայց քայլն արագացրեց, այնպես որ մետաղե բարձր ձաղերի արանքից Ալբերտի զույգ

ձեռքով պարզված հացը («Արի վեր կալ, բաժանիր ընկեր-
ներիդ») արդեն ոչ թե երեխաներին էր պարզված, այլ նրանց
եսկից:

Լուռ եկան, եկան դեմ ընկան մեզ ու մեր քրոջը: Մեզ ընկած
ուր գտել՝ այդտեղ ճանապարհի մեջտեղն էլ մեր քույրը մեր
գլուխը գոգն էր առել և, վառվող աչքերը չոր, մեր գլուխն ու
թիկունքը շոյում ու մրմնջում էր մեր կյանքի լեգենդը.

- Անհեր-անմեր իմ ախպերը...

- Անտառից գտած, աստծու ծնունդ իմ ախպերը...

- Պախրեն կգա ծիծ կտա, քամին կգա կօրորի...

- Էս ոտավոր երկրում մի կենտ ծիավոր իմ Ռոստոմը...

- Իմ աղքատ հպարտ թագավոր ախպերը...

- Էս միլիոնանոց ծմակիցը մի կոպեկի օգուտ չպոկեց ու
մաքուր մնաց գրպանը դատարկ իմ ախպերը:

- Իմ ազատ ախպերը:

- Վարչությունը էս ամբողջ երկրի տակից ծիանը հանեց - իմ
Ռոստոմ փաշա ախպերը ծիավոր մնաց:

- Անմեր իմ ախպոր վրա էս մեր եմ եղել,

Իմ ախպոր վրա էս քուր եմ եղել:

Էս աշխարհի հարսնության ու աղջկության աչքն իմ
ախպոր վրա էր, իմ ախպոր աչքը՝ իր չոր չբերի...

Բարձր բարոյական իմ ախպերը...

Օրինակելի իմ ախպերը...

Դասից-դպրոցից փախած, ինքը իրա դասատու ու էս
ժողովրդի դասատու իմ ախպերը:

Պայծառ աչքերում կարեկցանք՝ խումբը լուռ մոտքայլ է
անում, իսկ մեր քույրը շարունակում է իր մրմունջը.

Մի օգնական չունեցավ իմ ախպերը,
Ժողովրդի թիկունք իմ ախպերը...

1980